



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

✓ G.G.

1467

1999

4.5
1467

ՃԻՐՎԱՆԶԱԴԻԿ

ՃՈՒՐ ՅՈՅՍԵՐ

Վ է ՞

(Արտատապահ պատկերազարդ „Արձագանքից“):



ԹԻՖԼԻՑ
Յովհաննէս Մարտիրոսեանցի տպարան
ԹՐԲԵԼԵՑՆ ՓՈՎՈՑ, № 1|2

ԶՈՒՐ ՅԱՅՍԵՐ

Վ է Պ

I

Թիֆլիսի ժողովարանի ամարային բնակարանում ընտանեկան երեկոյթ էր: Ուղիղ տասը ժամին, երբ այգին կիսով չափ լցուել էր երկու սեռի հանդիսականներով, ընդարձակ ճեմելիի ծայրում երևեցաւ ամբողջ քաղաքին յայտնի Միքայէլ Հալաբեանը:

Նախ քան առաջ գալը, նա քանի մի վայրկեան կանգնեց դալար պատատուկով վարագուրգած վանդակապատի մօտ, կուրծքը դուրս ցցեց, նայեց զրօննող հասարակութեանը: Յետոյ նա աջ ձեռով ուղղեց սպիտակ մետաքսեայ փողկապը, որի վրայ պսպղում էր աղամանդեայ խոշոր գնդասեղը, հարթեց ձիւնի պէս ճերմակ ժիշետը, որի վրայ վայրում էր ոսկէ ժամացոյցի բարակ ոսկէ շղթան, շիեց ձա բուշանժէ խուզած միրուքը և, գլուխը բարձր պահած,

Перепечатано изъ иллюст. журнала „Ардзаганъ“

Дозволено Цензоруою, Тифлисъ, 6 марта 1890 года.

Типографія И. А. Мясникяна, Орб. ул. д. № 1—2.



Ծանր, հանդարտ և, կարծես, ակամայ քայլերով առաջ ընթացաւ:

Նա հասաւ այցու միակ աւագանին, ուր ուղիղ գնով դէպի վեր խփող շատրուանից, մանր անձրեւի պէս, թափվում էր յստակ ջուրը: Նա կանգնեց, մտիկ արաւ շատրուանին, մտիկ արաւ ջրի շողափայ շլուրին, աւագանի մէջ սե ստուերների նման լող տուռղ ձկներին, դըրսվար թախնութեամբ շարժեց և երեսը յետ դարձրեց: Երբեմն նա աջ կամ ձախ ուսի վրացով նայում էր անցուգարձողներին և պատասխանում իւր ծանօթների բարեներին, հազիւ արժանի համարելով շարժել իւր սեագոյն, ամուր գլխարկի եղրը:

Նա նոյն ակամայ քայլերով անցաւ և մտաւ ժողովարանի ուսունգան:

Երեկոյթը հետզետէ այստեղ էր կենտրոնանում: Ջուտով պիտի սկսէին երոպական պարերը, առ ժամանակ նուագում էին ասիական երաժիշտները: Մի սպաց դէս ու դէն վազգվերով, պարողներ էր հաւաքում: Օրիորդների մի մասը կավակերներ գրաւել էր, շատերը դեռ սպասում էին: Երեկոյթը վերջինն էր ամառուայ շրջանում, շուտով ժողովարանը պիտի տեղափոխվէր ձմերացին բնակարան: պէտք էր վեր-

ջին անդամ եռանդով պարել, զուարձանալ: Մայրերը շարէշար նստած էին դահլճի աջ ու ձախ կողմերում և զգաստ աչքերով դիտում էին աղջկերանց, ստէպ ստէպ ուղղելով իրանց «թասակրաւը», այսինքն զլիսի ապարօշները: Ամեն մէկը յենուած էր իւր փակ հովանիի կոթի վրաց, ինչպէս սովորաբար յենփում է ցուպի վրաց իւր դառնուկներին արթուն աչքով հալող հովիւր:

Հալաբեանը կանգնած էր արևելեան երաժշտութեան սիրահարների շարքում: Նուազվում էր այն եղանակը և երգվում էր այն երգը, որ յատուկ սիրում էր Հալաբեանը: Այս առանձին պատիւը նա վաշելում էր իբրև ժողովարանի իննը վերակացուներից մէկը և, որ զվարաց է, իբրև հարուստ, ամուրի, առատաձեռն հարբեանը:

Եւ որքան ոգեսորված էր թուրք երգիչը: Նրա սաթի պէս սե աչքերը կարմրել էին, սպազրում էին, ինչպէս վառված ածուխի կտորներ և, կոկորդացին ոյժի ծայրացեղ լարվելուց վի երակները կատել էին, ուռել և գուր ցցուել: Աւարտելով պարսիկ բանաստեղծի խօսքը մերթ մեղմ, մերթ զիկ և առաձգական կլկլոցով, նա քանի մի ակնթարթ լրում

էր, շունչը խանգարվում էր, կուրծքը ուժգին բարձրանում էր և նիշար կոկորդի չոր սոկորը դողդողում: Նա զլումը դահլիճի ետևից վեր էր ցցում, լայն բաց արած թռքերը լցնում էր դահլիճի ծանր, սղմուած օդով և ձայնը աւելի բարձրացնում: Քէմանի և թառի լարերի հընջունները ներդաշնակ հետեւում էին նրա քմածին ձայնի անկանոն ելեէջներին:

— Աֆերիմ, ափերիմ,—սովորաբար ասում էր Հալաբեանը, խրախուսելով մերթ երգչին մերթ նուագողներին:

Բաց այս անգամ նա իւր զովասանքը չ'արտասանեց, մի քանի վայրկեան լսեց երգչին, ապա քայլերը ուղղեց դահլիճ խորքը, մի փոքրիկ սանդուլսով բարձրացաւ վերև, դէպի աջ:

Ելստեղ թղթասէրները, չորս-չորս հոգի նըստած կանանչ սեղանների շուրջը, խաղում էին, խորասուզված իրանց զբաղմունքի մէջ, ինչպէս օրուայ առեւտուրը երեկոյեան համարակալի վրայ գումարող վաճառականներ: Ջատերը նրանցից լուռ էին, չէին նայում իրարուերեսին: Երբեմն միայն հատ հատ անհասկանալի բառեր էին արտասանում և, քաղցած գացլերի նման, խոշոր հայեացքներ ձգում մէկլուկու ձեռների վրայ: Կարծես, այդ մարդիկ ան-

հաշտ թշնամիներ էին, չար ճակատագրի կամքով ասպարէզ էին դուրս եկել իրարսւց վրէժառնելու: Գրեթէ ամեն մի սեղանի մօտ կանդնած կամ նստած էին հետաքրքիր չէզոքներ, մարդիկ, որ միշտ սիրում էն ուրիշների բաղդիրնեցքին հետևել, գուցէ սեպհականը չունենալու պատճառով:

Հալաբեանը մօտեցաւ այդ սեղաններից մէկին, աջ ձեռը դրեց չորս խաղացողներից մէկի ուսին, ձախը դրեց միւսի ուսին: Առաջինը հաստ ու սեամորթ պարանցով, ճարպալի աչքերով, կոշտ շրթունքով, սև աչքունքով, ցցուած փորով երեսուն ու հինգամեայ զուարճասէր Ախշարումեանն էր: Երկրորդը իշխանատոհմ Սրափիօն Սահարունին էր—ժողովարանի ուղն ու ծուծը կազմող վերակացուներից մէկը: Մի՛ մաքուր հաղնուած ցենտրլեն, կարճ միրուքով ու մազերով, կարմրադէմ, աչքերի տակի կաշին կուչկուչված: Քինթը արծուանման, շրթունքը ջրալի, վարդագոյն, աւելի գէր քան նիշար մօտ ցիսուն տարեկան մի տղամարդ, որի դէմքի վրայ վաղուց շուայ, անկանոն կեանքը դրոշմել էր իւր անջնջելի հետքը:

— Ուշացել ես,—ասաց իշխատոհմ Սահարունին իւր իսուլ, խզված ձայնով,—վեր կենամ:

— Այսօր լսաղալու ցանկութիւնը չունիմ, —
պատասխանեց Հալաբեանը և ձեռները վերցրեց
բարեկամների ուսերից:

— Մօսիօ Վախվախեան, — դարձաւ նա յան-
կարծ իշխանի կողքին կանդնած մի մարդու,
որ չէր մասնակցում թղթախաղին:

Մօսիօ Վախվախեանը, որ քառասուն տարե-
կան մի տղամարդ էր, մաքուր սափրած երեսով,
լիք-լիք թշերով, արդէն գդակը վերցրած սպա-
սում էր Հալաբեանի ուշադրութեանը, կէս-բա-
րեկամական և կէս-շողոքորդ մի ժպիտ երեսին:

Ի՞նչպէս է պարոնիս ամենայժմանզագին
առողջութիւնը, — մէջքից խոնարհ թեք-
վելով, կրկնեց նա մի և նոյն հարցը մի քանի
տարբեր խօսքերով և, բաւարար պատասխան
ստանալով, շարունակեց: — Ճատ ուրախ եմ, հի-
մայ նորին պայծառափայցութիւնը ձեր՝ մասին
էր հարցնում, առացի, երսի, կը գայ:

— Ինչո՞ւ տխուր ես, — հարցրեց Ախշարումեա-
նը, նացելով Հալաբեանի երեսին:

— Ես... տխուր չեմ... պատասխանեց Հալա-
բեանը, տատանվելով. — մօսիօ Վախվախեան,
գնանք ացի:

Մօսիօ Վախվախեանը ուրախ ուրախ հետե-
ւեց նրան և դուրս եկաւ ճեմելի վրայ: Նա,

անդաղար պտոյտ պտոյտ անելով Հալաբեանի
շուրջը, մերթ անցնում էր աջ մերթ ձախ կողմ,
ինչպէս յարմար էր վերջինին:

— Են էլ լսած կը լինէք, որ Սմբակումօվը
մեռել է ու ազգին երկու քսան թուման, եր-
կու շահի ու վեց կոպէկ է թողել, — խօսեց
մօսիօ Վախվախեանը, Հալաբեանին գուարճաց-
նելու նպատակով, — կտակել է, որ ացդ փողով
երեք ուսումնարան բաց անեն ու տասներկու
ստիպենդիանտ պահեն ազգի պայծառութեան
համար:

Եւ նա մի քայլ առաջ գնալով, երեսը մի
կողմ դարձրեց, քնիթի տակ ծաղրեց ու հայշո-
ւեց հանգուցեալին:

— Հին հէքիաթ ես ասում, մօսիօ Վախվա-
խեան, — ասաց Հալաբեանը, — ես քեզ ասել եմ,
որ միշտ նոր նոր լուրեր պատմես ինձ:

— Եց նոր լուր, ըհըն, այն կողմ մտիկ արէք:

Եւ այս ասելով, մօսիօ Վախվախեանը ցոցց
տուեց մի գեղեցկադէմ շիկահեր կնոջ, որ մի
տգեղ կնոջ թեկից բռնած գալիս էր դէմ ու դէմ:

— Եցդ էլ թող, — նկատեց Հալաբեանը, ուշա-
գրութիւն չը դարձնելով գեղեցկադէմ կնոջ վր-
րայ: — Եթէ կարող ես, գուարճացրու ինձ, մօ-
սիօ Վախվախեան, ես տխուր եմ:

— Տխուր, — կրկնեց մօսիօ Վախվախսեանը զարմացած, — դուք որ տխուր էք, Ես պիտի ուրախ լինեմ: Եյ, ասպիշս է աշխարհիս բանք: Ձեր ինչն է պակաս, ասէք տեսնեմ, փող, խելք, առողջութիւն, ազատ ապրուստ, դուք էլ էք տխրում: Բաս վայ ինձ նմաններին, — աւելացրեց նա, խորին հառաջելով:

— Դու ամենաբաղդաւոր մարդն ես:

— Եւս...:

— Բաղդաւոր ես, որ հոգս ու ցաւ չունես: Յետ գնանք. այս մարդկանց երեսը հազար անդամ տեսել եմ և ձանձրացել:

Նրանք մտան դահլիճ: Եւրոպական պարերը ու ժամանակ ընդհատվել էին: Խուռն բազութիւնը կազմել էր մի փոքրիկ շրջան, ուր ցանկացողները պիտի ասխական պարեր պարէին:

Երաժիշտները նուագում էին, թմբկահարը բարակ ձողերով ուժգին զարկում էր թմբուկի չորացած կաշուին, երգիչը — դահլիրէին, հանդիսականները ծափահարում էին, ասպարիզում պարող ըստ կար:

Յանկարծ խրոխտ քայլերով մէջ մտաւ մի բարձրահասակ, գեղեցիկ կերպարանքով վրացի երիտասարդ իշխանազն իւր ազգային մետաքսեաց բազմերանգ հագուստով: Դա յայտնի էր

Թմբվլում իրեւ ամենալաւ պարիչ: Դափերը աւելի սաստկացան: Իշխանազնը իւր, նուրբ մետաքսից կարած, ծայրերը սուբ և կրուգները բարձր մաշիկները դահլիճ ողորկ յատակին քըս սելով, սահեց առաջ: Նմբոխը յետ ու յետ քաշուեց, ասպարէզը լայնացաւ: Իշխանազնը մի պտոյս դործեց, մօտեցաւ, մէջքից թեքփեց և մորթէ կարճիկ գդակը ձեռին բռնած, դլուխ տուեց մի հայ օրիորդի:

— Բրաւօ, բրաւօ, — գոյեցին միափերան ացս ու այն կողմից, որոնց թւում ամենից բարձր մօսիօ Վախվախսեանը:

Օրիորդը զլիսով բացասական նշան արաւ: Յանկանում էր նա պարել, պէտք է խնդրէին, և խնդրեցին, այսինքն մի քանի չափահաս տեղացի կանաչք բոթեցին նրան և ուժով ներս մղեցին:

Քանի մի վայրկեան իշխանազնը և օրիորդը յուշիկ քայլերով պտտեցին այս կողմ, այն կողմ, առաջ եկան, յետ քաշվեցին, շուռ եկան դէպի յետ, և սկսուեց Դաղստանի պարերից մէկը: Մի պար, որ այնքան վայրենի է թւում եւրոպացուն և անքան շարժում, դղրդում է ասիական մարդու սրտի զգացուն թելերը:

Մի պար, ուր զգացգում է կրակոտ լեռնա-

կանի արեան ուժգնութիւնը, սրտի կատաղի զարկը, հոգու անվեհերութիւնը, զգացումների սաստկութիւնը:

Տաշ, տաշ, տաշ,—կոչում էին հանդիսականները:

Տաշ, տաշ, տաշ,—կոռում էր մօսիօ Վախվախեանը, ոգևորված ծափահարելով:

Ընորհալի թերը մեղմիկ և քնքաբար շարժելով, երեսն աջ, երեսն ձախ ձեռը կողքին դնելով, գլուխը հեղաբար ուսին թեքած, օրիորդը լողում էր շեղածե, ինչպէս մի թեթև մակոյկ անդորր ծովի մակերեսովթի վրայ: Նրա ետեից, մէջքը սակաւ ինչ կորացրած, աչքերը վառ, սլանում էր իշխանազնը, որպէս մի թեւատարած բազէ, որ ձգտում էր իւր մագիլներով որսալ անմեղ թռչնիկն:

Թահլիճը թնդում էր, դէմքերը ուրախ ուրախ փայլում էին, ամբոխը խոնփում էր առաջ ու առաջ, շրջանը հետզհետէ սղմփում էր, թըլքուկի ձայնը աւելի ու աւելի սաստկանում էր: Յանկարծ օրիորդը կանգնեց, ձեռները ցած գցեց, իշխանազնը սկսեց նրա դէմ կատաղի պտոյսներ գործել: Մի կէտի վրայ, նա կրունդները ուժգին թափով զարկում էր յատակին, ցցփում էր ոտների մատների վրայ, քաշանում

էր, բարձրանում, ժպտում էր օրիորդի երեսին և մի կրակոտ շարժում գործելով, կրկին սկսում էր շրջաններ անել, որպէս մի մանկական պտուտակ:

—Դուք հաւանում էք այդ աղջկայ պարելը, —լսեց հալաբեանը, որ ամբոխից քիչ հեռու մօսիօ Վախվախեանի հետ կանգնած, անորոշ հայեացքով նայում էր պարողներին:

Նա յետ մտիկ արաւ, և երես առ երես հանդիպեց իւր ծանօթ տիկին Սօփիօ և օրիորդ հատալիս Սաղափեաններին:

Նա գդակը վերցնելով, սեղմեց տիկնոջ և նրա աղջկայ ձեւը:

—Ատելով ատում եմ հաւաբարցիներին, —նկատեց օրիորդը, արհամարհանքով ժպտալով, մէջ են ընկնում պարելու, այն էլ ում, իշխան Մարգուածէի հետ: Ա՛խ, ինչ գեղեցիկ տղամարդ է, ես սիրահարվեցի բոլորովին: Այստեղ տօթ է, մամա, գնանք այգի, —դարձաւ նա իւր մօրը և, բռներով վերջինի թերից, շարունակեց խօսել հալաբեանի հետ:

Մօսիօ Վախվախեանը, հեռուից բարեելով, ըր համարձակվեց մօտենալ և ակամայ հեռացաւ հալաբեանից: Ամուրին խուռն բազմութեան միջով հետեւց իւր ծանօթ դամերին և կրկին դուրս եկաւ նրանց հետ այգի:

Տիկին Սօփիօն նիհար, դէմքի մանր գծերով,
միջահասակ, եռանդուն բերանով, ալեխառն
մազերով յիսուն տարեկան մի կին էր տեղա-
կան հագուստով: Նրա քայլուածքը, ծանր շար-
ժուածքը, արհամարհական հայեացքը արտա-
յացտում էին մի անընկճուելի գուղղութիւն:
Նոյն գուղղութիւնն երեսում էր և նրա դստեր,
հատալիայի, դէմքի վրայ, միայն աւելի մեղմ,
չնորհիւ երիտասարդ տարիների: Այդ միջին
հասակով, բարակ կազմուածքով, մօտ քսան և
ութ տարեկան աղջիկը իւր մօր համապատկերն
էր ներկայացնուած: Աչքերը փոքրիկ, կապուտակ,
շրթունքը սեղմուած, քինթը ուղղագիծ, սրա-
ծացը, ճակատը տափարակ, սև սև խիտ յօն-
քերը քնթի արմատի մօտ միախառնուուած,
կարմրախայտ այտերը նիհար, ծնօտը փոքր ինչ
դուրս ցցուած, մազերը ազուակի փետուրի պէս
սիփ-սկ—ահա նատալիացի կերպարանքը: Կօր-
սէի մէջ ամուր սեղմուած մէջքը այնչափ բա-
րակ էր, որ, կարծես, կարելի էր երկու ձեռի
մատների ծայրերով գօտեորել նրան: Մուգ-
կարմրագոյն հագուստը ծայրէ ի ծայր սքօղու-
ած էր նուրբ ծաղկանկար մետաքսեայ հիւսու-
ածքով: Մորենագոյն թաւշեայ ուսնոցակը,
թեաւորելով կոները մինչև արմունկները,

ծածկում էր նրա թիկունքը և կրծքի մի մասը:
Ահագին սպիտակ փետուրով զարդարած բաց-
դեղնազայն գլխարկի լայն եզրը, աջ կողմից
դէպի վեր ծուռած, տեսանելի էր կացուցանում
նրա գլխի մի մասը, նեղ ճակատը և հարթ ու
տափարակ քոնքը:

— Ճատերը ինձ նախատում են, թէ ինչու
շատ քիչ եմ գալիս ժողովարան,—խօսում էր
նա չալքեանի հետ, — ասացէք խնդրեմ, ինչ
կայ այստեղ: Նայեցէք այս մէկի հագուստին,
նայեցէք այն միւսի գնացքին և, վերջապէս,
այդ դէմքերը... Փի՛... ափսոս չէ՞ «Կրուժօկի»
հասարակութիւնը:

— Դիփ քարվանսարի բազագների աղջկերքն
են ու կնիկները, — յարեց տիկին Սօփիօն, շըր-
թունքը արհամարհանքով ծոելով:

— Եփսոս Մարօն այստեղ չի, — շարունակեց
նատալիան, — որ այդ անյացտ երիտասարդնե-
րից մէկի հետ երկար ու բարակ լսուէր:

Նա ցոց տուեց մի խումբ համալսարանական
ուսանողների, որ նստած էին ճեմելիի նստա-
րաններից մէկի վրայ:

Մարօ անունը, կարծես, սթափեցրեց Հալա-
բեանին, որ մինչև այդ վացիկեան լուռ լսումէր
մօր և դստեր պարսաւանքը հանդիսականներին:

— Օրիորդ Պարիսմը, — ասաց նա հատաքըր-
քրված, — եթի կը գայ:

— Ո՞վ գիտէ, նա Թիլիջանը խիստ է հաւա-
նել, կը գայ շուտով, թէ չէ, — պատասխանեց
Նատալիան, ըստ երևոյթին, ակամայ:

— Ինչու համար էիք հարցնում, — հարցրեց
տիկին Սօփիօն Հալաբեանին:

— Հէնց այնպէս, — պատասխանեց Հալաբեա-
նը, տեսնելով, որ իւր հարցը դիւր չեկաւ ոչ
օրիորդին ոչ տիկնոջը:

Նրանք կրկին վերադարձան ռօտոնդա, և
այստեղ Հալաբեանը, ներում խնդրելով տիկնո-
ջից և օրիորդից, հեռացաւ: Նա մօտեցաւ մի
վաճառականի, մի քանի վայրկեան խօսեց, յե-
տոյ մօտեցաւ մի իրաւաբանի, յետոյ մի բժշկի:
Ոչ ոքի հետ նա երկար չէր խօսում: Առ հա-
սարակ նրա տրամադրութիւնը սովորականը
չէր:

— Ի՞նչ տիտուր է այս երեկոյ, — ասաց նա,
թախծութեամբ լի հայեաց քով նայելով զբօսնող
բազմութեանը,

Տասն ու վեց տարի էր, որ Հալաբեանը
այցելում էր այդ ժողովարանը, և այդ երկար
տարիների ընթացքում հասարակական գուար-
ճարանը քառասուն ու երեքամեայ ամուրիի

համար դարձել էր մի տեսակ ընտանիք: Այս-
տեղ էր նա, ցերեկուայ աշխատանքից յետոյ,
երեկոները հանգստութիւն վայելում: Գայլիս
էր մի և նոյն ժամին, գնում էր մի և նոյն
ժամին: Զմեւը ժողովարանի տան պայծառ լու-
սաւորված ընդարձակ սենեակները, ամառը նրա
ալգու միակ ճեմելին, միւնոյն հասարակու-
թիւնը, կանանչ սեղանների մօտ նստած մի և
նոյն քնահարբ դէմքերը, ուռած աչքերը, այս
ու այն կողմ պարտող չով և յամառ սպասաւոր-
ները, բոլորը բոլորը այնքան նրան ծանօթ
էին, որքան իւր բնակարանի կահկարասին,
իւր վրայի հագուստը: Տարբերութիւնն այն էր,
որ կահկարասին և հագուստը հնանալիս նա
փոխում էր, այն ինչ ժողովարանը մնում էր
նրա աչքում անփոփոխ: Եւ եթէ որ և է նոր-
մուծութիւն լինում էր, եթէ երևում էին նոր
դէմքեր, շուտով ձուլվում ու միանում էին հը-
ների հետ, և նա դարձեալ տեսնում էր մի
տաղտկալի ամբողջութիւն: Տաղտկալի և, մի և
նոյն ժամանակ, այնքան ընտանի մի շրջան,
որից բաժանվելը նրա համար կը նշանակէր բա-
ժանվել իւր կեանքի մի բնական մասից, զըր-
կուել գոյութեան մի անհրաժեշտ տարրից:

Բացց երբէք նա այնքան ձանձրացած չէր,



որքան այդ երեկոյ: Ի՞նչ էր պատճառը—ինքն
էլ տակաւին լաւ չէր կարողանում որոշել: Մի
բան պարզ էր, որ նրա տիրութիւնը սկսուեց
ժողովարան գալուց մի քանի ժամ առաջ: Թրիկ-
նագէմ էր. նա կանգնած էր իւր տան առաջ,
փողոցի անկիւնում և խորհում էր, թէ ուր և
ինչպէս անցկացնի երեկոն, որ աւելի զուար-
ճալի լինի: Այդ բովէին յանկարծ նրա առաջով
անցաւ այն հասարակական կառքերից մինը,
որ քանում են քաղաքի և մօտակայ ամարա-
նոցների միջև: Կաւրքի մէջ նստած էր մի մարդ
իւր կնոջ և բազմաթիւ երեխաների հետ, որ
ամարանոցից վերադառնում էին քաղաք: Հա-
լաբեանը նայեց սլացող կառքին, լսեց երկու
մանուկների և մի փոքրիկ աղջկայ ուրախ քըր-
քիջը, և յանկարծ մի անորոշ զգացում համա-
կեց նրա սիրող: Նրան տիրեց մի թախծու-
թիւն: Օրը մթնեց, այս թախծութիւնը աւելի
սաստկացաւ, իսկ ականջում դեռ հնչում էր
ուրախ ընտանիքի քրքիջը:

Եւ այս տրամադրութեամբ նա եկաւ ժողո-
վարան: Նա ախորժակ չունէր ոչ թուղթ խա-
զալու, ոչ ընթերցարանում երգիծաբանական
թերթերով իւր միտքը զբաղեցնելու և ոչ երա-
ժշտութեամբ զուարձանալու: Նա այնքան տը-

խուր էր, որ կամեցաւ դուրս զայ ժողովարա-
նից սովորական պահից երեք ժամ առաջ: Նա
արդէն քայլերը ուղղել էր դէպի դուրս, երբ
նրա առաջը կտրեցին իշխան Սահարունին, Ախ-
շարումեանը և Պօսիօ Վախվախեանը:

Նրան գրեթէ ուժով նստեցրին ընթրելու
ազգու ծառերից մէկի տակ: Ճեմելին հետզհետէ
դատարկում էր, ընտանետիր հանդիսական-
ները ցրվում էին, մնում էին պարողները, ընթ-
րողները, ազատ ու ազափները և մի քանի
կանաչք, որոնց ամուսինները դեռ չէին վեր-
ջացրել թղթախաղը կամ «նառդին»: Այս կա-
նանց թւումն էր և մի առողջ կազմուածքով,
կարմիր աշտերով, գեղեցիկ և երիտասարդ կին,
որ մի երիտասարդ պարոնի հետ նստած էր
Հալաբեանի խմբից ոչ այնքան հեռու:

Իշխան Սահարունին իւր կրքոտ աչքերը յա-
ռեց առողջադէմ կնոջ վրայ:

— Ճարմանտ, ճերդ պաշճառափավութիւն,—
դարձաւ մօսիօ Վախվախեանը իշխանին,—
ճանաշնում էք:

— Ո՞վ է, ո՞վ է,— հարցրեց հետաքրքրուած
հաստապարանոց Ախշարումեանը:

— Երեք քսան ու վեց տարեկան քաւթառի
մի անտիկա, — պատասխանեց մօսիօ Վախվա-

լսեանը: Ո՞նց էք, պարոն Ալսարումեան: —Ե՞ս... վ՛ըկվ, —մոնչեց Ալսարումեանը, աչքերը պսպղացնելով և իւր խոշոր ու սպիտակ ատամների վերին շարքով սեղմելով ներքին սե շուրթը:

Այդ պարկեանին ամբողջ նրա կերպարանքը ներկայացնում էր մի մարմնացած վավաշոտութիւն:

— Կեցցե՞ն տխմար Տերերը, կեցցե՞ն երիտասարդ կանաչք, — գոչեց իշխան Սահարունին, դինու բաժակը դատարկելով: — Զելկ, — զարձաւ նա սպասաւորին, որ որսային շան պէս պտոյտ պտոյտ էր անում ամուրիների սեղանի շուրջը, — գինին սեղանից պակաս չը լինի:

Այս երկիմի ակնարկների ժամանակ Հալաբեանը, երեսը յետ դարձրած, նայում էր մի ուրիշ կողմ: Հարևան սեղանի մօտ նստած ընթրում էր երեսուն ու հինգ տարեկան մի տըղամարդ իւր երիտասարդ կնոջ հետ: Հալաբեանը ճանաչում էր այդ ամուսիններին: Մարդը քաղաքավին վարչութեան մէջ մի հասարակ պաշտօնեաց էր, երեք տարի առաջ պսակել էր և իւր չափաւոր ուզիկով կառավարում էր ընտանիքը: Ամեն երեքշաբթի երեկոյ մարդ ու կին դալիս էին ընտանեկան երեկոյի, գրու

նում էին իրանց փոքրաթիւ ծանօթների հետ, առանձին ընթրում և թև թևի զցած գնում:

Երմունկները սեղանին յենած, մարդը ծխելով, զուարձախօսաւմ էր. կինը պաղպաղուկ էր ուտում: Ոչ ոքի վրայ ուշադրութիւն չէին դարձնում. նրանց նայուածքը արտայացում էր փոխադարձ սէր, հաւատարմութիւն և փաղաքշանք: Համակրելի էր թւում Հալաբեանին մանաւանդ երիտասարդ կնոջ ժախտը: Այդ տեսակ քաղցր, զրաւիչ և խաղաղ երանութիւն արտայացող մի ժախտ նա իւր կեանքում չէր տեսել: Բազմազգի, բազմալեզու ամբովի մէջ այդ գոյզը նրան թւում էր ամենից երջանիկը և անհոգը:

«Ի՞նչ է նրանց խօսակցութեան առարկան», մտածեց նա, հառաջելով:

Յանկարծ կինը քահ քահ ծիծաղեց, ոտքի կանգնեց: Մարդը վճարեց ընթրիքի համար, երկու անգամ համարեց սպասաւորի յետ բերած աւելորդ փողը, խնամքով զրեց զրպանը, աւատ կնոյ թևը և ուրախ զուարթ խօսակցելով դիմեցին դէպի դուրս:

«Կը զարթնի, կը աեսնի ես մօտը չեմ, լաց կը լինի... ալս, հոգեակս Լեռն»:

Այս խօսքերը պարզ հասան Հալաբեանի ա-

կանջին, երբ զոյգը անցնում էր նրա մօտով:
«Լեռնը նրանց երեխան է», մտածեց նա և
այնքան նայեց զոյգի ետևից, մինչև նա բոլո-
րովին անցաւացաւ:

— Զը յաջողվեց,—ձայն տուեցին միաբերան
Իշխան Սահարունին և Ախշարումեանը:

Հալաբեանը վիրաւորվեց. երկդիմի ակնարկու-
թիւնը երջանիկ զոյգին էր վերաբերվում:

— Զարմանալի է,—արտասանեց նա և դա-
նակ պատառաքաղը վերցրեց ընթրիքը շարու-
նակելու:

— Ի՞նչն է զարմանալի,—ասաց իշխան Սա-
հարունին,—զարմանալի է, որ նետդ քարին
կպաւ:

Հալաբեանը դադարեց ուտելուց և մի յան-
դիմանական հայեացք ձգեց իշխանի երեսին:

— Գիտէք պարուներ,—դարձաւ նա իւր սե-
պանակիցներին լուրջ եղանակով,—եթէ մի օրի-
նաւոր մարդ լիի մեր խօսաձը, կը զգուի:

Սեղանակիցները զարմացած նայեցին մի-
մեանց երեսին. ինչ էր նշանակում յանկարծակի
փոփոխութիւնը մի մարդու, որ երբէք ընկերա-
կան կատակների նկատմամբ բժախնդիր չէր
եղել:

— Ներողութիւն,—զոյց իշխան Սահարունին,

ես չիմացայ, որ նրանք ազգականներդ են:
— Ոչ ազգականներս են, ոչ էլ ծանօթ եմ
այդ զոյգի հետ,—պատասխանեց Հալաբեանը,—
ես ուզում էի նկատել, որ առհասարակ մենք...
Բայց թողնենք, պարուներ. . . Այս երեկոյ իմ
տրամադրութիւնս լաւ չէ:

— Ոչ, պէտք է ասելիքդ վերջացնես,—յա-
մառեց իշխան Սահարունին,—ինչ էիր ուզում
ասել, որ մենք... ինչ...

— Որ մենք մեր լեզուն մաքուր չենք պա-
հում, որ մենք բամբասում ենք, որ մենք
զրպարտում ենք ուրիշներին, որ, վերջապէս,
մենք ոտից մինչև զլուխ վշացել ենք...

Այս ասելիս Հալաբեանը այնքան յուզվեց, որ
պատառաքաղը խփեց ափսէին:

— Օօ, անմեղ գառն, օօ, սուրբ ճգնաւոր,—
զոյց իշխան Սահարունին ծաղրաբար,—արի
փեշերդ համբուրեմ, արի: Այդ որ բաղնիսում
ես այսօր լուացվել, որ վարդապետից ես այդ
քարոզը սովորել... հա հա հա... Միթէ, ճըշ-
մարիտ, դու էլ հաւատում ես, թէ Սահարունին
այնքան ծեր է, որ պիտի պատահի պաս պա-
հի: Օծուիր վարդապետ, խև ես... ես փող,
գինի ու կին, մանաւանդ կին, ահա իմ հաւա-
տամքը: Ատանդէ, ատանդէ, դու ուզում ես,

որ Սահարունին ըստ գուարձանայ ահա աց տեսարանով: Նայիր, նայեցի՞ք, պարոններ:

Նա ձեռով համարձակ ցոց տուեց մի ծերունի, որ անցնում էր սեղանի մօտով: Առողջակազմ երիտասարտ կնոջ մարդն էր դա, «նաոդին» վերջացրել էր և ձեռները մետաքսեայ «արխալուղի» գրանը դրած, դնում էր ամուսնու մօտ, որ գեռ մի և նոյն տեղում նստած սիրալիր խօսում էր իւր երիտասարդ կավալերի հետ:

— Եմօթ քեզ, ամօթ քեզ, Սահարունի, քնած ես, տեսնում նոր աքաղաղներին, — կոչեց իշխանը և կրծքի խորքից մի ախ քաշելով, դարձաւ մօսիօ Վախվախիւեանին, — Սերգօ, սագանդարներին կանչիր այստեղ:

Սերգօն վաղուց էր սպասում աչկ պատուերին: Նա վագեց դահլիճ: Երեկոցիթը զրեթէ վերջացել էր, պարողները ըստ կային, ասիական երաժիշտները ազատ էին, եկան, նստեցին ամուբիների սեղանի մօտ և մի նոր եռանդով սկսեցին նուազել իշխանի պատուիրած եղանակները:

Գիշերուայ երկու ժամից անց էր արդէն, երբ հալաբեանը առաջինն ասաց, թէ տուն գնալու ժամանակ է: Նա վճարեց ընթիթիքի փո-

զը ամենի փոխարէն: Իշխանը վիրաւորվեց: — Զերդ պայծառափացութիւն, մի նեղանաք, ընկերութիւն է, այսօր մէկը, էզուց միւսը, — միջամտեց մօսիօ Վախվախսեանը և իսկոյն մտքումը աւելացրեց: — Սերգօն էլ մէջ տեղ ձրի կուտի, այ քո տիրոց նամուսը գետինը մտնի...

Քանի մի րոպէ անցած մի կառք հալաբեանին տեղափոխում էր իւր բնակարանը: Թանձր փոշտով լի փողոցներով կառքը անցնում էր ահազին զդրդոցով և ծանրաքայց: Դա անիւները քայքայված, զսպանակները ժանդոտ, ծածկոցը գոյնից զրկուած այն կմադքներից մինն էր, որ փողոց ևն դուրս բերգում միայն կէս զիշերից յետոյ: Երկու նիշար ձիերը հազիւ կարողանում էին նրան քարշ տալ իրանց ետելց, տնքալով, հազարով և գրուսները վայրու վեր շարժելով: Երբեմն նրանք կանգնելու տրամադրութիւն էին ցոց տալիս: Կառապանը ոտքի էր կանգնում և երկար մտրակով հարուածում դանգաղ կենդանիներին:

— Կաց, — զոյեց Հալաբեանը բարկացած, երբ կառքը սկսեց արդէն չափից դուրս անխնայ տրորել, ձկելով մի կողքից միւսի վրայ և մէջքը խփելով քարի պէս ամուր կաշուէ բարձին:

Նա ցած իջաւ, վճարեց կառքի վարձը և

մնացեալ ճանապարհը շարունակեց ոտով։ Երբէք նա ացդ անախորժ տրամադրութեամբ տուն վերաբարձած չէր։ «Ի՞նչ կեանք է, ի՞նչ ապրուստ է, մտածում էր նա, օրինաւոր մարդիկ իրանց զլուխը բարձին դրած համեստանում են, ես քարշ եմ դալիս փողոցներում»։

Եւ քանի մօտենում էր բնակարանին, այնքան կատաղութիւնը սաստկանում էր։ Նա նացում էր աջ ու ձախ Սօլօլակի տների մութպատուհաններին, և զիշերացին ընդհանուր լուռթիւնն ու խաւարը աւելի ճնշում էին նրա սիրտը։

Նա հասաւ մի ուղիղ և բաւական լայն փողոց, կանգնեց մի երկարկանի տան առջև։ Նա մատը սեղմեց պատի մի կէտին։ Փոքր անցած, գուները, կարծես ինքն ըստ ինքեան բացեցին, նա ընդարձակ մաքուր սանդուխով բարձրացաւ տան վերին յարկը։

Կաւելի գուների մօտ նրան զիմաւորեց մի կարճահասակ մարդ, որ շտապում էր բութմատներով կապել իւր երկայն արխալուխի կոճակները։ Դա նրա վաղեմի ծառան էր, դապախեցի մսեցի Թաթոսը, նրա չորս սենեակից բաղկացած բնակարանի մի միակ շնչաւորը, որ ամեն զիշեր պարտաւոր էր իւր տիրոջ առաջը

զուրս գալ, որքան ևս նա ուշ վերադառնար։

Հալաբեանը լուս թուց տուեց Թաթոսին վերարկուն հանել, մտաւ ներս—մի կէս եւրոպական և կէս ասխական ճաշակով կահաւորված սենեակ։ Նա յողնած, թուլացած, զլուխը խառն ի խուռն մտքերով լի, նստեց տաճկական թախտի վրայ և մէջքը տուեց փափուկ բարձին։

Թաթոսը, սենեակի մէջ տեղում կանգնած, ձեռները կրծքին դրած, սպասում էր։ Նա պէտքէ հանէր տիրոջ կոշիկները, հագցնէր հողաթափները, երկար ծխաքարշը տար նրան, սպասէր մինչև ծխել վերջացնելը, ճանապարհնէր ննջարան, և այնուհետև միայն ազատ էր։ Բայց, չը տեսնուած և անսպասելի բան, պարոնը փոխանակ իւր սովորական հրամանները տալու, մի բարկացոտ հայեացք նետեց Թաթոսի վրայ և բարձրածայն գոռաց։

— Կորիր աչքից։

Թառան մի քանի կայրկեան ապշած մնաց, մտիկ արաւ չորս կողմ, յետուշետ քաշվեց և վախեցած դուրս եկաւ։

— Յիմար, անմիտ, անսպատակ կեանք,—ասաց Հալաբեանը, մնալով միայնակ իւր ընդարձակ և լոփիկ սենեակում։

II

Առաւոսեան տասն ու մէկ ժամն էր: Թաթոսը վազուց սպասում էր իւր տիրոջ զարթնելուն: Մի քանի անգամ նա զգաստ քայլերով մօտեցաւ ննջարանի դռներին, ականջ դրեց, ձայն ձիւն չէր լսվում: Մի անորոշ երկմտութիւն ծագեց նրա զլսում: Ինչ մի տարօրինակ փորձանք է պատահել պարոնին արգեօք, որ դիշերը այնքան բարկացած էր և մինչեւ այժմ դեռ չի զարթնել:

Նա կրկն. մօտեցաւ ննջարանի դռներին, և այս անգամ իւր կողորակ, խիտ մալերով սե միրուքը ցցելով, սկսեց դրան բանալիի անցքով նայել դէպի ներս: Նա կարողացաւ տեսնել միայն իւր տիրոջ ամարացին վերմակի սպիտակ ծայրը:

—Տէր Աստուած,—ասաց նա, վերջապէս, յուսահատուելով,—չը լինի այդ մարդը անմաս մեռաւ:

Նա վճռեց ներս մտնել, և յանկարծ լսեց իւր տիրոջ հազարու ձայնը: Նա ներս շտապեց: Հա-

լաբեանը մի կուան արմունկը կարապի փետուրով լցրած սպիտակ բարձին յենած, ծխում էր: Նրա թաւածազ կուրծքը կիսով չափ բաց էր, աչքերի շրջանակները կարմրած, կոսկերը մի քիչ ուռած: Անկողնակալի մօտ գտնուող փոքրիկ, բոլորակ, սեագոյն սեղանի վրայ դեռ վառվում էր ննջարանի փոքրիկ ղամբարը: Մոխրամանը լիքն էր ծխախոտի մնացորդներով, սենեակի մթնոլորտը տոգորված էր թանձր ծխով.

Այս բոլորը ցոյց էին տալիս, որ չալաբեանը կամ շատ ուշ է քնել կամ շատ վաղ է զարթնել: Յատակի վրայ դէս ու դէն սփռուած էին նրա շորերը ու կոշկները: Այս տեսակ անկարգութիւն Թաթոսը առաջին անգամն էր տեսնում իւր տասնամեայ ծառայութեան ընթացքում:

—Քանի՞ ժամն է, —հարցրեց Հալաբեանը դանդաղ և խոպոտ ձայնով:

—Կէսօրին մօտ է:

—Հարցնող եղել է:

—Ոչ:

Հալաբեանը ծխախոտը հանգցրեց և կրկին գլուխը բարձին դնելով, վերմակը քաշեց կրծքին:

—Ծառայ եմ հրամանքիդ, սամօվարը երեք անգամ կրակ եմ զցել, —համարձակուեց յայտնել Թաթոսը:

— Զորբորդ անգամ կրակ գցիր:

Թաթոսը ձեռները փորի վրայ դարսեց, յետ քաշուեց և կանգնեց պատի տակ: Մի րոպէ չանցած, նա չը կարողացաւ զսպել իւր լեզուն:

— Լուացարարը այսօր առաւօտեան շորերդ բերել է, կը փոխէք:

Հալաբեանը լուռ էր: Նա, գլուխը կրծքին թեքած, նայում էր ձեռների մատներին: Նրա ուռած կոպերը, թառամած այտերի գունատութիւնը, ճակատի խոշոր կնճիռները կրկին կասկածի մէջ ձգին Թաթոսին: Եւ անհանդիստ ծառան կամեցաւ անպատճառ իմանալ իւր տիրոջ տարադէպ տրամադրութեան հիմքը:

— Աղա, — ձայն տուեց Թաթոսը, մի քայլ առաջ գնելով:

Աղան չը պատասխանեց:

— Աղա, — կրկնեց Թաթոսը յամառօրէն և մի քայլ ևս առաջ դրեց, — աղա, ցաւդ առնեմ, խօմ հիւանդ չէք:

Հալաբեանը քնից յանկարծակի զարթնողի պէս զլուխը բարձրացրեց ու ձեռը ուժգնակի անկողնակալի ծայրին խփելով, որոտաց.

— Կորիր, անպիտան:

Թաթոսը երկիւղից ուսերը վեր քաշեց, ձեռ-

ները տարածեց աջ ու ձախ և յետ ու յետ քաշուելով կամացուկ դուրս սլկուեց: Նա միւս մենեակումն էլ չը մնայ, գնաց խոհանոց և նստեց սնդուկի վրայ:

— Այդ մարդը կամ գժուել է, — ասաց նա, երկիւղածութեամբ իւր սպրդնած երեսը խաչակնքելով, — կամ արեւ մայր մտնելիս պիտի գժուի:

Հալաբեանը ոտքի կանգնեց և սկսեց հագնուել, առաջին անգամ առանց ծառայի օգնութեան: Նա իւր գլուխը ծանրացած էր զգում, սկսուները մի տեսակ թմրած: Ամբողջ գիշեր նա համարեա չէր քնել: Այն մտքերը, որ յոցել էին նրա գլխում նախընթաց օրը, խոռվ գիշերին, միայնակ դրութեան մէջ, աւելի յուղեցին նրան: Երկար ժամանակ նա շրջում էր ննջարանում, անդադար ծխելով և մերթ ընդ մերթ կրծքից արձակելով ծանր հառաչանքներ: Մինչև էրբ նա պիտի ամուրի մնայ, ահա այն պարզ առանցքը, որի շուրջը պտտում էին նրա խառն ի խոռուն մտքերը: Ինչո՞ւ համար է նա հալաբեան ազգանունը անյայտութիւնից հանել և գրել ամբողջ Թիֆլիզի բերանը. նա, որ մի աննշան վաճառականի որդի էր: Միթէ նրա համար, որ այսօր կամ վաղը այդ ազգա-

նունը ջնջուի աշխարհի երեսից առանց մի հետք թողնելու։ Խակ նրա հարստութիւնը—ով պիտի ուտէ նրա մահից յետոյ։ Նրա քրոջ շռաց որդիները, ինչպէս շատ այդպիսի շռացներ ուտում են իրանց քեռու կամ հօրեղբօր արիւն քրտինքով ձեռք բերած կարողութիւնը։ Ինչու, ինչ իրաւունքով։

«Քսան տարեկան հասակից սկսած ուկոր կոտրեմ, ասում էր նա, հօրս թողածը տասն անգամ աւելացնեմ, հաւաքեմ, հաւաքեմ, յանկարծ մի օր մեռնեմ, և շների ու գայլերի բաժին դառնաց։ Ոչ, ամենեւին։ Եցր իմ գերեզմանիս վրայ էլ ասել չի լինիլ։ Ասկորներս էլ հողի տակ հանգիստ չեն մնալ։ Հալաբեանի հարստութիւնը պիտք է հալաբեանները ուտեն։ Իմ սերունդս պիտի շարունակվի որդուց որդի։ Որքան ցինար եմ եղել ես, որքան ցինար։ Ի՞նչ օգուտ իմ անցեալից, ուր են ծախսուել իմ հապարները.... Ջռաց, անպիտան կեանք։ Այն ուրախ քրքիջը, ծնողի այն քաղցր ժպիտը... որքան բաղդաւոր էին երևում նրանք,—կրկնեց ամուրին, մտաբերելով երեկուայ իւր տեսած ընտանիքը, որ վերադառնում էր ամարանոցից, միթէ ես չը պիտի վայելեմ այդ բաղդը։ Խակ այն համեստ գոյզը, որ ամեն երեքաբթի

գալիս է ժողովարան։ Ահա երջանիկ մարդ, աղքատ և երջանիկ։ Խակ Ես..., մինչեւ երբ պիտի միանալ բուվի կեանք վարեմ. . . Բաւական է. . . Թող իշխան Սահարունին ծիծաղի, թող նա շարունակի Ալշարումեանի հետ իւր. . . անսառակ կեանքը. . . Զգուեցի... զգուեցի. . .»,

Եւ այս մտքերի ծանրութիւնից նրա յուզգած նեարդերը չէին հանգստանում։ Երկար ժամանակ նրա մարմնի վիթխարի ասուերը սահումէր ննջարանի պատերի վրայ, մերթ հասնելով առաստաղին և մերթ ընկնելով յատակի վրայ։

Յանկարծ նրա ճակատի կնճիռները բացվեցին, դէմքը մի վայրկեան՝ փայլեց։ Նա վերցրեց ննջարանի փոքրիկ դամբարը, անցաւ, կէսասիական և կէս-եւրոպական ճաշակով կահաւրված սենեակը, հանեց գրպանից բանալիների կապոցը և բացարաւ իւր զրաւեղանի արկղիկը։ Այնտեղ մի թղթի մէջ փաթաթված էին մի խումբ լուսանկարներ։ Նա կանթեղը դրեց սեղանի վրայ, բաց արաւ փաթեթը, նայեց մէկին, միւսին։ Միսեանց ետեկց զանազան անձանց պատկերներ ընկնում էին նրա ձեռքից սեղանի վրայ։ Վերջապէս մէկը

մնաց նրա մտուների արանքում: Նա սկսեց նայել, նայել երկար ժամանակ, լորասուզված դէմքով այդ փոքրիկ լուսանկարին: Կարծես, այնտեղ նա ձգտում էր կարդալ իւր ապագան, իւր բաղդը, վերջապէս իւր ամբողջ ճակատագիրը: Ի՞նչ էր այդ...—Մի օրիորդ, որի հետ նա վաղուց ծանօթ էր, որին նա հաւանում էր և բոլոր իւր ծանօթ օրիորդներից վեր էր գասում: Նա լուսանկարը շուռ տուեց այս կողմ, այն կողմ, մօտեցրեց դամբարի լուսին, և նրա շրթունքը երկու անգամ հազիւ լսելի շշուկով արտասանեցին:

«Մարիամ»:

Յետոյ նա լուսանկարը դրեց մի առանձին թղթի մէջ, սեղանի մի այլ արկղիկում թագրեց, հեռու միւսներից:

Երբ նա անցաւ ննջարան և պառկեց անկողին, արդէն լրսը սկսել էր բացվել: Նա քննեց երկու ժամ միայն և զարթնեց իւր սովորական ժամին: Այլ ևս նա չը կարողացաւ շարունակել քունը: Նա զգուանքով ցիշեց իւր առաւօտեան մանր մունք սովորովթները, ծանր ու հանդարտ լուացվելը, հագնուելը, հաշեռու առաջ խնամքով սանդրվելը, և նրա մարմնին տիրեց մի ծուլութիւն: Նա կը կամենար ամբողջ լուսակարի արանքում:

օրը անկողնից չը վերկենալ: Եւ հէնց այդ ժամանակ ներս է մտնում անմիտ ծառան և լիշեցնում նրա ամուրի, միայնակ, աննպատակ կեանքը...

Պուների ձայնը ընդհատեց նրա մտքերը: Նա յետ նայեց, և կրկին տեսաւ ծառալին զգաստօրէն և երկիւզով ներս մտնելիս:

— Ի՞նչ ես ուզում, —կոշտ ձայնով հարցրեց նա, ժիկետի կոճակները կապելով:

Թաթոսը լուռ մօտեցաւ և տուեց նրան մի այցետումս:

Հալաբեանը նայեց այցետոմսին և խկոյն հրամացեց ծառալին հիւրին ընդունել:

«Այդ մարդը նրա հօրեղբացն է, իմ բարեկամը, պէտք է աւելի բարեկամանալ», ասաց նա և գուրս եկաւ միւս սենեակ:

Բագլաթոսի վրայ նստած էր և րոպական տարագով հագնուած ցիսուն ու հինգ տարեկան մի մարդ: Մի թէլ ալեխառն մազերով, բայց շատ առոցդ ծերունի, որի ամբողջ կերպարանքից բուրում էին եռանդ, համարձակութիւն, տոկունութիւն և հնարագէտ լսելք: Նրա սափրած երեսը, թանձր ընչացքը, մէջ կլույսը, բարձր և լայն ճակատը, թաւ յոնքերը, բերանի անկիւններում որոշ գծաւորված խոր-

շերը և վերջապէս սուր ու փայտոն աչքերը
գործնական կեանքին անձնատուր մարդու աղ-
դեցութիւն էին զործում: Երբ հալաբեանին տե-
սաւ, նրա դէմքի վրաց խկոյն երևան եկաւ մի
խորին բարեկամական ժպիտ:

Դա յատնի կապալառու Նիկողայոս Սաղա-
փեանն էր:

— Ներեցէք, պարոն Միքայէլ, որ ձեզ նե-
ղութիւն եմ տալիս,—ասաց նա, ոտքի կանդ-
նելով քսան ու հինգ տարեկան երիտասարդի
աշխուժութեամբ:

— Խնդրեմ, լինդրեմ, ձեզ համար ես միշտ
սպատաստ եմ, պարոն Նիկողայոս, — պատասխա-
նեց հալաբեանը և յարգանքով սեղմեց իրանից
Հասակով բարձր Սաղափեանի մեջ ու փայտուկ
ձեռը: — Նստեցէք, լինդրեմ:

Սաղափեանը նստեց իւր տեղը և մի քանի
սովորական հարցերից յետոյ, անմիջապէս դի-
մեց իւր ացելութեան նպատակին:

— Ճեր օգնութեանը կարօտ եմ, պարոն Մի-
քայէլ—ասաց նա ժպտալով:

— Պատրաստ եմ Տառապէլ, ինչքան կարող եմ,
ծխեցէք, լինդրեմ, — առաջարկեց Հալաբեանը
սիդարների արկղիկը, որ բաց դրան էր սեղա-
նի վրայ:

— Ես երբէք փողի պակասութիւն չեմ քաշել,
— շարունակեց Սաղափեանը, — բաց գործերս
այնքան մեծացրի, որ հիմայ ստիպված եմ բա-
րեկամներիս ձեռք մեկնել: Ինձ մի երեք օրից
յետոյ վեց եօթ հազար ոռուբլի է հարկաւոր.
ունէք ազատ փող:

Հալաբեանը բարեկամաբար ժպտայ և, մի
վայրկեան մտածելուց յետոյ, պատասխանեց.

— Չունենամ էլ, ձեզ համար ուրիշից կը
վերցնեմ, պարոն Նիկողայոս: Է է, եթէ ձեզ էլ
փող ըլտամ, ում պիտի տամ:

Սաղափեանը տեղից քիչ բարձրացաւ և զլուս
տուեց հալաբեանին:

— Տոկոսի մասին չեմ խօսում, — ասաց նա,
ինչքան կամքդէ, նշանակիր վեց ամիս ժամա-
նակով:

— Խսկ եթէ առանց տոկոսի տամ, — հարցրեց
Հալաբեանը:

— Ճեմ վերցնիլ, — պատասխանեց Սաղափեա-
նը, — բարեկամութիւնը իրան կարգին, գործն
էլ իրան կարգին: Ես առևտրական կանոննե-
րից չեմ կարող շեղվել:

Հալաբեանը ոչինչ չասաց: Նա գիտէր, որ Սա-
ղափեանը կեղծում է, որ նա չէր հրաժարվել գու-
ցէ, եթէ առանց տոկոսի փող տուող լինէր նրան:

Թամթոսը ներս բերեց արծաթեայ սկուտեղի վրայ դրած մի բաժակ չայ, կարագ, հայ, սեր և երկիւղով դրեց իւր տիրոջ առաջ:

— Ինչու մէկն ես բերում, — յանդիմանեց հալաբեանը, — չես տեսնում, որ հիւր կայ:

— Հիւրը առաւոտեան ուժ ժամին է չայ լսմում, — ասաց Սաղափեանը, — շնորհակայլ եմ, չի հարկաւոր:

Ծառան դուրս եկաւ:

— Այժմեան երխտասարդները, — շարունակեց Սաղափեանը, վերջին բառը առանձին շեշտելով, — զիշերը ցերեկ են դարձել, ցերեկը զիշեր: Ուժ ժամից սկսած ոտքի վրայ եմ, պարոն Միքայէլ, այ ինչ ասել է ընտանիքի տիր լինել:

Երխտասարդ բառը դիմք եկաւ հալաբեանին և միւսնոյն վարդիեանին նա մի կողմնակի հացացք ձգեց դէմ ու դէմի սլատին քարշ արած հայելու մէջ:

Խօսակցութիւնը շարունակվեց նոյն եղանակով: Սաղափեանը սկսեց գանգատիկ իւր դրութեան վրայ: Ծերութեան օրերում ինքն իւր դլուխը լսառնեց մեծ զորձերի մէջ, դարձեալ մի նոր կապալ է վերցրել, օգուտ շատ այդ տէրունական կապալներից, բայց ինչ անի, որ նեղութիւն էլ շատ կայ:

— Մէկը անում եմ, միւսը մոռանում, — յարեց նա, — մարդս առանց սրտացաւ մարդու միձեռանի է: Կործակատարներին հաւատալ չի լինում, մէկ անում են, երկու գողանում: Հաւատացէք, պարոն Միքայէլ, եթէ ես ձեզ պէս մի աղնիս ընկեր ունենացի, միլիօններ կարող էի աշխատել:

— Ինձ նման ծով ընկերը ձեզ միացն վնասել կարող է, — պատասխանեց հալաբեանը, — մարդ պէտք է մի զործ սիրի, որ կարողանայ մրտով կպչի: Կապալների զործերը ինձ այնքան ձանձ բացրին, որ ես վերջը թողի: Ինչոր ունիմ, այսուհետեւ այն էլ ինձ բաւական է, պարոն Նիկողայոս: Բայց ձեր ասածը ճշմարիտ է, որ մի լաւ օդնական է հարկաւոր ձեզ:

— Որ չունիմ սրտացաւ մարդ, ինչ անեմ, — գոչեց Սաղափեանը, ձեռները ծնկներին խփելով:

— Ձեր եղբօր որդին, այ ձեզ սրտացաւ մարդ: Ինչու նրան չէք խառնում ձեր զորձերի մէջ:

— Ուուրէնին, — արտասանեց Սաղափեանը, հեղնաբար ժպտալով: — էլ, պարոն Միքայէլ, դուք նրան չէք ճանաչում:

— Ես նրան ճանաչում եմ, պատուական տղայ է, — պատասխանեց հալաբեանը:

Սադափեանը գլուխը շարժեց աջ ու ձախ։
—Պարոն Միքայէլ, —ասաց նա, աջ ձեռով
շիելով աչքերը, ինչպէս երբեմն անում է ճարդ,
որի ասածը լաւ չէ հասկանում լսօակիցը, —ևս,
ճշմարիտ է, Տերացել եմ, բայց հին ճարդ չէմ։
Հաւանում եմ մեր ժամանակի լսելոք երիտա-
սարդներին։ Նրանք մեզանից գիտուն են, շատ
բան են սովորում, նրանց իմացածի քառորդը
ինձ նմանները չեն իմանում։ Բայց մի բան կաց,
որ ինձ դիւր չի գալիս, որ ատում եմ, ինչ
թագունեմ։ Ծով են մեր ուսումով երիտասարդ-
ները, պարոն Միքայէլ, աշխատանքից փախչող
են։ Խօսք բացվեց, ասեմ։ Այդ եղբօրս որդին
հէնց որ Որուսաստանից եկաւ, ես նրա հետ
խօսեցի։ Ասացի, ահա որդի, ուսումդ վերջացրիր,
հմայ, ի հարկէ, մի գործ պէտք է ճարես քեզ
համար։ ԶԵ. լաւ։ Խսիր, ասացի, որւ բժիշկ չես,
համար։ ԶԵ. լաւ։ Խսիր, ասացի, որւ բժիշկ չես,
որ քեզ համար պրակտիկա ձեռք բերեմ, ինժի-
ներ չես, որ երկաթուղումը քեզ համար մի
պաշտօն գտնեմ իմ ծանօթների միջոցով, է,
իրաւաբան էլ չես, որ գնաս սրան ու նրան
Միքիր ուղարկես։ Ի՞նչ ես։ Փիլօլոգ—իստորիկ
լեզուագէտ եմ, էլ չը գիտեմ, պատմաբան եմ, ա-
սում է։ Ի՞նչ գործ կարող ես կատարել։ Ես, ա-
սում է, միտք չունիմ ծառացէլու, ես պէտք է

դիտութեամբ պարապվեմ։ Խսկ եթէ, ասում է,
Ճառացելու լինիմ, միայն վարժապետ կարող եմ
լինել։ Վարժապետ։ Ինչ պիտի տան քեզ վար
ժապետութեանդ համար, ասացի, չՅմ տեսնում,
վարժապետները քաղցածութիւնից իրանց թե-
ւերն են կրծում։ Արի, ասացի, որդի, քեզ ե-
րեք անգամ աւելի ոռնիկ տամ, իմ գործերիս
մէկ մասը վրադ առ։ Ես քո հայրը, դու իմ որ-
դին։ Ի՞նչ կասէք, պարոն Միքայէլ, լաւ հօրեղ-
բարը դրանից աւելի՞ կանէր իւր եղբօր որդու
համար։

— ԶԵՆԴՈՒՆԵՑ։

—Քինթը վեր քաշեց, —շարունակեց Սադա-
փեանը միշտ հեգնական եղանակով։ —Ես, ա-
սում է, «անլնդուկան եմ առեւթրական գործե-
րում, ես չեմ կարող փանառական կամ կապա-
լառու լինել։ Տեսնում էք. քաղցած ապրել
կարող է, սրան ու նրան զլուխ տալով ամսա-
կան յիսուն - վաթսուն մանէթի համար ծառա-
յել կարող է, ազատ, ինքնազլուխ վաճա-
ռական լինել չի կարող։ Ահա, այս էլ մեր ժա-
մանակի ուսում առաջ խելօք երիտասարդները։
Ճիմայ էլ կանգնել է. «Ես ուզում եմ երկու
տարով արտասահման գնալ, որ կատարելազործ-
վեմ։ Եյս էլ իմ եղբօր որդին, որին դուք պատու-

ական տղայ էք համարում: Զէ, պարոն Միքայ-
յէլ, ուսումն էլ առանց խելքի կոպէկ չարժէ:
Մարդուն առաջարկում են հարստութեան ճա-
նասլարհ, փախչում է, թէ, չը գիտեմ, ես այդ
չեմ հաւանում, այն եմ հաւանում: Կայ աշ-
խարհիս երեսին մի բան, որ փողից աւելի հա-
ւանելի լինի, ասացէք, կայ:

—Նոր երիտասարդներից շատերի համար կայ,
—պատասխանեց Հալաբեանը, —նրանք փառա-
ւէր են, անունը, հռչակը փողից բարձր են հա-
մարում:

—Անուն, հռչակ, —գոչեց Սաղափեանը, —
հաւատացէք, ձեզ և ինձ այնպիսի գեներալներ
ու իշխաններ են նախանձում, որ նրանց ոսի
փոշին չեմ հասնիլ. Ես: Ինչու, որովհետեւ անու-
նը մարդուս փորը չի կշտացնում:

Միանգամայն համոզիմ, որ իւր ասածը զուտ
ճշմարտութիւն է, Սաղափեանը թիկն տուեց
բազիաթուին և իւր հայեացքը ձեց առաս-
տաղին: Մի քանի վայրիեանից յետոյ նա աւե-
լացրեց.

—Բայց թող ինչ ուզում է անի, ես իրա-
ւունք չունեմ այսուհետեւ նրա վրայ: Ես իմ
պարտքս կատարեցի, պահեցի, մեծացրի, ուսում
տուեցի, հիմայ ազատ է: Թող դնայ, որտեղ

ուզում է, թէ կուզ քրոջն էլ տանի, ինչպէս
ասում էլ է, որ պիսի տանի հետը:

—Քրոջը, օրիորդ Մարիամին, —գոչեց Հալա-
բեանը, չը կարողանարով զսպել իւր զարմանքը
և հետաքրքրութիւնը:

—Հապահ, —պատասխանեց Սաղափեանը, քրմ-
ծիծաղելով, —իբր թէ ստացած կրթութիւնը
պակաս է: Ասացէք, խնդրեմ, մեր ժամանակի
օրիորդին աւելի ինչ է հարկաւոր, զիմնազիա-
յում ուսումը աւարտել է, ֆրանսերէն գիտէ,
պարել, պիանինօ ածել, մինչեւ անդամ երգել
գիտէ: Խօմ չի կարող գնալ աղօկատ կամ
ինժիներ դառնալ: Բժիշկ պիտի դառնայ... ա-
տելով ատում եմ բժիշկ կանանց, նրանք կա-
նաչք չեն, նրանք կէս տղամարդ են. . . Եէ,
խօսքով եղայ ու ուշացայ, —աւելացրեց նա յան-
կարծ, ժամացոցին նայելով, —մէկին կէս է
մնում: Ներեցէք, պարոն Միքայէլ, ես մինչեւ
ճաշ մի քանի տեղեր ունիմ գնալու:

Եւ նա բազմազբաղ մարդու դէմքով ոտքի
կանգնեց շտապով, ասելով.

—Ուրեմն յոյս ունենամ փողերի մասին:

—Համարեցէք, որ ձեր գրպանումն են, —
միամտացրեց Հալաբեանը, —վաղը ուզարկեցէք
ձեր գործակատարին, որ ստանայ:

— չա, կիւրակի օրը կը սպասեմ ձեզ ճաշին,
— ասաց Սաղափեանը, — կինս այսօր ասաց, որ
երէկ ձեզ ժողովարանում տեսել է ու յանդի-
մանել: Իրաւունք ունի, պարոն Միքայէլ, շատ
ուշ ուշ էք գալիս մեր կողմերը: Բարեկամու-
թիւնը այդպէս չի լինի, մի փոքր էլ մեզ վրայ
ուշշղրութիւն դարձրէք: Կիւրակի օրը անպատ-
ճառ. մեր տանն էք, խօսք տալի՞ս էք:

— Ուրախութեամբ, — պատասխանաց Հալա-
բեանը, յարդանքով ճանապարհ դնելով իւր հիւ-
րին մինչև նախագաւիթ:

Նա վերադարձաւ և, ձեռները վարդիկի զըս-
տանները դնելով, սկսեց քայլել յետ ու առաջ
մտայոցզ դէմքով:

«Եննման է, աննման է, չը կայ նրանից
լաւը ամբողջ Թիֆլիսում, կրկնում էր նա իւր
մտքում: Ի՞նչ ասաց այդ մարդը, միթէ նա պի-
տի գնաց արտասահման: Միթէ ես պիտի թող-
նեմ, որ այդ բաղդր փալսչի իմ ձեռքից: Յետոց,
ով կարող է նրա նման ինձ դիւր գալ: Ոչ ոք:
Զարմանալի բան է, կարծես, որքան մտա-
ծում եմ այդ աղջկաց մասին, այնքան աւելի եմ
հաւանում: Ես, որ քառասուն ու երեք տա-
րիս շուտով կը լրանայ...»

Բնազդմամբ նա մօտեցաւ հայելուն և սկսեց

զննել իրան ոտից մինչև զլուխ: Երբէք նա
ինքն իրան այնքան ծեր, թառամած, տղեղ
չէր երևացել, որքան այս անգամ սպատիւրաց-
րեց անողոք հայելին: Աչքերի տակի թառամած
կաշին, բերանի անկիւններում որոշ գծաւորված
լսորշերը, վերջապէս, ճաղատ, փայլուն գլուխը,
միրուքի սպիտակ թելերը, ծերութեան այս բո-
լոր անջնջելի նշանները վհատեցնելու չափ ազ-
դու էին: «Նա ինքն իրանից լսորշելով, երեսը
յետ դարձրեց հայելուց և յուզված սկսեց կրկին
անցուդարձել:

Նախագաւթից լսվեց մի ծանօթ ձայն, և
նոյն վայրկեանին գուները զգոյշ բանալով, ներս
մտաւ մօսիօ Վախվախւանը կամացուկ:

— Մի բոպէ, միայն մի բոպէ շնորհեցէք
ինձ, — ասաց նա, կարմիր ձեռները միմեանց
այնպէս շփելով, որ կարծես, ցրտից սառել էին:

Եւ սիրայիր ժպիտը երեսին, մէջ ըից խոնարհ
թեքվեց, բոնեց Հալաբեանի աջը և, սեղմելով
իւր կրծքին, շարունակեց.

— Երէկ ժողովարանից շատ տիրած դուրս
եկաք: Բնութիւնս վատ է, պարոնս, շատ վատ
է. հենց որ բարեկամներիցս մէկին մի քիչ տը-
խուր եմ տեսնում, սիրտս, ասես, ու է կապում:
Կարելի է հարցնել ձեր առողջութեան մտսին:

—Առողջ եմ և ուրախ, —պատասխանեց Հալաբեանը հակիրճ:

—Օօ, փառք Աստու Տոյ, հիմաց հանգստացայ, —գոչեց մօսիօ Վախվախսեանը, ձեռը քսելով կրծքին. —Ի՞նչ էք կամենում, ծառացին, —աւելացրեց նա, Հալաբեանի մի թեթև նշանից գուշակելով նրա միտքը, —այս վայրկեանիս.

Նա անմիջապէս դուրս վազեց և ծառացին կանչեց ներս:

—Թէհ, ցտեսութիւն, Էլ գործ չունեմ, —ասաց նա, վերին աստիճանի խեղճ եղանակով:

—Սպասիր, միասին դուրս կը գանք, —պատուիրեց Հալաբեանը, և ծառացի հետ անցաւ ննջարան:

Մնալով միանսակ, մօսիօ Վախվախսեանը դէս ու դէն նայեց, վերցրեց սեղանի վրայ դրած սիդարներից մէկը, խնամքով ծայրը կտրեց, վառեց, թիկն տուեց բազկաթոռին, ոտը ոտի վրայ ձգեց և սկսեց ծխիլ: Նրա դէմքի քաղցր արտայատութիւնից և աչքերի բիբերի ժպտուն փայլեց կարելի էր գուշակել, թէ որքան ախործելի աղդեցութիւն է անում նրա շնչափողի վրայ արտասահմանից յատկապէս Հալաբեանի համար բերված հաւանեան սիգարի ծուխը: Մօսիօ Վախվախսեանը, իբրև նուրբ ախորժակի

տէր, գիտէր հազուագիւտ բաների ճաշակը: Թանձր ծուխը բերանից դէպի առաստաղը բաց թողնելով, նայում էր նրա օղածե հոսանքին և հրճվում, ինչպէս կարող է հրճվել բուն ճարտարագէտը մի գեղեցիկ բանով: Եւ այդ վայրկեանին նրա կոլորակ, մսալի գլուխը արտադրում էր հետեւեալ գաղափարը. «Ծխողն Էլ ահա այս տեսակը պիտի ծխի, թէ չէ գրպանիս դարձանը... Օօ՛, մոխրին նայեցէք, բամբակ է»...

Յանկարծ նա մտատանջութեան մէջ ընկաւ: Խսկապէս նրա ացելութիւնը մի շատ գործնական նպատակ ունէր: Նա եկել էր իմանալու, արդեօք Հալաբեանը մի որ և է ծանօթ ընտանիք հրաւիրուած չէ ճաշի: Եթէ ոչ, եղանակը հրաշալի է, կարելի է Միքայէլեան փողոցի ացգիներից մէկում, Քուռի ափում, մի լաւ «սուկի» խորովել տալ:

Հալաբեանը դուրս եկաւ մաքուր հագնուած, մօտեցաւ, որ հայելու առջև փողիապը ուղղի:

—Օրից օր բացվում էք վարդ ու մանիշակի պէտ, —գոչեց մօսիօ Վախվախսեանը, ոտքի թոշելով և իբր հիացած նայելով ոտից մինչեւ զլուխ հարուստ ամուրիին: — Այ ինչը են կանաչք սիրահարփում: Երէկ ժողովարանում մի գեղեցիկ կնիկ իրան մարդուն հարցրեց ձեր

մասին «ով է այդ համակրելի տղամարդը»։ Արեւ վիայց, ականջովս լսեցի։ Սսում եմ էլի, որ Աստուած տալիս է, ամեն կողմից է տալիս, հապա, ինչու մի քոսոտն էլ ինձ համար չի ասում, թէ «համակրելի» եմ։

Եւ տեսնելով, որ իւր հաճոյախօսութիւնը մի ժամկտ շարժեց Հալաբեանի երեսի վրայ, նա հանեց գրապանից մի արձաթեայ տուփ և խուփը բանալով, պահեց նրա առաջ, ասելով։

—Գլխի ցաւի համար լիստ յաւ է։

—Վարպետ ես, Սերգօ, —ասաց Հալաբեանը, ցուցամատի ու բութ մատի ծայրերով վերցրեց մի ստղուց քթախոտ, մէջքից թեքից, որ նոր կարփած մւ սիւրտիւկը չ'ապականուի, և ախորժակով քաշեց։

Քթախոտ քաշելը Հալաբեանի քմահաճութիւններից մէկն էր, որ սակայն մտաբերում էր շատ քիչ անգամ և այն էլ մօսիօ Վախվալսեանին տեսնելիս։ Կերցինը միշտ իւր գրապանում պահում էր լիք տուփը յատուկ նրա համար։

—Եսաօր միասին կը ճաշենք, —ասաց Հալաբեանը, —իսկ այժմ դնանք Կապիալ հիւրանոցում մի թեթև նախաճաշիկ անենք։

ապա—ըստ ցամացի ով մայակը ցը կոյ առ առից առ մասը առ մայակը մայու առ առ զայն ազգ ։ բութից մի մայդա վեր բար հայու զայն զայն մայդա առան մայն բարուատից բարուար չ'են մայդա զայն մայդա ։

III

Մի ամպամած առաւօտ Անդրկովկասի երկաթուղու կառախօսումբը կանգ առաւ Թիֆլիսի կայարանում։ Երկրորդ դասի մի կառքից, շատ ճանապարհորդների թում, դուրս եկաւ և՛ մի երիտասարդ, մի օրիորդի հետ թևակցած։ Բեռնակիր մշակներից մէկը դուրս բերեց նրանց ճանապարհային իրեղէնները—երկու բարձ, մի կաշուէ արկդ, մի պլէդ և մի կապ կազմած ու անկազմ գրքեր։

Օրիորդը ձեռում բռնած ունէր կիսաթառամ ծաղկիների մի փունջ, որից նա ստէպ ստէպ հոտ էր քաշում։ Ճտապ և ուրախ խօսակցելով, երիտասարդն ու օրիորդը պլատֆորմի վրայ խոնուած խիտ բազմութեան միջով անցան կայարանի միւս կողմը։ Հետաքրքիր դիտողը, նայելով այդ թե թեկի տուած մի գոյգ արարածներին, զննելով նրանց վարվելու ձեւերը և մանաւանդ կերպարանքը, կը գուշակէր քոյք ու եղբայր լինելը. այնքան հասարակ էին այդ ձեւերը, այնչափ նման էին նրանք միմեանց։

Նրէցը եղբայրն էր, կրտսերը քոյրը—արագաշարժ և ճկուն, մօտ քսան ու երկու տարեկան մի օրիորդ։ Նրա, երկար ու սե արտեւանունքերի մէջ պարփակուած, պարզ գոյնի խոշոր աչքերի մէջ վառվող երիտասարդական կենդանի հուրը մի գրաւիչ զուարթութիւն էր տալիս սակաւ ինչ արեակէզ երեսին։ Նա միջին հասակից քիչ բարձր էր, ոչ նիշար, ոչ գէր, համաշափ կազմուածքով։ Հագած էր նա համեստ մոխրագոյն ասուեաց զգեստ, նոյն գոյնի մահուդի կարճ վերարկու։ Պանամի դեղնագոյն գլխարկից քարշ ընկած թափանցիկ, սպիտակ շղարշը, քոդաւորելով նրա շագանակագոյն պերճ մազերը, ընդգրկել էր մէջքը օձապտցոց ձևերով։ Երիտասարդը բարձրահասակ էր, դէմքի մեղմ գնազրութեամբ, բարեհամբոցը, աւելի թուլս գունով, կարճիկ խուզած միրուքով ու մազերով։ Նա հագած էր մեխսակագոյն կարճ պիգչակ, նոյն գոյնի վարդիկ։ որի ծայրերը մտցրած էին ճանապարհացին փացուն կօշիկների երկար անկարուրդի մէջ։

Նրանք նստեցին կայարանի առջև խմբուած կառքերից մինը։ Երիտասարդը ասաց փողոցի անունը, կառքը սլացաւ դէսի քաղաքի կենտրոնը։

— Պարձեակ թիվի կողումն ենք, — ասաց օրիորդը հառաչելով։

— Եւ այդքան ուշ, — յարեց Երիտասարդը, անհանգիստ ձևով ուղղելով իւր ուսին գցած փոքրիկ պայցուսակը։

— Եսկ իմ կարծիքով, վաղ, — հակասեց օրիորդը. — Եւ ինչու համար — ըստ զիտեմ։ Այս, ինչ տեսարաններ, ինչ անտառներ, ինչ ձորեր, ինչ հրաշալի լեռներ թողինք այնտեղ։

Այս ասելով, օրիորդը մի քանի անգամ արագ արագ հոտ քաշեց իւր ձեռում բոնած փնջից։ Եւ նոյն վայրկեանին մի դիւրեկան պաշճառ ժպիտ սահեց նրա քնքովց շրթունքների վրայ, գուցէ երիներանդ ծաղիկների անուշ բուրման ազգեցութիւնից։

— Ուզում ես ինձ հաւատացնել, որ քեզ ոգեւորող միայն տեսարաններն էին, — արտասանեց Երիտասարդը, և նրա բարի աչքերի մէջ փայլեց եղբայրական անուշ հեղնութիւնը։

Օրիորդի արևակէզ այտերը աւելի շառագունեցին։ Նա յօնքերը սեղմեց, երեսը շուռ տուեց միւս կողմ։

— Լաւ, մի ամաջիր, Մարօ, — շտապեց աւելացնել Երիտասարդը, ժպտալով։ — Դու զիտես, որ Սելիք-Բարսեղեանը իմ լաւ ընկերն է, ես նը-

րան սիրում եմ: Բայց մի մեզադրիլ ինձ, որ քեզ աշդպէս շուտ բաժանեցի նրանից: Ես աւելի չէի կարող մնալ Դիլիջանում:

—Ինչու, —հարցրեց օրիորդը հետաքրքրուած եղբօր վերջին խօսքերով: . . .

—Ինչու, —կրկնեց երիտասարդը, —միթէ դեռ էլի չեմ հաւատում իմ վճռին: Ես պէտք է պատրաստվիմ շուտով ուղևորվելու, արտասահման:

—Դարձեալ արտասահման, —ասաց օրիորդը թախօօրէն, —ախո, Թուբէն, թող այդ մտադրութիւնուր: Քո հեռանալդ ինձ վախեցնում է, մնացիր Թիֆլիզում:

—Ի՞նչ, միթէ դու ուզում ես, որ եղբայրդ թերիւս մնայ:

—Թերիւս, —գոչեց օրիորդը գարմացած:

—Այո, թերիւս, —պատասխանեց երիտասարդը դրական եղանակով, —որովհետև գրպանում համալսարանի դիվլում ունենալը դեռ ուսումնական լինել չի նշանակում: Դեռ շատ բան է մնում սովորելու, օօ, շատ բան:

Վերջին բառերը արտասանելիս երիտասարդի պայծառ դէմքը մթագնեց հոգսերի ստուերով:

—Դու կարելի է ճշմարիտն ես ասում, —խօսեց օրիորդը, —ես գէմ չեմ: Կամենում եմ, որ դու կատարելագործես, որքան կամքդ է: Բայց

քեզանից բաժանվելը, Թուբէն, ես քանի անդամ քեզ ասել եմ արդէն, ծանր է ինձ համար, շատ ծանր:

—Քեզ առաջարկում եմ և լինդրում, որ հետո դաս, բայց դու յամառութիւն ես անում: Ինչու —չեմ իմանում: Հաւատացիր, որ լաւ կը լինը թէ ինձ համար և թէ քեզ համար:

—Ճատ լաւ կը լինէր, —կրկնեց օրիորդը, հառաջելով, —կը ցանկանացի, հոգով կը ցանկանացի, բայց . . .

—Դարձեալ բայց, —գոչեց երիտասարդը մի քիչ յուզված, —և երբէք չես ուզում յայտնել ինձ այդ պատճառը:

Այս ասելով, նա դժկամակութեամբ նայեց քրոջը: Վերջինը լուռ էր:

—Չը լինի թէ, —շարունակեց, երիտասարդը, ձայնը դարձեալ մեղմացնելով, —ը լինի թէ արդէն այնքան զրաւել է քեզ նա, որ չես ուզում հեռանալ նրանից . . .

—Թուբէն, -արտասանեց օրիորդը խորին յանդիմանութեամբ, -այդպիսի կատակ մի անիլ հետու, նա... նա... չէ պատճառը, և չի էլ կարող լինել... Իմ պատճառը աւելի ծանր է, քան կարծում ես...

—Ի՞նչ է ուրեմն, —գոչեց Թուբէնը, աչքերը սկսելով քրոջ երեսին:

Օրիորդը մի քանի վայրկեան լուելուց յետոց,
կրկին հառաջեց:

—Թողնենք այդ խօսակցութիւնը, ասաց նա.
Ահա հասնում ենք տուն: Եշխատի՞ր ուրախ հան-
դիպել մեր ազգականներին: Դէհ, դարձեալ թը-
թուացրիր աչքունքդ, դրա համար ես ուզում
ինձ հետդ արտասահման տանել, որ միշտ տըխ-
րես. շնորհակալ եմ:

Ասաց օրիորդը և, վիրաւորված ձեանալով,
երեսը դարձեց մի կողմ:

Կառքը Քուռ գետի աջ կողմի քաղաքամասը
անցնելով, մտել էր արդէն կենտրոնական փո-
ղոյները:

Քոյր և եղբայր լուռ էին: Ռուբէնը մի Տխա-
խոտ վառեց և սկսեց Տխել, անորոշ հայեաց քով
նայելով իւր երկար կոշիկների ծայրերին: Խոկ
քոյրը, փունջը Տնկների վրաց դրած, մտիկ էր
անում աջ ու ձախ տներին, որ միմեանց ետե-
լից անցնում էին: Ընդամենը երեք ու կէս ա-
միս բացակայ էր եղել Թիվիլզից, և այժմ ա-
մեն ինչ նրան փոխված էր երևում, թէ փողոց-
ներն ու տները և թէ անցուդարձող մարդիկ:
Նա, աշխատելով յաղթել իւր մէջ ծագած քո-
պէական թախսիջը, աչքերով որոնում էր
ծանօթ դէմքեր: Մինչդեռ եղբայրը, գաղտուկ

նայելով քրոջը կիսադէմքին, նկատեց նրա պայ-
ծառ ճակատի վրաց այն տխուր ամպը, որ եր-
բեմն յայտնիում էր, երբ նա փորձում էր խօսք-
բանալ իրանց դրութեան մասին:

Կառքը կանգնեց երեքյարկանի նորաշէն,
մղվարագոյն ներկած մի մաքուր տան առաջ:

—Այս բոպիշ ես կը համբուրեմ իմ սիրելի կի-
զային ու Գաբօյին, —գոչեց օրիորդը և աշխոյժ
կերպով վայր ցատկեց կառքից:

Մինչ Ռուբէնը կառապանի վարձը կը տար
ու իրեղէնները ցած կը բերէր, նա փունջը ձե-
ռին արագութեամբ բարձրացաւ երկրորդ յար-
կը: Մարմարոնեաց լայն և փայուն սանդուղի
վերևում օրիորդին դիմաւորեց մի ուժ տարե-
կան աղջիկ սկ աչքունքով: Օրիորդը գրկեց
նրան, համբուրեց մի քանի անդամ և, թեկց
բոնելով, շտապեց առաջ:

—Օրիորդ, եկաք, վերջապէս, —գոչեց, դէմ ու
դէմ վագելով, ուստ աղախինը, և ուրախ ուրախ
բարեւեց:

Նախազաւթում օրիորդի առաջը վազեց մի
տասը տարեկան պատանի գիմնազիական համա-
զգեստով: Օրիորդը նրան էլ գրկեց, համբուրեց
և տարաւ ներս:

Մի քառակուսի, մաքուր պարկետով, գեղեցիկ

ոսկենկար պաստառով զարդարված բաւական մեծ սենեակի մէջ տեղում, կրորակ սեղանի շուրջը նստած թէյ էին լսմում Նիկողայոս Սաղա- փեանը, իւր կինը — տիկին Սօփիօն և աղջիկը — օրիորդ Նատալիան:

—Մարիամ, — գուցեցին միաբերան վերջին եր- կուսը մի տեսակ անբնական ուրախութեամբ:

Մարիամը հերթով փաթաթվեց կանանց պա- րանոցին և մի քանի անգամ ջերմացերմ համ- բուրեց նրանց, մանաւանդ Նատալիային:

—Հանդարտ, մագերս քրքրեցիր, — ասաց Նա- տալիան, գլուխը յետ դարձնելով:

Մարիամը սեղմեց հօրեղբօր ձեռը: Հարց հար- ցի ետևից նա առաջարկում էր մերթ մէկին, մերթ միւսին: Կարծես, նա տարիներով չէր տե- սել իւր ազգականներին, այնքան անկեղծ էր նրա ուրախութիւնը:

Ներս մտաւ եղեացը և տեսարանը մի քիչ փոխվեց: Նա հանդարտ մօտեցաւ, սառն և քա- ղաքանարի բարեկց: Բոլորը առողջ էին, Միայն օրիորդ Նատալիան ցայտնեց, հառաւելով, թէ գլուխը սաստիկ ցաւում է:

—Դարը ես դիտեմ, — գոչեց Մարիամը, վերցնելով իւր փացիացած փունջը, որ համբուր- վելու միջոցին դրել էր պատուհանի վրայ: — Ա-

հա, Նատօ, թէ և մի քիչ թառամել են, բայց հազուազիւտ Տաղիկներ են: Իմ մօրաքրոջ աղ- ջկայ, Մարգարիտի, վերջին նուերն է: իւր ձե- ռովն է քաղել իրանց պարտիզից: Այնքան սի- րեցի, որ Դիլիջանից մինչև այստեղ բերի:

—Կարծես, Թիֆլիզում քիչ կայ, — ասաց օրի- որդ Նատալիան մի տեսակ արհամարհանքով, — շնորհակալ եմ, զու շատ բարի ես, Մարօ, գիր ահա այն բաժակի մէջ:

Մարիամը փունջը դրեց, առաջվայ տեղը և իւր դժկանակութիւնը թագցնելու համար: կր- կին թեքվեց և սկսեց լնօսել իւրա շուրջը պտոյտ պտոյտ անսող փոքրիկ աղջկայ և պա- տանիկ հետ:

—Ինչո՞ւ ինձ չես տալիս Տաղիկները, ես կը պահեմ իմ սեղանիս վրայ, — ասաց աղջիկը, Մա- րիամին գրկելով:

Մարիամը տուեց նրան փունջը:
—Մամա, թոյս տուր այսօր տանը մնամ, — ա- սաց պատանին:

—Ինչո՞ւ, — հարցրեց տիկին Սօփիօն:
—Ուզում եմ Մարօին ու Ռուբէնին տեսնել:
—Լոյր, — գոչեց մացրը, աչքունքը խոշորելով:
—Մարօն ու Ռուբէնը չեն փախչում, կարող ես յետոց էլ տեսնել: Կանչիր Տաղացին, որ

քեզ տանի ուսումնարան։ Դու էլ, — դարձաւ նա փոքրիկ կիզայի, — Տաղիները դիր տեղը ու գնա դաստ սովորիր։

Պատանին և աղջիկը ակամայ ու տիսրադէմ հպատակիցին իրանց մօր խստաճայն հրամանին, կրիխն ու կրկին ընդունելով Մարիամի համբոցները և գգուանքը։

— Իմ սիրելիներս, — ասում էր օրիորդը, մերթ դառնալով Գաբօյին, մերթ կիզային, — ես ձեզ ամեն օր ցիշում էի։ Գնացէնք, գնացէնք, էլի ես ձերն եմ։

Վերջապէս, նա նստեց թէյ խմելու և սկսեց պատմել, թէ ինչպէս է ժամանակ անցկացրել Տիլջանում։ Նիկողայոսը, յայտնելով որ դործ ունէ, շտապով դուրս եկաւ։

— Գիտենք, գիտենք, շատ ուրախ են անցել օրերդ, առանց մեզ, — նկատեց նատալիան Մարիամին մի երկդիմի եղանակով։

— Դու չես կարող երևակայել, նատօ, — շարունակեց Մարիամը ոգեսրված, թէ ինչ ուրախ օրիորդ է մեր մօրաքրոջ աղջիկը։ Գեղեցիկ, կրթուած, համակրելի, նրա նմանը Թիֆլիդում ես չեմ տեսել։

— Ի հարկէ, երևանում մայրաքաղաքի կրթութիւն ստացած կը լինի, — ասաց օրիորդ։ Նա-

տալիան Տաղրաբար։ — Բայց, սիրելիս, ինչու միայն այդ աղջկան ես գովում, միթէ ուրիշ գովելու մարդ չը կար այնտեղ։ Խոկ այն երիտասարդ բժիշկը, որի հետ դու վաղուց, շատ վաղուց, Տանօթ ես։

Մարիամը մի մեղմ յանդիմանական հայեացք ձգեց նատալիայի երեսին և ոչինչ չը պատասխանեց։

— Ի՞նչ սկացել ես, Մարօ, — փոխեց իւր խօսքը նատալիան, ներքուստ նախանձելով Մարիամի դէմքի գրաւութեանը, — մի բանի նըման ես, բայց չը գիտեմ ինչի։

— Գնջուհու, — յարեց Մարիամը անկեղծաբար։

— Լաւ, լաւ, կեղծ համեստութիւն մի անիլ, — գոչեց նատալիան կծված ձայնով, — ինքդ շատ լաւ իմանում ես, որ . . . գեղեցիկ ես, ինչ հարկաւոր է կոտրատվիլ։ Ելս, աէր նատուած, տրաքեց զլուխս, ներիր հոգիս, եթ այլ ևս նըստել չեմ կարող։

Եսաց նատալիան և անմիջապէս վերկացաւ գնաց իւր սենեակը։

— Գնա, օգնիր, որդի, նա հիւանդէ, — ասաց տիկին Սօփիօն Մարիամին։

Օրիորդը հետեւց նատալիովին։ Տիկինը մնաց Ոուբէնի հետ։

— Հանգուցեալ մայրդ, միտս է, միշտ ասում
էր «Մարօս շատ կրակոտ աղջիկ է լինելու»,
— խօսեց տիկինը, — այց մ կատարվում է նրա
խօսքը: Տեսնում ես, Ոռոբէն, քոյրդ ինչպէս է
թռչոտում, այդ լաւ բան չէ, լաւ բան չէ:

— Երանի թէ միշտ այդպէս լինէր, — նկատեց
Ոռոբէնը, որ մինչեւ այդ րոպէտ լուռ էր, — լաւ
է կրակոտ լինել, քան թճրած:

— Օ հօ հօ, որդի, մի ասիլ, — դոչեց տիկին
Սօփիօն, — աղջիկը սիխտի մի քիչ էլ ամաչկոտ լինի:

— Ամաչկոտ, — կրկնեց Ոռոբէնը զարմայցած, —
ես, կարծում եմ, որ Մարիամի պէտ ամաչկոտ
աղջիկ շատ քիչ կայ:

Տիկինը տարակուսաբար գլուխը շարժեց:

— Ես չեմ ասում, թէ նա երեսբաց է, — ար-
տասահնեց նա խորհրդաւոր ձայնով, — բաց էլի...

— Կսացէք, տիկին, եթէ մի բան գիտէք, —
հետաքրքրուեց Ոռոբէնը, — եթէ մի պահաւու-
թիւն ունի Մարիամը, ես նրա եղբայրն եմ,
սլարտական եմ նրան յորդորել, որ ուղղի իրան:

— Խօսքս այն երիտասարդի մասին է, — պա-
տասխանեց տիկինը, — այն բժշկի, որին զար-
նանը մի քանի անգամ մեր տուն բերիք: Մա-
րիամը զրել էր Նատալիային, որ նա էլ Թիկի-
ցանումն է: Ի՞նչ էր անում այնտեղ:

— Ոչինչ, եկել էր մի ամիս այնտեղ ապրելու:

— Նա էլ ձեզ հետ Թիկից եկաւ:

— Ոչ, բաց շուտով կը գայ:

— Հըմ, — արտասահնեց տիկինը, զլուխը երե-
րելով, — նա այստեղ է մնալու:

— Զը զիտեմ, առ այց մ նա Երևանումն է
բժշկութիւն անում: Բաց ինչ էլիք ուզում ա-
սել Մարիամի մասին, այդ շատ հետաքրքրա-
կան է:

Տիկինը մի քանի վայրկեան լրելուց ցնուզ
պատասխանեց.

— Այն էլի ուզում ասել, որդի, որ լսել եմ,
թէ Մարիամը... էհ, ինչ թագնեմ... սիրում
է այդ տղային ու...:

— Ու... արտասահնեց Ոռոբէնը, մի անորոշ
ցնցումն գործելով:

— Ու խօսք է տուել նրան գնալու:

Ոռոբէնը մի հոգոց հանեց կրծքից և ժպտաց:
Նա, կարծես, աւելի ծանր մի լուրի էր սպա-
սում:

— Զափահաս աղջկաց դրութիւնը, որդի, շատ
դժուար է, — շարունակեց տիկինը զորովագութ-
մօր եղանակով, — չը պէտք է նրան մի րոպէ
աշքից հեռացնել, թէ չէ, ով գիտէ... Ասելս
այն է, որդի, եթէ այն տղան լաւ տղան է, բեր

շուտ շուտ մեր տուն, կարելի է մենք էլ հաւանենք, Մարիամի համար փեսացու ընտրենք ու շուտով պատկենք:

— Եց նպատակով, տիկին, ներեցէք ասել, ես ոչ մի ընկերոջ չեմ բերիլ այս տեղ,—պատաժանեց Իու բէնը հաստատ ձախով: — Փեսացու ընտրելու իրաւունքը Մարիամինն է, ում կը հաւանի, նրան կ'ուզի:

— Համ, — արտասանեց տիկինը, շրթունքը սեղմելով, աչքերը լայն բանալով և զլուսը բարձրացնելով, — իմացայ, ուրեմն ես ու հօրեղ-բացրդ ոչինչ, ուրեմն մենք իրաւունք չունենք այդ գործի մէջ խառնուելու:

Թուբէնը զգաց իւր խօսքերի լսատութիւնը տիկնոց համար: Նա շտապեց մեղմել նրանց ագ-դեցութիւնը:

— Ճեր իրաւունքը իմնից մեծ է, տիկին: Բայց առ այժմ ամուսնանալու հերթը նատալիացմն է, պատիկ քոյրը մեծ քրոջից առաջ ընկնել չի կարող:

— Նատալիայի մասին ես հոգս չունեմ, պատասխանեց տիկինը դեռ բաւական կծփած ձախով, — նրա համար փեսացուներ միշտ կան, որին հաւանեմ, նրան կը տամ: Ե՞ն, թողնենք, դու, երեխ, անքուն ես մնացել երէկ զիշեր, — աւելացրեց նա, յանկարծ ոտքի կանգնելով:

դնա, հանգստացիր ու շորերդ փոխիր, թէ չէ մի մարդ ներս կը մտնի, ամօթ է այդ կոշիկ-ներով երևալ...

Թուբէնը, որ ինքն արդէն կամենում էր շուտով հեռանալ տիկնոցից, շտապեց իւր սենեակը և, դռները ծածկելով, առանձնացաւ:

Նա փոխեց ճանապարհային հագուստը և, նստելով սեղանի մօտ, անձնատուր եղաւ իւր մտածումներին:

Ութ տարի էր, որ նա իւր քրոջ հետ հօրեղբօր հովանաւորութեան ներքոյ էին: Այսինքն այն օրից, երբ մեռաւ նրանց հայրը: Այն ժամանակ քոյր և եղբաց գեռ գիմնազիոնումն էին: Հազիւ նրանց փափուկ սիրտը ամոքվել էր մօր մահից յետոյ հինգ տարի անցած, ճակատագիրը երկրորդ հարուածը տուեց տասնուեօթ տարեկան պատանուն և տասն ու չորս տարեկան աղջկան:

Ամբողջ գիշեր նրանք ականատես էին իրանց հօր կեանքի վերջին խաւար ժամերին: Մահճակալի մի կողմում կանգնած էր Թուբէնը, միւս կողմում Մարիամը և Նիկողայոսը: Միքանի անդամ մեռնողը այն օրուայ ընթացքում, զգալով մահուան մերձաւորութիւնը, կըրտսեր եղբօր ներկայութեամբ կրկնեց, թէ իւր

դաւակների նիւթական գրութիւնը համարեա
միանգամացն ապահով է թողնում:

«Դու միամիտ կաց, որդի, հօրեղբայրդ կը
կարգադրի ձեր գործերը, —ասաց նա Ռուբէ-
նին:

«Նիկողացոս, քեզ եմ յանձնում իմ գաւակի-
ներին: Սիրիք և պահպանիր»:

Նիկողացոսը գլուխը կրծքին թեքեց և ար-
տասուքը հազիւ զսպելով, պատասխանեց:

«Ես նրանց չեմ բաժանիլ իմ ընտանիքից» կը
պահպանեմ մինչև իմ վերջին օրը»:

Եցա էին այն խօսքերը, որ, Ռուբէնի ներ-
կայութեամբ, փոխանակեցին երկու եղբայր-
ները:

Այն ժամանակ Ռուբէնը ըլ գիտէր այդ ա-
նորոշ խօսքերի բռն խմաստը. բովէի գառն
վիշտը պատանու ուշ ու միտքը մթնացրել էր:
Նա ողբում էր իւր ծնողին: Յիշում է նա այժմ
ևս, որ ձմեռն էր, որ դրսում ըոր քամի էր
վչում, երկիրը ծածկուել էր սառնամանիքով:
Գաւթի տերեւաթափ ակացիան իւր սառած
ճիւղերը զարկում էր փակ լուսամտի փեղիերին:
Ռուբէնը ձեռները կրծքին ծալած, կանգնած էր
սենեակի այն կիսախաւար անկիւնում, ուսկից
լսվում էր մեռնողի ծանր հառաջանքը: Մենեակ

մտնում ու գուրս էին գալիս, անլուր ստուեր-
ների պէս, ինչոր մարդիկ: Զէ ցիշում նրանց
դէմքերը Ռուբէնը: Մտաբերում է այն, որ մէկը
բռնած նրա թևից, աշխատում էր հեռացնել
մահակալից, շշնչալով:

«Թող խեղճ մարդը հանգստանայ»:

Այդ մէկը տիկին Սոփիօն էր: Բայց Ռուբէնը
մի քայլ անգամ չը հեռացաւ: Նրա աչքերը
յառած էին այն հողագոյն դէմքի վրայ, ուր
մահը ծաւալել էր իւր խաւար ստուերը: Մերթ-
բացիւմ էին, մերթ փակիւմ այդ խոշորացած
աչքերը, որոնց պազած շրջանակները ճեպանա-
կի գոյն էին ստացել:

Յանկարծ մեռնողը յետ ձգեց վերմակի ծայրը,
բարձբացնեց իւր թոյլ ձեռը, որքան կարող էր:
Ռուբէնը և Մարիամը միաժամանակ բռնեցին
այդ պաղ ձեռը, մեռնողի քարացած շրթունքի
վրայ սառաւ վերջին խօսքը.

«Սիրեցէք միմեանց»:

Անջնջելի կերպով կերպով այդ պատուէրը
դրոշմուեց որդու սրտում: Այնուհետև ամեն
ինչ խաւարվեց Ռուբէնի աչքում, երբ տեսաւ,
թէ ինչպէս երիւ անծանօթ կանացք, զրկե-
լով, դուրս բերեցին սենեակից ուշաթափ Մա-
րիամին:

Նւ ահա արդէն ուժ տարի է անցել այդ սգալի գիշերից: Այն ժամանակից շատ բան է փոխվել: Մարիամը, ամելով օրըստօրէ, այժմ չափահաս օրիորդ է դառել: Հօր յիշատակը նրան պատճառում է մի թախիծ, մօրը նա յիշում է շատ մութն կերպով: Նրա առողջ բնաւորութիւնը յաղթող հանդիսացաւ որդիական վշտին, ժամանակը ամոքեց օրիորդի սրտի վէրքը: Խակ Ռուբէնը, անձնատուր լինելով ուսմանը, աւելի շուտ միշիթարութիւն գտաւ այնտեղ: Սակայն նա չը մոռացաւ իւր ծնողների յիշատակը և հօր վերջին պատգամը: Նա սիրում էր քրոջը: Սիրում էր, որպէս փափկասիրտ եղեազը, որպէս մեծ և հովանաւորող: Սրտաշարժ էր այն տեսարանը, երբ նա առաջին անգամ բաժանվեց Մարիամից Ռուսաստան դնալու համար: Աւելի սրտաշարժ էր նրանց վերջին հանդիպումը, երբ Ռուբէնը արդէն ուսումն աւարտած վերադարձաւ հայրենիք չորս ամիս առաջ:

— Ռուբէն, Ռուբէն,—գոյնց Մարիամը, փաթաթվելով եղեօր պարանոցին վերջինի առանձնասենեակում, —սիրում ես ինձ:

Ռուբէնը սիրով և անձնուիրութեամբ համակած իւր դէմքը յետ դարձրեց: Նա թագ-

ցրեց իւր զգացումների արտաքին նշանները, որոնց դէմ էր միշտ:

— Գիտեմ, որ սիրում ես, — շտապեց աւելացնել Մարիամը յուզգած, — ուրեմն մի անգամ էլ ցոյց տուր սէրդ, ինձ մի թողնիլ միայնակ: Առանց գեղ մի կեանքը ախուր է անցնում:

Ռուբէնը դեռ Ռուսաստանում վճռել էր երկու տարով արտասահման գնալ այնտեղ իւր մասնագիտութեան մէջ կատարելագործվելու նպատակով: Նա լրացրած չէր համարում իւր ուսման պաշարը գէթ այնչափ, որչափ հարկաւոր էր իւր որոշած նպատակին ծառայելու համար կեանքում: Նա յացմնեց իւր վճիռը Մարիամին: Քոյրը ոչինչ չ'ասայ, հառաչց, զլուխը շարժեց, և եղբարը նրա աչքերի մէջ նկատեց արտասուքի նշոցներ: Նա ընկաւ մտատանջութեան մէջ: թողնել անկատար իւր վճիռը՝ չէր կարող, այնքան նա ընտելացել էր այդ վճունին, անուշադիր մնալ Մարիամի աղերսանքին - սւելի դժուար էր: Այն ժամանակ նրա զլխում միտք յզացաւ քրոջն ևս տանել իւր հետ: Արտասահմանում Մարիամը անդորձ չի մնալ, կը շարունակի իւր ուսումը, կը սովորի որ և է մի մասնագիտութիւն, կը դառնայ ազատ, իւր ուժերով կեանքի դժուարութիւն-

Ների դէմ կոռւելու պատրաստ անկախ կին։
Երբ նա այս միտքը յայտնեց Մարիամին, վեր-
ջինը մի քանի վայրիեան ոչինչ չը պատասխա-
նեց, մտածեց և ցետոց ասաց։

— Եթէ անսպատճառ ուզում ես գնալ, գնա
միացնակ, իսկ ես... չեմ կարող...»

Ոչինչ թախանձանք չը կարողացաւ ստիպել
նրան բայատրելու պատճառը, թէ ինչու չէ
ուզում կատարել եղբօր առաջարկութիւնը։
Միշտ և ամեն ժամանակ նա խոյս էր տալիս
այդ մասին խօսելուց և միացն շարունակ իրն-
դրում էր Թուրքէնին մնալ Թիֆլիսում։

«Քոյրս մի զաղտնի հոգս ունի, ինձ չի յայտ-
նում, — մտածում էր Թուրքէնը, — բայց ես կը
իմանամ, անպատճառ կ'իմանսնմ։»

Օրը բաւական անցել էր արդէն, երբ նա
տնից դուրս եկաւ մի փոքր զբօսնելու։ Նա
պատահեց իւր ընկերներից մի քանիսին և, մի
երկու ժամ նրանց հետ անցկացնելով, մոռացաւ
Ճանր մտքերը։

Երբ նա վերադարձաւ տուն, Սադափեաննե-
րը, սեղանատանը հաւաքված, սպասում էին
նրան ճաշի։ Նիկողայոսը հրաւիրեց նստել իւր
քով և շատ սիրով ու բարեկամաբար սիրեց
խօսել նրա հետ։ Ինչպէս զբաղված մարդ, որի

միտքը միշտ դէպի իւր գործերն են ուղղուած,
Նիկողայոսը ընտանեկան խնդիրների մասին շատ
քիչ էր խօսում տանը, նոյնպէս նա Թուրքէնի
հետ խօսում էր հատ ու կոտր, և որովհետեւ
Թուրքէնն ևս խօսելու տրամադրութիւն չունէր,
շուտով երկումն էլ լուեցին։

Մարիամը զբաղված էր պատանի Գաբրօյի և
փոքրիկ Լիզայի հետ, որտե՞ւ աջ ու ձախ կող-
մերում նստած, վայելում էին նրա սիրալիք
փաղաքշանքը։

— Մարօ, ջուր տուր։

— Մարօ, աղ տուր։

Ասում էր մերթ մէկը, մերթ միւսը, և Մա-
րիամը անդադար դառնում էր աջ ու ձախ, կերակրելով իւր սիրեկիններին։

Նատալիան շարունակ գանգատվում էր գրլ-
խացաւից, քիչ էր ուտում, սիրտարակում էր
իւրաքանչիւր կերակուր և իմերէլ սպասաւորի
միջոցով յանդիմանութիւն էր ուզարկում ոռւս
իւոհարարին։ Վերջին կերակուրը բերելիս նա
վերկացաւ տեղից և անցաւ իւր սենեակը։ Գա-
նրա քմահաճութիւններից մէկն էր, որի հա-
մար հայրը յանդիմանում էր նրան և փոխարէնը
միշտ յանդիմանվում Աօփիօյից։

— Խեղճ իմ նատօ, տանչվում է այսօր, ին-

չու հենց միայն նա է հիւանդանում այս տա-
նը,—ասաց տիկին Սօփիօն և շտապեց իւր
աղջկայ ետևից:

Եցալէս անցաւ Աստափիւանների ճաշը, Նա-
տալիայի շնորհիւ, ամենի համար սառն, անա-
լսորժ:

Նոյն օրը իրինազէմին Թուբէնը, դրսից
տուն վերադառնալով, Մարիամին հանդիպեց
իւր սենեակում: Օրիորդը տնացին սպիտակ հա-
գուստով նստած էր սեղանի մօտ, գլուխը
ձեռների մէջ դրած, արմունկները յենած սե-
ղանին: Նրա աւաշ դրած էր մի բաց գիրք:
Նա չէր կարդում, այլ աչքերը յառած լուսամտի
կողմ, նայում էր դէպի դուրս:

— Դարձեալ ի՞նչ երազների մէջ ես,—ասաց
Թուբէնը կատարով:

Մարիամը մի քիչ շփոթվեց, երեսը յետ
դարձրեց և ժպտաց: Սակայն այս անգամ նրա
ժպիտը այնքան արհեստական էր և բռնա-
զբօսիկ, որ Թուբէնի տրամադրութիւնը յան-
կարծակի փոխեց: Նա քրոջ աչքերի մէջ կար-
դաց մի նոր դառնութիւն:

— Մարիամ, գոչեց նա, բռնելով քրոջ ձեռը-
դու վրդովուած ես երևում, ի՞նչ է պատահել:
Մարիամը ձեռը մեղմիկ խեց եղբօրից և իւր

տխուր ու անորոշ հայեացքը կրկին բաց լու-
սամտի կողմ դարձնելով, ձգեց զիմացի եկեղե-
ցու արծաթափաց զմբէթի վրայ, ուր շողշորում
էին մայր մտնող արևի վերջին ճառագայթ-
ները:

— Դու ինձ չես պատասխանում,—շարունա-
կեց Թուբէնը, աւելի հետաքրքրուած նայելով
քրոջ երեսին:

Զուարթադէմ, ուրախու, գէթ արտաքուստ
անհոգ օրիորդը անճանաչելի էր դարձել այդ րո-
պէին: Նա ոչ միայն չը պատասխանեց, այլ և
խոյս էր տալիս եղբօր հայեացքից:

— Երդգում եմ մեր ծնողների լիշտակով,—
գոչեց Թուբէնը, նստելով նրա մօտ,—եթէ դու
չես յացնիլ ինձ գաղտնիքդ, կը վիրաւորվեմ
սաստիկ:

Մարիամը նայեց եղբօրը, հազիւ զսպելով
արտասուքը, որ ձգտում էր դուրս հոսալ նրա
իոշոր աչքերից:

— Թուբէն, —խօսեց նա, վերջապէս, վրդո-
վուած ձայնով,—երեք ամիս է դու ինձ ան-
դադար հարցնում ես իմ դրութեան մասին:
Մինչեւ այժմ ես աշխատում էի լուել, ոչինչ չը
յայտնել քեզ: Բայց այլ ես անկարող եմ այժմ:
Թուբէն, ինձ այս տանը հալածում են...

Մի լայրկեանրւմ Թուբէնէ աչքերը մթնեցին,
գլուխը պտտեց, նրան պաշարեցին միմեանցից
դառն, միմեանցից վատ կավաճներ: Նրա քրոջը
հալածում են, ով, ինչու, ինչ մեղքերի համար:

Մարիամ չը կարողացաւ նրա անկանոն հար-
ցերին միանգամից պատասխանել: Նա գանգատ-
վեց միայն նատալիացի վրաց: Ամեն քայլում
այդ աղջիկը աշխատում է որ և է գառնու-
թիւն պատճառել նրան, տեղի և անտեղի
ժաղրում է, հնարում է նրա մասին զանազան
պատմութիւններ, արտացայտում է զանազան
անհանեսու կասկաճներ: Երբէք նատալիան ան-
կեղծ չէ եղել նրա հետ, երբէք պարզ սրտով
չէ վարվել: Երբ Մարիամը ուրախ է—նատալի-
ան տիրում է, երբ ախուր է—ուրախանում է,
և միայն այն նպատակով, որ Մարիամին վրշ-
տացնի: Կարծես, նա, երգուել է ամեն տեսակ
վատութիւն անել նրան: Ինչու,—ըստ զիտէ
Մարիամը: Նա, որ միշտ սիրով է վերաբերվել
նատալիացին, ինչպէս իւր մեծ քրոջը:

—Ախ, Թուբէն, շարունակեց Մարիամը, աչ-
քերը սրբելով,—այսօր նա չափից գուրս ան-
սիրու էր: Թու տեսար, ինչպէս նա ընդունեց
ինձ, ինչպէս սկսեց հետո խօսել, երիու շաբաթ-
երեսս ըստենելուց լետոց Թու դուցէ հաւա-

տացիր, որ նա գլխացաւ ունէ: Ոչ, ես իմացայ;
որ սուտ է: Նա ինձ տեսաւ և իսկոյն զլսա-
ցաւը բունեց: Ճաշից լետոց գնացի սենեակս:
Նա էլ իւր սենեակումն էր: Կանչեց ինձ իւր
մօտ, հարցուփորձ արաւ Մելիք—Բարսեղեա-
նի մասին: Երանի նամակումն գրած չը լինէի,
թէ նա էլ Փիլիցանումն է: Սկսեց հետո ան-
վայել կատակներ անել: Ելս, Առողուած, ամօթից
չեմ կարող պատմել, թէ ինչեր ասայ: Եթէ
լսէիր, Թուբէն, ականջներդ պիտի փակէիր: Ես
համբերեցի. նա չը դադարեց: Առաջին անգամը
չէ անում ինձ հետ տվեղ կատակներ: Հետ ծանօթանում եմ,
նրա շարախօսութիւնը արգէն պատրաստ է:

Մինչ Մարիամը պատճում էր, այս բոլորը,
Թուբէնը վրդովուած, շրթունքը ներքին այլկո-
ծութիւնից սեղմած, ճակատը ամուր բւնած,
լսում էր:

—Իսկ մայրը, — արտասանեց երիտասարդը
խեղդուկ ձայնով:

Մարիամը վարանեց իսկոյն պատասխանել:
—Գլուխ, — ասայ Թուբէնը, — առանց քո ա-
սելու էլ զիտեմ: — Նյու տան մէջ քեզ ոչ ոք չի
սիրում, ոչ ոք...

—Ոչ, անարդար մի լինիլ, Թուբէն, — ընդհա-

տեց Մարիամը, — ես յարգում եմ մեր հօրեղբօրը. Նա եթէ չի սիրում, չի էլ ատում. Բայց ինձ սիրողներ էլ կան այս տանը, և հէնց նրանք էին մինչև այժմ ինձ միտիթարողները — Լիզան ու Գաբօն:

Մի քանի վայրկեան տիրեց լոռութիւն: Ոութէնի սիրաը ուժգին բարախում էր յուզմունքից: Նա սաստիկ վարանման մէջ էր. պէտք է դուրս բերել Մարիամին այդ տնից, ազատել նրան Նատալիայի և տիկին Սօփիօյի հալածանքից, այս անվիճելի է:

— Եւ դեռ այս բոլորից յետոյ գու ուզում ես, որ ես քեզ այստեղ թողնեմ և գնամ, — գոշեց նա զարացած, — ոչ, Մարիամ, դու պիտի գաս ինձ հետ, այլ ես քո յամառութիւնը ինձ խաբել չի կարող:

Մարիամը դառնութեամբ հառաջեց:

— Մտածիր, Ոութէն, — ասաց նա թախծալի ձայնով, — ուր ես գնում և ինձ էլ տանում — մի օտար, հեռաւոր երկիր. ում հաշուով, ի՞նչ միջոցներով:

— Ի՞նչ միջոցներով, — կրկնեց Ոութէնը զարմացած, — միթէ այդ հարցին էլ պատասխան է հարկաւոր:

— Այո, հարկաւոր է, — ասաց Մարիամը

դրական եղանակով, — և հէնց այդ է, որ ես չեմ ուզում դալ քեզ հետ և ոչ էլ քո գնալդ կը ցանկացի, եթէ միայն կարող ես գնալ... Վերջին գարձուածը կրկնապատկեց Ոութէնի զարմանքը:

— Եթէ միայն կարող եմ գնալ, — մեքենաբար արտասանեց նա, — ով կարող է ինձ արդեկել: Վերջապէս, ի՞նչ ես ուզում ասել, պարզ խօսիր, Մարիամ:

— Այն եմ ուզում ասել, Ոութէն, — պատասխանեց քոյրը, — որ նախ քան մի տեղ գնալդ, գու պէտք է պարզես մեր ժառանգական գործերի դրութիւնը, չասկանում ես:

— Մեր ժառանգական գործերի դրութիւնը պարզ է: Մեր հանգուցեալ հայրը մեր ժառանգութիւնը յանձնել է իւր եղբօրը: Մենք ապահով ենք. ապրում ենք մեր կարողութեամբ և արտասահման կը գնանք. մեր հայրական փողերով:

— Այո, հայրական փողերով, շեշտեց Մարիամը մի տեսակ հեղնութեամբ, — ուր են այդ փողերը:

— Ասացի, որ մեր հօրեղբօր մօտ:

— Գիտես հաստատ, ի օսել ես նրա հետ, կայ արդեօք, եթէ կայ, որքան է, բաւական են մեր ձախսերին, ահա ի՞նչ է հարկաւոր պար-

զեւ, սիրելի Թուրքէն։ Այս չխմացած, դուքը
պիտի ոչ մի տեղ գնաս, եթէ ինձ սիրում ես,
եթէ ինքնասիրութիւն ունես։

Ոստիչնը մի վայրկեան ապշած նաեւց քրոջ
երեսին։ Ապա ձեռը տարաւ ճակատին, աչքերը
սկեռեց սեղանին և մտատանջութեան մէջ
ընկաւ։

—Սպասիր,—ասաց Նա, տոտանվելով,—դու
իմ սիրտս մի ինչոր կատկած ձգեցիր, Մարօ...
Այս, դու ճշմարիտ ես ասում... ես պիտի խօ-
սեմ մեր հօրեղբօր հետ... Միթէ... Բայց ոչ
ես պարզ լիշում եմ հանգուցեալ հացրիկի խօս-
քը... Նա մեզ չբաւոր չէ թողել: Ինչ և իցէ,
ճշմարիտ ես ասում, պէտք է պարզել, և շո-
տով, հէնց այս քանի օրը, հէնց վաղը գուցէ:

— Ծառապել հարկաւոր չէ, — ընդհատեց Մարիամը, իւր սրտի դառն գաղտնիքը յաշտնելուց յետոց փոքր ինչ հանդարտված, — այսքան ժամանակ համբերել եմ, Էլի կը համբերեմ: Սպասիր յարնար առիթի և մի օր անկեղծաբար խօսիր մեր հօրեղբօր հետ: Ես չեմ ուզում, որ մենք... ձրիակերի անուն ստանանք: . . . Համբերիր, մի ստիպիլ ինձ աւելի խօսել առ այժմ: Ինչ որ ասագի, բաւական է, մնացեալի յետոց: ..

Այս ասելով, Մարիամը վերկացաւ տեղից և

Հանդարտ գուրս եկաւ եղբօր սենեակից։
Ուռելէնը ոչինչ չ'ասայ և ոչ խնդրեց քրոջը
ըլ դնալ, Երկար ժամանակ նա լորհում էր
քրոջ ասածների մասին։

Երբ Ծառան սովորական ժամին ներս մտաւ,
տիկին Սօփիօցի կողմից հրաւիրեց ընթլիքի, նա
ձեռով բացասական նշան արաւ...

IV

Օրը կերակի էր, Օրիորդ Նատալիան սեպհական կառքով դուրս եկաւ զբօսնելու։ Անյարումար համարելով միացնակ զբօսնելը, մայրը ստիպեց նրա Լիզային և Գաբրիյին Էլ Հետք նստեցնել։ Մարիամը և Ռուբէնը նոյնպէս տանը չէին։

Տիկին Սօփիօն զբաղված էր տնային գործերով։ Այդ օրը նրանց տանը պիտի ճաշէին Հալաբեանը և իշխան Սահարունին։

Նիկողայոսը իւր առանձնասենեակում միացնակ նստած, ակնոցը աչքին դրած, քրքրում էր ինչոր թղթեր, կարդում էր, գրում և երբեմն համարակալի վրայ հաշիւներ անում նկատելի էր, որ վերջին օրերը նա սաստիկ զբաղված է, սովորականից աւելի երկար էր մնում առանձնասենեակում։ Ամեն օր նոր նոր մարդիկ են գալիս նրա մօտ, խօսում, վիճում են ցածր ձայնով։ Գալիս են շուտ շուտ և՝ նրա գործակատարները։ Նիկողայոսը նրանց հետ վարդում է կոպտաբար, գոռում է, յանդիմանում և վրդովուած ճանապարհ դնում։

Նա պարապում էր կասպաներով և Թիֆլիզի առևտրական շրջաններում հոչակված էր իբրև յաջողակի եռանդուն, օրինակելի «գործավար»։ Եւ այս հոչակը հարստութեան հետ նա վաստակել էր վերջին տասնուշինդ տարուաց միջոցում միայն։

Կար ժամանակ, որ նա մի հասարակ մահավաճառ էր, քաղաքի մի կենտրոնական քարվանսարայում, իւր մեծ եղօր հետ, պահում էր մի փոքրիկ խանութ։ Գէորգը—Մարիամի և Ռուբէնի Հայր—կառավարում էր խանութը։ Նիկողայոսը, աւելի երիտասարդ, լեզուանի և աչքաբաց լինելով, կատարում էր դրսի գործերը, գնում էր Ռուսաստան, յարաբերութիւններ էր պահում օտար գործարանատէրերի հետ և այն։

Մի օր Նիկողայոսը կանգնեց, թէ ուզում է խանութը փակել և ուրիշ գործերի ձեռնարկել։ Գէորգը առևտրի մէջ երկչու մարդ էր, ամեն մի նոր բան նրան կասկած էր պատճառում։ Բայց նա մեծ հաւատ ունէր դէպի Նիկողայոսի առևտրական հանձարը։ Թողլ տուեց նրան գնալ իւր ընտրած նոր ճանապարհով։ Խակ ինքը, խանութը մի քանի տարի միայնակ կառավարելուց յետոյ, փակեց, իւր մասը զուտ փողով վերցրեց և հեռացաւ։

Բաղդը յաջողեց Նիկողայոսին նոր ասպարիգում: Առաջին մի քանի տարուայ ընթացքում նա կրինապատկեց իւր դրամագլուխը: Յետոց վրա հասաւ արևելեան պատերազմը և նրա եռանդի համար մի նոր ասպարիզ բաց արաւ: Նա ընդարձակեց իւր գործերը: Խոկ Գէորգը իւր փողերը պետական թղթերի վերածեց, նրանց տոկոսով սկսեց խաղաղ ու համեստ կեանք փարել, կնոջ մահից յետոյ փափագ չունենալով պարապել որ և է բարդ գործով:

Երկու եղբօր յարաբերութիւնները բարեկամական էին, թէ և ընտանիքները ապրում էին առանձիւ: Մի օր, միասին ճաշելուց յետոյ, Նիկողայոսը, հոգեկան ուրախ տրամադրութեան միջոցին, խօսում էր իւր գործերի մասին: Յանկարծ նոս գարձաւ Գէորգին և հարցրեց.

— Որքան տոկոս ես ստանում փողերիցդ:

— Հարիւրին հինգ,— պատասխանեց Գէորգը:

— Հինգ այդ, — զոյեց Նիկողայոսը անկեղծ զարմացած: — Հարիւրին տասը կը տամ, կուզե՞ս, — աւելացրեց նա շատ անփոխ կերպով:

Գէորգին հրապուրեց այդ առաջարկը, մանաւանդ որ նա իւր եղբօր ազնւութեան մասին կասկած չունէր: Հինգ նոր քառասուն հազար լուբ տոկոսաբեր թղթերը անցել էին Նիկողայոսի

ձեռքը, երբ Գէորգը հիւանդացաւ, տասն օրից յետոյ մեռաւ թոքերի բորբոքումից: Փոխատութեան վերսութերա իբ քանի մի պաշտօնական ձե եր անկատար մնացին, և մեծ եղբօր փողերը կրտսեր եղբօր մօտ մնացին առանց դրաւոր ասլաւոցների:

Նիկողայոսը հանգուցեալի որբերին բնակից բեց իւր տանը:

Հինց այդ ժամանակ նա, իւր կնոջ թափանձանքով, մի նորաշէն տուն գնեց քաղաքի կինտրոնում: Այնելով գործնական, հաշուագլւտ մարդ, նա անշարժ կաղուածները «մեռած դրամագլուխ» էր համարում: Բաց Սօփիօն վագրուց ցանկանում էր անպատճառ իւր սեպհական տանը ապրել: Նա լսել անգամ չը ուզում, թէ ամուսինը Խարփուխի յետ ընկած մի փողոյում կիսալխարի ուլ մի տուն ունի հօրից ժառանգած:

Եւ այս Սօփիօյի առաջին պահանջը չը միայն, որ կատարեց Նիկողայոսը, նա սիրում էր կնոջը իւրովին, համարում էր նրան ժամանակակից կին, որ գիտէ մարդկանց առաջ պարզերես անել մարդու անունը: Պակաս չը նպաստում այդ սիրոյն և այն հանգամանքը, որ Սօփիօն իշխան Սահարունիների տոհմիցն էր, այն է՝ Սրապիօն Սահարունիին հարազատ քոյրը:

Նա ազատութիւն էր տուել Սօփիօյին տան համար անել, ինչոր խելքը կտրում է: Իսկ Սօփիօն գիտէր իւր անելիքը, մանաւանդ աղջը-կայ վերաբերմամբ: Ոչինչ նա չը խնայեց Նա-տալիայի համար, բացի մի բանից: Նա ատում էր «գուվերնանստկաներին», ուստի վճռել էր ըստ վարձել:

—Այդ փքված հնդու հաւերը,—ասում էր նա, գալիս են, մարդու տանը տիրանում են ու...

Բայց և այնպէս նա թշնամիներին տրաբաց-նելու համար վարձեց մի պառաւ Փրանսուհի, մի տարի պահեց, յետոյ արձակեց: Եւ արձակեց կոռուվ, որովհետև օտարուհին յանդնել էր Սադափեանների տան հարուստ կահ—կարասին անճաշակ համարել:

Վերջին տարիները Նիկողայոսը ընտանեկան ծախսերի վերաբերմամբ փոքր առ փոքր ժլա-տանում էր: Երբ Սօփիօն փող էր ուզում, նա ձեռը տատանվելով էր գրանը տանում, գլու-խը խորհրդաւոր շարժում էր և կրկնում.

—Սօփիօ, ծախսերդ թեթեացրու:

—Սուս,—պատասխանում էր Սօփիօն կատա-կով, և ամեն անգամ մատների ծացրերը շփում ամուսնու իստակ սափրած երեսին:

Նիկողայոսի ժլատանալը անհիմն չէր—նրա

դործերը ձախ էին ընթանում, մանաւանդ վեր-ջին տարի: Երկու անգամ իրար ետեից նա խո-շոր վնասներ. կրեց կապալներում: Նա փողի պակասութիւն զգալով, սկսեց դիմել սրա ու նրա օգնութեանը, այնպէս որ Հալաբեանը առաջինը չէր, որին նա ձեռք մեկնեց: Բայց նա զգուշութեամբ թագցնում էր կնոջից իւր ձախորդութիւնը այն մտքով, որ Սօփիօն իւր աղմուկով կողուր պիտի արիւն վրդովէր:

Դոները հանդարտ բացվեցին, ներս մտաւ Սօփիօն և անխօս նստեց Նիկողայոսի գրասե-ղանի մօտ:

—Ասա, տեսնենք,—արտասանեց վերջինը, թւերը դնելով իւր առաջ ցրուած հաշուե-թղթերի վրայ:

Սօփիօն ժպտաց: Նիկողայոսը հասկացաւ:

—Այսօր ոչինչ մի խնդրիլ ինձանից,—ասաց մարդը և շարունակեց պարապել ընդհատված գործով:

Սօփիօն շրթունքը ամուր սեղմեց, ծոեց մի կողմ, յօնքերը վեր քաշեց և զլուիլ շարժեց ու ձախ:

Այս ձեռով էր նա սովորաբար ծաղրում ա-մուսնու թոյլ ընդդիմադրութիւնը:

—Զեմ տալ, ասում եմ, — կրկնեց Նիկո-

դայսուր, մի փոքր ձայնը խստայնելով:

Զարմանքից Սօփիօյի գէմքը երկարայաւ և փոքրիկ աչքերի փայտուն բիբերը, անշարժ լընացին գեղնփայլ շրջանակներում:

— Յետո՞յ, — արտսանեց նա:

— Յետոյ, փող չունեմ, Սօփիօ, հաւատայիր, որ չունեմ:

— Հանաքը մի կողմ թող, ձեռդ զրպանդ սար, — Չունեմ, ամում եմ:

— Եթէ դու Տուլանում ես, ինքս կը հանեմ փողամանդ, — ասաց Սօփիօն և, ոտքի կանդներով, մօտեցաւ ամուսնուն:

Բայց Նիկողայոսը կատակ, չէր անում, հաբոնեց կնոջ ձեռից, յետ մղեց և հրաւիրեց նստել իւր տեղը:

— Օչօ, — բացականչեց տիկինը միանգամայն ապշած, — ըլլինի թէ դու. ինձ ուզում ես փախցնել:

Ասաց նա և, կեղծ վիրաւորված, երեսը շուռ տուեց իբր թէ դուրս զնալու: Բայց երբ տեսաւ, որ ամուսինը լուռ է, յետ դարձաւ և կրկին նստեց:

— Նիկօ, — ասաց նա լրջօրէն, — լաւ իմացիր, ով որ մեծամեծների հետ ուզում է ծանօթանալ, նա մեծ սիրտ էլ պէտք է ունենայ:

— Թող, Աստուած սիրես, — զոչեց Նիկողայոր, — ծանօթներ, ծանօթներ, քանոգեցիր տունս քո ծանօթներով: Այնքան ունենք, որ էլ ով ասես, զալիս է այս տուն, ով ասես, բարեում է ինձ դրսում, շատերի անունն էլ չեմ ցիշում:

Սօփիօյի սոհմական ինքնասիրութիւնը վիրաւորվեց: Ինչ, միթէ նա, պայծառափայլ Սահարունիների դուստրը, այնպիսի մարդկանց է ընդունում իւր տունը, այնպիսի ծանօթներ է ձեռք բերում, որ դիւր չե՞ն գալիս նախկին «բազազին»: Ո՞վ է Սագափեան անունը բարձրացրել, ով է այս տունը իշխանների, չլնովնիների, լուսաւորվածների համար բաց արել:

— Ծնորհակալ եմ, շատ շնորհակալ եմ, բոլորը դու ես արել, — ընդհատեց Նիկողայոսը կնոջ խօսքը, — Հիմայ բաւական է, էլ չեմ ուզում: Մինչև այժմ մենք էինք ուզում սրա ու նրա հետ բարեկամանալ, այժմ թող ուրիշները աշխատեն մեզ մօտենալ: Որքան մեզ ծանր պահենք, այնքան մեր պատիւը կը բարձրանայ:

— Հիմայ այդպիշտ ես խօսում, հաա, — զոչեց տիկինը հեգնաբար, — գու չէիր, որ ասում էիր մարդ միշտ պէտք է իւր զլիսից վերև նայի, ոչ թէ ցած... Դու չէիր. հիմայ փոխվեցիր, ծատ լաւ, ծանր պահիր, տեսնենք ո՞ր

կոմսուհին երեսիդ մտիկ կանի: Հասկանում ես,
ինչ եմ ասում:

— Ի՞նչ, ով, ինչ ես ասում, — գարմացած ար-
տասանեց Նիկողայոսը:

— Ես ուզում եմ կոմսուհի Նավալիխինացի
հետ ծանօթանալ, — պատասխանեց տիկինը
դրական եղանակով:

Նիկողայոսը ապշած նաևց կնոջ երեսին: Եյն
անունը, որ լիշեց Սօփիօն, շատ և շատ բարձր
էր նրա դիրքից ու շրջանից: Ոչ միայն ծանօ-
թանալ, այլ երեակացել անգամ չէր կարող, թէ
երբ և է բաղդ կ'ունենայ երես առ երես տես-
նուել նրա հետ: Եւ յանկարծ Սօփիօն ասում
է, թէ այդ կնոջը կարելի է ստիպել անգամ,
որ այցելէ Սադափեաններին: Ի՞նչպէս:

— Մ'եծ բան է, — բացատրեց Սօփիօն առ-
նօրէն, — եթէ նա կոմսուհի է, ես իշխանի աղջկի
եմ: Պապերս վրաց թագաւորների հետ մի
<հազարփեշից> գինի ևն խմել, կոմսուհիները
ով են իմ մօտ: Ականչ դիր, կոմսուհի Նա-
վալիխինան մի բարեգործական ընկերութեան
նախագահ է: Ով որ պատուաւոր անգամ է
գրվում, նրան կարեթով այցելութիւն է ա-
նում: Հասկացար: Հիմայ ես ուզում եմ, որ Նա-
տօս պատուաւոր անգամուհի գրվի: Լսում ես:

Մի շաբաթ սրանից առաջ կոմսուհին Փափդի-
սօվի կնոջ մօտն է եկել: Սիրտս քիչ մնաց
արաքի, երբ որ լսեցի: Հիմայ դու ինքդ ասա,
մենք Փափդիսօվներից էլ յետ պիտի մնանք:

Աւարտելով իւր խօսքը, տիկինը աչքերը սե-
եռեց ամուսնու աչքերի մէջ, սպասելով նրա
պատասխանին: Նիկողայոսը քանի մի վայրկեան
մտածեց և յետոյ սեղանի արկղը բանալով,
հանեց մի հատ աղեղնագոյն թղթագրամ և,
դնելով սեղանի վրայ, ասաց.

— Սրանից աւելի տալ չեմ կարող, ինչ ուզում
ես, արա:

Սօփիօն արհամարհանքով շպրտեց թղթա-
դրամը: Նա ոտքի կանգնեց:

— Մուրացկան եմ, ինչ եմ, — գոչեց կա-
տաղած, — վերցրու, չեմ ուզում, տար եղբօրդ
աղջկայ համար հագուստ գնիր:

Առաջին անգամը չէր Նիկողայոսը կնոջ կող-
մից այս տեսակ կծու ակնարկներ լսում իւր եղ-
բօր որբերի վերաբերմանք: Բայց երբէք մի
առանձին ուշագրութիւն դարձրած չէր: Այս
անգամ Սօփիօյի խօսքը ազդեց նրա վրայ: Ազ-
դեց իբրև յանդիմանութիւն, և ոչ իբրև վիրա-
ւորանք իւր հարազատ եղբօր աղջկայ համար:

Նա աչքերը լայն բաց անելով, նայեց կնոջը

ոտլից դգլուխ և արտասանեց:

— Սօփիօ, բաւական է:

Ոչ նրա սուր հայեաց ըը, ոչ ձայնի սաստաղական հնչիւնը չունեցան ցանկալի ներդործութիւն: Ընդհակառակը, Սօփիօն աւելի գրգռուեց:

— Ասում եմ Էլի, տաք քո Եղբօրդ որդիների համար ծախսիր, — կրինեց նա, ձեռը լուփելով սեղսնի ծայրին, — չեմ ուզում, ոչ ես, ոչ իմ աղջիլը կարօտ չեն քո ողպրմութեանդ: Նրանց ուսեցրու, հաղցրու, նրանց պահիր իշխանի որդիների պէս ու ինձ ասա. «Ծախսերդ պակասացրու»: Պակասացնեմ: Լաւ: Համեցէք առաջ առաջ դու դուրս բեր ացդ ծրիակերներին իմ տնից, յետոյ ինձանկց պահանջիր:

— Իմ եղբօր զաւակները ծրիակերներ չեն, նրանք ապրում են իրանց հօր փողով, խասորին և հանգարտ արտասանեց ՚նիկողացուր: — Ես նրանց իրաւունք չունիմ այս տնից դուրս բերելու, քանի որ... նրանց ժառանգութիւնը իմ մօտ է: Եթէ ուզում ես դուրս բերել, դալիք ու տուր քառասուն հազարը, նրանք, առանց քո ասելու էլ, կը գնան...

— Եց զբողը տանի նրանց մի քանի հազար թումանը, ինչպէս որ տարել է, — ընդհատեց Սօփիօն և աւելի ու աւելի գրգռուելով, շա-

րունակեց նոյն եղանակով:

Միմիացն Մարիամի վրայ աւելի է ծախսվել, քան նրա հօր թողածը, իսկ Թուբլինը, որ ութարի ուսում է առել: Ոչ, ոչ, բաւական է, պէտք է ճանապարհ գնել նրանց, թէ ոչ, վերջին չքաւորութեան կը հասցնեն Սօփիօին ու նրա զաւակներին: Ինչու, ինչ իրաւունքով, ով է մեր ժամանակում իւր հարազատներին թողած, եղբօր որբերի համար զլուխ կոտրում: Աւ լինէր այն օրը, երբ Մարիամը ոտ դրեց Սօփիօյի տունը: Եցն օրից ՚նատօցի բաղդն էլ կապիեց, տարին տարիի ետևից անցնում է, նա պառաւում է, չը կաց մի օրինաւոր մարդ, որ նրա վրայ աչք դնի: Մարիամը կապել է նրա ճանապարհը. ով ասես, նրա վրայ է ուշադրութիւն դարձնում: Ինչու...

Եց ասելով, տիկինը կրկին նստեց դրասեղանի մօտ, և աչքերը տնկեց ՚նիկողացու երեսին: Նրա բարակ շրթունքը կապտել էին, թեթև դողդողութեան էին: Թուում էր, որ սպասում էր մի թոյզ հակածաւութեան, և այն ժամանակ պատրաստ էր աւելի կատաղի:

Սակայն ՚նիկողացուը ըլ խօսեց: Եա նայեց ժամանցին, շտապով հաւաքեց հաշուեթ դթերը, վերցրեց սեղանի վրայ ընկած հարիւրա-

Նոյն թղթադրամը, փակեց սեղանի արկղիկում, բանալին գրպանը դրեց և վերկացաւ տեղից, ասելով.

— Վաղը կըստանաս ուզածդ, այժմ չունեմ:

Նոյն փարկեանին յանկարծ նրա դէմքը տարօրինակ այսպիսեց: Նա բռունքքը սեղման խփեց սեղանին և խեղդուկ ձայնով գոչեց.

— Մնանկացրիր ինձ, մնանկացրիր...

Գոչեց և արագ քավերով դէպի դուրս շտապեց, դռները ուժգնակի ծածկելով իւր ետևից:

Տիկին Սօփիօն ապշած նայեց նրա ետևից:

— Այդ մարդը խելքը կորցրել է,— ասաց նա լսելի ձայնով: — Ծի քանի մանէթի համար այդքան կատաղել... Կոպիտ, անտաշ, այսուհետեւ իշխան Սահարունիի աղջկայ հետ պիտի այդպիս վարուես... Սպասիր, ես քեզ ցոյց կը տամ, թէ ով եմ...

Կէսօրուայ երկու ժամից անց Նիկողայոսը վերադարձաւ տուն, հետը բերելով իւր հիւրերին: Հալաբեանը ներս մտաւ սովորական զուարթ տրամադրութեամբ: Իբրև վաղուցվայ ծանօթ, նա այնքան ընտելացել էր Սադափեանների ընտանիքին, որ իւր ացերի ժամանակ մի առանձին ձեականութիւն չէր պահպանում: Եւ այդ շատ հաւանելի էր Նիկողայոսին:

Տիկին Սօփիօն ընդունեց նրան ուրախ ժպիտը ելեսին և յանդիմանեց բարեկամաբար, որ ուշ ուշ է ացելում:

Ամբողջ մի տարի էր, որ նա Հալաբեանին իւր մտքում Նատալիացի համար փեսացու էր ընտրել: Այս ընտրութիւնը պայմանաւոր էր: Այն օրից, երբ տիկինոց յոցմերը թուլացան աւելի արժանաւորին գտնելու, սկսեց զիջումներ անել և ի վերջոյ նրա ուշումիտքը կանգ առան թերմաշ ամուրի վրայ: Հալաբեանը, եթէ սպազ չէր, եթէ մի մեծ պաշտօնեայ չէր, փող և դիրք ունէր: Եւ Սօփիօն քանի մտածում էր այս մասին, այնքան ամուրին բարձրանում էր նրա աչքում: Այս առթիւ նա մի օր խօսեց իւր աղջկայ հետ և ուրախութեամբ տեսաւ, որ Նատալիան ոչ միայն ընդդիմութիւն չէ ցոյց տալիս, այլ և, կարծես, ուրախ է:

Եւ իրաւ, քսանութմեայ օրիորդը հարուստ անուրիի մէջ տեսնում էր քանի մի յատկութիւններ որ հաւանելի էին նրան: — Հալաբեանը տակաւին ծեր չէ, նա ունի ծանր ու հպարտ գնացք, խրոխտ դուրս ցցված կուրծք, նա գիտէ ճաշակով հաղնուել, փայելուչ խօսել կանանց հետ, արժանաւորութեամբ պահել իրան հասարակական շրջաններում: Փորձի համար Նատալիան մի ան-

գամ պատկերացրեց իրան նրան հետ թև թե թե ի տուած մանգալիս և տեսաւ, որ հեռուից նայողի մէջ մի այդ տեսակ զոյտ կարող է յարդանք քարթեցնել: Ինչ անենք, որ ճաղատէ հայրաբեանը, պլիս մազերը կանանց համար են զարդ, տղամարդը ճաղատ զվարդ աւելի պատկառելի է: Իսկ նրա հարստութիւնը, որի մասին օրիորդը մի փոքր առասպեկալան գաղափար ունէր: — Ահա այն ամենազլիսաւոր հրապոյրը, որ բարձր էր նոյն իսկ իշխանական ծագումից: Նատալիան իւր օժիտը մի ամենաչնչին բան էր համարում այն ապրուստի համար, որ երազում էր տասնութեց տարեկան հասակից սկսած: Միայն հայրաբեանը կարող է իրագործել այդ երազը: — գոնէ ացապէս էր մտածում օրիորդը: Ահա ինչու նա բայցարձակ հաւանութիւն էր տալիս իւր մօր միտումներին: Եւ մացը, խրախուսված այս հաւանութիւնից, ամեն կերպ աշխատում էր ձեռքից բաց չը թողնել իւր որսը, որին նա վերջինն էր համարում, զիտէրով դստեր հետզետէ թառամող դէմքը: Հիւրերը գալուց մի քանի րոպէտ անցած ներս մտաւ Նատալիան զուզված, զարդարված: Յետոյ եկան Մարիամը ու Ռոբէնը, և իշխան Սահարունիի գուարճախօսութեան շնորհով հիւրա-

սենեակը աղմկեց:

Տիկին Սօփիօն ն'յատեց, որ հայրաբեանը միայն մի քանի րոպէտ ուշադիր եղաւ դէպի իւր դուստրը. յետոյ ամուրին դարձաւ Մարիամին և սկսեց նրա հետ խօսել: Նա ներքին յուզմունքից շրթունքը կրծեց և մօտեցաւ հայրեանին:

— Ինչու մասին էք ացգպէս տար դուք խօսում: — Հարցրեց նա պարզ:

— Խօսում ենք Ռոբէնի արտասահման գընալու մասին, — պատասխանեց հայրաբեանը: — այժմ մեան երիտասարդները շատ ազան են, ինչ քան զիտութիւն են ստանում, չեն կշտանում:

— Եյտ մասին յետոյ, — ասաց տիկինը շեղակի նայելով Մարիամի երեխին, — գնանք ճաշելու, բաւական է ինչ քան քաղցած պահեցինք ձեզ:

Նա առաջ գնաց, և հիւրերը հետև եցին նրան դէպի սեղանատուն:

Ճարպէկ տանտիրուհին այնպէս հնուտ կարդարեց, որ ճաշի սեղանի մօտ հայրաբեանի մի կողմում իշխան Սահարունին նստեց, միւս կողմում Նատալիան, դէմ ու դէմ նիկողացուր: Իսկ Մարիամին և Ռոբէնին հրաիրեց նստել իւր մօտ, առաջնի աջ և ձախ կողմերում տե-

ղաւորելով Գաբօյին ու Լիգային։ Բայց . . . պարզիւն ջանք։ Ամուրին սկզբից մինչև վերջ այնչափ ուշադրութիւն դարձրեց իւր հարևանուհու վրայ, որչափ պատշաճ էր անքաղաքավարի ըլ լինելու համար։ Ամեն մի յաջող վայրկեանից օգուտ քաղելով, նա նատալիայի ուսի վրայով նայում էր Մարիամին, որ զբաղված լինելով Գաբօյով ու Լիգայով, չէր նկատում նրա յամառ հայեացքները։

Տիկին Սօփիօյի սիրտը խռովեց, այ նա ըլ յուսահատվեց, Եզքով արաւ իշխանին, որ կենացներ առաջարկի, Այս ևս չօգնեց, Ոչ նորին պայծառափայութեան իւրաքանչիւր բաժակի վերաբերմամբ արտասանած սովորական խօսքը, ոչ տիկնոջ և Նիկողայոսի անսովոր յարգանքը ըլ գրաւեցին Հալաբեանին։ Լուռ էր նա և եթէ խօսում էր, միայն հարկից ստիպված։

Ճաշը աւարտվեց, Տիկին Սօփիօն հիւրերին հրաւիրեց դահլիճ, որ Սաղաթեանների տասնուերկու սենեակների մէջ ամենահարուստ զարդարվածն էր։ Դէսկի փողոց նայող հինգ բարձր և լայն պատուհանները սքօղված էին թանձր ու ծանր մետաքսեայ մուգ-կարմրագոյն վարագոյններով, որ ծառաները նոր մաքրել էին և քարշ արել։ Մի անկիւնում դրած էր տաճկա-

կան թախտը, մետաքսեայ նրբանկար և ոսկեգործ կապերտով ծածկուած։ Զինական ձեռվ մանր քանդակված և փղոսկրով դրուագած քանի մի աթոռակներ շրջապատել էին ոսկեհիւս բարձերով զարդարուն թախտը։ Մի ազ անկիւնում դրած էր աւելի մեծ մի թախտ, զարդարված բուն պարսկական ճաշակով։ Դէմ ու դէմի անկիւնում մորենագոյն թաւիշով ծածկուած եւրոպական բաղվաթոռները և բազմոցներն էին տեղաւորված։ Խսկ այնտեղ, դահլիճի խորքում, վարագոյրների հովասուն ստուերի տակ, հապրտ կանգնած էր նատալիայի աշազին դաշնամուրը, որի կափարիչի վրայ անկանոն սփռուած էին ոսկեկազմ նոտրատետրերը։ Այս ու այնտեղ շարված էին կոլորակ, սեազոյն սեղաններ։ Մէկի վրայ դրած էր այցետոմսերով լի չինական վազը։ Միւսները ծանրաբեռնուած էին թանգագին փնջամաններով, ալբօմներով և հարիւր տեսակի մանր մունր արդ ու զարդով։ Բայցի կանթեղներից և պղնձէ մոմկալներից, պատերի վրայ քարշ արած էին մօտ տասը մեծադիր նկարներ, որոնց ոսկեզօծ շրջանակները աւելի թանգ արժէին, քան իրանց մէջ ամփոփածը։

Տանտիրոջ հարստութեան և տանտիրուհու

ճաշակի մասին դաղափար տուող այս դահլիճն
էր, որի գարդը ֆրանսուհի գուվերնանտկան
անձաշակ էր անուանել:

Նիկողայոսը հիւրերին առաջարկեց աբրիկանտ:
Հալաբեանը օրիորդ Մարիամին խնդրեց դաշ-
նամուր նուազել—Մի անտակութիւն, որ
կատաղեցրեց Սօփիօցին: Տիկինը գաղտուկ նա-
ցեց Մարիամի երեսին, և նացեց այնպէս, որ
օրիորդը մերժեց Հալաբեանի խնդիրը: Իշխան
Սահարունին, Նատալիայի թեր առաջ, մօտեց-
րեց դաշնամուրին:

Նա հուչեցրեց Փօրժ: Բիգէի երաժշտութիւնից
մի կտոր, որ այն ժամանակ խիստ տարածված
էր Թիֆլիսի ընտանիքներում: Նրա խաղը
գրաւեց մի փոքր ժամանակ: Հալաբեանի ուշա-
դրութիւնը:

Տիկին Սօփիօն հանդարտ մօտեցաւ, նըս-
տեց ամուրիի մօտ և միսեց շշնչոլ, թէ որ-
քան Նատալիան սիրում է մուզիկը, թէ ինչ-
պէս նա դիւրին սովորում է ամեն մի նոր ե-
ղանակ, թէ քանի քանի մարդիկ գովել են
նրա առանձին ձիրքը: Զարմանում են, որ նա
բարեգործական նուազահանդէսներում չէ մաս-
ցակցում: Հալաբեանը նոյնպէս գովեց, և այս-
պիսով անդիտակցաբար մեղմայրեց տիկինոց

Ներքին ալէկոծութիւնը: Նրա հայեացքը մի
անգամ ևս գարձաւ Մարիամի կողմը: Օրիսրդը
մի փոքր հետու նստած լսում էր իշխան Սա-
հարունիի գուարճախօսութիւնը: Երբէք նա
այնքան սիրուն, այնքան գրաւիչ չէր երևացել
Հալաբեանին: Ամեն ինչ նրա կերպարանքի մլչ
դրաւիչ էր: Եւ հէք ամուրին աւելի ու աւելի
զգում էր, թէ դժբաղդ կը լինի, եթէ չը կա-
րողանայ յաղթել նրա հպարտութեանը:

Նատալիան վերջացրեց նուագումը: Իշխան
Սահարունին ծափահարեց: Հալաբեանը բնագ-
դումով հետևեց նրա օրինակին:

Օրը մթնեց, սպասաւորը վառեց կանթեղնե-
րը: Դահլիճը լուսաւորվեց մի պաճառ, ուրախ
լուսով, որի շողբերը առանձին մի հրապոյր
սփռեցին Մարիամի վրայ: Մի վարկեան Հալա-
բեանը լիշեց իւր դատարկ բնակարանի կիսա-
խաւար սենեակները օրուայ այդ ժամին, երբ
նա սովորաբար պառկած էր լինում անկողնում:
Մի բուռն ատելութիւն զգաց նա դէպի այդ
մուալ կացարանը, որ իւր տագտկալի մենութիւնն
էր լիշեցնում: Նա կը կամենար երկար նստել
դէմ ու դէմ այն արարածի հետ, որի թովու-
թիւնը զրեթէ կաշկանդել էր նրա հոգին: Եղ
արդէն ուշ էր: Նա ոտքի կանգնեց:

— Ուր էք շտապում, — ասաց Նիկողայոսը,
հակառակ իւր ցանկութեան չը կարողանալով
հիւրի անսովոր սակաւախօսութեան պատճառն
իմանալ:

— Արդէն մութն է, — պատասխանեց հայ-
քեանը և, դառնալով Սօփիօյին, աւելացրեց. —
Ներեցէք, տիկին:

— Դուք ներեցէք, — որ չը կարողացանք ձեզ
գուարճացնել, — ասաց տիկինը մի առանձին
եղանակով, որ արտայացտում էր մի տեսակ
նուրբ հեգնութիւնն: Եւ, իւր մատների ծայրերը
դնելով նրա ափի մէջ, աւելացրեց. — խնդրում
եմ չը մոռանաք մեզ...

— Տեսար, — գոյէց տիկին Սօփիօն յուզված
մտնելով ամուսնու ետևից ննջարան, — տեսար,
այդ քո եղբօր աղջիկը ինչ է անում:

— Ի՞նչ է անում, — հարցրեց Նիկողայոսը զար-
մացած:

— Կապում ու կտրում է խեղճ Նատօյիս ճա-
նապարհը: Զէ, թէկուզ ինձ խեղճես, ես իմ
աղջկանս այս տանը պահելու չեմ: Կամ նա կամ
քո եղբօրդ աղջիկը: Մէկի վրայ էի դրել յոցս,
նրան էլ ուզում է խելքից հանի, այն էլ ուի...
մեր հայով ապրողը:

— Եթէ լսուքդ հալաբեանի մասին է, ասաց

Նիկողայոսը սառնօրէն, — Մարօն այդ մարդուն
այնքան է հաւանում, ինչքան ծիտը կատուին:

— Հաւանում է, չի հաւանում, — ասաց Սօփիօն
զրգուած, — այդ իմ գործը չէ... քանի որ նա
այս տանն է, իմ աղջկայ բաղդը կապ է ու
կապ...

— Գիտես ինչ, — ընդհատեց Նիկողայոսը, սիւր-
տիւկը հանելով, — եթէ ուզում ես ճշմարիտն
ասեմ, քո աղջիկ մարդու տալու այդ հոգսերդ
ինձ մինչեւ այստեղ ձանձրացրել են, այ, մինչեւ
այստեղ. — Նա ձեռք գրեց կոկորդին: — Ես աւելի
մեծ ցաւ ունեմ, հասկաննում ես: Գնա, ինչ
ուզում ես արա, զլուխս մի ցաւացնիլ:

Եցս ասելով Նիկողայոսը պառկեց անկողին
իւր սովորական քունը վայելելու:

Իշխան Սահարունին, փողոցում հասնելով
հալաբեանին, հարցրեց.

— Եցս երեկոյ կուբում կը տեսնուինք:

— Ոչ:

— Ինչնու:

— Որովհետեւ ուզում եմ տանը մնալ:

— Հէր օրհնած, քեզ ինչ է պատահել, — գո-
յեց իշխանը զարմացած: — Մի շաբաթ է ոչ մի
տեղ չես երեկում, տիսուր ես, հետդ խօսել չի
լինում: Եցսօր էլ, կարծես, նորահարս լինէիր

քրոջս տանը, ոչ կարգին ճաշեցիր, ոչ իւր-
մեցիր, ոչ լսօսեցիր. . . փիէ. . . Եկ այս
երեկոյ կլուբ, թէ չէ լուր կը տարածեմ, որ
դժվել ես:

— Ինչ ուզում ես արա, միայն այս երեկոյ
ինձ հանգիստ թող,— պատասխանեց Հալաբետ-
նը թող ձայնով,— ես մի փոքր տկար եմ...

— Տկար ես. . . նու այդ տկարութիւնը մար-
մնաւոր չի, ես այդ նկատում եմ...

— Յտեսութիւն, — ընդհատեց Հալաբետնը
և, շտապով սեղմելով իւր ընկերոջ աջը, արագ
քայլերով հեռացաւ:

Քանի մի վայրկեան իշխանը ապշած նայելի
նրա ետևից և, զլուկը շարժելով, ասաց մըտ-
քում.

« Հըրմ, ուրեմն ես չեմ սխալվում, այդ մարդը
սիրահարիել է, ում վրայ... Ի հարկէ, Պարիամի:
Իհամ, բուրդը թափիված արջ, լաւ պտուղ ես ու-
զում քաղել մաշված թաթերովդ: Նու, բարեկամ,
Պարիամը քո հաւասարը չի... Եթէ վճռել ես
իսկապէս ցիմարանալ, ահա Նատալիան, նրա-
նից լաւին արժանի չես: »

Անցնելով փողոցի մէկ մայթից միւսի վրայ,
նա աւելացրեց.

« Այն, Նատալիան, ես Սօփիօցի միտքը հաս-

կանում եմ այժմ, թէ ինչու նա ինձ խնդրում
է շուտ շուտ այդ մարդուն նրա տունը տանել:
Կէ, իշխան Սահարունի, կարծեմ ազնուական
արիւնդ չի պղտորվիլ, եթէ քրոջդ աղջկայ հա-
մար մօցիքլութիւն անես. . . Տրալլա, տրալլա,
տրալլալալա... տիմար է նա, որ մահմեգական
չէ և ամուսնանում է...,

Մի քանի բոպէցից յետոյ մի սիրուն կառք
իշխանին հասցրեց քաղաքի յետ ընկած փողոց-
ներից մէկը: Կար ցացտեղ մի փոքրիկ տուն,
ուր մէկը անհամբեր սպասում էր նրան և որին
իշխանը նօմեր երկրորդ լը անուանում:

հարուսի հետ ուն ունց թի անգն ու նունքը
զմիւնո զմ ուս աղը մարուս յարու ու աշ ու առ. Յ
մարու ուրաս նմջորդ ուն ապունու մամդ. Յ
ուս սախը բարա Ամէ ամբուստը ու բամբա
սախը սախը սախը մամդ ուն սախը սախը սախը
Երեք օր շարունակ Սաղափեանների տանը
տիրում էր մի անլուր խառովութիւն. Տիկին
Ասկիոն չէր խօսում ոչ Մարիամի և ոչ Պու-
րինի հետ, կամ խօսում էր, երբ միայն ան-
հրաժեշտ էր, ակամայ, կոշտ եղանակով, առանց
նրանց երեսին նայելու:

Զարակամութիւնը հանգիստ չէր թողնում:
Կնչ, իւր սեպհական տանը ամեն օր, ամեն
ժամ աշքի առաջ ունենայ մի կենդանի խոչըն-
դոտ իւր գտտեր բաղդին, և կարողանայ սառ-
նարիւն մնալ: Պէտք է գուրս վռնդել այդ աղ-
ջկան էլ ու նրա եղբօրն էլ: Այնպէս վռնդել,
որ նրանք իմանան, թէ ինչ ասել է առանց
հարուստ ազգականների օգնութեան ապրել: Այն
ժամանակ Սարիամը այլ ևս չի ցանդգնիլ
իւր զլիսից բարձր մարդկանց մասին երազել:

«Հա հա հա, — դառն Տիճաղում էր տիկինը
իւրովի, — հարուստ մարդու կնիկ է ուզում լի-
նել. Թե՛ս կոտրատվում էլ է... Նիկօն էլ ա-
սում է, թէ նա չի հաւանում Հայաբեանին...

Զի հաւանում, հա հա հա... ում, ով. . . :
Վիրաւորված էր և նատալիան, թէ պարզ չէր
արտայայտում իւր սրտինը: Զգացուն և դիւ-
րագրղիու օրիորդը դէթ ացնքան ինքնասէր
Էր, որ աշխատում էր թափյնել իւր հոգեկան
նաւաստութիւնը: Բայց նախանձը կրծում էր
նրա սիրտը, և ամեն անգամ իւր հակառակորդ
համարածին հանդիպելիս, ակամայ մի որ և է
նշանով կամ դէմքի շարժումով մասնում էր
իրան:

Մարիամը տեսնում էր այս խորլ թշնամա-
կան պացքարը իւր դէմ: Եւ համբերում էր:
Ոչ մի խօսքով, ոչ մի նշանով նա ըլ ցոյց տուեց
իւր սրախ դառնութիւնը: Ինչպէս միշտ, նա
յարգում էր տիկնոջը դէթ արտաքուստ, ինչ-
պէս միշտ, վարկում էր նատալիացի հետ իրը
կրտսեր քոյց: Եւ չէր զգում, որ այսպիսով ան-
գիտակյաբար արհամարհում է իւր հակառա-
կորդի նախանձը, ուրեմն և աւելի զրգում
նրան, մանաւանդ ընդունելով նրան իբրև ի-
րանից մեծ: Նա վեց տարով նատալիացից փոքր
էր. մի հասարակ տարբերութիւն, որի հետ
վերջինը չէր ուզում հաշուսել:

«Կարծես, բերանից կաթի հոտ է փչում,—
ասում էր մաքում նատալիան, իրան անչա-

փահաս աղջիկ է ձեւացնում: Հարցնող ըլ կաչ
նրն է մեզանից դէմքով աւելի երիտասարդ»:

Առաւօտ էր: Մարիամը սովորական ժամին
զարթնած, շորերը հագնում էր: Երկու օրիորդ-
ների ննջարանները թէև առանձին էին, բայց
միմեանց կից: Ջորերը հագնելոց յետոյ, Մա-
րիամը յանկարծ անզգուշաբար կպատ իւր ան-
կողնակալի մօտ դրած փոքրիկ և թեթև սե-
ղանին: Սեղանը ընկաւ բաց յատակի վրայ և
աղմուկ հանեց:

— Կիզա, Գաբօ, չէք թողնելու, որ մի քիչ
քնեմ, – ձայն տուեց իւր սենեակից նատալիան
բարկացած:

Մարիամը մօտեցաւ միջին դռներին և ժպտա
լով ասաց.

— Ես էի, Նատօ, ներիր, կիզան ու Գաբօն
քնած են իրանց սենեակում:

Նատալիան արմունկը բարձին յենած, նայեց
նրան արիւնակի աչքերով: Գրաւիչ էր Մարիա-
մը այդ փարկեանին իւր տնացին թեթև հա-
զուստով, սակաւ ինչ գունատ այտերով, գեղե-
ցիկ ուսերի վրայ սփռուած կակուղ ալեծուփ
լմագերով: Եւ հէնց այդ սիրունութիւնը աւե-
լի գրգռեց իւր հակառակորդին:

Նատալիան գոռաց, և գոռաց այնպէս, ինչ-

պէս մի բարի տիրուհի երբէք չի դուռում իւր
աղախնի վրայ:

— Դուք նիշտ այգպէս էք, այ, ուրիշներին
չէք թողնում քնելու, իսկ ինքներդ... Այս, ա-
տելի էք, գեղեցիկ օրիորդ, ատելի էք...

Եւ ատամները կրճտելով, գլուխը աւելի բարձ-
րացրեց, կարծես, պատրաստ էր կատաղի կա-
տուի պէս վեր ցատկել և իւր սուր ճանկերով
կպէտ հակառակորդի կոկորդին: Մարիամի այ-
տերը և ականջների ծայրերը շառագունեցին
ներքից յուզմունքից: Նա երեսը յետ դարձրեց
արհամարհանքով:

Նոյն փարկեանին Մարիամի սենեակին կից
սենեակի սեամում երևեցան – նախ Գաբօյի ապա
կիզայի զարմացած և երկիւղած դէմքերը:

— Ջուտով գուք ինձ այս սենեակից կը փախ-
ցնէք, — զոչեց նատալիան, նկատելով Մարիամի
արհամարհական ժպիտը, — կը փախցնէք իմ
հօր տնից: Ես հանգստութիւն չունեմ այստեղ
ձեր ձեռքից, գոռող օրիորդ...

Նրա ձայնին ներս եկաւ աղախինը, յետոյ
Աօփիօն: Տեսարանը այց կերպարանք ստացաւ:
Ներթը տիկնոցն էր:

— Լաւ կը լինէր, — գարձաւ նա Մարիամին,
առանց նախապէս գործի էռոթեանը տեղեկա-

նալու, —որ մի քիչ խոնարհ պահէիր քեզ այս
տանը: Ի՞նչ կայ էլի լոյսը չը բացված կոլու ևս
սարքել:

Մարիամի աչքերի մէջ փայլեց արտասուրը:
Նա դոգֆաջուն ձայնով արտասանեց,

—Կուիս սարքողը ձեր աղջիկն է:

Նատալիան վերամկը մի կողմ շպրտեց և հե-
րարձակ գլխով, կիսամերկ կրծքով նատեց ան-
կողնի մէջ:

—Այդ ի՞նչ ասել է, —գոռաց նա խեղլուկ
ձայնով, —ու համարձակվում ես ինձ մեզա-
դրել...

Եւ այնպիսի մի ճիչ արձակեց կրծքից, որ,
կարծես, մէկը յանկարծակի նրան հնոյի մէջ
ձգեց: Յետոյ նա երեսը դրեց բարձին, սկսեց
հեկեկալ, իւր սուր ատամներով կրծելով բարձի
կտաւը:

Տիկին Սօփիօն փափեց դուրս և բանի մի
փարկեան անյած, իւր ամուսնութեանց բանած,
քաշեց, ներս բերեց:

—Տես, ողորմած մարդ, բարեգործ մարդ, մեր
հայր ուրիշներին առւող մարդ, —գոռոտմ էր
նա, իւր փոքրիկ աչքերի սուր բիբերից կայծեր
թափելով, —տես լաւութեանդ տեղ ի՞նչ են ա-
նում:

Նիկողայոսը չը կիտէր ամաչէր, որ այդպէս
անժամանակ տեսնում էր իրան օրիորդների
կացարանում, թէ զարմանար: Նա նայեց բարձ-
րաձայն հեկեկող նատալիացին և հարցրեց:

—Ի՞նչ է պատահել:

Մարիամը անօժից երենը ծածկեց երկու
ձեռներով:

—Եցն է պատահել —պատախանեց Սօփիօն,
—որ աղջկաս օրը սեացնում է քո եղբօր Լդ
էդ, էդ... մեղայ քեզ Տէր Աստուած...

Եւ դէպի Մարիամի կողմ մի վիրաւորական
խօսք շարտելով, նա մօտեցաւ նատալիացին,
դրկեց, համբուրեց և մկսեց մխիթարել:

—Ես ոչինչ չեմ հասկանում, ոչինչ չեմ հաս-
կանում, —գոչեց Նիկողայոսը, զլուվսը երերելով,
և ականջները փակած դուրս գնաց:

Նոյն օրը Մարիամը, հակառակ իւր ցանելու-
թեանը, չը կարողացաւ յաղթել իւր սրտի դառ-
նութեանը և միւնոյն սեղանի մօտ ճաշի նստել
տիկին Սօփիօն և նատալիացի հետ:

Անախորժ անց քը անյաստ մնաց Թուբէնին:
Նրա սենեակը գտնվում էր Մադաֆեանների
ընդարձակ բնակարանի ծագրում, Թալիճը, սե-
ղաննատունը, Նիկողայոսի առանձնարանը և
նախագաւթի պէս մի լայն միջանցք այդ սե-

Նեակը անջատում էին օրիորդների ննջարաններից:

—Ո՞րտեղ է Մարօն, — հարցրեց Թուբէնը Լիզացից, երբ տեսաւ, որքոյրը ճաշին ըներկացաւ:

—Եւր սենեակումն է, —պատասխանեց Գալօն, —կանչեցի, չեկաւ:

Թուբէնը, ճաշը կիսատ թողեց, շտապեց իւր քրոջ մօտ: Պատուհանի առաջ կանգնած, օրիորդը մտայոց դէմքով նայում էր դէպի գաւիթ:

—Մարձ, — գոչեց եղբայրը և բռնեց նրա ձեռը:

Մարիամը մտքերից սթափվեց և յետ նայեց, ձեռով շիելով աչքերը: Թուբէնը նրա կարմրած աչքերի մէջ նշմարեց արտասուրի թարմ հետքը:

—Դու լաց ես եղել, — հարցրեց եղբայրը, ուղիղ նայելով նրա երեսին:

—Ոչ:

—Ինչու չես ճաշում:

—Ախորժակ չունեմ:

—Մարօ, — գոչեց Թուբէնը, բաց թողնելով քրոջ ձեռը և մի քայլ յետ գնելով, դարձեալ ինձ խաբիւմ ես:

Մարիամը խոր հոգոց հանեց կրծքից և ապա բռնելով եղբօր ձեռը, թախանձանքով ասաց.

—Եթէ ինձ սիրում ես, այժմ ոչինչ մի հարցնիլ, ոչինչ: Գնա ճաշդ վերջացրու և իրիկնադէմին սպասիր ինձ սենեակումդ: Այնտեղ կը խօսենք:

Թուբէնը ոչինչ չասաց, և ասելու բան չունէր: Նա գուշակեց, որ դարձեալ վիրաւորել են իւր քրոջ սիրաբ: Բայց նա արդէն իւր անելիքը վճռել էր — պէտք էր անշուշտ և անյապաղ գուրս գալ ացդ տնից:

Արդէն հինգ օր էր, որ նա արտակարգ հոգածութեան մէջ էր: Արտասահման գնալու գաղափարը յետ մղեց իւր զլիսում «առ ժամանակ»: Տիկին Սօփիօջի պարզ արհամարհանքը, հօրեղբօր անտարեր վարմունքը, Մարիամի օրից օր աճող թախիծը, այս բոլորը դրդում էին նրան՝ սեպհական աշխատանքով ապրելու միջոցների մասին մտածել:

Միւնոյն ժամանակ նա վճռեց իւր հօր թողած ժառանգութեան մասին վերջնապէս բացատրութիւն խնդրել հօրեղբօրից: Արդեօք կայ մի բան, թէ՞ ցնորք է ացդ ժառանգութիւնը: Մի գուցէ արդարեքոյրը և ինքը ուլժ տարի շարունակ մի աւելորդ բեռն են եղել

իրանց հօրեղբօր ընտանիքի համար, նուաստ ձրիակերներ: Ձրիակեր... միայն հէնց այդ բառը սարսափեցնում էր նրան և ձգում անհուն մտատանջութեան մէջ:

Սպասելով յարմար առթի հօրեղբօր հետ խօսելու, նա որոնում էր իւր համար մի պաշտօն: Չորս օր շարունակ նա սրան ու նրան դիմեց, ոչ մի տեղ չը գտաւ մի յարմար պաշտօն: Այն ժամանակ նա վճռեց նոյն իսկ մի ամենահասարակ գործ յանձն առնել: Վերջապէս, մի դպրոցում նրան առաջարկեցին առժամանակ մի քանի դասեր, և նա ընդունեց: Հէնց միենոյն օրը քաղաքի աղքատիկ փողոցներից մէկում գտաւ մի փոքրիկ բնակարան, երկու սենեակից բաղկացած: Բայց պէտք էր նախապէս այս բողոքի մասին խօսել Մարիամի հետ, և նա մտադիր էր նոյն օրը խօսել:

Թուրքէնի գուրս գնալուց յետոյ, Մարիամի մօտ եկան Գաբրօն և Լիզան ձեռներում մի մի աման կերակուր:

—Ինչու ես լալիս, Մարօ,—ասաց Լիզան, — Նատօն քեզ հետ կովեց նրան համար... Տեսաց, տեսաց, դու մեղաւոր չես, Մարօ, ես հայրիկին էլ ասացի, որ դու մեղաւոր չես:

Եւ փոքրիկ աղջիկը, ամանը դրեց սեղանի

վրայ, իւր փափուկ բազուկները փաթաթեց Մարիամի պարանոցին, այտերը մօտեցրեց նրա շրթունքին:

—Կէր, Մարօ, քաղցած մի մնալ,—ասաց Գաբրօն,—մաման լակէին հրամայեց, որ քեզ համար ջոկ սեղան բաց անի, մենք չը թողեցինք: Այս, ինչոր ուզում ես, ասս բերենք...

Մատաղ սրտերի անկեղծ սէրը մխիթարեց Մարիամին, մեղմացրեց անախորժ գէպքի ծանր տպաւորութիւնը, չնչեց այն թեթև ոխը, որ վարկենաբար զարթնել էր նրա սրտում իւր ոսոխների գէմ:

Իրկինադպէմին նա գնաց եղբօր սենեակը: Դոներին չը հասած, նա լսեց մի խօսակցութեան ձայն: Որութէնը միայնակ չէր: Օրիորդը մի քանի վարկեան կանգ առաւ, ականջ դրեց: Խօսում էր Որութէնը: Յանկարծ նա լսեց մի ծանօթ ծիծաղ, և սիրտը սկսեց բաբախել: Նա մոռացաւ իւր մտքերը, արեան մի ուժգին հոսանք խաղաց նրա երակների մէջ: Քոնքերի վրայ նա զգաց մի այրող տաքութիւն: Զգաց նոյնպէս, որ այտերը կարմրեցին:

Նա անզիտակցաբար մի քանի քայլ յետ դրեց: Քանի մի վարկեան տատանվեց - ներս մտնել, թէ վերադառնալ: Ծանօթ ձայնը կրկին հնչեց

Նրա ականջին: Նա ուղղեց իւր հագուստը, կարդի բերեց զլիի մազերը, ձեռը սեղմեց ձախ կրծքին: Այնտեղ, որսուած ճնճղուկի պէս թըրթում էր նրա սիրտը:

Նա գոնքերը բաց արաւ և ներս մտաւ:

Ուուրէնը նստած էր բագկաթուկի վրայ, արմունկը յենած զրասեղանին: Նրա առաջ անցուգարձ էր անում նա, որի ձայնը այնքան լուզպունք պատճառեց Մարիամին: Սեղանի վրայ վառվող կանթեղը լուսաւորում էր քսան ու եօթ քսանութ տարեկան մի պնդակազմ միջահասակ երիտասարդի լայն ճակատը, թուխ երեսի բաւական խոշոր գները, կարճ և ցանցառ միրուքը: Ուսկէ շրջանակով պէնսնէն թող չէր տալիս որոշելու: Նրա աչքերի գոյնը: Նա հագած էր ժամանակակից ձեւի կարճ, սև սիւրտուկ, մուգ մոխրագոյն վարդիկ և սրածացը կօշիկներ:

Տեսնելով Մարիամին, երիտասարդը արագօրէն ձեռները գուրս բերեց զրասենից: Ուրախութեան ժպիտը երեան հանեց նորա խոշոր, սպիտակ ատամների շարքերը:

— Յուսով եմ ներողամիտ կը լինէք, որ այսպէս անժամանակ էք տեսնում ինձ այստեղ, — ասաց երիտասարդը, մէջքից խոնարհ

թեքվերով, և, բռնելով օրիորդի աջը, աւելացրեց.

— առանց էք:

— Ընորհակալ եմ, երբ էք եկել, հարցրեց Մարիամը, դարձեալ կարմրելով:

— Այսօր առաւօտեան և շատ բարեներ եմ բերել ձեր մօրաքրոջ կողմից, օրիորդ Մարգարտից, Արշակից և ամբողջ ընտանիքից:

— Նրանք գեռ Թիկչանումն են:

— Ոչ: Երէկ միասին ուղեորուեցինք — նրանք Երեան, ես — Թիվլիզ:

— Ուրեմն...

— Այս, — ընդհատեց երիտասարդը, գուշակելով օրիորդի հարցը, — վճռեցի տեղափոխվել այստեղ և մշտական մնալ:

Մարիամը հազիւ կարողացաւ զսպել իւր ուրախութիւնը, լսելով երիտասարդի վերջին խօսքերը:

— Այս բոպէին, — շարունակեց երիտասարդը,

— Թուրէնի հետ հէնց այդ մասին էինք վիճում, երբ գուք ներս մտաք: Երեականեցէք, օրիորդ, ձեր եղբօր կարծիքով, ես չափազանց սխալում եմ Թիվլիզը գաւառից գերադասելով: Նա ասում է, թէ ես պիտի մնայի Երեանում...

Վերջին դարձուածը արտասանելիս երիտասարդը ակնոցի բաց-ծխաղոյն տպակիների մի-

ջով աչքերը սևեռեց Մարիամի երեսին։ Եւ,
կարծես, այդ սուր հայեացքից խուսափելով,
օրիորդը անցաւ սենեակի կիսալուսաւոր մի
անկիւնը, նստեց պատի տակ։ Այստեղ նրա աշ-
լազուիլը մասամբ աննկատելի կարող էր մնալ
Ոուբէնից։

— Երբէք ես չեմ ափսոսել իմ կատարած դոր-
ծերի մասին, — գարձաւ երիտասարդը Ոուբէ-
նին, — յոյս ունիմ, որ այս անգամ էլ չեմ ափ-
սոսիլ։ Ինքդ դադիր, Գետերբուրգից յետոյ գնալ
և մի գիւղաքաղաքում ապրել — շատ և շատ
անտանելի է։ Ես այդ զգացի ութ՝ ամիս Երևա-
նում մնալով, Անհնարին է այնտեղ ապրելը,
կրթուած մարդը կարող է բոլորովին խեղ-
դուել լուսաւոր օդի պակասութիւնից։

— Խսկ այստեղ դու կը լսեղդուես այդ օդի
շատութիւնից, — շեշտեց Ոուբէնը հեգնաբար,
— նեխված, ապականված օդի...»

— Ես չեմ հասկանում քո ասածը, — արտա-
սանեց երիտասարդը և նոյն վարկեանին պեն-
սնէն վերցնելով, երեւան հանեց հաստոսկր կա-
մարների տակ տեղաւորված բայց մեխակագոյն,
փոքրիկ, սակաւ ինչ ցաւագար, բացց սուր և
խելացի աչքերը։

— Քատ պարզ է։ Թու իրիւ բժիշկ, ստիպված

կը լինես մրցել անթիւ արհեստակիցներիդ հետ։
Մելիք-Բարսեղեանը — այսպէս էր երիտասար-
դի ազգանունը - կէս ներողամտաբար և կէս հեգնաբար Տիժաղեց, հանդարդ ուղելով իւր
նոր շաբկի փացուն օձիքը։

— Տեսնում էք, օրիորդ, — ասաց նա Մարիա-
մին, որ լուռ և հետաքրքրված լսում էր երկու
երիտասարդների վիճաբանութիւնը, — ձեր եղ-
բայըը ինձ ուղում է յուսահատեցնել։ — Գիտես
ինչ, — գարձաւ նա Ոուբէնին, — մրցումից վա-
խեցողը չը պիտի համարձակվի կեանքի ասպա-
րէզը մտնել։ Ես . . . երբէք այդ երկիւղը չեմ
ունեցել։ Ի՞նչ մրցումն կարող է լինել իմ և իմ
արհեստակիցներիս մէջ։ Գիտութեան, թի՞ ար-
հեստի, Եթէ գիտութեան, այդ շատ ցանկալի
է և օգտաւէտ ինձ համար։ Եթէ արհեստի,
այն ժամանակ ես միայն մի զէնք կունենամ —
բարեխղճութիւն։

Մելիք-Բարսեղեանը գարձեալ նայեց Մարիա-
մին, և նրա սուր աչքերը վերջինի դէմքի վրաց
կարդացին խորին հետաքրքրութիւն։ Խրա-
խուսվելով օրիորդի լուռ հաւանութիւնից, նա
շարունակեց։

— Գուցէ դու, իբրև ընկեր, վախենումես,
որ ես այստեղ չեմ կարող ինձ համար մի կտոր

Հաց վաստակել: Բացց դու ինձ ճանաչում ես:
Մի մարդ, որ տասներկու տարի շարունակ ապ-
րել է ցուրտ և լունաւ սենեակներում, կէս
կուշտ կէս քաղցած ստամոքսով մի մարդ, որ
դառն հանգամանքների մէջ սեպհական ուժերով
ճանապարհ է բաց արել իւր համար, այն մար-
դը կարող է դիմանալ կեանքի հարուածներին:
Զբաւորութիւնը, սիրելի Ոուբէն, —շարունակեց
նա եռանդով, — խելօք վարպետ է, նրա
շնորհով ես շատ վաղ եմ կարդացել կեանքի
խրատական էջերը: Այժմ, երբ ես ուղիղ և
պարզ ճանապարհի վրայ եմ, միթէ ամօթ չի
լինիլ, որ փախչեմ մանր—մունր խոչնդունե-
րից:

Մի այնպիսի հաստատ ձայնով և որոշ եղա-
նակով արտասանեց նա այս խօսքերը, որ դը-
ժուար էր կարծել, թէ այդ լոկ մի պարծենեկո-
տութիւն է: Յետոյ նա նստեց սեղանի մօտ և,
թոյստութիւն խնդրելով Մարիամից, մի ծխա-
լսոտ վառեց:

Քո բարոյական ոյժը ինձ վաղուց է յայտ-
նի, —խօսեց Ոուբէնը ընկերական յարդանքով,
—միշտ դու իմ աչքումս միւս ընկերներիցս
բարձր ես եղել քո տոկունութեան և համե-
րութեան շնորհով: Եհ, ինչեւիցէ, դու քոր-

ծը աւելի լաւ գիտես, շնորհաւորում եմ տեղա-
փոխներգ և յանկանում եմ յաջողութիւն: Ե-
րանի թէ հանգամանքները մեզ չը շեղեն
կեանք, ուղիղ ճանապարհից:

— Համոզված եղիր, որ չեն շեղիլ, — գոչեց
բժիշկ Մելիք-Բարսեղեանը խրոխտաբար: —
Բացց այս խօսակցութիւնը միայն ինձ է վե-
րաբերում, — աւելացրեց նա, — չը պիտի եսական
լինել: Ասա տեսնեմ, դու ինչպէս ես կարգա-
դրել ապագադ: Գնում ես արտասահման:

Այս հարցը սթափեցրեց Ոուբէնին, ծանր
մտքերը կրկին զարթնելով, վայրիննաբար մր-
թագնեցին նրա ճակատը մի մուայլ ստուերով.
Նա նայեց Մարիամին, որ մի և նոյն տեղում
լուռ նստած լսում էր նրանց խօսակցութիւնը,
և թախճալի ձայնով պատասխանեց ընկերոջ
հարցին.

— Ո՞չ:

— Ո՞չ: — կրկնեց Մելիք-Բարսեղեանը, — ուրե-
մըն, վերջապէս, համոզվեցիր, որ աւելորդ էր
մտադրութիւնդ:

— Առ այժմ ստիպված եմ համոզվել: Հան-
գամանքները այդպէս են պահանջում: Վճռեցի
մնալ Թիֆլիզում, միայն ոչ այս տանը: Վա-
ղուանից ես բաղդ պիտի ունենամ Մարիամի

Հետ ապրել առանձին բնակարանում: Հրաւիրում էմ քեզ շնորհ բերել ամեն օր, եթէ ժամանակդ կը ների:

—Ի՞նչ են նշանակում այդ խօսքերը, դարձաւ Մելիք-Քարսեղեանը Պարիամին, աւելի ու աւելի հետաքրքրվելով և զարմանալով:

—Ես ոչինչ չեմ հասկանում, հարցրէք իրանից:

—Այն է նշանակում, — ասաց Ռուբէնը, բոնի Ժպտալով, — որ Պարիամը և ես արդէն չափահաս լինելով, ազատվում ենք մեր բարեսիրահօրեղօր խնամակալութիւնից:

Մի քանի վայրկեան տիրեց անյախմար լուռթիւն:

—Եէ, անշուշտ մի բան պատճել է, — արտասանեց Մելիք-Քարսեղեանը, դառնալով նախ Պարիամին ապա Ռուբէնին, ինձ թւում է, որ քո և հօրեղօրդ մէջ...

—Ոչինչ չի անցել: Ես ցանկանում եմ մի փոքր ծանօթանալ չբաւորութիւն ասած բանի հետ, ինչպէս դու արդէն ուսումնասիրել ես նրան: Վերջապէս, ես ուզում եմ ազատ քաղաքացի լինել, քեզ պէս, ուրիշների պէս: Ամօթչէ այս հասակում հարուստ ազգականների իրնամակալութեան տակ ապրել:

—Այդ խօսքերդ դարձեալ չեն պարզում այն, ինչ որ կուզէի իմանալ: Միթէ դու աղքատ եւ:

— Ռուբէն, — ընդմիջեց Պարիամը ցանդիմանական եղանակով, — Ի՞նչ հարկաւոր է այդ մասին խօսել, դու ձանձրացնում ես բժշկին:

— Ընդհակառակը, Ռուբէնի վիճակը որքան ձեզ, գուցէ աւելի հետաքրքրում է և՝ ինձ: Ճշմարիտն ասա, — դարձաւ բժշկը ցամառութեամբ իւր ընկերոջը, — կատակ ես անում, թիւ իրաւ վճռել ես առանձին ապրել:

— Առ այժմ ասածովս բաւականացիր, — պատասխանեց Ռուբէնը, Պարիամի ցանդիմանական հայեացքից ստիպված, հարկաւոր համարելով զսպել իւր լեզուն, — մանրամասնութիւնները ցետոց: Վազը ես կը ցացնեմ քեզ մեր նոր բնակարանի տեղը:

Բժշկը այ ևս անբաղաքավարութիւնն համարեց իւր հարցուփորձը շարունակել: Նա վճռեց փոխել խօսակցութիւնը:

— Երեակացեցէք իմ դրութիւնը, — ասաց նա Պարիամին, կարծես, ցանկարծ մի բան մտաքերելով, — փողոցում պատճէցինք, Ռուբէնը ուժով ինձ բերեց իւր մօտ, ես կամենում էի վազը դալ և ձեր հօրեղօր ընտանիքն էլ տեսնել: Այժմ, եթէ տէկին Սօփիօն-

իմանայ, որ ես եկել եմ այստեղ գողնովի և
առանց իրան տեսնելու դուրս եկել, չի՞ նեղա-
նալ ինձանից:

— Տիկին Սօփիօն տանը չէ:

— Խսկ օրիորդ Նատալիան:

— Ոչ ոք չը կայ տանը:

— Եսու, այդ լաւ է: Խնդրեմ չը յացտնէք
նրանց, որ ես այստեղ էի: Բայց ինչ եմ հոգս
անում, երեսի, նրանք ինձ մուացել են, տես-
նեն չեն էլ ճանաչիլ, — աւելացրեց Մելիք-
Բարսեղեանը այն ձեռվ, որ երեսում էր, թէ
Սադակեանների ծանօթութիւնը մի առանձին
նշանակութիւն ունի նրա համար:

Քառորդ ժամ անցած նա դուրս եկաւ սաս-
տիկ մտատանջութեան մէջ: Թուբէնի խօսքերը
իւր դրութեան փոփոխման մասին ազդել էին
երիտասարդ բժշկի վրայ աւելի, քան կարող
էր երեւակացել առաջինք:

— Եհա բազգաւոր մարդ, դարձաւ Թուբէնը
բրոջը, բժիշկը դուրս գալուց յետոց, — մանկա-
կան և պատանեկան հասակում արդէն անցել է
կեանքի այն դպրոցը, ուր դու և ես դեռ նոր
պիտի մտնենք...

Մարիամը կանգնած էր պատի տակ և
գեռ նայում էր այն դռներին, որտեղից դուրս

գնաց Մելիք-Բարսեղեանը: Թուբէն էր, որ նրան
զարմացրեց երիտասարդի այդպէս շուտ հրա-
ժեշտ տալը և առհասարակ վարժունքը:

— Եստիր, շարունակեց Թուբէնը, — նստիր,
Մարիամ, և սառնասիրտ լսիր, Եցսօր ճաշից
յետոց ես առաջին և վերջին անգամ վճռա-
պէս խօսեցի մեր հօրեղբօր հետ:

— Խօսեցիր, — կրկնեց Մարիամը մեքենաբար
և նստեց սեղանի մօտ, — ի՞նչ իմացար:

— Իմացայ, որ դու զրկուած ես քո օժիտից,
որ մենք չբաւոր ենք. . . Լսում ես, մենք չը-
քաւոր ենք. . .

— Ես այդ վաղուց զիտէի, — պատասխանեց
օրիորդը մի այնպիսի սառնութեամբ, որ մի-
անգամայն զարմացրեց Թուբէնին:

Ի՞նչ, դու զիտէիր և ինձանից թափյնում
էիր:

— Ես չէի կամենում քեզ յացտնել, դու տաք
բնաւորութեան տէր ես, զիտէի, որ այդ
լուրը քեզ վրայ շատ վատ տպաւորութիւն
պիտի անի: Եցո՛, մենք աղբատ ենք և վաղուց,

— Ուրեմն դու զիտէս, որ մեր հօրեղբօր գոր-
ծերը ձախ են գնում, որ նա պարտքերի տակ
է լինկել, որ նա զոհել է իւր խոշոր ձեռնար-
կութիւններին մեր հայրական ժառանգութիւնը:

— Նրա գործերի ձախորդութեան մասին ես
ոչինչ չեմ լսել: Բայց թէ մեր հայրական ժա-
ռանգութիւնը ցնորք է, այդ ինձ վաղույ է,
հասկացրել տիկին Սօփիօն: Ահա, Թուբէն, ին-
չու համար էի քեզ ասում այն օրը, որ դու
նախ քան արտասահման գնալը, խօսես այս
մասին մեր հօրեղբօր հետ: Ուրեմն նա պարզ
յաշտնեց քեզ ամեն ինչ: . . .

— Համարեա թէ — Նա ինձ ոչինչ չասաց, ա-
սաց միայն, թէ փողի սաստիկ կարօտութիւն
ունէ, թէ ստիպված է ծախսերը պակասացնել:
Մնացեալը ինձ պատմեց այսօր իրիկնադէմին
նրա գլխաւոր գործակատարը: Մի տարի է, որ
ուսել է պարտքեր վերջնել: Երեք ամիս սրանից
առաջ, կնոջից գաղտնի, գրաւ է դրել այս տու-
նը: Հալաբեանից մի գումար է վերցրել, այժմ
աշխատում է մի խոշոր գումար էլ սովորել, ահա
ինչու վերջին ժամանակ նրա հետ խիստ բա-
րեկամացել է: Մինչեւ անգամ Նատալիայի օժի-
տի անունը կայ, ինքը չը կայ: Իսկ Նատալիան,
իսկ նրա մացրը շարունակում են իրանց շուշ-
լութիւնը: Մի ինչ որ կոմսուհու ծանօթութեան •
արժանանալու համար հարիւրներ են վճարում.
Երեք օր է անհամբեր շապասում են նրա ացե-
լութեանը, դեռ չեն արժանացել: Այսօր հա-

շին մացրը կպաւ խեղճ մարդուն, թէ հարկաւորէ
Նատալիայի համար երկու ձեռք նոր հագուստ
պատրաստել: — Մէկը պիտի հագնի մի մեծ պա-
րահանդիսին, որ եկող ամսի վերջին պիտի լինի,
միւսը մի հավական երեկոյթի համար, որի կարգա-
դրեն է լինելու ինքը Նատալիան: Վայր և
աղջիկ վճռել են պակասը լրացնել մեր հօրեղ-
բօր տունը հիմնայատակ անել: Միւս կողմից
քանդել են գործակատարները: Այն շողոքորթ,
հլու Գասպարը, որ տասը տարի ծառայել է,
այժմ գրապանը լրցած թողել է ու փախել: Նոյն-
պէս քիչ թէ շատ կողոպտել են և նրա ընկեր-
ները: Այս բոլորից յետոյ մեզ համար ոչինչ չէ
մնում, և մենք չը պիտի սպասենք մի բանի:
Խիլր, սիրելի Մարիամ, ես արդէն վճռել եմ իմ
անելիքը: Վաղուանից ես դասեր եմ տալիս
դպրոցում, ամսական երեսունուհինդ բուբուկ:
Վերջին խօսքերը մի վայրկենում կոտրեցին
Մարիամի ասոնասրտութիւնը: Նա շաշալցած և
գունատված նացեց եղբօր երեխն: Զքաւորու-
թիւնը ահուելի կերպարանքով ներկայացաւ
նրան: Ի՞նչ նրա եղբացն այնքան տարի աշ-
խատելուց յետոյ, պիտի գնայ և մի ամենայե-
տին գործակատարի, մի սպասաւորի ոռնիկով
ծառայի... . . .

—Այդ... ոչ... անկարելի է... այդ չափազանցութիւն է, — գոչեց նա, յուզված ոտքի կանգնելով: — Դեռ մի քանի ամիս սրանից առաջ մեր հօրեղբայրը քեզ հրաւիրում էր իւր գործերը կատարել: Նա տասն անգամ աւելի էր խոստանում տալ:

—Ենդ առաջարկութիւնը մի ծիծաղ էր իմ ուսման վրայ: Մեր հօրեղբայրը դետութեանը նայում է իւր տեսակէտից: Կա ժաղրում էր, որ աւելի օգտավէտը թողած, ես ընտրել եմ մի մասնագիտութիւն, որ երբէք չի կարող ինձ հայստացնել: Նա չի կարողանում հաշուել այն մտքի հետ, թէ մի ժամանակակից երիտասարդ նիւթականը կարող է զոհել գաղափարականին: Բայց բաւական է. քեզ այժմ յայտնի է մեր իսկական դրութիւնը, Մարօ: Գնա ուրեմն պատրաստիր այս փարթամ տնից փաղը տեղափոխվելու մի անշուրք բնակարան, որտեղ ըլ գիտեմ, կը կարողանանք մի ծառայ պահել, թէ չէ... .

Եց ասելով, նա անմիջապէս բաց արաւ պատի տակ դրած ընկուզի պահարանը և սկսեց դուրս հանել իւր գրքերը: Մարիամը նստեց սեղանի մօտ, գլուխը ձեռների վրայ դրեց և սկսեց հանդարտ լաց լինել:

— Սիրելի, թանգագին քոյր, — գոչեց եղբայրը, այ ևս ըլ կարողանալով զսպել իրան, — մի լազ լինիլ, հաւատացիր, որ մենք այսուհետեւ աւելի բաղդաւոր կը լինենք... Հոգեկան խաղաղութիւնը բարձր համարիր այս տան շքեղութիւնից: Սիրտ առ, Մարօ, երեխայ չես, քանի եղբայր հետդ է, գու երբէք անբաղդ չես լինիլ...

Եւ նա ներքին ալեկոնութիւնից գողդողացող ձեռներով քրոջ թանձրահեր գլուխը ջերմ սեղմեց իւր կրծքին: Մարիամը լսեց նրա սիրող սրտի ուժգին բարախումը, նայեց նրա գունատ երեսին, և մի տարօրինակ ցնցումն զգաց:

Յանկարծ նա զսպեց արցունքը, գլխով մի վճռական շարժումն արաւ, ոտքի կանգնեց և բռնեց եղբօր բազուկը:

— Արա, ինչ ուզում ես, — խօսեց նա անցող գողդ ձայնով, — ես պատրաստ եմ հետեւ գեղ: Այսօրուաց խայտառակութիւնից յետոյ, ես այս տանը մնալ չեմ կարող: Ինձ նախատեցին, ինձ հայշոյեցին, ինչպէս մի ստոր աղախմնի: Այդ գոռող տիկնոջ կծու խօսքերի մէջ ես լսեցի մեր անպին ծնողների անունը: Գնանք, հեռանանք այս շքեղ դժոխվից: Ուժ տարի շարունակ ես այստեղ իմ սրտի դառնութիւնները

Տաձկել եմ կեղծ և ուրախ ժպիտներով։
Ես ծիծաղել եմ, երբ պէտք է լաց լինէի, ուրա-
խացել եմ, երբ պէտք է տիրէի։ Այժմ իմ
արտասուրքս ուրախութեան արտասուրք համա-
րիր։ Այն, ես ուրախ եմ... Ես արդէն յափրշ-
տակվում եմ մեր նոր կեանքով, — շարունակեց
նա աւելի եռանդագին, — ես կապրեմ աղքատ,
ինչպէս հազարաւոր ինձանից լաւ օրիորդներ
ապրում են։ Թող փորձեմ ուժերս։ Անգործ,
աննպատակ կեանքը ինձ համար վաղուց է ան-
տանելի գարձել, լսում ես, վաղուց։ Ես ուզում
եմ աշխատել, ես կարօտում եմ աշխատանքի։
Թող տուր ինձ քո ընկերը, քո օգնականը լի-
նել... դու աշխատիր դրսում, ես կ'աշխատեմ
տանը... և դրսում, եթէ կարող եմ. Ինչոր գի-
տեմ, կանեմ, չիմացածս կը սովորեմ։ Տար ինձ,
Որուբէն, տար, ուր ուզում ես, միայն թէ ա-
զատիր ինձ այս կանանցից, որ գիշեր ու-
ցերեկ հալածել են ինձ՝ անմեղ քրոջդ։..

Արտասանելով այս խօսքերը, նա թաշկինա-
կով սրբեց իւր այտերի վրաց չորացած արտա-
սուրքի կաթիները և ժպտաց եղօր երեսին։

— Մարիամ, — գոչեց Որուբէնը, յափշտակած
նրա հաստատակամութեամբ, — դու ինձ ուրա-
խացնում ես։ Գիտէի, որ դու վեհանձն ես,

զիտէի, որ քո բարոյական ոյժը մեծ է։ Ճնոր-
հակալ եմ, հազար անդամ շնորհակալ եմ, դու
ինձ մի նոր եռանդ տուլիր այդ խօսքերովիդ։

— Մի բան միայն դժուար է ինձ համար, —
ասաց Մարիամը մելամաղձիկ ձայնով — Գաբօ-
յից և Լիզայից բաժանվելլու։ Ալս, որքան սիրում
են ինձ նրանք, և որքան ես սիրում եմ նրանց...
Անմեղ երեխաներ, երբէք ես ձեզ չեմ մոռա-
նալ, և յոյս ունիմ, որ դուք ևս չէք մոռա-
նալ ինձ։

Այդ երեկոյ մինչև կէս գիշեր Մարիամը զբաղ-
ված էր իւր շորերը կապկանելով,

— 128 —

առջ է և նու զեր մայսակաց ոչ որ ով խուզ
առ առ շաբանակը տուրու ուրաք ուր շաբան
ուրիսդառ առ որ ուր ուրան որ ուր ուր
ուրան ուր ուր ուր ուր ուր ուր ուր ուր ուր
ՎԻ

Մելիք-Բարսեղեանի խօսքերը սնտափ պար-
ճենկոտութիւն չէին:

Արդարե նա շատ վաղ էր կարդացել «կեան-
քի խրատական էջերը», ինչպէս ինքն ասաց:

Նա չքաւոր ծնողների որդի էր. ուստանող
ժամանակ հօրից ստանում էր մի աննշան թո-
շակ, այնքան անշան, որ աւելի լաւ ապրել չէր
կարող, քան ինչպէս ինքը համառօտ պատկե-
րացրեց Մարիամի և Թուբէնի առաջ:

Բայց նրա համբերող, տոկուն և աշխատասէր
բնաւորութիւննը յաղթեց նիւթական սուղ հան-
գամանքներին: Նա փայտուն կերպով աւարտեց
ուստան ընթացքը, բժշկութեան դիսպոօմը զր-
պանում վերադարձաւ հայրենիք Թուբէնից մի
տարի առաջ:

Թիվից հասնելով, նա փոխեց իւր տարապը,
գէն ձգեց տասը տեղից կարկատած, օձիքը
կեղտոտ սիւրտուկը, մի հարուստ ընկերից ձե-
ռապարտ վերցրեց և հագաւ նորաձեւ հագուստ:
Նա մի քանի անգամ այցելեց թատրոն, երե-

կոյթներ, պարահանդէսներ: Մի երեկոյ նա մի
նուազահանդիսում տեսաւ Մարիամին, որի հետ
գեռ վիմնազիստ ժամանակ ծանօթ էր Թու-
բէնի միջոցով: Նա մօտեցաւ, վերանորոգեց
նախկին ծանօթութիւնը:

Որքան փոխուել էր հինգ տարուայ ընթաց-
քում Մարիամը: Նիհար, մէջքից քիչ կո, այսձ,
թիսադէմ պատանուհին այժմ դարձել էր Թիվ-
իկի կանանց դասակարգի գեղեցիկ զարդերից
մինը: Քանի ևասկը գիմնազիստ էր, մի տե-
սակ վեհերութիւն էր տիրում նրան Մարիամին
տեսնելիս: Պատճառը ոչ այնքան օրիտրդի
անձնաւորութիւնն էր, որքան այն պայման-
ները, որոնց մէջ ապրում էր Մարիամը իւր
հօրեղօր տանը: Սաղափեանների յացնի ա-
նունը, շքեղ ապրուատը ճնշում էին չքաւոր
երխասարդին, և նա հարստութիւնից վախե-
նում էր, որպէս մի անսովոր երազից: Ահա
ինչու երկու տարուց աւելի Թուբէնին ացելե-
լով, նա չը համարձակեց, բայց վերջինի սե-
նեակից, մի ուրիշ անկիւն ճանաշել այլ տան
մէջ և, բացի Մարիամից, մի ուրիշի հետ ծա-
նօթանալ այլ ընտանիքում:

Եց էր այժմ, երբ նա ուսումն աւարտուծ
բժիշկ էր: Երբէք նա Մարիամի մէջ այն

զգացումը չէր զարթեցրել, երբ առաջին անգամ օրիորդը տեսաւ նրան Ոուսաստանից զայոց յետոյ: Այլ ևս դա այն տատամսոտ, վեհերոտ և ամեն մի խօսք ասելիս, կարծես, նոյն իսկ Ոուրբէնի սենեակի կահ-կարասից ամաչող պատանին չէր: Նրա առաջ կանգնած էր մի հասուն տղաճարդ, դէմքը հանդարտ, անկրտով, հայեցքը համարձակ, լայն բացված ճակատով: ուր հնգամեայ յամառ պարապումները դրօշմել էին մի որոշ հետօք:

Մարիամը շփոթվեց հէնց միայն այդ կերպարանքը տեսներով: Իսկ խօսուածքը, խրոխտ ձայնը, աչքերի սուր և թափանցող նշոցը, որ փայում էր ակնոցի ապակիների միջով, այս բոլորը ազդու էին այն օրիորդի համար, որ ճանաչում էր նախկին Մելիք-Բարսեղեանին: Վասիլը մի ամսաշափ մնաց Թիֆլիզում: Յանախ նա հանդիպում էր Մարիամին, և հանդիպում էր միմիայն հասարակական տեղերում, որովհետեւ օրիորդը, հակառակ իւր ցանկութեան, մի անգամ էլ չը հրաւիրեց նրան Սադագիտանների տուն, ուր ինքն իրան ևս հիւր էր համարում:

Զմեռուայ կիսին Մելիք-Բարսեղեանը գնաց իւր ձննդավացը և դարնանը մի քանի օրով

դարձեալ Թիֆլիզ եկաւ: Այդ ժամանակ Ոուրբէնն արդէն վերագարձել էր Ոուսաստանից: Բժիշկը խնդրեց նրան ծանօթացնել Սադագիտանների ընտանիքի հետ. ծանօթացաւ և սկսեց համարձակ ացելել այն տունը, որի շքեղութիւնից առաջ վախենում էր: Մայսի վերջին Ոուրբէնը և Մարիամը իրանց մօրաքրոջից հրաւէր ստացան ամառը միասին անցկացնել Թիվջանում: Մելիք-Բարսեղեանը, որ բժշկութիւն էր անում Երևանում, ամառուայ կիսին մի օր յանկարծ երևեցաւ լիշեալ ամարանոցում, որ և շատ ուրախացրեց թէ Մարիամին և թէ Ոուրբէնին:

Այդտեղ օրիորդը աւելի ազատ էր: Նա հեռու էր Սադագիտանների հսկող աչքերից, նա կարող էր իւր եղբօր ընկերոջ հետ ստէպ ստէպ տեսնուել: Եւ ամեն օր երեք հոգի գնում էին զբօսնելու շրջակայ Տաղկաւէտ անտառներում: Այս զբօսանքների ժամանակ Վասիլը և Ոուրբէնը յաճախ լուրջ վիճաբանութիւններ էին ունենում գիտութեան, արուեստների, բնութեան և երեմն իրանց ժողովրդի դրութեան, մի խօսքով այն խնդիրների մասին, որ սովորաբար հետաքրքրում են նորաւարտ երիտասարդներին: Այս վիճաբանութիւնների ժա-

մանակ Թուբէնը դրեթէ միշտ ոգևորվում էր, տաքանում, այն ինչ Մելիք-Բարսեղեանը Վարիամին հիացնում էր իւր սառն, անշեղ տրամաբանութեամբ։ Եւ թւում էր օրիորդին, որ երիտասարդ բժիշկը ամեն բան գիտէ, ամեն բան ուսումնասիրել է, ուստի այդ բանաւոր պաշտամբ մէջ նա, իրաւամբ թէ ոչ, չաղթանակը Վասիլի կողմն էր զգում։

Երբենն Վարիամը միջամտում էր նրանց միաբանութեանը և անգիտակցաբար պաշտպանում բժշկի հայեացքները։

Թուբէնը նկատեց այդ և զգաց, որ քոյրը անտարեր չէ դէպի Մելիք-Բարսեղեանը։ Սակայն նրա անփորձ աչքերը տակաւին չէին թափանցում օրիորդի սրտի խորքը, ուր հետզհետէ արմատ էր ձգում առաջին և վտանգաւոր սիրոյ ծաղկիկը։ Մի բան, որ Վասիլը արդէն զղում էր։ Ամեն անգամ, երբ երիտասարդ բժիշկը նայում էր Վարիամի այլայլով երեսին, նրա խոչոր աչքերը խորութեան մէջ կարդում էր իւր թովիչ ազգեցութիւնը կուսական անտարտ հոգու վրայ։ Եւ զօրաւոր ուրախութեան նման մի բան թնդեցնում էր նրա սիրտը։ Դա փոխազարձ սիրոց վրայ։ Եւ գորաւոր ուրախութեան նման մի բան թնդեցնում էր նրա սիրտը։ Դա փոխազարձ սիրոց կամ համակրութեան ձայնը չէր, դա չքաւորի համարտութեան զգա-

ցումն էր, չքաւորի, որ երկարամեաց նիւթական գաժան կեանքից յետոյ առաջին անգամ տեսնում էր հարստութեան քաղցր ժպիտը։

«Քառասուն հազար, — կրկնում էր երիտասարդը իւրովի, — այդ գումարով ինչեր չի կարող անել ինձ նման մի խեղճ մարդ»։

Եւ նա սկսեց խրախուսել իւր անոյշ յոսերին։ Նախ նա Վարիամին ցոյց տուեց կեղծ անտարբերութիւն, իբրև թէ չէր նկատում օրիորդի սէրը։ Գիտէր, որ այդպիսով աւելի պիտի վասի օրիորդի միրաբ, ինչպէս շատ անգամ սառն ջուրը աւելի սաստկացնում է կիզանուտ հեղուկի բորբռքված բոցը։ Խոկ երբ բաւական վասեց այդ հուրը, փոխեց իւր յարաբերութիւնը — սկսեց շատ հեռաւոր նշաններով ցոյց տալ փոխազարձ սէր։ Այն ժամանակ նա դիմեց խորհրդաւոր հառաջանքների, մելամաղձոտ ժպիտների, արտում հայեացքների օդնութեան։

Մի անգամ նրանք, մի ծառի տակ նստած, խօսում էին։ Թուբէնը բացակաց էր։ Հասարակ բաններից խօսակցութիւնը փոխվեց մի այնպիսի նիւթի վրաց, որ որքան հրապուրիչ էր Վարիամի համար, նոյնքան և երկիւղալի, որովհետեւ ըլ գիտէր, թէ ինչով կը վերջանաց, խօսում էին մի սիրացին վէպի բովանդակութեան

մասին, որ Մարիամը նոր էր կարդացել։ Օգտուելով բոպէի տրամադրութիւնից, Վասիլը խօսքը հետզիւտէ մասնաւորեց, և այսպիսով նա կարողացաւ արտասանել հետեւալ դարձուածը։

—Ես կեանքումս երբէք չեմ սիրահարվել... Բայց մի օր... պիտի ծնեմ այդ գառն բաժակը։

—Ինչու դառն, - հարցրեց օրիորդը, և նրա ձայնի մէջ բժիշկը զգաց սրտի ուժգին զարկը։

—Որովհետեւ ով դիտէ ճշմարիտ սիրել, նա տանջում էլ է, —և մի քիչ խորհելուց յետոյ, տելացրեց։ —Ես այդ նախալուշակում եմ...։

Նա ըլ շարունակեց։ Մարիամը երեսը շուռ տուեց, Օրիորդի շրթունքը դողում էին, կուրծքը բարախում էր։ Թաւուտ ծառի հովատուն ստուերի ներքոյ նկատելի էր նրա այտերի յանկարծակի գունատութիւնը։ Նա շիմացաւինչպէս, բայց երբ կամեցաւ վեր կենալ այն մամուպատ մեծ քարի վրացից, ուր նստած էին, իւր ձեռը զգաց Վասիլի տաք ձեռների մէջ, նա նայեց երիտասարդին, որ, կարծես, նոյնչափ յուզգած էր, ձեռը մեղմիկ գուրս սահեց և առանց մի բառ արտասանելու շուտով անհետացաւ կանանց թփերի ետևում։

«Նա փախաւ, նա յետ կը գայ...», ասաց Վա-

սիլը, երկար ժամանակ նստած մնալով մի և նոյն տեղում։

Այդ օրից յետոյ Մարիամի դէմքի վրայ նըշմարելի էր երջանկութեան մի մելամաղձու ժըպիտ, որ ասանձին մի հրապոր էր տապիս նրա կերպարանքին։ Յաճախ նա սիրում էր ասանձնանալ և անձնատուր լինել իւր մենաւոր մտածումներին։ Նա գիտէր, որ դժուար է թափցնել Թուբէնից իւր և բժշկի մէջ տեղի ունեցած այն նշանաւոր եղելութիւնը։ Եւ քանի քանի անգամ նա կամեցաւ յայտնել, բայց համեստութեան և ամօթի զգացումը կաշկանդում էր նրա լեզուն։

Նոյն օրից յետոյ Մելիք-Քարսեղեանը ամեն մի յարմար բոպէով օգտաւելով, աշխատում էր իւր սւրբ աւելի ու աւելի պարզել օրիորդին, ոչ միայն լուիկ նշաններով, այլ երբեմն և խօսքով։ Խոկ երբ առանձնանում էր, յաճախ կըրկնում էր հետեւալ մենախօսութիւնը։

«Օօօ չքաւորութիւն, չքաւորութիւն, շատ դառն էին քո փորձերը, ես յիմար կը լինէի, եթէ չը լիրատվէի։ Փու իմ խելացի վարպետն ես եղել, բայց միշտ ատել եմ քեզ, այս միշտ։ Վերջապէս, մօտենում է այն օրը, երբ քեզանից պիտի վրէժս առնեմ»։

Հասկանալի է ուրեմն, թէ ինչու բժիշկը այնքան հետաքրքրուեց, լսելով Ուռելէնի անորոշ խօսքերը իւր և քրոջ գրութեան մասին։ Երկար ժամանակ նա չէր կարողանում հանդարտվել, վերադառնալով այն հիւրանոցն, ուր իջևանել էր։

«Զառանցում էր, թէ կատակ էր անում, մըտածում էր նա, ձեռները զրպանում դրած, անցուդարձանելով հիւրանոցի փոքրիկ սենեակում։ Բնակարանը փոխում է. եթէ ճշմարիտ է, յուսով եմ, որ այդ բնակարանը Սաղափեանների տան շքեղութեանը պատուաբեր կը լինի։ Նա ցիշեց չքաւորութեան ատելի, զազրելի անունը... Անփորձ երեխաց, կարծում է, որ կարող է ինձ նման դիմանալ...» Երբէք, երբէք, և ոչ ես ոյժունի այսուհետեւ դիմանալ չքաւորութեանը...»

Միւս օրը, առաւտեան վաղ գարմնելով, նա սկսեց խորհել իւր անելիքի մասին։ Նա եկել է Թիֆլիզում մշտապէս հաստատվելու, ուրեմն պէտք է շտապել գործերը վագրօք կարգադրել։ Նախ և առաջ հարկաւոր է բնակարան վարձել, խօս հիւրանոցում չի կարող երկար բնակվել։ Պէտք է բնակարանը օրինաւոր կահաւորել, որ հիւանդը կամ հիւանդի համար հրաւիրողը տեսնելիս՝ մի քիչ պատկառի։ Յե-

տոյ պէտք է տեղական բոլոր լրագրներում յացտարարութիւն տպել, թէ «բժիշկ», ոչ ոչ, բժշկապետ Մելիք Բարսեղեանը հիւանդներին ընդունում է այս ինչ տեղ, այս ինչ ժամերին...» Ուրեմն բնակարանը պիտի լինի քայլարի ամենայացտնի փողոցներից մինում, որ լրացիների էցերում ևս նշանակութիւն ունենայ, Այնուհետեւ պէտք է Տանօթներ ձեռք բերել, հանդէսներ ացցելել լաւ լաւ ընտանիքներին մօտենալ և այն և այն...»

Այս բոլորի համար փող է հարկաւոր։

Նա շօշափեց իւր փողամանը։ Այնտեղ դարսած էին մի քանի հարիւրանոցներ, որ ինստիտուտ էր իւր ուժամսեաց սուղ «պրակտիկացից», երեանում։ Այս դումարը բաւական է առաջին ծախսների համար։ Խակ լետոյ... պէտք է աշխատել ու աշխատել։

Նա մտաբերեց Ուռելէնի նախորնթայ երեկոյ ասածը տեղական բժիշկների մրցման մասին, և այս անգամ ընկերոջ նախազդուշութիւնը մի քիչ մտածութիւն պատճառեց նրան։ Բայց ոչինչ... ըլ պիտի մազու չափ յուսահատ վել, զիլաւորն այս է՝ ըլ յուսահատվել, մանաւանդ Մարիամի մօտ։ Սառնասրաւութիւնը մարդու գորեք աջակիցներից մէկն է, վհասութիւնը թույսափրաների յատկանիշն է։

Այսպէս մտածելով, բժիշկ Մելիք Բարսեղեանը, տասն ու մէկ ժամը լրացած դուրս եկաւ հիւրանոցից, ընտրեց փողոցում մի նորագոյն կառք փարձեց և գնաց ացելելու իւր հին ու նոր ծանօթներին և ընկերներին; որոնց ցուցակը փափօրօք կազմել էր. Երեք ժամ անցած նա իերադարձաւ և սկսեց ամփոփել իւր զանազան հակասական տալաւ սրութիւնները. Մէկին տանը չէր տեսել, ացեստոմ էր թողել, միւսին հանդիպել էր փողոցում (հակառակ իւր ցանկութեան), մի քանիսը շատ մեծ սիրով էին ընդունել և ացն. Նա ամենին ցայտնեց, թէ եկել է Թիջիկում հաստափելու, թէ երեանում զործերը չափեց գուրս յաջող էին. Փորձի համար նա մէկին ասաց, թէ Պետքերուրդից հրաւէր է ստայել համալսարանում մանկաբարձութեան դասեր կարգալու. Այդ մէկը հաւատաց, և բժիշկը նոյնը կրկնեց ամենի մօտ.

Նա իւր ացերի միջոցին կարողացաւ և՝ մի բնակարան փարձել. . .

Նոր միայն բժիշկ Մելիք Բարսեղեանը ճաշելուց յետոյ պատկել էր մի քիչ հանգստանալու, երբ եկաւ Ռուբէնը:

—Վերջապէս, —զոյեց բժիշկը և, ոտքի կանոնելով, ընկերաբար թօթվեց նրա ձեռք. —Հստիր:

—Նստելու կամք չունեմ, —պատասխանեց Ռուբէնը մի այնպիսի գուարթ ձայնով, որ միանգամայն չէր համապատասխանում նախընթաց օրուայ նրա հոգեկան տրամադրութեանը. —Եկել եմ խոստում կատարելու համար, գնանք, ընորհաւորիր մեր բնակարանը:

—Ի՞նչ, դու ուրեմն երէկ կատակ չէմիր անում. . .

—Եմ ասելու ձեկից պէտք է հասկանալիք արդէն, որ կատակ չեմ անում:

—Բացց, Ռուբէն... արտասանեց բժիշկը շուարված. . . այդ տեսակ բաներին հեշտ չի կարելի հաւատալ... Դու հարուստ էլիր և ազքատացար:

—Գնանք, սիրելիս, —ես քեզ այնտեղ կը պատմեմ:

Բժիշկը հագաւ իւր նոր վերնազգեստը և անմիջապէս հետևեց ընկերոջը:

Նա ձեռափայտի ծայրը բարձրացրեց կառք կանչելու:

—Եւելորդ է, արքելից Ռուբէնը! —շատ լու հեռու չէ այստեղից:

Նա տարաւ ընկերոջը քաղաքի արևմտեան բարձրադիր և զառիվայր փողոցները, սուրբ Դաւթի հրապարակի կողմ:

— Եօթ տարի ապրել եմ այս հոտած փողոցներում, — տասաց բժիշկը, երկարատև լրաւթիւնից յետոց:

— Հիմայ հերթը իմն է: Ահա մեր բնակարանը, Նա մաշված և երկար դորջածութիւնից կեղտի ծալքերով շաղախված դռներով ընկերոջը առաջնորդեց բաւական մի մեջ բակ: Երեսում էր, այդ տան բնակիչները, որոնց թւում կացին և՛ շոր լուանող կանաչք, բաւական անփոյթ էին մաքրութեան վերաբերմամբ: Գաւթի իշխանութիւնը յանձնել էին հաւերին և սագերին: Տեսնելով երիտասարդներին, ծոց թոշունները մի սուր աղմուկ բարձրացրին և ցրվեցին այս ու այն կողմ: Երկու քաջասիրտ սագեր, թևերը տարածած, երկար պարանոցները ցցած, առաջ վագեցին հիւրերին հանդիպելու: Այն զետնափոր խողովակը, որ նշանակված էր կեղտոտ ջրերի համար, վաղուց չեր մաքրված: Փոսի վրայ ձգված երկաթի վանդակապատի վրայ կանգ էր առել շոր լուանողների ածած սապնաջուրը: Այդ պղտոր և գարշահոտ ճահճի մէջ երկու բադ լող տալով, կտուցներով սիրացին ցոցեր էին անում միմեանց: Մի պառաւ շուն դէմ ու դէմում նստած, մէջքը տաքացնում էր արևի շողբերի տակ:

— Զգոյց կաց, — կատակեց Թուբէնը, ցոց տալով գաւթի մի ծացից մինչև միւսը քարշարած թաց շորերը, որոնց տակով պիտի անցնէին նրանք:

Բժիշկ Սելիք-Բարսեղեանը ըլ գիտէր գարմանալ, ծիծաղել, թէ՞ վշտանալ իւր տեսածի վրայ: Նա լուռ հետեւում էր Թուբէնին, քայլերը շատ զգոյց փոխելով, որպէս զի չ'ապականի իւր նոր և մաքուր կօշիկները կեղտուաքարայատակի վրայ:

Նրանք ոտք զրեցին մի նեղ պատշգամբի վրայ, որ տարածած էր միցարկանի տան անդրող երկայնութեամբ:

— Ահա և մեր նոր Պաղեստինը, — ասաց Թուբէնը, ընկերոջը առաջնորդելով բնակարանը, Այս իմ սենեակս է, — միւսն էլ Մարիամինն է: Երկու սենեակ և այս փառաւոր կահ-կարասին ամսական տասն րուբլով, կարծեմ, թանգ չի, հը՞ս: Մարիամ, — զոշեց նա դէպի միւս սենեակի կողմը, դուրս եկ, տես ով է եկել մեզ շնորհաւորելու:

Մինչ Մարիամի երեալը, Սելիք-Բարսեղեանը դիտում էր իւր տեսածը, Առաստաղը քաշ, պատերի պաստառը տեղ-տեղ պատուաված, տեղ-տեղ կեղտից սևացած, յատակի ներկը

մաշված, դուները փոքր և միայն մի պատուհան — ահա Թուբէնը սենեակի տեսքը: Մի քանի հատ կիսամաշ վիեննայեան աթոռներ, մի հասարակ սեղան, որի վրայ անկարգանկանոն սփռուած էին Թուբէնի գրքերը, և մի անկիւնում մի փայտի անկողնակալ — ահա այդ սենեակի կահ-կարասին:

— Ների՞ — ասաց Թուբէնը, — դեռ կարգի չենք բերել: Առաւօտից մինչև հիմայ սրբում ենք, լուանում, հաւաքում — էլի չը կարողացանք վերջացնել:

Մինչ բժշկի մի բառ արտասանելը, միւս սենեակից դուրս եկաւ Մարիամը: Օրիորդը հագած էր իւր հասարակ տնացին հին հագուստներից մինը, թևերը մի փոքր յետ ծալած, կրծքին կապած մի կապտագոյն դոդնոց և զլիխն մի սպիտակ թաշկինակ:

Գուցէ Մելիք-Բարսեղեանը իւր կեանքում այնքան ապշած չէր, որքան այժմ, երբ տեսաւ երէկուայ փարթամութեան մէջ ապրող քնքոց օրիորդին այսօր մի հասարակ աղախնի վիճակում: Նա այնքան շուարվեց, որ մոռացաւ անգամ բարեել օրիորդին, մնաց անշարժ կանգնած մի և նոյն տեղում:

Ճփոթվեց նոյնպէս և Մարիամը: Որքան և

նա աշխատել էր անվրդով մտնել իւր նոր կեանքի ասպարէզը, որքան նա նախապատրաստել էր իրան անխռով սրտով ընդունել բժշկին, չը կարողացաւ, սակայն, սառնարիւն տանել այդ ծանր բովէն: Նա կարմրեց, գլուխը անորոշ շարժեց, իբրև բարեելով իւր հիւրին, և նոյնպէս մնաց տեղն ու տեղը կանգնած:

— Եթէ երազումս անգամ տեսնէի, կը սարսափէի, — գոչեց Մելիք-Բարսեղեանը, սթափվելով, և մօտեցաւ, որ Մարիամին ձեռ տայ, — օրիորդ, հիվ է պատճառը ձեր այդ դրութեան:

— Մենք, — պատասխանեց Մարիամը, որքան կարող էր սառնասիրտ: — Միթէ Թուբէնը չի պատմել ձեզ արգէն:

— Ես սպասում եմ այդ գաղտնիքի բացադրութեանը, — դարձաւ Վասիլը Թուբէնին, ձեռները պարզելով առաջ:

— Այժմ հաւատում ես, ուրեմն, որ ասածս կատակ չէր, — խօսեց Թուբէնը: — Բարեհաճիր նստել:

Բժիշկը նստեց և ուշադրութեամբ լսեց ընկերոջ համաւու պատմութիւնը, առանց մի բառ արտասանելու: Երբ Թուբէնը աւարտեց իւր խօսքը, աջ ձեռը դրեց նրա ուսին և, ուրախ ու գուարթ ժպտալով, ասաց:

— Հաւանհւմ ես արածու:

Բժիշկը մի քանի վայրկեան մտածեց, շիեց
իւր ճակատը և, վիրջապէս, դրական ոճով պա-
տասխանեց.

— Ոչ: Վատ ես արել, շատ վատ ես արել:

Թուբէնը, ինչպէս երեւում էր, չէր սպասում
այդ տեսակ պատասխանի: Նա զարմացած նա-
ցեց ընկերոջ երեսին:

— Ինչո՞ւ:

— Դու, — առաջ տարաւ իւր խօսքը Մելիք-
Բարսեղեանը, վինասել ես քեզ քո անհամբե-
րութեամբ: Եմ կարծիքով դու պէտք է թող-
նես այդ ցիմարութիւնդ, — ներեցէք, օրիորդ, —
պէտք է թողնես և կրկին վերադառնաս հօ-
րեղքօրդ տունը, նա սնանկ չի ել սնան-
կանակ գուցէ: Այսօր ես պատահաբար նրա մա-
սին խօսք ունեցայ մի յայտնի մարդու հետ:
Այդ մարդը այստեղի բոլոր հարուստների դրու-
թեանը լաւ ծանօթ է: Նա ինձ ասաց, որ
նիկողացու Սադափեանի գործերը այս տարի
անաջող են, ճշմարիտ է, բացց այդ անաջո-
ղութիւնը ժամանակաւոր է: Նա փողի պակա-
սութիւն ունի, բացց գործերը լաւ են, Դա
առեւտրական մարդու կրիզիս է, տաեն մէկին
պատահում է: Ինձ հաւատացրեց այն մարդը,

որ հօրեղբայրդ այնքան, խելօք է, որ շուտով
դուրս կը գայ իւր նեղ դրութիւնից:
— Յետոց, — ընդհատեց Թուբէնը, որ անհամ-
բեր շտապում էր լսել ընկերոջ վերջաբանը,
— Դու, ուգում եմ ասել, — շարունակեց Աե-
լիք-Բարսեղեանը, — շատ ես շտապել: Եթէ
մինչեւ անգամ հօրեղբայրդ սնանկ էլ լինէր,
եթէ նա չը կարողանար մի կոպէկ անգամ տալ
քեզ քո հօր ժառանդութիւնից, դարձեալ դու
չը պիտի հեռանացիր նրանից: Նա անուն ունի,
Թուբէն, Տանօթներ ունի, մեծ—մեծ բարե-
կամներ ունի, այ քեզ ինչ է հարկաւոր: · · ·
Դու նրա մի չոցով կարող ես լաւ կարիերա
ստեղծել քեզ համար: Այդ կարիերան դու
մէնակ, քո ոյժերով, երբէք չես կարող ունե-
նալ: Աչա իմ ընկերական խորհուրդը, գնահ, նե-
րողութիւն խնդրիր և կրկին մտիր նրա հո-
վանաւորութեան տակ:

Վրտասանելով այս բանախօսութիւնը, բը-
ժիշկ Մելիք-Բարսեղեանը իւր ամուր գլխարկի
մի ծացրը դրեց ծնկներին, միւսի վրայ ցնեց
ձեռները, սպասելով պատասխանի:

— Քո խորհուրդը, Վասիլ, — խօսեց Թուբէնը
կէս հեղնաբար և կէս գառնապին ժամադրով
— արդէ, որ լսէր ինձանից աւելի մի խելօք

մարդ։ Դու շատ խոհեմ, գործնական միջոց ես
առաջարկում ինձ, բայց . . . սիրելի Վասիլ,
այ ևս ուշ է, ես չեմ կարող քո այդ
խելօք խորհրդով օգտուել Հօրեղօրս ընտա-
նիքի և մեր մէջ բարեկամական կապը արդէն
կտրուած է։ Եթէ այսօր դու ներկայ լինէիր
երբ մենք տեղափոխվում էինք այստեղ, կը
հաւատայիր, որ այդ կապը այլ ևս անհնարին
է նորոգել։

— Ուրեմն դու կռուեցիր նրանց հետ։

— Ես լսեցի մի ծանր յանդիմանովթիւն, ես
լսեցի, որ քոյրս և ես ութ տարի շարունակ
ձրիակերներ ենք եղել հօրեղօրս տանը։

— Հօրեղօրիցդ լսեցիր։

— Ոչ նրա կնոջից, — պատասխանեց Ռուբէ-
նը, շրմունքը կրծելով, — բայց այդ միւնոյնն
է, նա էլ լսեց և լոեց, այո, լոեց...։

— Բովէի արդեցութեան տակ մարդ շատ բան
է ասում, շատ բան է անում, Ռուբէն, բայց
յետոյ ափսոսում է։ Ես համոզված եմ, որ եթէ
դու վերադառնաս, ներողութիւն խնդրես,
տիկին Սաղափեանը իւր խօսքը յետ կ'առնի և
քեզ համբուրելով կընդունի...։

— Վասիլ, — գոչեց Ռուբէնը, ընդհատելով ըն-
կերոջ խօսքը, — այդ դու ես խօսում, ես քե-

զանից այդ չէի սպասում։ Ոչ, ես կարծում էի,
որ դու կը գովես իմ արած քայլը, կը խրա-
խուսես ինձ։ Իսկ դու, կարծես, յանդիմանում
ես ինձ, թէ ինչու չքաւորութիւնը գերադասել
եմ ձրիակերութիւնից և ուրիշների միջոցով
ձեռք բերած կարիերացից...։

— Չքաւորութիւն, — կրկնեց բժիշկ Մելիք-
Բարսեղեանը, թեթև ժպտարով և շրմունքը
սղմելով, — ինչու, եղբայր, ինչու չքաւոր ապրել,
եթէ որ և է հնար կայ աւելի լաւ ապրելու։
Եէէ, Ռուբէն, — աւելացրեց նա, հառաչելով և
վլուսը երերալով, մի ոգեսորդիլ, վատ բան է
չքաւորութիւնը, լինի նա մշտական թէ առ-
ժամանակեայ, օօ, ես գիտեմ ինչ ասել է չքա-
ւորութիւն։ Իսկ ով ճանաչում է մարդուս
այդ կոպիտ թշնամուն, նա հոգով պիտի ատի,
ինչպէս ես այժմ ատում եմ և սարսափում, երբ
մտաբերում եմ տասներկու տարի կրած նեղու-
թիւններս։ Ոչ, ոչ, հեռու փալսիր նրանից։ Եթէ
ես երբեմն պարծենում եմ իմ անցեալով, այդ չի
նշանակում, թէ այժմ կը կամենայի կրկին ընկ-
նել այդ չարասիրտ պառաւի ճանկերը։ Հաւա-
տացիր, ոչ մի բան այնքան վտանգաւոր չի
անհատի բարոյականութեան համար, որ բան
չքաւորութիւն ասաց բանը...։

Մի թող ճիչ ընդհատեց բժշկի խօսքը: Նա և Թուբէնը բնազրումով միաժամանակ նայեցին դէպի այն կողմ, ուր մինչև այդ փայրկեան անխօս նստած էր Մարիամը, և տեսան հետևեալը: Օրիորդը կանգնած էր պատի տուկ, մի ձեւր յենած աթոռի մէջքին, միւս ձեւը կրծքին սեղմած և ճիգն էր անում, կարծես, ուշը վիչն պահելու: Նրա երեսի գունատութիւնը, հեղուկ գլխի երերվիլը և կրծքի ուժդին բարախելը վախեցրին Թուբէնին: Ջուարված երիտասարդը շտապով մօտեցաւ քրոջը, դոչելով.

— Մարիամ, ինչ պատահեց:

— Ընդհատիր այլ խօսակցութիւնը, ընդհատիր, խնդրում եմ,—ասաց Մարիամը շնչարկել ձայնով և այնպէս ցածր, որ միայն եղացրը լսեց...

Եւ թուլացած նստեց աթոռի վրայ:

— Ներեցէք, — ձայն տուեց բժիշկը, ուստի կանգնելով, — ձեր դէմքը ինձ... Զը լինի թէ հիւանդ էք, — աւելացրեց նա, իւր արհեստը իսկոյն գործադրելու պատրաստականութեամբ:

— Ես... ոչ, ոչ, հիւանդ չեմ...

Բայց ձեր երեսին կոյն չը կայ, դուք հիւանդ էք, — դոչեց բժիշկը և իւր արհեստին յատուկ սառնութեամբ բոնեց օրիորդի բազուկը:

Կարծես, նրա ձեւոի շփումից, օրիորդը մի առանձին կենդանութիւն ստացաւ: Նա ուղիեց իրան, ցնցողաբար դողացող ձեւով շփեց ճակա: տը և մի տարօրինակ հայեացք նետեց բժշկի երեսին: — Մի հայեացք, ուր Մելիք-Քարսեղեանի նման սուր դիտողութիւն ունեցողը չէր կարող ըլ նկատել մի խորին յանդիմանութիւն:

— Ես կարծում եմ, որ դուք այսօր չափից դուրս շատ ցողնել էք, — ասաց բժիշկը, այդ հայեացքից շփոթված, բաց թողնելով Մարիամի բազուկը, — առանց այլ և այլի ձեզ հարկաւոր է հանգստութիւն, անպայման հանգստութիւն:

— Ճշմարիտ է, Մարիամ, — խօսեց Թուբէնը, — մինչեւ այժմ բան ես արել և ժամանակ էլ չես ունեցել կարգին ճաշելու:

— Բարեհաճեցէք, ուրեմն, — յարեց Մելիք-Քարսեղեանը, աշխատելով անյողղող և խրախուսական ձայնով խօսել, — բարեհաճեցէք բժշկի պատուերը լսել և այսօր էլ ոչ մի կործի ձեռք չը տալ, Թուք այդ տեսակ տնացին ծանր աշխատանքին սովոր չէք, ահա ինչիցն է առաջացել ձեր թուլութիւնը:

— Այո, սովոր չեմ, — պատրաստանեց Մարիամը, փոքր առ փոքր վերադարձնելով իւր սառնու-

թիւնը,—բայց կը սովորեմ։ Առ այժմ ներեցէք ինձ... պարոն Մելիք-Բարսեղեան... ձեզ անհանգստութիւն պատճառեցի... Ես առողջ եմ, ես ոչինչ թուլութիւն չեմ զգում։

Եւ նա փորձեց ուրախ ժպտալ։ Բայց այս բոնազբօսիկ ժպիտը նմանեց մութ ամսիքի տակից մի վայրկեան վայրող արևի անցողիկ շողքերին, որից յետոյ կրկին մուայվեց օրիորդի պայծառ ճակատը։

Բժիշկը դարձեալ նրան համոզել սկսեց, որ պէտք է իւր անսովոր ոյժերի հետ խնամքով վարուի։

—Ընորհակալ եմ ձեր խորհրդի համար, շատ շնորհակալ եմ։

Օրիորդի ճայնի մէջ բժիշկը զգաց մի նուրբ հեգնութիւն և քանի մի վայրկեան նա դարձեալ շուարզեց։

—Գնա, հանգստացիր, Մարիան, —յորդորեց Թուբէնը, —բժիշկը ճշմարիտ է ասում, գու անսովոր ես ծանր աշխատանքի...»

Օրիորդը վերկացաւ տեղից և մողոր բայերով անցաւ իւր սենեակը, նոյն հեկնական ճայնով ասելով Մելիք-Բարսեղեանին.

—Ներեցէք...»

—Տեսար, —դարձաւ Մելիք-Բարսեղեանը Թու-

բէնին, —տեսար, ահա այդ է աղքատութեան առաջին պտութզը։ Ցտեսութիւն, ընկեր, յուսով եմ, որ վաղը քեզ խելօքացած կը տեսնեմ։ Աշխատիր, որ Մարիամը խորհուրդս կատարի։

Ոչինչ չ'ասաց Թուբէնը, լուս ճանապարհ գրեց ընկերոջը մինչև. գափիթ և վերադարձաւ։ Նա Մարիամին կրկին տեսաւ իւր սենեակում։

Կանգնած փոքրիկ լուսամտի առաջ, ձեռները կրծքին խաչածև դրած, օրիորդը նայում էր հեռացող Մելիք-Բարսեղեանի ետևից։

—Մարօ, —ասաց Թուբէնը, ձեռը գնելով նրա ուսին, —ինչու գու այնպէս այցացուեցիր, ասա, ինձ թւում է, որ պատճառը քո յոդնածութիւնն չէր։

Մարիամը գլուխը բարձրացրեց, և մի ծանր հառաջանք գուրս թուաւ նրա կրծքից։

—Չը զիտեմ, չը զիտեմ, —զոշեց նա, —Աստուած իմ, նա անկեղծ էր խօսում, թի՞ ուզում էր փորձել ինձ...»

Արտասանելով Թուբէնի համար այս անորոշ խօսքերը, նա արագ քայլերով անցաւ կրկին իւր սենեակը և գոները ծածկեց իւր ետևից։

Երբ զարմացած Թուբէնը մի քանի վայրկենից յետոյ մտաւ նրա մօտ, տեսաւ, որ քոյլը երեսը բարձին դրած ուժգին հեկեկում է...»

Նոյն օրբերը նատալիան չարաշար գբաղված էր իւր նոր հագուստներով։ Ժամանականժամանակ նա վագում էր մաղամ կուրաժօխ մօդացին խանութը և շտափեցնում էր շուտով աւարտել գործը, ըլ նացելով, որ երեկոյթները դեռ հեռու էին։ Նա հրճուանքով պատկերացնում էր վազորօք այն հանդէսը, որի կարգադրիչն է հրաւիրված լինելու։

—Ես, մամա, մարդ ինչքան ուրախ է լինում, երբ բարի գործեր է կատարում։ Գիտե՞ս, մենք իսկական բարեգործներ ենք, մենք ուրիշների պիշտ միայն մեղ համար չենք ապրում։ Տես, ուստաց ընկերութեան պատուանոր անդամուհի, վրայ ընկերութեան պատուանոր անդամուհի, հայունեաց ընկերութեան պատուանոր անդամուհի, բանդարկիվածների երեխաներին օգնող ընկերութեան անդամուհի. . . Էլ որ մէկն ասեմ։ Ամեն տեղ գրված ենք, ամեն տեղ փող ենք տալիս։ Քանի քանի ինեղ ու աղքատներ են ապրում մեր նուշէներով։ Այսպիշտ չեմ...

—Ես էլ հէնց այդ եմ ասում հօրդ էէ, —ցարեց տիկին Սօփիօն, —ասում եմ, այ մարդ, եթէ մեզպէսներն էլ չօգնեն, էլ խեղճերը ինչո՞վ պիտի ապրեն։

— ՎՊ

Տիկին Սօփիօն, վերջապէս, արժանացաւ անուանի կոմսուհու ացին, թէև սպասածից բաւական ուշ։ Բաղդատոր էր այդ օրը նրա համար։ Կոմսուհին մի քանի հաճոյական խօսքեր էր ամել նատախացի գրաւիչ տեսքից, Սաղափեանների տան շշելը և ճաշակով։ կահկարասիի, տիկնոց օրինակելից բարեսրառութեան և այ այդպիսի բաների մասին։

Եւ Սօփիօն նրա իւրաքանչիւր խօսքը, մտքում դրոշմելով, պարձանքով կրկնում էր բոլոր ծանօթների մօտ։ Բայց կար մի հանդամանք, որ տիկնոց այս ուրախութեան վրայ ստուեր էր ձգում։ —Հալաբեանը չէր ացելում նրանց, մկան այն օրից, երբ Մարիամն և Ռուբէնը տեղափոխվել էին։ Նա պատճառը հարցրեց ամուսնուց, Փոխանակ մի որոշ պատասխան տալու, Նիկոլայոսը հայհոյեց թէ չալաբեանին և թէ բոլոր նրա նմաններին։ Սօփիօն ըլդիտէր այս հայհոյանքի առ իթը, ինչպէս և ըլդիտէր, թէ ինչու իւր ամուսինը առ հասարակ գրգռուած է ամենի գեմ։

— Ես շատ և շատ ուրախ եմ, — փոխեց խօսքը՝ նատալիան, — որ, վերջապէս, նսկատակիս հասաց: Անցեալ տարի օրիորդ Ամբարօվան զիմնագիտաներին օգտին տուած կօնցերախ կարգադրիչն էր, սիրոս քիչ էր մնում նախանձից տրաքի: Ինչու նա լինի, ես չը լինեմ, ասում էի: Այս տարի ես եերմ... Զը գիտեմ ինչպէս շնորհակալութիւնս յաջոնեմ քեռի Մրափիոնին: Գիտես, նա է աշխատել, որ ինձ ինչդրեն կարգադրիչ լինելու:

— Է՛հ, — ընդհատեց մայրը արհամարհաբար, — եթէ ինձանից հարցնես — շատ էլ ուրախ չեմ: Հայերի բալի համար կարգադրիչ լինելը մի մեծ բան չէ, որ հապատանանք:

— Մենք էլ այնպէս կանենք, որ բալը մեր անուանը արժանի լինի:

— Իհարկէ, իհարկէ, — համաձայնեց մայրը եռանդով, — մեր բալը ամենալաւը պէտք է լինի, թող թշնամիները տեսնեն ու նախանձից խեղդուեն:

— Մամա, դու ացր բան թշնամիներ, թշնամիներ ես ասում, ով են մեր թշնամիները, չի կարելի իմանալ:

— Ով եթն, կրկնեց տիկին Սօփիօն, աչքերը պլազմելով, — չես իմանում: Մեր թշնամիները

նրանք են, որ մեզ նախանձում են, որ ինչ-որ անում ենք, իրանք էլ են ուզում անել, որ մեր չարածն էլ անում են: Ես ատելով ատում եմ այնպիսիներին, որ ամեն տեղ մէջ են ընկնում: Էլ ով ասես, բազազի, զինի ծախողի, պիտեր — միտերի կնիկ ու աղջիկ, զիփ ուզում են արխտօկրատկաների հետ ոտ ձգել:

— Լաւ, մամա, ես ինքս էլ խօս արիս. տօկրատկա չեմ: Ուրեմն, քո ասելով, ես դեր չը պիտի կատարեմ հասարակութեան մէջ:

— Ի՞նչ, դու էլ որ արխտօկրատկա չես, էլ ով է... Դու իմ աղջիկս ես, դու Սահարունի ների ցեղիցն ես, Սահարունիները քո ացր սուտ ու մուտ իշխաններից չեն, հասկանում ես: Այս մէկը մտքումդ լաւ պահիր, այն քո հացրդ է, որ պատիւս չի ճանաչում:

Խօսակցութիւնը տեղի ուներ ճաշից երկու ժամ առաջ Նատալիացի սենեակում: Օրիորդը հայելու առաջ զուգփում էր: Նա պատրաստվում էր մօր հետ անուանի կոմսուհու մօտը զնալու: Այս ացելութեան զլսաւոր նպատակն էր՝ հասկացնել կոմսուհուն, որ նա գէթ մի ժամով պատուէ «Նատալիացի բալը»: — Մի միտք, որ տուել էր նրան իշխան Սահարունին:

—Երեւակայում եմ,—շարունակեց խօսել Նատալիան, վերջին գնդասեղը ամրացնելով կրծքի մետաքսեաց ապարօշին,—երեւակայում եմ, ինչպէս օրիորդ Ամբարօվան պիտի նախանձի, եթէ կոմսուհին գայ իմ բալը: Անցեալ տարի, —աւելացրեց նա Տաղրաբար, —նրա հանդիսականների մեջ մասը հօր պրիկացիկներն էին, հա հա հա:

Եւ նա, երեսը շուռ տալով, սկսեց հայելու մէջ զննել իւր բարակ մէջը և բարձր տիւրնիւրը, որ ժամանակի մօդացի վերջին պահանջն էր:

—Ի՞նչ էլ որ անես, աղջիկս, —ասաց մայրը, ուղղելով իւր դստեր հագուստի փեշերը, —այն երեկոյ պէտք է աշխատես Հալաբեանին մօտպ պահել: Որքան մտածում եմ, հայերի մէջ նրանից օրինաւոր մարդ չէմ գտնում: Վախենում եմ, որ երեսը լսատածը այն երեկոյ այնտեղ լինի ու էլ նրան իւր կողմը քաշի:

Նատալիան համբայաւ մօր խօսքը ում մասին էր: Այժմ տիկին Սօփիօն Մարիամի անունը ուրիշ կերպ չէր ցիցում, եթէ ոչ <երեսը լսատածը>:

—Հա, լաւ միտս բերիր, —գոչեց Նատալիան, —դու նրա բրապետն ու կօլիեն ուղարկեցիր:

—Ոնց չէ, ոնց չէ, —արտասանեց Սօփիօն թունալից հեգնութեամբ, —հենց այս րոպէ, հա

հա հա, բրապետն ու կօլիեօն: Այն մի քանի ձեռք հագուստն էլ, որ տարել է, շատ շատ է նրա համար...

—Չէ, մամա, լաւ չես անում, ուղարկիր, թող չասեն, որ մենք իրանց զրկում ենք, առանց այն էլ չար լեզուները բամբասում են մեզ վրայ:

—Քո գործը չէ, —ընդհատեց մայրը Ճռական եղանակով, —դու ինձ մի բան ասա, ճշմարիտ է, որ այն բժիշկը, ինչպէս է անունը...

—Մելիք Բարսեղեան...

—Հա, ճշմարիտ է, որ սիրահարվել է այն լսատածի վրայ:

—Այդ չեմ իմանում, բայց թէ Մարօն նրա համար գժված է, ես հաստատ գիտեմ, ին, նրա ճաշակն էլ...

—Ինչու, մի ասիլ, նա իրան բանը շատ լաւ է իմանում, ուղում է կամ հարուստ մարդու կնիկ լինել, կամ բժշկի:

Ներս մտաւ աղախինը և, մօր ու դստեր խօսակցութիւնը ընդհատելով, յայտնեց, թէ կառքը սպասում է:

—Նեստօրն էլ հազնուած պատրմաստ է, —հարցրեց օրիորդը:

—Այս: Մայր և դուստր գուրս եկան Տանը ու հը-

պարտ քայլերով, առաջինը անընդհատ ուղելով
գլխի թաշկինակի տակից այտերի վրաց գորս
սփռուող ալեխասոն մազերը, երկրորդը կապերով
մինչև արմունկները հասնող ձեռնոցների կո-
ճակները. Փողոցի գուների առաջ սպասում էր
տնային փայտուն կառքը. Երկու սեաթոյոց վիթ-
խարի ձիերը անհամբեր կրծոտում էին իրանց
սանձերը, ոտները ուժգնակի խփերով սալայա-
տակին նեստօրը, Սաղափեանների իմերէլ ծա-
ռան, բռնեց իւր տիրուհիների թևեց, նստա-
ցրեց կառք և ինքն էլ կատուի արագութեամբ
թռաւ ու տեղաւորվեց փառայեղ միրուքով և
կուրծքը ու մէջքը բարձերով հաստացրած կա-
ռապանի կշտին:

—Կոմսուհի Նավալիխինայի տունը, —հրամա-
ցեց Նատալիան այնքան բարձր ձայնով, որ
լսելի լինի այդ միջոցին մայթի վրաց կանգնած
երկու պարոններին:

Կառքը սլացաւ:

Քառորդ ժամ անցած տուն վերադարձաւ
Նիկողայոսը սաստիկ վրդովուած: Նա շպրտեց
սպասաւորին մի թղթադրամ, հրամացեց կառա-
պանին վճարել և, վերարկուն ձգելով հանդեր-
ձակալի վրաց, անցաւ ուղղակի իւր սենեակը:

«Խղմտանք ըստ կայ այդ մարդկանց մէջ, --խօսեց

նա ինքն իրան, նստելով սեղանի մօտ և ձեռ-
ները ուժգին խփելով բազկաթ ուի թւերին, —
բորի սիրտը բարացել է: Ասում են չունենք,
չունենք, Անտ, ես ճանաչում եմ ձեզ, է է է,
շատ լաւ եմ ճանաչում: Դուք ուրախանում էք,
երբ մէկը, որ ձեզանից բարձր է, ձեզանից ցած է,
ընկնում, դուք ուզում էք նրան ունատակ անել,
խեղիել, սպանել: Նախանձը ցեցի պէս ուտում
էր ձեր սիրտը, երբ տեսնում էիք, որ Սաղա-
փեանի թուրը երկու կողմով էլ կտրում է: Հի-
մայ անհամբեր սպասում էք, որ ընկնեմ... Ոչ,
ոչ, ոչ չեմ ընկնիլ, քանի աչքում լոյս կաց,
զլսումն խելք, էլի ամենին ցետ կը թողնեմ,
ինչպէս մինչև օրս յետ եմ թողել»...

Նա բարձրացաւ տեղից և սկսեց ցուզած
անցուգարձ անել: Նա մտածում էր հւր դիմել
փող ստանալու համար. Մնում էր դար-
ձեալ հալաբեանը. Բաց նա տուել էր արդէն
տասնուհինդ հազար, կը տաց էլի: Դեռ երէկ
Նիկողայոսը նրան ակնարկել էր իւր գործերի
դրութեան մսաին, հասկացնելով, որ փող է
հարկաւոր մի քանի մուրհակներ ազատելու
բանկերից:

«Նա խօսքը կտուր ցցեց: Նա էլ չի հաւա-
տում ինձ. Նա էլ է հետու է փախչում ինձա-

Նից այն օրից, երբ եղբօրս որդիները գուշու են եկել իմ տնից: Սօփիօն ասում է, նա աչք ունէ Մարիամի վրայ: Թող պուլսը քարին տայ, ինչ ուզումէ—անի, ում վրայ ուզում է—պատիվի, ծիայն ինձ օգնի, իբնձ: Այս, անիծված փող, որտեղ ես մի ցիսուն հաղար...: Հէնց այսօր դործերս կը դրստէի ու ամենի երեսին կը թքէի»...

Նա վճռեց նամակով խնդրել հալաբեանին: Եցն, ինչ որ բերանացի գժուարանում էր ասել, պիշով հեշտ էր դրել: Առաջին տողերից յետոյ նա կանգ առաւ, ճակատը մուայվեց: Նա որոնում էր այնպիսի դարձուածներ, որ կարողանացին շարժել Հալաբեանի գութը: Եւ գտաւ, Մարդս մարդով է ապրում, նեղութիւնը ամենի համար է, կարուսողին օգնելը Աստծու պատուէրն է, Աշխարհին յացնի է, որ Նիկորայոս Սադափեանը թղթամոլ չի, շառատան չի: Նա աղնիս վաճառական է, ընտանիքի տէր է: Նա յաւիտեան չի մուանալ այն մարդուն, որ այս նեղ օրին ձեռք կը մեկնի նրան:

Նա աւարտեց նամակը, մատը սեղմեց պատի էլքտրական զանգակի կոճակին:

— Տար այս նամակը, — հրամայեց նա սպասուորին, — տուր հալա քեանին: Եթէ տանը ը

լինի, գտիր, որտեղ որ է: Կաց, տիրուհիս տանն է: Ոչ—Ոչ, օրիորդի հետ կառքով գնացին: Լաւ, գնան: «Իշխանի աղջիկ է, սեպհական կառքով, ծառացին առաջը նստացրած վիզիտներ» է անում դրա Փինեաներին: Այս, Սօփիօ, Սօփիօ, ափսոս... հիմայ եմ իմանում, թէ դու ով ես... դու քո աղջկայ հետ քանդեցիր ինձ. դու փշացրեր իմ հարստութիւնս»...

Եւ նա, ատամները կատաղի կրճտելով, բրուոնցքը այնպէս խվեց սեղանին, որ ծարին դրած հաշուեմատեանները թափվեցին յատակի վրայ:

Նոյն պահին Հալաբեանը իւր տանն էր մօսիօ Վախվախսեանի հետ: Եցդ օրը նրա ծըննդեան քառասուներեքամեայ տարիեդաճն էր: — Մի օր, որ նա տվորաբար տօնում էր իւր ընկերների հետ քաղաքի առաջնակարգ հիւրանոցներից մէկում:

Տանը նա խնճոցքներ սարքել չէր սիրում և յարմարութիւն էր չունէր: Առ հասարակ նա բարուք էր համարում վրսում եւապատիկ ծախսել, քան սեպհական խոհանոց պահել և ամեն առաւօտ խոհարարի հետ նիստ կազմել օրուայ ուտելիքի մասին, ինչպէս անում էին

նրա ծանօթ ամուրիներից շատերը:

Սակայն, վերջին անգամ Սադափեանների մօտ ճաշելուց յետոյ, յանկարծ նա կամեցաւ կերպարանափոխել իւր տնային կեանքը: Նա կանչեց մօսիօ Վախվախեանին, պատուիրեց մի հմուտ խոհարար և մի արագաշարժ սպասաւոր վարձել, վերանորոգել տանկահ. կարասին, մաքրել, զարդարել:

Ինչ ասել կուզի, մօսիօի համար աւելի հաճելի զբագմունք չէր կարող լինել: Եւ նա մենակեաց ամուրիի մուայլ կացարանում մի այնպիսի շարժում բարձրացրեց, որ Թաթոսը մնայ ապշաճ: Խեղճ ծառան մի անսաելի տրտմութեան մէջ ընկաւ, երբ իւր աղայի տանը տեսաւ, բայց իրանից, ուրիշ ծառաներ: —Ի՞նչ հարիսաւոր էր պօփարը, լակէյը, ևս չէր կարող ամեն բան անել, —տրտնջում էր նա անդադար:

Տամն օր շարունակ Հալաբեանը զբաղված էր տնային վերանորոգութիւններով: Հաճելի էր նրան տեսնել իւր տան մէջ այդ անսովոր կենդանութիւնը: Ցերեկը նա, մօսիօ Վախվախեանի օգնութեամբ, կարգադրութիւններ էր անում, հրամայում էր, բարկանում էր: Երեկոյեան փակիւմ էր առանձնասսենեակում,

կարգի էր բերում իւր հին ու նոր հաշիւները: Նա ունէր մի քանի անշարժ կարուածներ, սրան ու նրան մուրհակով տուած վողեր: Ո՞վ ինչ է պարտ, որ խանութպանը վարձը ժամանակին չէ տուել, որի հետ պէտք է նոր պայմանակրութիւն կապել և այն և այն, այս բոլոր գործերը զբաղեցնում էին նրան ամբողջ երեկոները:

Այ ևս նա ժողովարան չէր գնում: Ընկերները փողոցում տեսնելիս նրան յանդիմանում էին:

«Տկար եմ, գործ ունեմ», —ահա այն անորոշ խօսքերը, որոնցով նա արդարացնում էր իրան: —Բացց մեզանից խօս չես կարող փախչել, —ասաց մի օր Եմշարումեանը, իւր հսկայական ձեռը դնելով նրա ուսի վրաց:

—Ո՞ւր պիտի փախչի, —յարեց իշխան Սահարունին, —շուտով էլի ծննդեան օրն է, քէփ պիտի անենք: Հա, լաւ միտս եկաւ, բարեկամ, երազ ես տեսել ինչ է, ասում են տունդ սարքել ես, ուրեմն այս անգամ տարեդարդգ քեզ մօտ կը տօնենք:

—Տօնեցէք, եթէ ուզում էք, —պատասխանեց Հալաբեանը ակամայ:

—Ի՞նչպէս թէ ուզում էք, —գոչեց Ախշա-

րումեանք,—անհամբեր սպասում էնք: Այս անդամ մինչև հինգ շիշ շամպանեա չը բաց անես, ձեռ չենք վերցնիլ քեզանից:

Դեռ վազ առաւօտից Վախվախեանը սկսել էր իւր եռանգույն գործունէութիւնը: Ճաշի պատրաստութիւնը և հիւրերին գուարճացնելու իրաւունքը նրան էին յանձնուած: Նա անդադար վազում էր դուրս, պատուէրներ էր առաջիս խոհարարին և կրկին վերադառնալով, գրադեցնում էր Հալաբեանին, որի վերջին ժամանակուաց տակաւին նրա համար անբացատրելի էր:

Ամեն բան դրուստ է,—խօսում էր մօսիօն հայերէն, ուուսերէն, ֆրանսերէն և վրացերէն բառերից կազմած մի ինքնուրոցն բարբառով,—մեծ իշխանն էլ որ գայ, ամօթով չենք մնալ: ՄԵկ պօփար է, որ դրաֆ նավալիխինն էլ չունի: Մաեսնէզ է պատրաստում, մօեօ պօչտենիե:—Էց Փետրէ, —դարձաւ նա նոյն պահին ներս մտնող սպասաւորին,—ասսա Անդրէին, որ այն իմ բերած օրագուլը մի լաւ սիրուն կտրի միջից, հասկանում ես, այ այսպէս:

Պատուէրը աւելի պարզ կացուցանելու համար նա աջ ձեռը շեղակի քսեց ձախ ձեռի ափից մինչև բագուկը, շարունակելով:

—Թող վորատիքը հանի, սառը տեղ դնի, ես կը գամ ու կասեմ, թէ ինչ պիտի անի: Սպասաւորը մի հեգնական ժպիտ երեսին դուրս եկաւ:

—Ախ, չէնի ճիրիմէ, մի մտիկ արէք էէ, — դարձաւ մօսիօն Հալաբեանին, ցոց տալով զարդարուն հիւրասենեակը, —սալօն չի, բայ ինչ է, ափսոս, ափսոս ու ափսոս:

—Ինչո՞ւ ափսոս:

—Յօօ, մօն շեր ամի, արքայութիւնը առանց հրեշտակի կը լինի... Ի՞նչ սազ կը գայ էդ փափուկ խալիներին, հապա... աղոնակի ոսներ: Զի, սո՞ւտ եմ ասում:

Հալաբեանը ժպտաց: Վախվախեանի ասածը, թէւ կողմնակի, համապատասխանում էր նրա մտածմունքին: Նա արդէն զիտէր Մարիամի և Ուուբէնի դուրս գալը իրանց հօրեղբօր տնից: Այս իրողութիւնը նախ տիրեցրեց նրան, ինչպէս կարող է այսուհետեւ տեսնել օրիորդին: Բաց երբ իմացաւ, որ Ուուբէնը համարեա յետին աղբատութեան մէջ է, որ Մարիամը զրկված է օժիտից, մի նոր ցոյս ծագեց նրա մէջ: Աա, հպարտ օրիորդը այժմ կը մեղմանաց, չքաւորի համար հարստութեան հրապրը մեծ է: Նա կը խոնարհուի, անպատճառ կը խոնարհուի:

Ներս մտաւ Թափթուր և յանձնեց Սաղա-
փեանի նամակը:

— Խիստ վաղ է շնորհաւորում, այս—գոչեց
Թուխօ Վախվախեանը ծաղրաբար, կարծելով
թէ նամակը տարեդարձի առթիւ է զրված:

Հալաբեանը կարդաց նամակը աչքունքը
թթվացրեց, հանդարտ բարձրացաւ տեղից,
դուրս եկաւ և անձամբ Սաղափեանի ծառացին
տասց, թէ պատասխանը վաղը կը տայ:

Ներս մտաւ իշխան Սահարունին, ջրալի
շրմունքի վրայ խաղացնելով մշտական կէս սի-
րալիր և կէս հեգնական ժպիտը: Նրա ետելից
երեսցաւ Ախշարունեանի բարձր հասակը, աչ-
նուհետև փոքրահասակ, սուր քննթով ու ծնո-
տով, կոլորակ աչքերով մի շիկահեր մարդ, որի
տարիքը որոշել անկարելի էր:

«Եկաւ,—արտասանեց մօսիօ Վախվախեանը,
քննթի տակ մրմթալով:

— Աստուած, երկինք վկայ, ուժով բերեցին,—
տասց փոքրահասակ մարդը, իւր անկոչ դարուստը
արդարացնելով տանտիրոց առաջ:

«Բէղզադն ես, որ ընկերդ չը կաց», մտա-
ծեց մօսիօ Վախվախեանը:

Փոքրահասակ մարդը, որին Գիգօ էին ա-
նուանում, յայտնի էր հարուստների, մանա-

ւանդ ամուրիների, շրջանում այնքան, որքան
եւ մօսիօ Վախվախեանը: Մի ժամանակ
նա ծառայել էր մաքսատանը: Նիկողայսն
Սաղափեանին վերաբերող մի տարաբաղդ
դէպք պարզեց մաքսայն վարչութեան զեղ-
ծումների մի շարք, որոնց մասնակցել էր և՝
Գիգօն: Նրան վոնդեցին և այժմ նա պարա-
պում էր մանր մունք կապալներով, կատարում
էր առեւտրական միջնորդի գեր, անդամ էր մի
բանկացին վերաստուգող մասնաժողովի, սիրում
էր ընկերանալ գիրք ունեցող մարդկանց, նը-
րանց հետ թուղթ խաղալ: Մի խօսքով այն
մարդկանցից էր, որոնց մօսիօ Վախվախեանը
«ամեն տեղ քիթ խոռոշ» էր անուանում: Այս
պատճառով մօսիօն ատելով ատում էր նրան
և փոխարէնը միշտ ծաղրիսմ նրանից:

— Եհէ, այստեղ ես, — գոչեց Գիգօն: հեգնելով
Վախվախեանին, — առանց իշխ զլլի հարսա-
նիք չի լինի:

— Ոնց որ առանց մկան պարելու էլ հարսա-
նիք չի լինի, — խօսքի տակ ըլ մնաց Վախվա-
խեանը, և նոյն վայրկեանին սովորական հա-
զը բանեց նրա կոկորդից:

Հինգ ամուրիները ճաշի նառեցին նոր կա-
հաւորված, մաքուր, լուսաւոր սեղանապանի:

Խօսակցութիւնը պտտում էր Հալաբեանի բնակարանի վերանորոգութեան մասին: Իշխան Սահարունին գովեց նրա վարմունքը, որ սկսել է «տնային կեանք» վարել, մինչև անգամ համբուրեց ճակատից: Հալաբեանը չէր հաւատում նրա անկեղծութեանը, թէև չը գիտէր նրա բուն դիտաւորութիւնը: Նատախային իւր ընկերոջ «զգին կապելը» իշխանը դարձրել էր իւր համար մի լուրջ խնդիր: Սօփիօն հանդիստ չէր թողնում նրան, և նա կամենում էր մասամբ վճարել այն «փոքրիկ ձեռապարտքերի» փոխարէնը, որ ստէպ ստէպ առնում էր Նեկողացոս Սաղաբեանից:

Ճաշը ուրախ անցաւ: Սահարունին սրախօսում էր ամենի վերաբերմամբ, բայց Հալաբեանից: Մօսիօ Վախվախսեանը և Գիգօն մինեանց ծաղրում էին: Փոքրիկ մարդը խօսում էր այնքան արագ, որքան արագ արագ փակվում ու բացիւմ էին նրա աչքերի կոպերը:

— Տը տը տրր, տը տը տրր, — ծաղրում էր նրա շուտախօսութիւնը մօսիօ Վախվախսեանը,
— տօ դադար չմն տալու էդ կոտրած բարաբանիդ:

Վլշարումեանը կենացներ էր առաջարիւմ: Վիթխարի ամուրին հիացած էր Հալաբեանի

ճոխ, և շքեղ ճաշով, ուտում էր այնպիսի արդակութեամբ, որ, կարծես, զրազ էր եկել: Նրա ամուր և լայն կզակի մէջ պէս պէս համագամ խորտիկների, խորոված և խաշած ձկնի պատառները հալվում էին, թրջուելով Կախեթի ընտիր գինով: Տասն անգամ նա անուշ արտահանեանի կենացը, իւրաքանչիւր բաժակից յետոյ ձեռը քակելով կրծքին և փորին: Կարծես, ոգելից հեղուկի համար ճանապարհ էր հարթում, Կանանցից յետոյ, լաւ ուտել-խմելը նրա կեանքի առաջին գուարձութիւնն էր, որ խլում էր նրա եկամտի մի պատկառելի մասը: Նա հարուստ ընտանիքի որդի էր, վայելում էր ծերունի հօր լիուլի հաւատարմութիւնը: Ամեն տարի գնում էր արտասահման և վերադառնում էր նորոգված ճաշակով: Ստամոքսի կատարը ունեցողներին ծաղրում էր, ինչպէս և ծաղրում էր այն մարդկանց, որ իրանց կեանքում միայն «մի ազգի կանանց են ճանաչել»:

Երբ բոլոր բարեկամական կենացները վերջացան, Գիգօն առաջարկեց իւրաքանչիւրին խրմել «իւր ընտառածից» կենացը: Նա ինքը միանդացն դադարկեց բաժակը և խփեց սեղանին:

— Մարսել—Պոլիս, Վիեննա—Փարիզ, — գո-

չեց Ախշարումեանը, զորս բաժակ իրարու ետեւից դադարկելով:

Հալարեանը զգուանքով հրաժարվեց այդ «կենացից», Խշանը աչքով արաւ մօսիօ Վախվաւխեանին: Վերջինը նացեց տանտիրոջը, բերանը սրբեց, հազեց, դուրս վազեց և իսկոյն վերադառն ուրած, նրա ետեւից մտաւ սպասաւորը, մի ձեռում բռնած մի սկուսեղի մէջ հինդ փարդածե գաւաթներ, միւս ձեռում թաց անձեռոցիկի մէջ փաթաթած մի շիշ:

— Զան, ջան, մօսիօ Վախվախեան, — զոչեց Ախշարումեանը:

Մօսիօ Վախվախեանը հանդարս լցրեց դաւաթները շամանիացով, այնպիսի խորհրդաւոր դէմքով, որ, կարծես, կրօնական սրբադործութիւն էր արածը: Յանկարծ լավեց Գիլոյի կատուանման սուր ձայնը.

— Նեկտար է և ոչ գինիի...

Խշանը լոեցրեց նրան և, տեղից բարձրանուրով, զոչեց:

— Առաջարկում եմ այս բաժակը այս տան ապագայ տանտիկնոց կինացը, հուռա...

Կրան ձայնակցեցին Գիլօն և Վախվախեանը:

— Կարելի է հէնց այժմ իմանալ մեր յարդելի տանտիկնոց անունը, — ասաց Ախշարումեանը:

— Խօնիր, ժամանակին կիմանաս:

Բոլորը այդ կենացը խմեցին յարգանքով: Հարբեանը դժկամակութիւն ցոց տուեց իշխան Սահարունուն, նրա կատակը անուանելով անտեղի: Ախշարումեանը պահանջեց շամպանիացի երկրորդ շիշը, յետոյ երրորդը: Ճաշը աւարտվեց: Զուարձացած հիւրերը անցան հիւրասենեակ: Թուղթ խաղալ ոչ ոք չը կանեցաւ: Հալաբեանի հրամանով սպասաւորը բերեց մի շիշ «բենեղիկափին», և հիւրերը սկսեցին իրանց կոկորդը մաքրել աբբա հացերի հնարած անոց հեղուկով:

Մօսիօ Վախվախեանը քիչ էր խօսում, շատ էր հազում և փոքր ինչ տատանվում էր ոտքի վրայ: «Նեկտար է և ոչ գինին» ամենից շատ սորտել էր փոքրիկ Գիլօնի վրայ: Նրա առանց այն էլ թօթով լեզուն բառերը շփոթում էին: Նա իւր յարդանքն ու մէրն էր բայցատրում հալաբեանին և իշխան Սահարունուն:

Ախշարումեանի սե ու խոշոր աչքերը պլուղում էին, թշերը ուռել էին, կարմրել, թւռում էր, թէ իսկոյն պիտի կաշին տրաբվի և արիւն հոսաց նա գոռում էր, մօսիօ Վախվախեանի հետ կատակներ էր անում, Գիլօնին գնդակի ովլու շպրտում էր այս ու այն կողմ, անհամեստ

ակնարկութիւններ էր անում կանանց սեռի մասին, ըստ քաշվելով Թաթոսի ամօթխած և նոր սպասաւորի կտի հայեացքներից, նրա գաղանացին կրքերը զրգուիլ էին:

— Պրվի, կենդանի կենդանի կուտեմ, — ասում էր նա, ցոց տալով պատին քարշ արած մի իւղաներկ պատկեր, որ ներկայացնում էր ուսերը և կուրծքը բաց մի կին:

Հետաքրքիր մօսիօ Վախվալսեանը իշխան Սամարունիին մի կողմ հրաւիրեց և հարցրեց — ով է ապագայ տիկին Հալաբեանը։ Խշանը խորհրդաւոր կերպով ակնարկեց իւր քեռորդու անունը և խնդրեց ոչ ոքի ըստ յայտնել «գաղտնիքը»։ Դա նրա միջնորդութեան առաջին փորձն էր. շատ լաւ գիտեր, թէ ով ով, մօսիօ Վախվալսեանը գաղտնիք պահելու սովորութիւն չունի։ Մի բոպէ չ'անցած մօսիօն «գաղտնիքը» շշնչաց Ալշարումեանի, լեռոյ Թիգօց ականցին։

— Ուրեմն ինչու ըստ չնորհաւորենք, — գոչեց Ալշարումեանը։

— Ոչ, ոչ, հոգուդ մատաղ, մի ասելք, իշխանը հոգիս քննթիցս կը հանի, — զգուշացրեց Վախվալսեանը։

— Բայց ինչ պառւող է դաշել, — ծաղրեց Ալ-

շարումեանը Հալաբեանի կարծեցեալ հարսնացուին, — Վիեննա էլ չես տեսնիլ նրա նման գեղեցկուհի...

— Խը իւր իւր, — ծիծաղեց մօսիօ Վախվալսեանը, շաքարի պէս հալվելով։

Իշխանը Հալաբեանին մի անկիւն քաշած, պախարակում էր ամուրի մարդու կեանքը։ Նա ինքն ուրախ կը լինէր իւր յոգնած ոսկորներին հանգստութիւն տալ ընտանեկան յարկի տակ, բայց արդէն ուշ է և նիւթական դրութիւնն էլ չի ներում։ Ով կարողութիւն ունէ, յիմար է, որ փախչում է այդ խաղաղ կեանքից։ Հալաբեանը ձեած կորած է ընտանիքի գլուխ լինելու համար։ Նա պէտք է ամուսնանալ, իշխանին վաղուց է յայտնի նրա մտադրութիւնը։ Խօս կատակով չ'առաջարկեց այն կենացը, խօս իշխանը զիտէ, թէ Հալաբեանը ում վրայ աչք ունի։ Այո, Նատալիան հրաշալի աղջիկ է, նմանը ըստ կայ ամբողջ Թիգլիզում։

— Իշխան, — ընդհապէս, վերջապէս, նրա խօսքը Հալաբեանը, — եթէ յարդում ես քրոջի աղջկան, թող այդ խօսակցութիւնը, ամօթէ է։

— Ինչպէս, դու կարծում ես, որ արժանի՞ չես նրան, — արտասանեց իշխանը խորամանկու-

թեամբ,—վախենում ես, որ կը մերժեն: Օօ, քաս ես նրտեղ եմ: Ես կ'աշխատեմ, իսկի մի վախենալ, զլուխս կը տամ քո խաթրու ու բանդ կը դրստեմ:

Հալաբեանը երեսը մի կրոյ դարձրեց և հեռացաւ: Օրը մթնում էր: Ալշարումեանը մօտեցաւ, բոնեց իշխանի թեից և ուժով դուրս տարաւ: Փոքրամարմին Գիգօն, որ թափափ վրայ նստած, կիսաթմրած դրովթեան մէջ էր, քայլամոլոր հետեւեց նրանց:

Մօսիօ Վախվախեանը տեսնելով, որ տանտէրը օրոշում է և առհասարակ տրամադիր չէ խօսելու, ակամայ հրաժեշտ տուեց, ասելով.

—Գնամ, տեսնեմ ոնց եմ մթնացնում օրս, այ քէսիբի օրն էլ...

Հալաբեանը առանձնացաւ ննջարանում: Նրա զրուվը պատում էր, ոչ այնքան ըմպելիքներից, որքան հիւրերի աղմուկից, անկարգ-անկանոն խօսակցութիւնից: Այսպէս ուրեմն, մի անդամ ես նա կատարեց նրանց հաճոյքը: Այդ կը լինի վերջինը: Երբէք երբէք նա իւր տունը չի դարձնի անմիտ խնճոյքների, անվայել կատակների, կեղտոտ սրախօսութիւնների հանդիսարան:

Նա վաղն և եթ կը դտնի իւր ընտրածի բնա-

կարանը, իբրև ազնիւ մարդ արձակ համարձակ կ'առաջարկի իւր ձեռքքը: Նա հարուստ է, Մարլիամը աղքատ: Նա ամեն ինչ կը գոհի Մարլիամի համար, եղբօրը կ'ուղարկի արտասահման, հօր և մօր գերեզմանների վրայ փառաւոր արձաններ կը կանգնեցնի: Նա կը տայ նրան լիուլի ազատութիւն իւր տանը, թող ծախսի—ինչքան ուզում է, թող ապրի—ինչպէս ուզում է: Նա կը դարձնի Մարիամին կանանց դասի զարդ, ընդհանուր նախանձի առարկայ, միջոց կը տայ նրան ժամանակակից կրթուած տիկնոջ դեր կատարելու հասարակութեան մէջ, կարօտներին օգնելու, բարեգործական ընկերութիւններին մասնակցելու, ուսումնարան պահելու: Այս, մինչեւ անգամ մի առանձին ուսումնարան կը հիմնի Մարիամի անունով:

Հետևեալ առաւօտ նա զարթնեց ուրախ տրամադրութեամբ: Նայեց իւր շուրջը, ամեն ինչ պատրաստ էր, ծառաները մաքրել էին սենեակները, կահ-կարասին փայլում էր, թանդագին, փափուկ, խայտապղէտ գորգերը մի դիւրեկան ազեցութիւն էին անում մարդու վրայ: Սպասաւորը հրամանի էր սպասում, խոհարարը արդէն բազար էր գնացել, ամեն ինչ պատրաստ էր մի բաղդաւոր կեանքի համար:

Հալաբենանը մի առանձին եռանդ էր ստացել: Վճռուած է, այսօր նա կը գտնի Որութէնին, կը բարեկամանայ, կ'առաջարկի իւր օդնութիւնը: Յանկարծ նա յիշեց, որ խոստացել է պատասխանել Սադափեանի նամակին: Մարդը սնանկանում է, այսօր կամ էգուց նրա անունը պիտի խայտառակվի, ինչպէս գրում է: Չը սիւ տի՞ օդնել նրան:

Խնդրած գումարը մեջ էր, և Հալքբեանը
ընկաւ մտատանջութեան մէջ։ Նա սկսեց քննել
Սադափեանին առաջին անգամ իբրև մարդ և մի
տարօրինակ ուրախութիւն զգաց, գտնելով նրա
անցեալում շատ արատներ։ Սադափեանը չէր, որ
խեղճ Մարգարովի տան կազքը բազար հանե
տուեց և պարտքի տեղ ծախեց։ Նա չէր, որի
պատճառով մաքսատան երեք շինօվնիկներ
դատի տակ ընկան և պատժվեցին։ Հըմ, նա
չէր, որ պօլկօվնիկ Խարազօվի տասը հազարը աչ-
քերը բաց կուլ տուեց, և խեղճ ծերունին կա-
թուածահար լինելով, մեռաւ։ Վերջապէս, նա
չէ, որ իւր հարազատ եղբօր որդիներին զր-
կում է... կ'կ, որ մէկն ասես։ Հիմայ այդ մար-
դը կանգնել է ու աղաջում է, որ ուրիշները
իրան օգնեն։

օղնելը մէկը է,—առարտեց իւր մտածունք-ները հաղաբեանը և հանգիստ խղճով պատռեց ու դէն ձգեց Աստավիանի աղերապի նամակը:

Տաղապահութեան գործ առաջակա առաջա պատճեան պատճեան պատճեան
ըստուր խուրա պատճեան պատճեան պատճեան պատճեան պատճեան
ՎIII պատճեան պատճեան պատճեան պատճեան

Նոր բնակարան տեղափոխվելու հետեւալ
օրից արդէն Ուուբէնը յանձն առաւ իւր պաշտօնը: Դպրոցի տեսուչը, որ նրա նախկին ուսուցիչն էր, ընդունեց նրան ուրախութեամբ և խոստացաւ մօտիկ ապագայում աւելի յարձար պաշտօն:

— Աշխատելու սէր ունեցողը, — ասաց նա, — Երբէք քաղցած չի մնալ:

Իսկ Ուուբէնը, կամաց թէ ակամայ, պէտք է ունենար այդ սէրը: Նրա վճիռը հաստատ էր: Ոչ միայն ըստեւեց Մելիք-Բարսեղեանի խորհրդին, այլ և արհամարհանքով էր յիշում իւր հօրեղբօր տունը: Այն տունը, ուր նրա միակ բոյրը այնքան տարի բարոցապէս տանջվել էր:

Բայց նրան անհանդստացնում էր մի հանգամանք — Մարիամի անորոշ տիրութիւնը: Իզուր այն երեկոյ, բժիշկը դուրս գնալուց յետով, նոյնպէս հետեւալ և երրորդ օրը, փորձեց իմանալ նրա յանկարծակի այլայնան պատճառը:

— Հէնց այնպէս, սիրոս նուաղեց, — պատասխանում էր Մարիամը անվորով:

Հակառակ իւր խոստանը, բժիշկը չ'եկաւ նրանց մօտ, ոչ հետեւել օրը, ոչ յետոյ: Ուուբէնը նկատում էր, որ Մարիամը չէ խօսում նրա մասին, մինչև անգամ խոյս է տալիս անունը յիշելուց:

— Զարմանալի է, — ասաց մի անգամ եղբայրը դիտմամբ, Վասիլը, կարծես, մեզ բոլորովին մոռացել է:

— Երևի, զբաղված է գործերով, — պատասխանեց քոյրը և ուրիշ ոչինչ չաւելացրեց, հակառակ Ուուբէնի սպասածին:

Քրոջ արտաքին անտարբերութիւնը աւելի շարժեց եղբօր հետաքրութիւնը, Այս ևս նա համոզվեց, որ Մարիամը կեղծում է, որ նրա տիրութեան բուն պատճառը կապ ունէ Մելիք-Բարսեղեանի հետ:

Հազիւ մի շաբաթուաց ընթացքում Մարիամը կարողացաւ կարգի բերել նոր բնակարանը: Նա աշխատում էր առաւօտից մինչև երեկոյ անդադար: Նա համարեա ոչինչ հասկացողութիւն չունէր տնացին տնաեսութեան մասին — ոչ եփել կիտէր, ոչ կարել, ոչ մինչև անգամ լուանար: Հարկաւոր էր մի խորհրդատու, մի դի-

կափար: Եւ նա ստիպվեց դիմել հարևան կանանց օգնութեանը: Մէկը նրան սովորցրեց հասարակ սուալ պատրաստելը, միւսը յանձն առաւ սովորցնել շոր լուանալու եղանակը: Ֆիզիքական աշխատանքի ծանրութեան տակ ճնշուած այդ գուեհիկ կանացք հոգով խղճում էին նրան, որի կրթուած ձևերից, քնքոյց կազմուածքից արդէն գուշակել էին նրա հարուստ ընտանիքի գաւակ լինելլ:

Ամենից աւելի ցաւակցութիւն էր ցոյց տախիս պառաւ տանտիրուէին: Ստէպ ստէպ նա մտնում էր ներս, անկոչ հիւրի պէս և Մարիամին ձանձրացնում իւր մանրակրկիտ հարց ու փորձով: Ո՞վ է, հրտեղացի է, ազգականներ ունի, քանի տարեկան է, երբ է ուսումը աւարտել և այն և այն: Այդ կինը, որին Մելանիա Պետրովնա էին անուանում, Մարիամին կասկածելի էր թւում իւր գեղնագոյն դէմքի անհամեստ արտայալտութեամբ, իւր հինայած մազերով, իւր պատկառելի հասակին անվայել ազատ և համարձակ շարժումներով:

Մի օր Մելանիա Պետրովնան, պատշգամբի վրայ տեսնելով Մարիամին սամօվարի մէջ ածուս ածելիս, մօտեցաւ: Նա բւնեց որիորդի Ծնօտից, վերև բարձրացրեց զլուխը և, նայելով

նրա գեղեցիկ աչքերին, արտասանեց.

—Ի՞նչ սիրուն ես, ափսան...

Մարիամը զզուանքով երեսը շուռ տուեց և առանց մի խօսք ասելու, մտաւ սենեակ: Լուսամտից նա տեսաւ, որ պառաւը կանգնած նայում է, մի խորամանկ և հրող ժպիտ երեսին: Նոյն երեկոյ նա Ռուբէնին յայտնեց, թէ յանկայի կը լինէր մի ուրիշ բնակարան վարձել:

—Ինչո՞ւ:

—Քեզ համար շատ հեռու է,—թագցրեց նա խելական պատճառը:

—Ինձ համար հոգս մի անիլ: Եթէ ուրիշ անցարմարութիւն կայ, այն ասա:

—Անյարձարութիւններ շատ կան, —պատասխանեց Մարիամը, և յանկարծ միտքը փոխելով, աւելացրեց, —բայց ով կը տայ մեզ ամսական տասը բուբլով սրանից աւելի յարմար բնակարան...

Յաճախ նա միայնակ նստում էր եղօր սեղանի մօտ և երկար երկար ժամանակ մնում խորասուզված մտածումների մէջ: Մի քանի օրուայ ընթացքում նա դարձել էր զարմանալի նեարդացին: Անսովոր աշխատութիւնից յոկնած, նա երբեմն զրուվում էր ամենաշնչին բաներից: Ցերեկը նա սրբում էր, մաքրում, մի

կերպ կերակուր էր պատրաստում, երեկոները վերցնում էր մի որ և է գիրք և նստում լուսամտի առաջ: Նա չէր կարողանում մի քանի էջերից աւելի կարդալ: Ջուտով նրա աչքերը պղտորփում էին, գլուխը պտտում էր, գիրքը լնկնում էր ծնկների վրայ, և նա մնում էր անշարժ, արձանացած:

Պօտ երկու շաբաթ էր անցել, Մելիք-Բարսեղանը չէր երեւում: Աւրեմն իզուր չէր Մարիամը կասկածում, ուրեմն իզուր չէր, որ բժշկի այն սառն «ընկերական» խորհուրդը այնքան սարսափեցրեց նրան:

«Նա ինձ չի սիրում, ոչ, չի սիրում, պնդում էր օրիորդը, յուսահատված գալարելով իւր մատները, — եթէ սիրէր, այնպէս չէր խօսվի»,

Ի՞նչ, նա վիրաւորական չէ համարում Մարիամի համար վերադառնալ այն տունը, որտեղից համարեա արտաքսել են նրան: Միթէ այդ էր սպասում նա այդ մարդուց: Նա վախոնում է չքաւորութիւնից: Նա, որ ինքը չքաւոր է եղել և որ այնքան պարծենում է իւր անցեալ չքաւորութեամբ: Նա առաջարկում է իւր ընկերոցը՝ մի այնպիսի քայլ անել, որ վայել չէ ամեն մի քիչ թէ շատ ինքնասէր մարդու: «Տէր Աստուած, Տէր Աստուած, միթէ ևս

խարփած եմ, — շշնչում էր օրիորդը ստէպ ստէպ, — միթէ իզուր էլին իմ բարձր յացերը նրա մասին»:

Տօն օր էր: Ոուբէնը ազատ էր պաշտօնից: Նա իւր սենեակում զբաղված էր մի գրութեամբ, որ սկսել էր նոր բնակարան տեղափոխելու երկրորդ օրը և որին նուիրում էր իւր ազատ ժամերը:

Մարիամը իւր սենեակում, փոքրիկ անշուր թախտի վրայ նստած, սպիտակ կտաւից վարագոյն էր կարում եղբօր սենեակի լուսամտի համար: Ամբողջ գործը բաղկացած էր երեք կարեգձերից: Երկու օր էր նա տքնում էր և չէր կարողանում վերջացնել այդ հասարակ կարը: Նրա անփարժ ձեռները դողդողում էին, ասեղը շարունակ ձակում էր նրա մատները:

Յանկարծ նա Ոուբէնի սենեակից լսեց Մելիք-Բարսեղեանի ձայնը: Նա ակամայ մի ցընցումն զգաց, ձեռները թուլացան, կարը ընկաւ ծնկների վրայ:

— Աա, վերջապէս, եկար, — դիմաւորեց Ոուբէնը բժիշկին:

— ազիւ ժամանակ կարողացաց գտնել, — դոցեց բժիշկը շունչը կտրված, — հաւատացիր, որ մի րոպէ ազատ ժամանակ չունէի:

Նա շտապով հանեց ձեռնոցները, նստեց ա-
թոռի վրայի. Թուբէնը իւր ձեռադիրը դրեց սե-
ղանի արլիքիկը:

— Եցի ի՞նչ ես թագյնում,—հետաքրքրվեց
բժիշկը, —ինչպէս տեսնում եմ, դու էլ զբաղ-
ված ես. Պարապիր, պարապիր, րոպէն թանգ
է: Բայց որտեղ է... օրիորդը իւր սենեակում:
Յոյս ունեմ, որ առողջ է: Հըմ, ասա տեսնեմ,
կատարեցիր խորհուրդս, գնացիր հօրեղօրդ
մօտ:

Թուբէնը գլխով բացասական պատասխան
տուեց:

— Ի զուր, —արտասանեց բժիշկը, զլուխը ցա-
ւակցաբար շարժելով, —բայց ի՞նչ պիտի անես,
ի՞նչ ես մտադիր անելու:

Գուցէ նա դեռ շարունակէր իւր հարցուփոր-
ձը: Բայց Ռուբէնը այն ձեռվ էր պատասխա-
նում, որ միանգամացն առիթ չէր տայիս երկարա-
բանութեան: Բժիշկը սկսեց պատմել այն բոլորը,
ի՞նչ-որ արել էր երկու շաբաթուաց ընթացքում:

Նա արդէն ծանօթացել է Թիֆլիզի մի քա-
նի ընտանիքների հետ, դէպէ է ունեցել հան-
դիպելու իւր արհեստակիցներին: Նա շատ նուրբ,
շատ քաղաքավարի արհամարհանքով մի քանի
նկատողութիւններ արաւ վերջինների մասին:

«Պրակտիկան» նրանց փչացրել է, թէօրիան
մուացել են, գիտութեանը բոլորովին չեն հե-
տեւում, չը գիտեն բժշկականութիւնը ինչ հըս-
կացական քայլեր է անում վերջին ժամանակ:

— Երեակացիք, —շարունակեց Մելիք-Բարսե-
ղեանը, հեգնաբար ժպտալով, —մէկը, անունը
չեմ ուզում ասել, բժշկում է մի թոքախտ ու-
նեցող հիւանդի: Հիւանդը իս քաղաքակիցնե-
րիցս է, հեռու ազգական է: Երէկ նրա մօտ
էի, պատահածամբ ծանօթացայ այդ բժշկի հետ:
Անունս յայտնեցի և մի կողմ քաշելով, հարցրի
ազգականիս հիւանդութեան մասին: Խօսեցինք,
վիճեցինք: Ի՞նչ յայտնուեց. այդ մարդը տասը
տարի է բժշկութիւն է անում, անուն ունէ,
երեակացիք, երեակացիք, չը գիտէ լուծել հըս-
յակաւոր Կօսի բաքտերիտ-բացիները: Ահա ձեր
Թիֆլիզի էսկուլապները, կարելի՞ բան է այդ-
քան տգէտ լինել և անուն ստանալ:

Յետոյ բժիշկը խօսեց իւր բնակարանի մա-
սին: Խիստ աղնկալի տեղ է վարձել, ստորին
յարկում հիւաններ են բան անում, վերին յար-
կում զիմնագլաւուներ են ապրում, ամբողջ օրը
պարում են ու երգում: Վերև աղմուկ, ներքե
աղմուկ, աջ ու ձախ հարեաններով լի:

— Մի խօսքով ինձ չեն թողնում, որ պարա-

պեմ: Իսկ դու գիտես, առանց պարապմունքի, ես մեռած եմ: Այժմ զբաղված եմ մի թեթև զիտնական աշխատութեամբ: Գրում եմ մի բրօշիւր հասարակ լեզուով: Թեման շատ հետաքրքրական է — «մանուկների էպիթեմիական հետանդութիւնների զանազան տեսակները, նրանց դէմ դորձածելի բացիօնալ միջոցները և առհասարակ ընտանիքների գիտիւնական — սահնիտարական պայմանների անհրաժեշտ կարևորութիւնը»:

Նա ցիցեց մի լրագրի անուն, ուր առաջ պիտի տապիչը այդ գիտնական աշխատութիւնը և յնտոյ առանձին գրքովիներով՝ հրատարակիլիք աժան գնով հասարակ ժողովրդի մէջ տարածելու համար: Թուբէնը ակնարկեց, թէ մի քանի օր առաջ այդ լրագրում կարդացել է «բժշկագետ Մելիք-Բարսեղեանի» մասին թելլամի պէս մի բան:

— Այնքան կուռել եմ խմբագրի հետ, որ երեակացել չես կարող, — աստամիսանեց բժիշկը, սակաւ ինչ շփոթվելով: Յիմարութիւն, ուրիշոյնց, դու գիտես, որ ես թելլամներից փախչում եմ..».

Դուների ձայնը ընդհատեց նրա խօսքը: Միւս սենեակից դուրս եկաւ Մարիամը:

— Մեզաւոր եմ, զդում եմ, — զոյեց բժիշկը, ոտքի կանգնելով: — Ինչ արած, բժիշկի արհետը ծանր է, պատասխանատու է:

— Իսկ ես կարծում էի, որ ինձ էլ ձեր հիւանդներից մինը կը համարէք, — արտասանեց Մարիամը մի առանձին, անսովոր եղանակով:

— Ի՞նչ, դուք հիւանդ էք: Նու, Թուբէն, դու ինձ ինչո՞ւ խաբեցիր, այդ ներելի չէ, միթէ չէիր կարող յայտնել: Թոյզ տուէք, օրիորդ... Մարիամը թոյզ ժպտարով, ձեռը խեց բժբշկից և նստեց սեղանի մօտ:

— Ոչ, դուք կատակ էք անում, դուք առողջ էք, — ասաց բժիշկը, աւելի շփոթվելով օրիորդի վարմունքով և համարելով նրա ժպտար մի տեսակ հեգնութիւն:

Այն ինչ՝ վարկենաբար Մարիամը փոխվեց: Նա բժշկի շփոթմունքը այլ կերպ հասկացաւ: «Միթէ ես սխալմում եմ», անցաւ նրա մտքով:

Եւ սկսեց լարված ուշագրութեամբ հետեւ բժշկի խօսակցութեանը, զիտել բոլոր նրա շարժումները: Մինչդեռ բժիշկը, զսպելով իւր շփոթմունքը, կրկին դարձաւ ազատ, համարձակ: Նա պատմեց մի քանի նորութիւններ, գովեց մէկին, պարսաւեց մի ուրիշին:

Առ հասարակ բժիշկը խօսում էր շատ ընդհանուր շատ հասարակ բաների մասին, նա ոչ մի խօսք չասաց, ոչ մի ակնարկութիւն չարնու Թուբէնի և Մարիամի ներկայ կացութեան մասին: Նա չը ցիշեց մի որ և դէպք անդամ, որ կարող էր կապ ունենալ այդ հանգամանքի հետ: Նա թագքրեց և՝ իւր այցելութիւնը Սաղափեաններին:

Մարիամը ուրախ էր — չը գիտէր ինչու, ժպտում էր, ծիծառում էր — չը գիտէր ինչից դրդուած:

Քանի մի վայրկեան նրանք լուցին: Բժիշկը, իր թէ ճակատը տրոբերով, ձեռով ծածկեց աչքերը և մատների արանքով զննեց Մարիամին:

«Ի՞նչպէս աղքատութիւնը վատ է ազդում զեղեցկութեան վրայ, — ասաց նա մաքում, տեսներով օրիորդի ձեռների վրայ անսովոր աշխատանքի հետքերը:»

Այդ քնքոց ձեռների թափանցիկ, բարակ կաշին կոշտացել էր, քիչ սեացել, մատների ծացքերը բիրդացել էին, եղունգները, կարծես, զրկուել էին իրանց նախկին հայելաննան փայլից: Եւ այդ ընդամենը երկու շաբաթուայ ընթացքում:

Ճյիշկը ցաւեց օրիորդի երիտասարդ ութեան, զեղեցկութեան, կրթութեան մասին: Միթէ նրանց վիճակված է մաշվել աղքատութեան մէջ: Դա խղճի խայթոց չէր, դա և՛ մի օտար, անտարբեր մարդու սառն կարեկցութիւն չէր, այլ բուն եսականութեան զգացմունքը:

Զի՞ որ նա սիրում էր Մարիամին իւր տեսակի, չի՞ որ երազում էր կապել նրա հետ իւր ապագայի լսնդիրը, ինչու նա ստիպված է ձեռք վերցնել իւր փայտայած ծրագրից, ինչու Մարիամը աղքատ է, բոլորովին աղքատ:

«Ինչու գոնէ ես հարուստ չեմ:» Բայց այժմ, այս դրութեան մէջ . . . Երբէնք, չքաւորութեան հետ կատակ անել չի կարելի: Կանցնի ամուսնութեան առաջին ամիսը, ամիսները, վերջապէս, շատ շատ տարին, նրանք կը թափվին արբեցութիւնից, և առօրեայ անողոք պահանջները կը սկսեն թունաւորել նրանց կէանքը: Այն ժամանակ գնա ու ապրիր, Դեռ երկուսով ոչինչ, յետոյ, զաւակները, չը պիտի նրանց մեծացնել, կրթութիւն տաք:

«Կարո՞ղ եմ ես նրանց այնպէս պահել, ինչպէս իմ հայրս է ինձ պահել, տկլոր, քաղցած: Ոչ ոչ Մարիամը երեխայ չի, նա կարող է մտածել այս բոլորի մասին, նա պէտք է մտածի...»

Երկու շաբաթուաց ընթացքում կապմուած և
սպատրաստված խորհրդածութիւնների այս շար-
քը մի գայրկեանում կրկին անցաւ բժշկի մըտ-
քով: Նա թեթև հառաջեց, կարծես, աղատվե-
լով մի ճնշող ծանրութիւնից:

Մարիամը լուր էր: Խօսում էր Թուբէնը կրց-
կուր: Երեքն էլ զգում էին, որ խօսակցու-
թիւնը չէ տաքանում, որ մէջտեղ կայ մի սե-
թել, որ նրանց մտքերի հաղորդակցութիւնը
արուեստական է գարձնում:

Վերջապէս, բժիշկը նայեց ժամացոյցին և
խկոյն ոտքի վերկեցաւ: Նա ստիպողական գործ
ունի, ցաւում է», որ չի կարող երկար նայել:

Փողոց գուրս գալով, նա ագահութեամբ իւր
թոքերը լցրեց աղատ օղով: Փոքրիկ բնակա-
րանի ցածր առաստաղը, Մարիամի թախծալի
դէմքը, Թուբէնի ակներև անփութութիւնը
դէպի իւր ընկերը, այս բոլորը ծանր ազդեցու-
թիւն էին գործել նրա վրայ: Նա չէր կարող
միանգամից, լսստօրէն ընդհատել իւր յարաբե-
րութիւնները նրանց հետ, այդ կը լինէր ար-
դէն վերին աստիճանի կոպիտ: Խոկ նա չէր
կամենում կոպիտ լինել: Պէտք է հետզհետէ,
փոքր առ փոքր հեռանալ: Ահա ինչու, ցը-
տեսութիւն՝ ասելով, նա տուեց Թուբէնին իւր

մանրամասն հասցէն և լինդրեց ացելել: Այդ օրը մինչև երեկոյ Թուբէնը և Մարի-
ամը չը խօսեցին Մելիք-Բարսեղեանի մասին:
Նրանք ճաշեցին շտապով, հատ հատ անկապ,
աննշան խօսքեր փոխանակելով: Թուռմ էր,
որ երկուսին էլ մի և նոյն միտքն է գրաղեց-
նում, որ երկուսն էլ ցանկանում են բացատրել
այդ միտքը, բայց միմեանցից քաշվում են:

Երկու օր անցած Թուբէնը իրիկնաղէմին
տուն վերադառնալով, Մարիամին տեսաւ պա-
տշպամբի վրայ: Օրիորդը մի սիւնից մինչև
միւսը մի պարան կապած, փուռմ էր լուսացած
շորերը, Նրա թևերը ծալած էին մինչև ար-
մունկները, թանձր մազերը բարակ թաշկինակի
տակից սփուռել էին ուսերի վրայ:

Մի ծանր զացմունք ճնշեց Թուբէնի սիր-
ութը, երբ տեսաւ քրոջ կարմրած և սապոնի բի-
թերով ծածկուած բազուկները: Առաջին անգամ
նա զգաց աղքատութեան դաւն լուծը: Միթէ
այզպիսի ապագայ երազել էր նա իւր սիրեցեալ
քրոջ համար: Նա զսպեց իւր հառաջանքը,
շտապեց ներս: Վառեց կանթեղները, հակառակ
Մարիամի ընդդիմութեան ինքը սամօփարը
դրեց, յետոյ ոկտեց օգնել քրոջը, խոհանոցից
կեղսոտ ջուրը գաւիթ տանելով:

Հայ խմելուց յետոյն նա նորից նստեց պարապելու,
ըլ կարողացաւ միտքը կետրոնացնել։ Նա կան-
չեց Մարիամին իւր մօտ։ Երբ քոյրը եկաւ նս-
տեց, անցաւ այն ըովէական լոռութիւնը, որ
սովորական է երկու մտերիմների լուրջ և ծանր
խօսակցութիւնից աւաճ։

Սկսելով շատ հեռուից, Որուբէնը շատ զգուց,
շատ նուրբ կերպով ակնարկեց Մելիք. Բարսե-
ղեանի մասին։ Սակայն այդ զգուշութիւնը
յուզեց Մարիամին։

—Ինչո՞ւ ես տանջում ինձ քո հետաքրքրու-
թիւնով, —գոչեց նա յանկարծ, մի դառն խըս-
տութեամբ, որ յատուկ չէր նրան, —միթէ ասեն
ինչ յայտնի չէ քեզ, միթէ ըլ գիտես ինչ
եմ զգում ես...»

—Մարօ, ես երբէք չեմ ձգտել իմանալ այն,
ինչ-որ դու կամեցել ես ինձանից թագցնել,
երբէք չեմ ուզեցել կայել քո սրտի գաղտնիք-
ներին։ Բաց, լսիր, ես չեմ կարող սառնարիւն
մնալ, քանի տեսնում եմ քեզ ացդպէս փոխ-
փած, այդպէս տիսուր։ Ինձ համար պարզ է, որ
մի միտք, մի ծանր վիշտ, քեզ օրից օր, ինչպէս
ասեմ, հալում է...»

Մարիամի նշարելի կերպով նիհարած այտե-
րը կարմրեցին։ Անցաւ մի քանի վայրկեան։ Նա

վերջին ճիգն արաւ պահելու իւր սաւնութիւնը
և..., պատմեց այն բոլորը, որ վաղուց արդէն
զիւմ էր Որուբէնը և այն բոլորը, որի մասին
միայն կասկածում էր կամ միանգամայն ըլ
գիտէր։ Նա վաղուց էր կամենում յայտնել,
բաց կարծում էր, որ Որուբէնը կը վշտանայ,
կը յանդիմանի. Նա մեղասոր չի, նա ըլ կարողա-
ցաւ զսպել ինքն իրան։ Սկզբում Մելիք. Բար-
սեղեանը դիւր եկաւ նրան իբրև խելօք, կր-
թուած, զարգացած երիտասարդ։ Նա յարգեց
նրան։ Որուբէնի գովասանքները աւելի զօրաց-
րին այդ յարգանքը, բարձրացրին բժշկին
Մարիամի աչքում։

—Ես ուրախութեամբ էի լսում քո զովա-
սանքներդ, ես ցանկանում էի, որ դու աւելի
յարգես, աւելի սիրես նրան։ Երբ նա Թիլիլի-
կից հեռացաւ վերջին անգամ, ես մի տեսակ
ախրութիւն զգացի։ Կարծես, ինձ մի բան
պակասեց։ Թիլիլչանում նրան հանդիպելով, ըլ
կարողացաց ուրախութիւնս թագցնել։ Պու-
նկատեցիր, Մի հարցնել, թէ ինչպէս նա օրից
օր գրաւեց ինձ, մի հարցնիլ, ես ինքս էլ
ըլ գիտեմ։ Առաջ նա ինձ հետ սառն էր. ես
տանջում էի, ես վիրաւորվում էի, մի և նոյն
գամանակ, սրտով աւելի ու աւելի մօտենում

Էի նրան։ Ես չէի յուսահատվում, զգում էի, որ նա ինձ ախրում է, իսկ ես. . . Օօօ, եթէ իմանալիք ինչքան դրաւիչ էր մանաւանդ այն ժամանակ, երբ վիճում էր քեզ հետ։ Ես ագահութեամբ էի լուս նրա ասածները։ Ինձ թւում էր, որ նրա նման մի ուրիշ մահկանացու չը կայ ոչ խելքով, ոչ սրտով, ոչ զարդացումով և ոչ իւր արտաքին տեսքով։ Նրա շարժուածքը, նրա ձայնը, մինչև անդամ հագուստը ինձ համար մի առանձին հրապոյը ունէր...

— Ահա մի մարդ, — շարունակեց Մարիամը, մի վարկեան լուելուց յետոյ, — ահա մի մարդ, ասում էի ինքս, որ կարող է սիրել այնպէս, ինչպէս հարկաւոր է, ինչպէս ես եմ երեակայում, սիրել ամբողջ սրտով, անհաշուսիրով։ Նրա անցեալը, նրա կեանքի դժուար պայմանները, ինձ թւում էր, որ երաշխաւոր կարող են լինել նրա հաստատամտութեան։ Ես ասում էի, նա չի խաբի ոչ ինքն իրան, ոչ ուրիշին, ոչ մանաւանդ ինձ. . . Նա բովէի մարդ չէ, նա շուտ ողերվող և շուտ սառչոներից չէ, երբ յափշտակվեց, երբ սիրեց, կը մնայ հաւատարիմ։ Այսպէս էի մտածում նրա մասին։ Ճատ կարելի է ես չը հաւատացի ինքս ինձ, իմ զգացմունքներիս, եթէ չը տեսնէի

նրա կողմից խրախուսանք։ Լսում ես, Որուբէն, նա երգուել է ինձ սիրել յափշտեան, այս շատ անդամ, շատ անդամ. . .
Որուբէնը ակամայ մի ցնցումն զգաց։ Եց ևս աւելորդ էին Մարիամի խօսքերը։ Պարզուեց այն հանգամանքը, որի մասին թէկ կասկածում էր, բայց համոզված չէր—բժիշկը սիրոյ խոստումն է արել։

— Իսկ այժմ, այժմ,—կրկնեց Մարիամը, երեսը կոկիծից թէ ամօթից ծածկելով,—ես տեսնում եմ, որ խաբված եմ։

Նրա գժգունացած շրթունքները աշնանացին տերևների պէս դողում էին, նա ցնցում էր ամբողջ մարմնով, նա մի անդամ ևս ճիգն արաւ իրան զսպելու, սակայն իգորու. . . Նրա թուլացած գլուխը թեքվեց սեղանին, և լուսեց մի խուլ, խեղդուկ հեծկլտանք։

Եւ Որուբէնի ոչ մի միսիթարական խօսքը ըլ ամուքեց նրա վշտաբեկ սիրտը, և Որուբէնի ոչ մի յորդորը չը դադարեցրեց նրա արտասուքը։ Սիրտը դալնութեամբ լի երիտասարդը մերթհամոզում էր, մերթինդուում, ձգտելով շարժել քրոջ սառն խոհականութիւնը, որ այդ բուպէին թմբել էր բուռն զգացումների ճնշման ներքոյ։ Նա ինքն իրան մեղաւոր էր զգում

Մարիամի առաջ:— Զէ որ նա խրախուսել է
իւր քրոջ սիրոյն, չէ որ նրա գովասանքները
ազդել են քրոջ կուսական անարատ սրտի վրայ:
Ի՞նչ, միթէ նա սխալ փուլ էր: Միթէ Մելիք-
Բարսեղեանի մասին նա ծուռ և սխալ գաղա-
փար է ունեցել տասներկու տարի շարունակ:
Միթէ նա այդքան միամիտ, կոյր և դիւրա-
հաւատ է եղել: Ոչ, դժուար է, դժուար է հա-
ւատալ այդ մարդու անազնւութեանը, դժուար
է, անկարելի է, վերջապէս, դառն է: Խսկ եթէ
ճիշդ է, եթէ Մելիք-Բարսեղեանը մի անսիրս,
անգութ, մի եսամոլ մարդ է: Եթէ նա մինչև
այսօր դիմակ է ունեցել երեսին: Եթէ Մարիամը
չի կարող մոռանալ նրան, ատել, արհամարհել:
Այն ժամանակ...

Հ րոյքան և նեյ ուս պամինը բյաման վճարեալ
— պատիսան քարքար: Հ րոյքան գեղից
աւս և նեյ հնձնու ուս բաւանան ապրս ան
քարքար գանձ և ան մարտու մը դրանք մի և
հասուն հայութ նախ մարտու մը պատճեն:

Հակառակ! Ուուրէնի սպասածին, հետևեալ
օրը Մարիամը աւելի հանգիստ էր երևում, քան
երբ և է եղել էր վերջին դէպքերից յետոց:
Առօրեաց պարապմունքը նա սկսեց մի առան-
ձին եռանդով: Չայի ժամանակ ասաց Ուուրէ-
նին, թէ տնացին տնտեսութիւնը նրան չի
բաւականացնում, թէ ցանկանում է մի ուրիշ
զրծով էր պարապվել:

— Ի՞նչ գործով, — հարցրեց Ուուրէնը:
— Կար կարելով:

— Դու, կար կարելով:

— Այս, ինչ զարմանալի քան կայ:

— Ոչինչ: Բաց դու չը գիտես կարել, դու
ասել քանացնել անգամ չը գիտես:

— Կը սովորեմ, արդէն վճռել եմ սովորելու:
Ես մի ծանօթ օրիսրդ ունեմ, որ կար ու ձեի
վարժուէի է: Կը դիմեմ նրան, կը խնդրեմ, որ
ինձ դաս տայ:

Ուուրէնը հակառակեց: Առանց այն էլ Մա-
րիամի տնացին գործերը ծանր են, ուրիշ պա-

բապմունքի ետևից ընկնելը առ այժմ աւելորդ է:

—Երբէք աւելորդ չէ, —պնդեց Մարիամը: —
Ես ազատ ժամանակ շատ ունեմ, այժմ տնա-
ցին գործերը հեշտացել են ինձ համար, ցերէկ-
ները մի քանի ժամ ձեռներս ծալած նստած
եմ, Այդ ինձ համար անտառելի է:

Այդ խօսքերի մէջ Ռուբէնը զգաց քրոջ հաս-
տատամտութիւնը: Նա իսկապէս ուրախ էր
Մարիամի մտադրութեանը, ուրախ էր, որ նա
դիտէ արհամարել ամեն մի նախապաշարմունք,
մուռանալ իւր փարթամ անցեալը և գնալ մի
հասարակ արհեստաւոր դաւնալ: Բաց և այն-
պէս նա ընդգիմացաւ, և ընդգիմացաւ լոկ այն
պատճառով, որ խնայում էր քրոջ առողջու-
թիւնը:

—Դու կարող ես մի ուրիշ գործ ընտրել մի
աւելի յարմար գործ, —ասաց նա:

—Ի՞նչ կարող եմ անել, ասա տեսնեմ, ի՞նչ
վարժուհութիւն: Դրա համար առանձին պատ-
րաստութիւն է հարկաւոր: Խոկ ես ի՞նչ որ սո-
վորել եմ գիմնազիացում, մուացել եմ: Վերջա-
պէս, վարժուհի դառնալու սէր չունեմ: Ուրիշ
ի՞նչ է մնում: Ինչ են սովորցել ինձ, որ անեմ,
մի քանի քրանսերէն քրազներ, պարել, մի
քանի կտորներ ածել դաշնամուրի վրայ: Ան-

պէտք բաներ, Ոչ, Ռուբէն, արդելք մի լինի
ինձ, Ես կը սովորեմ կար անելը, զոնէ եթէ
ուրիշների համար էլ չը կարեմ, քեզ և ինձ
համար ուրիշներին չենք դիմիլ:

Երկու օր անցած Մարիամը գնաց իւր ծա-
նօթ վարժուհու մօտ: Վերջինը նախ կատակի
տեղ ընդունեց նրա ասածարկութիւնը, յետոյ
զարմացաւ, երբ Մարիամը կրկնեց իւր խնդիրը
լրջօրէն:

—Հոգիս, քեզ զրկել են, —զոչեց նա, ձեռի
ձեռին խփելով, —Հոգիս, դու աղքատ ես:

—Թողնենք այդ, Յանձն առնեմու ես ինձ
դաս տալ:

—Ի՞նչ ես ասում, ի՞նչ ես ասում, ուրախու-
թիւնով, ուրախութիւնով:

—Պայմանը:

—Եթէ պայմանի մասին կը խօսես, ինձ կը
վիրաւորես, ինձ համար ոչինչ չարժէ իմացածո
քեզ սովորյնել: Հոգիս, մոռացել ես, ի՞նչքան
մենք բոլորս քեզ սիրում էինք ուսումնարա-
նում: Հոգիս, այդ ի՞նչ դժբաղդութիւն է, պա-
տահել քեզ:

Երկար ախուվախից յետոյ, վարժուհին վիր-
ջապէս, վճռեց, որ Մարիամը այցելէ նրան շա-
բաթական չորս անդամ, կը սօրից յետոյ:

Մարիամը հետևեալ օրից սկսեց դասերը: Նա գնում էր վարժուհու մօտ միանակ: Երբ մն միան Ռուբէնը նրա հետ դուրս էր գալիս և մինչև կըս ճանապարհ ու լեկցում:

Մի անգամ Մարիամը տուն վերադաւնակիս, երբ փողոցի մի մայթից միւսն էր անցնում, յանկարծ մի լանդո անցու: Նրա առաջով: Նա վլուսը բարձրացրեց և ուսաւ օրիորդ: Նաս սլաքին իւր մօր հետ նստ սծ: Հանդիպումը այնպէս էր, որ նրանք ևս անշուշտ պէտք է տեսնէին նրան: Մարիամը լլուսը քաշ զցից, խոյս տալով նրանց հացքից, և շատապով անցաւ:

Մի ուրիշ անգամ նա տեսաւ Սելիք-Բարսեղանին, որ կառ բով անցնում էր սրօսաեկտով: Բժիշկը զդակը վերցրեց, մինչև ասգամ տելոց բարձրացաւ և խորին չարգան բոյ վլուս առելու: Կառը պրնթալով անցաւ:

Մարիամի ոտները դոդացին ներքիս յանկարծակի խովութիւնից: Նա հազիւ կարողացաւ տուն հասնել, և ամբողջ երեկոյ փակված մնաց սենեակում: Հետևեալ օրից նա իւր եւթեկութեան ճանապարհը փրխեց: Բայց ացանել ևս նա ապա ո չը մնաց: Մի օր նա անցնում էր Սոլովակի փողոցներից և կով, ետևից լսել:

— Բարև ձեզ, օրիորդ:

Նա յետ նայեց, և երես առ երես հանդիպեց չալաբեանին:

Երբէք նա չը մտածել ամուրիի մասին և չէր էլ սպասում որ և է տեղ տեսնել նրան:

Հալաբեանը ձեռ տուեց համեստաբար, հարցրեց նրա առողջութեան մասին և աննկատելի կերպով սկսեց ընթանալ նրա հետ: Մարիամին ձնշում էր նրա ուղեկցութիւնը, բայց քաղաքավարութեան զգացմունքը չը թուց տուեց հեռանալ նրանից:

— Իսկ ձեր եղբայրը առողջ է, յաւ է, — շարունակում էր խօսել Հալաբեանը, — ես նրան չեմ հանդիպում, որտեղ կարելի է տեսնել: Դուք, կարծեմ, այժմ առանձին էք ապրում: Ձէ՞:

Մարիամը սիրոտ առաւ: Ինչու վախենալ մի մարդուց, որ այնքան համեստ է և այդքան հետաքրքրում է Ուուբէնի վիճակով: Ի՞նչ ամօթ բան է նրա հետ միասին գնալը: Ամենը դիտեն, որ նա Մարիամի վաղուցուայ ծանօթներից է և, վերջապէս, ինչ վատ մարդ է:

Սական, չը նայելով այս մտքերին, օրիորդը քանի մօտենում էր վարժուհու բնակարանին, այնքան կամենում էր սպատվել չալաբեանի ուղեկցութիւնից: Փողոցի ծացում նա ձեռ

տուեց նրան և շտափեց հեռանալ, փոխելով իւր ճանապարհը:

—Գիտե՞ս, Մարօ, —ասայ հետևեալ օրը Թուբէնը, երբ Մարիամը ցացտնեց, թէ պատահել է հալաբեանին, —ես կարծում եմ, որ նա վատ մարդ էք: Ես էլ այսօր պատահեցի նրան: Այդ մարդը աւելի անկեղծ ցաւակցութիւն ցայտնեց ինձ, քան թէ... ուրիշները: Նա ինձ շատ խնդրեց, որ ազատ ժամանակ դնամ իւր մօտ:

—Եւ պիտի գնա՞ս:

—Տեսնենք:

Միւս օրը Թուբէնը ճաշից ցետոց, մի փոքր ուղեկցելով քրոջը, սկսեց միայնակ անցուդարձ անել պրօսպեկտի վրայ: Նա հանդիպեց հալաբեանին, որ Դիլոցօվայեա փողոցի ծայրում կանգնած աննպատակ նայում էր գէս ու գէն: Հէնց որ տեսաւ, մատարով մօտեցաւ Թուբէնին: Նրանք մի փոքր միասին զբոնեցին:

Աշնանային օրը ամպամած էր, նոր նոր անձրւ էր սկսվում: Զքօսնողների թանձր բազմութիւնը հետպհետէ ցրվում էր: Հալաբեանը անփոյթ կերպով, շատ հասարակ ձեռով, հրաւիրեց Թուբէնին իւր մօտ:

Ամուրիի վերանորոգված բնակարանը այդ օրը մի առանձին շուրջ ունէր: Մօսիօ Վախվա-

խեանի շնորհով աւելացել էին դարձեալ մի քանի նորանոր պարագաներ:

Նա առաջնորդեց Թուբէնին իւր առանձնասենեակը: Թանգագին գրասեղանը ծածկուած էր մի քանի գեղեցկակազմ գրքերով, զանազան լրագրներով, հաշուեմատեաններով: Մէջ տեղ դրուած էր պղնձեայ թանաքամանը, մարմարեայ պատուանդանով, շրջապատված իւր բոլոր պարագաներով: Սենեակը ընդարձակ էր, առաստաղը բարձր, լուսաւոր, մաքուր, հրապուրիչ: Թուբէնը մի վայրկեան մտքում ակամայ նախանձեց այդ բոլոր ցարմարութիւններին և խիզյն դատապարտեց իւր թուլութիւնը:

Ամուրին գիտէր, որ այդ նախանձը պիտի զարթեցնի նրա մէջ և հէնց դիտմածք նրան առաջնորդեց ացտեղ: Նա առաջարկեց իւր հիւրին ընտիր սիբարներ, ցոյց տուեց իւր գըրքերը, երևելի մարդկանց լուսանկարներից կազմած այլօմք, խօսեց սրանց իւրաքանչւրի մասին այն, ինչ-որ լսել էր, և այն, ինչ-որ կարդացել լրագրներում: Առ հասարակ նա աշխատում էր իրան ներկայացնել ժամանակակից մարդ, լուսաւորված, տեղեակ այն բաներին, որ կարող էին հետաքրքրել մի կրթուած, թարմ երիտասարդի, Առանձին սէր արտայախտեց նա

դէպի թատրոնը, մանաւանդ զրաման, Պետքուրգում նա լսել էր Պատափի երգեցողութիւնը, Մոսկվայում տեսել էր Սարա-Քերնարի, Սալիմինի լսաղը, տեսել էր և՝ պիտասահմանում մի բանի փայլուն բեմական ասութեր, Նա հիացած էր և՝ Ըղամեանով:

Ես խօսակցութեամբ նա զրաւեց Որուբէնին: Փամանակը անցնում էր աննկատելի կերպով: Երեխոյ էր արդէն, նրանք անցան հիւրասենեակ, սպասաւորը թէյ բերեց: Հալաբեանը իւր ձեռքով սեղանի փրայ զրեց մի ինչոր թանգագին ըմակիքի շիշ Քաղցրահամ, ողելից ընպելիքը ախորժելի ազդեցութիւն արաւ Որուբէնի փրայ:

Հալաբեանը, վերջապէս, խօսք բաց արաւ Սաղափեանների մասին: Նիկողացոսը արդէն մասնկանալու փրայ է: Տան զրաւի ժամանակը շուտով կը լրանայ, նա փող չ'ունի բանիկ տակուները գճարելու, տունը երկար կը ծախմի: Միւս կողմից շրջապատել են մասնաւոր պարտատէրերը:

— Իսկ ես լսեցի, որ դուք նրան օգնում էք, ասաց Որուբէնը, անելել ցաւակցելով իւր հօրեղօր վիճակին:

— Կօղնէի, եթէ ինքը աւելի մարդակարի

վարվէր իւր ազգականների հետ: Նա կարող էր ձեզ չը զրկել, պարոն Որուբէն...

— Նա ինձ չի զրկել, պաշտպանեց Որուբէնը իւր հօրեղօրը:

— Թողէք, ի սէր Աստուծոց, խօմ ինձանից թագցնել չէք կարող: Ձեր հանգուցեալ հօր գործերը ինձ ամենից աւելի էին յայտնի, ես ամեն բան գիտեմ, ամեն բան:

Որուբէնը սկսեց աւելի պաշտպանել հօրեղօրը: Նա վատ մարդ չի, նա չէր զրկել, եթէ ունենար: Նա գարձեալ իւր պարտքերը կը տաչ, եթէ գործերը յաջողվին:

— Երանի թէ նա չը խայտառ ակմի, — աւարտեց երիտասարդը ողելորված:

— Ձեզ ինչ թող խայտառակմի:

— Ոչ, ոչ, մի ամէք, պարոն Հալաբեան, նա

իմ հօրեղացը է, մեր ազգանունը ծիկնոյնն է:

Հալաբեանը լսեց, և սկսեց թէց զդալով խառնել: Յարձակմելով Նիկողացոս Սաղափեանի փրայ, նա կարծում էր, թէ այդպիսով կը շահի Որուբէնի սիրտը: Երբ տեսաւ, որ երիտասարդը անկեղծ է պաշտպանում իւր հօրեղօրը, մտածութեան մէջ ընկաւ:

Այն ինչ Որուբէնի սրտում վառվել էր բնածին բարութեան և ներողամտութեան զգացմուն-

քլ։ Նա ոգևորվել էր ինքն իւր ասածով։ Ի՞նչ պատռական խրատ և ազնիւ պատիժ տուած կը լինի տիկին Սօփիօլին, Եթէ կարողանայ իւր քրոջ զրկանքի փոխարէնը բարեսրտութեամբ հատուցանել։

— Խուք շատ վեհանձն էք, — խօսեց Հալաբեանը, թիկն տալով բազկաթոռին։ — Ես կարծում եմ, որ Նիկոլայոսը արժանի չէ ձեզիս ազգական ունենալու։

— Ոչ, պարոն Հալաբեան, հաւատացէք, նա արժանի է օգնութեան, — շարունակեց Թուբէնը աւելի եռանդով, — ինձ համար մի մեծ ամօթ կը լինի, Եթէ նա սնանկանայ։

— Տուէք ինձ ձեր ձեռը, պարոն Թուբէն, — գոչեց Հալաբեանը յանկարծ, — անկեղծ եմ ասում, դուք ինձ զարմացնում էր ձեր բարեսրտութիւնով։ Դա հազուագիւտ բան է մեր ժամանակներում, հազուագիւտ բան է։

Նա դարձեալ մտածութեան մէջ ընկաւ, Անշուշտ Մարիամն էլ այնքան վեհանձնաբար է լերաբերվում իւր հօրելքօրը, որքան Թուբէնը Անշուշտ նա էլ շնորհակալ կը լինի այն մարդուց, որ կօգնի Նիկողայոսին։ Ինչու չ'արժանանալ նրա շնորհակալութեանը, ինչպէս չը օգտուել հանդամանքից։ Զի՞ որ այսպիսով մի

բայց մօտեցած կը լինի իւր նուիրական նպատակին։ Վերջապէս, Սալտափեանին կարելի է առանց մի մեծ գումար տալու էլ ազգատել, բաւական է միայն նրա համար երաշխաւոր լինել։ Նա ճարպիկ մարդ է, ոտքի կը կանգնի։ Ո՛չ, նրան տուածը՝ կորած չի։ Եւ շահասիրութեան զգացմունքը աւելի ու աւելի թուլացաւ հարուստ ամուրիի մէջ, տեղի տալով մի այս աւելի գօրեղ, աւելի անցաղթելի զգացմունքի։ Դա Մարիամի դիւթական ազգեցութիւնն էր։ Ահա նա, որքան բարի է, համեստ, հրապութիչ։ Նա տեսնում է իւր հօրելքօր բարերարին, մօտենում է, ժամում է և ձեռք մեկնում նրան։ Այս, նա ինքը բարի է, սիրում է բարութիւն և՝ ուրիշների կորմից, նա շնորհակալ է, գովում է Հալաբեանի արածը։ Նա զգում է, անկարելի է, որ չի զգաց։

Մի վայրկեան ամուրիին թւաց, թէ իւր դէմ ու դէմ նստած է ինքը Մարիամը։ Նա մերկ եղբօր աչքերին, նրա առաջ պատկերացաւ քոյրը։ Ի՞նչ նման են միմեանց։

Թուբէնը նկատեց իւր խօսքերի ազգեցութիւնը նրա վրայ։ Ահա ինչու նա միրտ առաւ, վերջապէս, արտասանելու։

— Մեծ մարդասիրութիւն արած կը լինէք։

պարոն Հալաբեան, եթէ վայր ընկնողին ձեռք
մեկնէք: Մեր ժամանակի մարդիկ շատ նիւթա-
պաշտ են, ցոյց տուէք ձեր բարութիւնը,
օրինակ եղէք...

Եզ ևս աւելորդ էին վերջին խօսքերը: Հա-
լաբեանը վճռել էր օգնել այն մարդուն, որին օգ-
նելը մի քանի օր առաջ «մեղք» էր համա-
րում:

Չը դիտէր ինչպէս յայտնէր իւր շնորհակա-
լութիւնը Ոուրէնը, այնքան զգացված էր,
մանաւանդ երբ լսեց.

— Զեր խաթրու, պարոն Ոուրէն, միայն
ձեր խաթրու կ'օգնեմ:

Թրան ձայնը ազատեց երիտասարդին նեղ
դրութիւնից:

Ներս մտաւ մօսիօ Վախվախուեանը: Մօսիօն
ցուզգած էր, Նա նստեց և, Տանը շունչ քաշե-
լով, պատմեց մի քանի նորութիւններ: Ալսա-
րումնանը պառկած է անկողնում. անցեալ օրը
որիրամոլը ընթրիքի ժամանակ այնքան իւզալի
և գժուարամարս կերակուրներ է կերել, որ չի
մարսել ու հիւանդացել է:

Իշխան Սահարունին քաղաքալին դումայում
նիստից առաջ մէկի հետ կուուել է, ուզեցել է
ապահել իւր հակառակորդին:

Ոուրէնը հրաժեշտ տուեց, այս մաս
— Խնդրեմ, շուտ շուտ շնորհ բերէք: — ասաց
Հալաբեանը, ուստեղելով նրան մինչև նստա-
սենեակ: — Ծատ կը պարաւորէք, եթէ վաղը
բարեհաճէք ինձ մտու ճաշելու:

— Ես ուրիշ տեղ չեմ ճաշում:

— Կարծեմ, դուք այստեղից այնքան հեռու
չէք բնակվում, այնպէս չէ: — Կարցրեց ամուրին:

Ոուրէնը յայտնեց իւր բնակարանի տեղը:
Նա շտապեց տուն: Արդէն մութն էր, նա
երեկոները միայնակ չէր թողնում քրոջը: Նա
տեսաւ Մարիամին աւելի գունատված, աւելի
մտազբաղ:

Նա պատմեց իւր այցելութեան մասին: Նա
ուրախ էր և գոհ իւր արածով, զգում էր հո-
գեկան մի անսուզոր թեթևութիւն: Հալաբեանը
յափշտակել էր նրան իւր բարութեամբ: Երբէք
նա չէր սպասել այդ տեսակ վարմունք այն
մարդուց, որին մինչև այն ժամանակ համարել
էր խիստ գործնական, իխստ հաշուագէտ:

— Մեր շահակը հասարակութեան մէջ դա
հաղուագիւտ մարդ է, — գովում էր նա ոգևո-
րուած: — Մտածիր, Մարօ, և կը տեսնես, որ
ճիշդ եմ ասում: Մեր հօրեղբացը ծարացել
դրութեան մէջ է, ամենքը երես են դարձրել

նրանից, ամենքը քչփում են նրա սնամկութեան մասին, յանկարծ դուրս է գալիս մէկը և ասում է՝ «Ես այդ մարդուն կ'ազատեմ անպատութիւնից»: Այս, անպատութիւնից, դուք գիտես վաճառականի համար ինչքան ամօթաբեր բան է անանկանալլը: Ի՞նչպէս չը գովել այդ մարդուն, ինչպէս Շուրախանալլը Ոչ, ոչ, ինչ աւգում ես, ասա, Հաղաբեանը արժանի է յարգանքի:

Մարիամը պատրաստ էր համաձայնուել եղբօր ասածների հետ, նրա սրտում արդէն ծագում էր մի տեսակ յարգանք դէպի Հալաբեանը: Բաց յանկարծ նա յիշեց այն օրը Սարավեանների տանը, երբ ամուրին առանձին ուշադրութեամբ էր վարդում իւր հետ, յիշեց տիկին Սօփիօց չար և օրիորդ նատալիացի նախանձու հայեացքները:

Եւ մի կասկած զսպեց նրա համակրութիւնը: —Ի՞նչ է պատճառը, —հարցրեց նա, —որ առաջ չէր ուզում օգնել, այժմ յանկարծ ուզում է օգնել:

Պատճառը այն է, որ ես իննդրեցի, որ նա տեսաւ, թէ ես ինչպէս, ինքս զրկուած լինելով իմ հօրեղօրից, ներողամիտ եմ դէպի նա:

—Ցետո՞յ:

—Ցետոյ, ինչ յետոյ, մարդ է, սիրո ունէ, զփաց մարդու նեղ դրութիւնը և ուզում է օգնել իմ խաթրու:

—Քո խաթրու, —կրկնեց Մարիամը:

—Այս:

—Ուուրէն, լաւ բան է մի մարդու համոզել միւսին օգնելու, մանաւանդ, երբ այդ միւսը մեր մօտիկ ազգական է: Բաց դու ինչ կարող ես տալ նրա լաւութեան փոխարէնք, նա քեզ վրայ բարոյական պարագ է դնում:

—Ես սխալվեցի. նա ինքն էլ հէնց ուզում էր օգնել, ինչ միթէ դու չես հստատում մարդկանց: Իրաւունք ունես... Բաց համբերիր, սիրելիս, այդպէս շուտ մի հիասժափիլ, աշխարհը միայն վատ մարդկանցով չէ լցրած...

Նա լրեց, դիտամբ, խակոյն զգալով, որ կարող է Մարիամին յիշեցնել Մելիք—Քարսեղեանի վարժունքը: Բաց այդ մի քանի խօսքերն ևս բաւական էին Մարիամը սրտի ամենանուրի, ամենացաւագար թելերը շարժելու համար: Անփորձ երիտասարդ, նա այնքան յաւ էր տրամադրված, որ պատրաստ էր պաշտպանել ամենին, նոյն խոկ իւր կատաղի թշնամուն: —Պաշտպանել լոկ մարդասիրութիւնից դրիւռած, առանց որոշ նպատակի, լոկ լուպէի աղղեցութեան տակ:

Այն ինչ՝ բնազդումը ասում էր Մարիամին, որ Հալաբեանի վարմունքը առանց նպատակի չէ: Թէ ինչ էր այդ նպատակը, նաև պարզ չը դիտէր, կամ գուցէ չէր ուզում գիտենալ:

Կրկին Մելիք-Բարսեղեանը գրաւեց նրա ուղենուու սիրտը, կրկին բուռն զօրովթեամբ վարթնեց, նրա դառն, անսամոքելի վեշտը: Ինչու իսուր պիտի ինքն իրան խարի, ինչու, քանի, որ սիրտն ասում է, թէ նա գժբազդ է, թէ նա մոռացված է, արհամարհուած, թէ այս ըստ պիտի վերականգնի նրա խորտակված երջանկութիւնը, որ այնքան կարճ տևեց: — Կարճ, որպէս մի անցողիկ երազ, որպէս մի քաղցր, թուուցիկ ցնորք...

Զգացուն, նրբացած, հիւանդութեան ասուինանին հասած սիրտը անհուն դառնութեամբ լեցուն, օրիորդը այդ գիշեր երկար ժամանակ անքրուն պտտում էր անկողնի մէջ: Մերթ նա ձգտում էր ինքն իրան խաբել տկար ցոյսերով, ստեղծում էր անթիւ պատճառներ բժշկի ստոնութիւնը նպատաւոր կերպով բացատրելու համար: Մերթ ինքն այդ պատճառները երեակացական, նոյն իսկ անբնական համարելով հերքում էր, իւր թեթեամառութեան գլում վըրդովութիւն:

սրտի անողոք ձայնին, աշխատում էր հեռու վանել այն չարագուշակ պատկերը, որ համաձում էր նրան գիշեր ուցերէկ, որ պատրագմ էր նրա երեակացութիւնը: Ահա նա, այդ պատկերը, որ հետեւում է նրան ամեն տեղ, ամեն ըոսէ, քայլ առ քայլ: Նա շրջում է, խօսում է, նրա շնչառութեամբ է լի այդ ննջարանը, նրա ուին է տիրում այստեղ, այդ սենեակում: Մարիամբ զգում է այդ սառն, անմաշչելի, մի և նոյն ժամանակ, կաշկանդող պատկերի անխուսափելի ոյժը:

Ինչու չի հեռանում նրա աչքից, եթէ չի կամենում մօտենալ, ինչու այնպէս կեղեքում է նրա սիրտը: Պէտք է մոռացութեան տալ, պէտք է աչք փակել նրան ըստ տեսնելու, ականջ փակել նրան ըստ լսելու համար, այսո, փակել բոլոր զգացարանները:

Նա փորձեց գրգուել իւր մէջ մի խորին, մի կծու աս ելութիւն և այդ ատելութիւնը, իբրև գէնք, գործ ածել այն անգութ պատկերի դէմ: Սակայն ինչպէս ցղացնել այդ ատելութիւնը: Նրա սիրտը չի հպատակիում խելքին: Նա տրկար է, տնզօր, ճնշուած մի բոլորովին հակառակ զգացմունքով: Ի՞նչ է այդ: Գուցէ այդ նոյն ինքը ատելութիւնն է, որ աւելի բորբո-

քում է նրա վարդուն հոգին, միայն այլ
կերպ, այլ ուղղութեամբ։ Են ժամանակ ուր է
սիրոց և ատելութեան նէջ այն անդունդը։

Ատել և սիրել, չը կամենալ և ձգտել, փախ-
չել և մղուել—ահա սոսկալի դրութիւն։

«Տէր Աստուած, Տէր Աստուած, տուր ինձ
սառնասրութիւն, տուր ինձ համբերութիւն»...
ու առաջաման յս շատուան սարս է մի յո
ւ այն պատճեննա մասս յս և նուր զաւու
տախան վեճբառար բուժածաթ քամանան մշու

— պից վեճիս ով մեջ առանած ոչ առած
մեջ արմի սկզբան այն յանձնան ենթանայ
լրաս և առ ենթանան և զայթ պարխ առ
ու որմնան ոչ մաս յմանի գաւ և զայթ
ար յուս գանձ այն ոչ մաս յմանի զայթ
պարմանքարար պարչ ընդ
մեջիստ մն զմ դի յմարը յմանքան առ
այրի զմ ով ենթանա ըստ և մատելու առ այն
ու է բարիս մաս յման ծուր, զմ ար
պարմանքան յուս յմանքար սկզբան մայթան
ըստ առ մեջիստ ենթանքար ոչ պայտ առ
այստ մեջիստ մն ծուրան պարմ և զայթ
յուս յմար ըստ և յան պարմանքար յման
պարմ պարմ ով և մն ով ով ով յման յուն

զմացչար և յանքի մունական, ով առնեն մայթան
մունք և ենթանան զայթ ով ով մայթան
մունք ով ով մուր Խնարան ու առ ենթան
առ ով ով մունք և առնեն առնեն մունք

Առաւոտեան Մարիամը գարթնեց սովորակա-
նից ու Նա առելի գունագել էր, նրա աչքերի
տակը մի քիչ կապտած էին, կոպերը ուռած։

— Ուշ ես քնել գիշերը, — հարցրեց Թուրէնը,

— Եցու, առարգու ւայ ով ով նուռասուս մունքը

— Կնշու, առնենք ով ով ով ով ով ով ով

— Կարդում էիս ուսուս ով ով ով ով ով ով

Թուրէնը զգաց, որ Մարիամը ստում է, որ
նա գիշերը անքուն է անցկացրել, և գիտէր,
որ աց առաջին անքնութիւնը չէր, Ի՞նչ ա-
նէր, ինչով ամոքէր նրա վիրաւորիած սիրար,
Խօսել Մելիք-Բարսեղեանի հետ, բացարու-
թիւն պահանջել, Բաց արգեօք, Մարիամը կը
տայ նրան իրաւունք աց մասին որ և է խօսք
բանալու բժշկի հետ, Ոչ երբէք, նրա խորին
ինքնասիրութիւնը բնաւ չի թող տալ այս

Սիրոց փորձութիւնները տակաւին չը ճաշա-
կած երիտասարդը, Հարկաւ, չէր կարող լիովին
կշռել յագուրդ ըստացած սրտի գառնութեան
չափը, Բաց նա սիրում էր Մարիամին եղաւ-

րական անձնուէր, անսահման սիրով, և ացոքանը բբաւական էր, որ քրոջ ամենաթե՛թն. վիշտն անդս մ սուր արծագանք գտնէր նրա դդալուն սրտում:

«Ե՞նչ անեմ, ի՞նչ անեմ», —կրկնում էր նա մտքում ամեն անդամ, լսելով քրոջ լոռու ծանր և սիրտ թափանցող հառաջանքները:

Եցն ինչ՝ որ օրի վրայ էր անցնում, Մելիք-Բարեւեխանը դարձեալ չէր երևում, Պոտքէնը երբեմն պատահում էր նրան փողոցում, բարեւում էր և անցնում: Նա չէր կամենում սօտենալ բժշկին, գիտէր, որ սառնարիւն չէ կարող նրա հետ խօսել, գիտէր, որ Վաճաց թէ ակամաց պէտք է արտայացտի նրան չօտուիր սրակ ատելութիւնը: —Մի բան, որ նա սոսկաւ ինչ էր ուզում ցոյց տալ:

Իոկ Մարիամը, որքան ու զում էր չը մտածէլ, որքան սպում էր իւր վիշտը, եթէ ոչ մուանալ, գէթ փոքր ինչ մեղմացնել տնային կործւրով և կարուծեի պարապմունքով, այնքան աւելի յամառութեամբ էին հալածում նրան անցեալ երջանկութեան ցիշաստակները:

— Հոգեակս, դու հիւանդ ես, — հարցրեց մի անգամ կարուծեի վարժուչին, որ վաղուց արդէն նկատել էր իւր ընկերուհու խորին թալսիցը:

— Ինչից ես և գրակացնում, որ հիւանդ եմ:

— Նրանից, որ գոր ուշագրութիւնով չես աշխատում, որ ես քեզ բան եմ բացատրում, չես լսում, միշտ միտքդ ուրիշ տեղ է, Այս, դու հիւանդ ես, բայց ըլ գիտեմ ինչ է հիւանդութիւնդ:

Մարիամի կրծքից ակամաց մի հառաջանը դուքս թւաւ և նա վլուսը թեքեց կրծքին տիւու ու սրտում:

— Ես տես նում եմ, ոպիս, որ գու մի վիշտ ունես, — լսուեց զարձեալ վարժուհին և, ձեռք վնելով նրա ուսի վրայ շարունակեց: — ամօթիք, որ ինձանից թագցնում ես: Պուտացել ես մեր ընկերական սէրբ: Ասա, հոգիս, պատմիր, ով դիտէ, կարելի է, մի բանով կարող եմ օգնել քեզ: Ի՞նչ դու, կարենս, ուզում ես արտապել, Համ, այժմ համոված եմ, որ քո վիշտ ակրատութեանը չէ, մինչև որ ըլ պատմես, ձեռք ձեմ քաշի ընկանից: Մարօ, սիրելի Մարօ, յատնիր սրակուց ցաւը քեզ վիրոյ ընկերուհուդ: Եւս, այդ Ժելաւ, դու փոխանակ լսուելու, լսոց ես վինում...

Եւ իրաւ, Մարիամը ըլ կարուցաւզապելի վկր արտասուրքը: Ընկերուհու անկեղծ կարեկցութիւնը շարժեց նրա սիրութ: Նա, զգացված,

ձեռները փաթաթեց վարժուհու պարանոցին, զլումը դրեց նրա ուսի վրայ և սկսեց հեկեկալ: Անցան առաջին վայրկեանները, նրա սիրտը փոքր ինչ հանդարտվեց: Նա արտասուքը որբեց, նայեց ընկերուհու աչքերին և ազ ևս ըլ կարողացաւ թագնել այն, ինչոր վաղուց մի հոգեկան պահանջ էր զգում պատմելու մի օրտերիմ կնոջ, և ինչ-որ ինքնասիրութիւնը մինչև այդ րոպէ չէր թողնում պատմելու: Ոչ մի խօսքով, ոչ մի թոյլ ակնարկով նա գժողութիւն ըլ յացնեց Մելիք-հարսեղեանի դէմ: Նա բորոր մեղադրանքը բարդեց իւր վրայ, որ այնպէս մոռացաւ ինքն իրան, որ այնպէս յափշտակեց, և ահա այսօր այդքան տանչփում է:

—Գիտես ինչ, սիրելիս, —ասաց վարժուհին խորին կարեկցութեամբ, լսելով ընկերուհու համառօտ պատմութիւնը, ես ինքս թէ չեմ սիրահարվել մինչև օրս, բայց զգում եմ քո դրութիւնդ:

—Երանի քեզ, երանի, որ չես սիրահարվել, —զուեց Մարիամը դողդոչուն ձայնով, —ախ, որքան նախանձում եմ քեզ:

—Նու, նախանձելու բան, ասենք, չը կայ. ով էր ինձ սիրողը, որ ես էլ նրան սիրէլ: Իս տվեղութիւնը ինձ ազատ է պահում այդ տիսակ փորձանքներից:

Գերջին խօսքը արտասանելիս վարժուհին, զսպելով իւր հառաջանքը, ծիծաղեց, իւր ընկերուհուն զուարձայնելու համար, Խսկապէս նա արդարացի չէր իւր վերաբերմամբ, նա այնքանեւ տգեղ չէր, որքան վատաբանում էր ինքն իրան: Հասակով Մարիամից քիչ ցածր, գէմքով գուցէ աւելի գեղեցիկ էր, եթէ անգութ ծաղկը տասր տարի առաջ այս գեղեցկութիւնը յափշտեան արատաւորած չը լինէր իւր խոշոր հետքերով:

—Հանգստացիիր, սիրելիս, —միսիթարում էր նա Մարիամին մայրական քնքութեամբ: —Պառաւների խօսքով ասած, գրողը տանի այդ տղամարդներին: Արժէ նրանց համար այդպէս տանջվել, այն էլ քեզ նման սիրուն աղջկան: Ում վրաց ուշադրութիւն դարձնես, որ քեզ համար չի գժվի: Եթէ ինձ հարցնես, ես կ'ասեմ թող խակի ոչ ոք էլ չը սիրե քեզ: Ձես կարող առանց տղամարդի ապել: Սստուած վկայ, կարող ես: Ինչու ես ապրում եմ, և վճռել եմ ապրել մինչև մահ: Գիտես ինչիցն է, որ գու այդքան տանջվում ես. որովհետև վրաղմունք չես ունեցել մինչև օրը: Հապա, ինձ նման սիրիր աշխատանքը, տես կը մոռանաս, թէ չէ:

—Սովորցրու ինձ, սովորցրու մոռանալ, Սա-

թինիկ, և ես կը մոռանամ, —արտասահնեց Պարիամը յաւզված, նայելով լիներուհու աչքերին և նախանձելով նրանց մէջ վազող հոգեկան միսիթարիի անդորրութեանը:

—Աչքիս վրայ, բարեհաճիր նստել բանիդ: Պարօ, հաւատացիր, աշխատանքից աւելի սիրելի բան չը կայ, մանաւանդ երբ տեսնում ես աշխատանքիդ պատուները: Տես, այդ կոպտացած մատներս իմ սրտի ամենամեծ մսիթարիներն են: Արի վաղը առաւտեան ինձ մօտ, տանեմ քեզ իմ ուսումնարան, դու կը տեսնես այնտեղ իմ խօսքերի ճշմարտութիւնը: Տես, այնտեղ իմ փոքրիկ աշակերտուհիները ինչպէս են բանում, ինչպէս են աշխատում: Անկեղծ եմ ասում, երբ նացում եմ նրանց, երբ տեսնում եմ, թէ ինչպէս նրանց փոքրիկ ճեռները օրից օր աւելի ու աւելի վարժվում են, մի հապարտութիւն եմ զգում, եռանդս աւելանում է: «Ահա իմ աշխատանքի պատուղը, ասում եմ ինքս ինձ, այդ աղջիկները, այդ աղքատ ընտանիքների զաւակները արհեստ են սովորում ինձանից: Նրանցից ամեն մէկը ժամանակին կարող է իւր զլուկը պահե, ով զիտէ, ծնողներին էլ պահել իւր ձեռքի աշխատանքով, ինչպէս ես այժմ պահում եմ ինձ և

երկու փոքրիկ քոյցերիս»: Պարօ, երկու տարի շարունակ արտասահմանում ես լսել եմ ին ուսուցիչներից: «Սիրիր աշխատանքը, արիթիր, և դու միշտ բաղդաւոր կը լինես: Այժմ տեսնում եմ, թէ որքան ճշմարիտ էին այդ խօսքերը: Այս, աշխատանքը կարող է մարդուն բաղդաւորացնել,

—Երանի թէ ես էլ քո հանապարհով զնացած լինէի, —ասայ Պարիամը, հառաջելով: Դու քո բաղդդ խելքով ապահովեցիր, ես իմը թողի սրտիս կամքին:

—Զէիր կարող ուրիշ կերպ անել, հոգիս իմ ճանապարհով զնալու համար հարկաւոր էր, որ դու ոչ գեղեցիկ լինէիր, ոչ հարուստ: Հարըստութիւնը և գեղեցկութիւնը ծուրացնում են մարդուն: Ցիշում ես, ինչպէս ես յաւեցի, ինչքան հառաջեցի առաջին անգամ, երբ լսեցի, որ քեզ զրկել են ժառանգութիւնից: Ես ցաւում էի անկեղծ, որովհետեւ կարծում էի, որ հարստութիւնը քեզ համար կենաք է դարձել, որ առանց նրան դու դժբաղդ ես: Բայց երբ դու հաստատ մտքով ինձ ասացիր, թէ ուղղում ես հասարակ արհեստուր գառնալ, ուրախացայ: Ես տեսաց, որ հարըստութիւնը քեզ չի փշացրել, Այժմ ես ուրախ եմ, որ դու զրկվել ես քո օժիտից, բայց Աստուած

ոչ անի զրկուիս քո միւս օժիտից պեղեցկութիւնից. Պահպանիր գեղեցկութիւնս, պահպանիր և օրինակ դարձիր ուրիշների համար, թէ դեղեցիկ կինն էլ պէտք է աշխատի, թէ կնոջ զարդը միայն գեղեցկութիւնը չէ, ինչպէս կարծում են թեթևամիտ մարդիկ: Գիտես, ինձ շատերն են ասել, թէ եթէ ես տգեղ չը լինէի, արհեստ չէի սովորել, կը մտածէի միայն մարդու գնալու մասին: Զը գիտեմ, բայց կարծում եմ, որ մխալվում են:

Եցստեղ Սաթինիկը լրեց և խաղաղ ժպտաց Մարիամի երեսին: Եւ նրա ժպիտը արտայացած մի տեսակ մեշամաղճութիւն: արդէօք դա նրա անվերադարձնելի կերպով կորցրած գեղեցկութեան ցիշտառակը չէր: Արագութեամբ ցետ դարձնելով իւր խոհուն ճակատի վրաց սփոռուած սե և գանգուռ ծազերը, վարժուհին, կարծես, ազդպիսով վանեց իւր թափնիծը և աւելի ոգեսորդած շարունակեց գովել աշխատանքը:

Մարիամը լրտմ էր նրան սիրով և հաճութեամբ, նրա իւրաքանչիւր խօսքի մէջ որոնելով մի մի սփոքանք իւր գշտացած սրտի համար:

Նա տուն վերադարձաւ այդ օրը սովորականից ուշ: Երկար ժամանակ Սաթինիկի խօս-

քերը հնչուած էին նրա ականջուած: Սակայն վրայ հասաւ երեկոյեան խաւարը, և նա կրկին անձնատուր եղաւիւր սովորական անշաղթելի վշտերին: Արդէն հոկտեմբերից վերջն էր, աշնան խոնաւութիւնը տեղի էր տալիս մօտալուտ ձմեռուայ ցրտերին:

Ուուրէնի համար աւելի ու աւելի զգալի էր դառնուում նիւթական սակասութիւնը: Հարկաւոր էին մի քանի նախապատրաստութիւններ ձմեռուաց համար, իսկ ամսական ոռոճիկը նըրանց առօրեաց պիտոյքներն անգամ չէր լրացնում: Ուուրէնը մասնաւոր դասեր էր օրոնում, բայց անաջող, տարուաց միջոցը անշարժար էր, ամենքը խոստանում էին ամառուաց սկզբին: Եւ մի կողմից նիւթականը, միւս կողմից ըրոջ բարոյական դրութիւնը, օրից օր կրկնասատիկում էին երկտասարդի հոգացողութիւնը: Նա տեսնում էր, որ ացդպէս թողնել Մարիամին չի կարելի, որ մի կերպ պէտք է վերջ գնել նրա վշտին:

— Մարօ, — ասաց նա մի օր ճաշից ցետոց, — արի այս երեկոյ թատրոն գնանք:

Մարիամը նախ զարմացաւ, ասա, նայելով եղբօր աչքերին, գուշակեց նրա միտքը և կատակի ձեռով պատասխանեց:

— Գնանք, երեխ փող շատ ունես գրպանումք։
— Ունեմ, ունեմ, այսօր ոռօճիկս ստացել եմ։
Այսուհետեւ աւելի կունենամ, լսոստացել են
դասերս աւելացնել, բացի դրանից, անպատ-
ճառ մասնաւոր դասեր էլ կը գտնեմ։ Ճրտով
շուտով մենք կ'ապահովուենք նիւթապէս, —
աւելացրեց նա շինծու ոգեսորութեամբ։

— Լաւ, երբ կը հարստանաս, այն ժամանակ
զուարձութեան մասին էլ կը մտածենք։ Իսկ
այժմ իրաւունք չունենք։

— Թրաւունք, — գոջեց Թուբէնը, — մի է այդ
իրաւունքը մեզանից լսում Մարօ, լմնդրում
եմ, աշխարհից բորբովին մի կտրվիլ։ Լաւ չէ,
քեզ համար մի քիչ զուարձութիւն անհրաժեշտ
է։ Նայիր հայելիի մէջ, տանը փակված մնալով,
տես ինչպէս փոխվել ես։

Եւ նա շարունակեց համոզել։ Ըստացութիւն
չէ ամսական գոնե մի երկու անդամ մի տեղ
դնալլ։ Որ աշխատում է, նա իրաւունք ունե
և՝ զուարձանալու։ Ինչու փախչել համարակու-
թիւնից։ — Նրա համար, որ առաջ հարուստ էին
համարլում, այժմ աղքանաւեն։

— Եթէ, այդ է պատճառը, նախապաշարմունք
է, սիրելի Մարօ։ Աղքատութիւնը ամօթ բան
չէ, ամօթ է աղքատութիւնից ամաչելը։ Ոչոք

իրաւունք չունի մեզ ծաղրելու։ Իսկ եթէ ծաղ-
րողներ լինեն, միթէ չեմ կարող ացդպիսինե-
րին արհամարհել։

Նա շատ լաւ զիտէր, որ Մարիամի հասարա-
կութիւնից փախուստ տալու պատճառը աղքա-
տութեան զգացումը չէ, բայց շեշտելով այդ
հանգամանքը, կամենում էր կպչել նրա ինք-
նասիրութեանը։ Գիտէր, որ միայն ացդպիսով
կարող է համոզել քրոջը։

— Ես ոչ ոքից չեմ քաշվում մեր աղքատու-
թեան պատճառով, — պատասխանեց Մարիամը
զգացված, — լսնդրում եմ այդ մասին այսուհե-
տեւ էլ ըլ լսուես։

— Որ այդպէս է, թատրոն չենք դնալ, այլ
մի ուրիշ տեղ։ Վաղը երեկոյեան հայոց բան
է։ Ես շատ եմ ցանկանում մի անգամ մի տեղ
տեսնել այստեղի հասարակութեանը։ Գնանք
վաղը միասին։

Մարիամը զլուխ թեքեց կրծքին։ Նրա յօն-
քերը սեղմուեցին, ճակատը դարձեալ պատեց
տիրութեան քողով։ Յիշեց նա, որ այդ երե-
կոյթի կարգադրիչը նատալիան է լինելու։
Գնալ այնտեղ, ուր այդ զոռող արարածը, նրա
անհաշտ հակառակորդը, իւր փքված մօր հետ
պիտի փացեն։ — ոչ, ոչ, նա չի կարող։ Սակայն

նոյն վայրկեանին նրա զլիսում զարթնեց մի այլ
միտք, — Անշուշտ Մելիք-Քարսեղեանը այնտեղ
կը լինի, անշուշտ նա չի արհամարհիլ մի այդպիսի
հանդիսաւոր երեկոյից: Քնչ կանի բժիշկը այդ
երեկոյ, ում հետ կը խօսի, ում հետ կը զրօնի,
կամ գործէ կը պարի: Ես զգում էր նա,
որ չէ կարողանում դիմանալ իւր սրտի ձգտմա-
նը, որ, հակառակ իւր կամքի, հիւանդուն հե-
տաքրքրութիւնը մղում է նրան դէպի այն-
տեղ ուր պէտք է լինէր բժիշկը: Այս, պէտք
է դնալ պէտք է տեսնել նրան: Եզդ երեկոյ
վերջնապէս կը վճռուի նրա բաղդի ինդիրը:
Հասարակութեան մէջ մի թեթև վարծունք,
մի որոշ շարժմունք անգամ կարող է դրակա-
նապէտ պարզել բժշկի հոգին: Այսն ժամանակի
կը համար կը համուի կը համուի կը համուի
կը հանդստանամ, վճռեց Մարիամը:

Հետևեալ օրը դարձեալ տօն էր, Թուրէնը
օգնում էր Մարիամին տնային գործելում, երբ
պատշգամբի վրայ յանկարծ երեցաւ Հալա-
բեանը: Թուրէնը չը զարմացաւ, բայց փոքր
ինչ շփոթվեց: Ես դուրս շտապեց հիւրին դի-
մաւորելու և յարգանքով հրաւիրեց ներս:
— Ես եկել եմ յայտնելու, որ ձեր հօրելիոր
դորթերը յաջող են գնում, — ասաց ամութին,

միանգամայն սպանիկերաբար թօթվելով: Երիտա-
սարդի ձեռը: այս միայնամաս է յման եղան ում
— Եւ, ի հարկէ անձերա շնորհով, — աւելացրեց
Թուրէնը, հրաւիրելով նրան նստել, — թոյլ
տուէքը կրիկն անգամ յայտնել շնորհակարու-
թիւնն: անձնման սպան անոնց ընտառ

— Ես երաշխաւոր եղայ, նրա երկուրվեքնել-
ները փոխեցին մէկը վեց հազարի, միւսը ութ
հազարի, շարունակեց Հալաբեանը միամուն-
ձին ինքնագուռվելեամբ: — Եղուց էլ մի քիչ
փող կը գտնեն, կը տամ, յետոյ էլ վախենայաւ
բան չը կաց, ձեր հօրելիքաբը կ'ազատվի ան-
պատութիւնից: Թող նա գայ, ձերանոտները
համբուրի, գուլք էք նրան ազատողի:
Արտասանելով այս խօսքերը միւս ամենեա-
կում լսելու չափ բարձր ձայնով, Հալաբեանը
նայում էր աջ ու ձախ: Պարզ էր, որ նա Մա-
րիամին էր սպասում:

Դարձեալ Թուրէնը ոգեստրվեց, դարձեալ Հա-
լաբեանը նրա առաջ պատկերացաւ իրեւ մի
ազնիւ, բարեսիրտ մարդ, իւր տեսակի մի աս-
պետ: Մարդուն նա մինչև անգամ մեղադրեց
Մարիամին, որ այնքան ուշանում էր մի այդ-
պիսի հիւրին ներկայանալու: Թուրէնը նրան,
թէ ամենաչնչին մի անուշադրութիւն չը պէտք

Է թոյ տալ այդ մարդու վերաբերմամբ, թէ նա արժանի է ամենախորին յարգանքի, թէ վերին աստիճանի՝ անքաղաքավարութիւն կը լինի չը յարգել նրան, մի այդպիսի հազուագիւտ մարդու։ Աչա ինչու նա չը կարողացաւ զսպել իրան, անցաւ միւս սենեալ և Մարիամին խնդրեց շուտով դուրս գալ։

— Ես չեմ կարող նրան երևալ, — հակառակեց Մարիամը, — դու զբաղեցրու, ես դործ ունեմ։

— Անկարելի է, նա կը կարծի, որ չես ուզում նրա երեսը տեսնել, ամօթ է, Մարօ, նա մեր հօրեղբօրը ազատել է խայտառակութիւնից, հասկանեմ ես։

Մարիամը ակամայ հնազանդվեց եղբօր թախանձանքին. ակամայ, որովհետեւ այլ ևս կասկած չունէր, որ Հալաբեանի ացցելութիւնը աննպատակ չէ։ Նա փոխեց իւր վերնազգեստը և դուրս եկաւ։

Վայրենաբար ամուրիի հոգեկան տրամադրութիւնը փոխվեց։ Նա հազիւ կարողացաւ զսպել իւր ուրախութիւնը, շտապեց առաջ և, յարգանքով սեղմելով օրիորդի ձեռը, արտասանեց։

— Յուտով եմ, որ իմ ացցելութիւնը յանդգնութիւն չէք համարիլ, մեր վաղուցվայ ծառօթութիւնը ինձ իրաւունք տուեց, Առնդջ էք։

Մարիամը զրուխը թեթև խոնարհեցրեց և նստեց սենեակի մի անկիւնում։

— Եկել եմ ձեր եղբօրը յանդիմանելու, — շարունակեց Հալաբեանը, — ամեն օր տանս առաջով անցնում է, գոնէ երկու օրը մի անգամ էլ չի մտնում։ Ջատ ցաւում եմ, որ բարեկամութիւնը որդուց որդի ժաւանգաբար չի անցնում, — դարձաւ նա Ուուբէնին, — եթէ իմանացիք ձեր հայրը ինչքան էր սիրում ինձ, այդպէս չէք վարվիլ ինձ հետ։ Հանդուցեալը մի օր ինձ չը տեսնելիս, տիրում էր։ Միշտ ինձ ասում էր «Ես քեզ սիրում եմ որդուս պէս, որովհետեւ քո հանդուցեալ հայրդ ինձ սիրել է իւր որդու պէս։» Այս, Գրիգորի Միքոնովիլ, ես երբէք չեմ մոռանալ քեզ։

Եւ նա վերջին խօսքերը մի այնպիսի զգացված ձայնով և խորհրդաւոր եղանակով արտասանեց, որ կարելի էր կարծել, թէ իւր հարագատ հօր մասին է խօսում։

Հօր ցիշատակը դուրս հանեց Մարիամի կրծքի խորքից մի հառաջանք, որ նա, սակայն, շտապեց զսպել։

Հալաբեանը շարունակեց իւր խօսքը և հետպէտէ մէկից միւսին անցնելով, սկսեց խօսել իւր մասին։ Նա դանդատվեց, որ իւր օրերը

տիտուր են անցնում: Կեանքը առհասարակ ձանձրալի բան է: Նա բաւական զգուել է հասարակութիւնից, չփիտէ ինչպէս հեռու ապրել նրանից:

Յետույ նա շատ անփոյթ կերպով ակնարկեց իւր հասարակական դիրքը, իւր հարստութիւնը, այն յարգանքը, որ վայելում է գանազան շըրջաններում: Եւ այս բոլորը նա իւր խօսակցութեան մէջ անցկացրեց մի այնպիսի վարպետութեամբ, օրինակներով և փաստերով, որ թուում էր, թէ խօսում է լոկ խօսելու համար և ոչ մի ուրիշ նպատակով:

Փանի մի րոպէ Մարիամի կասկածը մեղմացաւ, տեսնելով, որ Հալաբեանը խօսելիս աւելի Թուբէնին է դառնում, քան իրան: Նա ըս գիտէր, որ այդ մի տեսակ քաղաքականութիւն է ամուրի կողմից: Նա յիմարութիւն համարեց իւր երկիւղը մի մարդուց, որ բացի բարեսիրտ և քաղաքավարի լինելուց, առ այժմ ոչինչ չէ ցոյց տալիս: Նա մինչեւ անգամ ինքը մկնեց խօսել Հալաբեանի հետ: Թուբէնը հաղորդել էր նրան մօսիօ Վախիվախեանի պատմած անցքը իշխան: Սահարունիի մասին:

Էէէ ոչինչ բան է, — պատասխանեց Հալաբեանը օրիօրդի հարցին, — իշխանը մի փոքրիկ

վէճ է ունեցել ձեր հօրեղբօր պարտատէրներից մէկի հետ, ուրիշ ոչինչ: Անտանելի էր Հալաբեանի համար խօսել այն բանների մասին, որ չէին բղխում նրա սրտից, որ չէին համապատասխանում նրա այժմեան զգայնունքներին: Խօս երկար թագցնել չէ կարելի, խօս, վերջապէս պէտք է պարզուի նրա միտքը: Բացց ինչպէս պարզել գիմել ուղղակի Մարիամին: — Ոչ, ոչ, այդ անկարելի է: Եւ Հալաբեանը զգում էր, որ երբէք այդչափ քաջութիւն չի ունենալ: Թիմել Թուբէնին: — Այդ աւելի դիւրին է: Նա բարեսիրտ երիտասարդ է, խելօք է, ժամանակակից, ազատամիտ: Նա է Մարիամի միակ մեծը և պաշտպանը, և նրա հետ կարելի է պարզ սրտով խօսել:

Մինչ նրա ուղեղը զբաղված էր այս խորհրդածութիւններով, լեզուն խօսում էր այլ բանների մասին, ժամանակը անցնում էր: Նա չէր կամենում ձանձրացնել Մարիամին, պէտք էր հրաժեշտ տալ, և նա ոտքի կանգնեց: — Ես միշտ տանն եմ լինում, որ ժամին էլ գաք, ուրախ կը լինեմ, — ասաց նա, կրկնել կրկին խնդրելով Թուբէնին այցելել իրան:

Նախ քան դուրս գալը, նա մի հայեացք ձղուց իւր շուրջը: Մինչև այդ րոպէ նա լաւ

ուշադրութիւն չէր դարձրել աղքատիկ բնակարանի անշուք կահ-կարասիի վրայ։ Անսովոր չքաւորութիւնը տարօրինակ աղղեցութիւն գործեց նրա վրայ։ Նա և՛ ուրախ էր, և՛ խրդառամ էր Թուբէնին ու Վարիամին։ Այս, որպիսի հաճութեամբ նա կ'օգնէր, եթէ իմանար, թէ չի վիրաւորի նրանց ինքնասիրութիւնը։ Նա չէր ուզում դուրս գալ, նա կամենում էր որ և է կերպով առաջարկել իւր օգնութիւնը Թուբէնին։ Յանկարծ մի միտք լուսաւորեց նրա ուղեղը, Մարիամը արդէն անցել էր իւր սենեակը բոսկէն յարմար էր։

— Դուք ժամանակ ունէք մասնաւոր դասիրով պարապիւու, — հարցրեց նա Թուբէնից։

— Ինչու չէ։

— Ես մի քրոջ որդի ունեմ, գիմնազիայի հինգերորդ դասատան աշակերտ է։ Դուք, երևի, նրա մեծ եղբայրներին ճանաչում էք. Անկարդ տղերք են, ես գիտեմ, որ դուք նրանց չէք հաւանիլ Բայց այդ մէկը, ամենից փոքրը, խելօք տղայ է, ես միայն նրան եմ սիրում, ուզում եմ, որ միւս եղբայրների նման կիսատպուատ ուսում չ'առնի, կը համաձայնէք դասեր տալ նրան մինչեւ հարցաքննութիւնների ժամանակ։

Թուբէնը հաճութեամբ յայտնեց իւր պատրաստականութիւնը։

Նա ուրախացաւ, որ մի բանով կարող է իւր հօրեղբօր օգնողի բարութեան փոխարէնը մասամբ հատուցանել։

— Երբ որ հրամայէք, պատրաստ եմ։

— Թէ ժամանակ ունէք, հէնց էգուցվանից սկսեցէք։ Գիտէք, ես ուզում եմ նրան միւս եղբայրներից հեռացնել։ Նրան կը բերեմ իմ տուն, դուք էլ տանս կը պարապէք նրա հետ։ Պայմանների մասին չեմ խօսում, որքան կամենաք...»

— Առանց որևէ է պայմանի, պարոն հալբերան, — ընդհատեց Ռուբէնը։ — Դուք իմ հօրեղբօր օգնելիս, պայման չ'առաջարկեցիք։

— Լաւ, լաւ, էգուց եկէք, կը խօսենք, — շտապեց աւելացնել հալաբեանը, վախենալով, որ մի դուցէ Թուբէնը բոլորովին հրաժարվի։

Ամուրին հեռացաւ մի փոքր թեթեացած սրտով։ Ախորժելի էր նրա համար ամեն կերպ պարտաւորեցնել Թուբէնին և ացպիսով մասամբ բարոյապէս կաշկանդել նրան։

— Լսեցիր, Վարօ, դարձաւ Թուբէնը Վարիամին, Հալաբեանին ճանապարհ գնելուց յետոց, մտնելով քրոջ սենեակը, — նա ինձ խընդըեց, որ իւր քրոջ որդու հետ պարապեմ։ Ու-

րեմնես մի փոքրիկ բանով պարտքս կը թե-
թեացնեմ, այնպէս որ...

— Որուբէն, — ընդհատեց Մարիամը եղբօր
խօսքը, — այդ պարոն հալաբեանը շատ լաւ
մարդ է, բարի է, բաց...

— Բաց:

— Ես չեմ ուզում, որ նա մեզ ացելէ:

— Պատճառը:

— Հէնց այնպէս, չեմ ուզում:

— Ասա, Մարօ, առանց պատճառի չի լինիլ,
ասա, եթէ մի բան կայ:

— Ի՞նչ կատ կայ մեր և նրա մէջ, ասս խնդրեմ.
Նա հարուստ է, մենք աղքատ:

— Նա հարուստ է, մենք աղքատ — յետոց,
այդ է բոլորը:

— Ես կարծում եմ այսքանն էլ բաւական է,
որ մասցեալը դու հասկանաս: Ուրիշ ասելիք
չունեմ:

Արտասանելով վերջին խօսքը, Մարիամը
հանդարտ վերկացաւ տեղից ու գուրս գնաց:
Որուբէնը զարմացած նայեց նրա ետևից, մի
քանի վայրկեան մտածողովեան մէջ ընկաւ:
Առաջին անգամ նրա սրտում ծագեց մի թոյլ
կասկած հալաբեանի մասին:
«Քոյրս ճշմարիտն է ասում, — խօսեց նա

մտքում, — մեր և այդ հարուստ հալաբեանի
մէջ ինչ կապ կարող է լինել, ինչ կապ... չի
որ նա իմ հօր բարեկամն է, Յետք Ոչ, Մարօն
ճշմարիտն է ասում: Միթէ ես այդքան պար-
զամիտ եմ, Միթէ հալաբեանի բարեկամովթիւ-
նը մի ուրիշ նպատակ ունէ: Ահա հէնց այդ-
բանը պէտք է իմանալ»...

Եւ ամբողջ օրը նա քրոջ խօսքերի ազդեցու-
թեան տակ էր: Որքան նա թախանձեց, որ-
քան ստիպեց, Մարիամը այլ ևս ոչինչ ըլ խօ-
սեց այդ մասին; և միայն կրկնում էր.

— Ինքդ մտածիր:

— Հասկանում եմ, — ասաց, վերջապէս, Որու-
բէնը, — այդպիսի մի մարդ, ինչպիսին հալա-
բեանն է, եթէ մի նպատակ ունէ մեր վերա-
բերմամբ, այդ նպատակը ուրիշ ոչինչ չէ կարող
լինել, եթէ ոչ... Նա ամուրի է և գուցէ... Բաց,
Մարօ, ես այդ կողմից բոլորովին վախ չունեմ:
Դու անկախ ես... Հասկանում ես, ոչ ոք, ոչ ոք
չի կարող ճնշումն գործել քեզ վրայ... Հասկա-
նում ես: Գալով ինձ, երբէք, բացի եղբայրա-
կան խորհրդից, ոչինչ իրաւունք մի սպասիլ
ինձանից: Եցո, ես հասկանում եմ միտք: Բաց
դու երեխս չես, իսկ ես միշտ ոչի կ'ունենամ
քեզ պաշտպանելու ամեն տեսակ քեզ համար

անախորժ բաներից...

— Ես այդ գիտեմ, Թուրէն, — արտասահնեց
Մարիամը, տեսնելով, որ եղբայրը հասկացել է
իւր միտքը, — շնորհակալ եմ: — Մի բան միայն
կ'ասեմ. ես հալաբեանի մասին վատ կարծիք
չունեմ, բայց, կրկնում եմ, նրա ացելութիւնը
ինձ ճնշում է: Իսկ դու ինք կարող ես նրա
հետ բարեկամ մնալ:

— Եթէ այդպէս է, ես այնպէս կ'անեմ, որ
նա երկրորդ անգամ այստեղ չը գայ, — վճռեց
Թուրէնը, վերջ տալով խօսակցութեանը:

Հասաւ այն օրը, երբ պէտք է փայէր օ-
րիորդ Նատալիեան: Երեկոյեան իննը ժամն էր,
Թիֆլիզի ժողովարանի ձմերային բնակարանում
տիրում էր մի անսովոր շարժում: Իշխան Սա-
հարունին ֆրակ և սպիտակ փողպատ հագած
կարգադրութիւններ էր անում: Հանդիսաւոր
հագնուած սպասաւորները մի անսովոր եռան-
դով կատարում էին նրա աջ ու ձախ սփոռող
հրամանները:

Բաղմաթիւ տոմսակները վաղօրօք տարածված
էին հասարակութեան մէջ, յոյս կար, որ բա-
րեգործական երեկոյթը պիտի բազմամարդ լինի:
Ժողովարանի հարիւրաւոր մոմերով լուսաւորված
սենեակները մի առանձին շուք էին ստացել:
Գլխաւոր դահլիճի մի ծացրը բռնուած էր վի-
ճակախալի իրերով: Միւս ծացրում առանձին
առանձին կանգնած էին երեք տոմսակ վաճա-
ռող օրիորդներ, շրջապատված իրանց երկրպա-
գու կավալերներով:

Երաժշուութիւնը վերնայարկից դղրդեցրեց

դահլիճները։ Հանդիսականները հետզհետէ հաւաքում էին։ Նախասենեակում խունուած էր կոչված և անկոչ կարգադրիչների մի խունը։ Այստեղ, մի անկիւնում, տրոպիքական բոյսերի տերևների միջից, երևում էր չորրորդ տոմսավաճառիկով։ Սանդիմուից վեր բարձրացողին ուժով քաշում էին այդ օրիորդի մօտ և ստիպում տոմսակ վերցնելու վայախոր և ըրյացը։

Մօմ տար ժամն էր, երբ վերջապէս, երեւեցաւ Նատալիան մօր ուղեկցութեամբ։

— Նատօ, այդպէս չի կարելի ուշանալ, յանդիմանեց իշխանը շշնչիւնով, ամենը քեզ են սպասում։ Առ զա ազմ միշտ նոտասութ խոր

Սակայն Նատօն վատ էր տրամադրված, իւր քերուն նկատողակիւնը անուշագիր ամագեց։ Մաղամ Կուրամոն խսաբել էր նրա ցոյսը, նոր հագուստը դիւր չէր եկել օրիորդին, որքան սպասում էր իւնականդիմանելու էր մադամին շատ կովակ։ Խօսքերով, և պերջինը, ակնարկելով օրիորդի նիհարութիւնը, պատպալսանել էր։ Ինտու նոյսած ու վայա իսդիմութ վրասխան

— Մադմուազեր, մեղանորը աձեր ցցված ուկրուներն են, կան բաներ, որ մօդիստկան չի կարող ուղել։ Վայամենայնիւ, Նատալիան հագել էր իւր

նոր հազուստը, որ կարված էր կաթնագոյն նուրբ մետաքսից և զարդարված փարիզեան վոլանսէ կրութեկիօններով։ Նրա ուսերն ու թեւերը կիսով չափ բաց էին և ան վաճառ ճանապարհին մացրու նրան ցրդորել էր, իսկ ուղարկու մոռանաց տիսուր անցքը, իւր դէմքին զուարկ թութիւն տայ։ Բարձրանալով սանդիմուվ վեր, նրա աչքերի մեջ փայլեց ինքնագուռութիւնն, բարձակ ըրթունների վրայ տիսրութիւնը տեղի տուեց կտվորսկանը զուսպ ժայթին։ Նա մի կողմնակի հայեացք ձգեց հայելի մէջ հագուստը այնքան էլ վատ չէր նստում, որքան կարծում էր։ Նա մի առանձին հաճութիւն զգաց, տեսնելով իւր պարանոցի կաշուի քնքութիւնը, և մի անգամ ևս մտքում հայկոյեց մագամ կուրաժգին։ Անդհամրապէս նա տղեղ չէր, կային մարդկի, որ մինչև անգամ շատ գեղեցիկ էին համարում նրան, գովելով նրա բարձակ մէջքը, երեսի գոյները և թուխ թուվով, թամձր յօնքերը բան չէր ամփրութ տօն վրա ամփրութ

Նա լսեց մի քանի կմսպիմենտներ, ինքան շրջապատեցին, նա գուարթ ացաւ։ Հովհարի ծայրը, անգլիական ալոյիսմէնի ձևով, մօտեցրեց մի քանի ծանօթների, և ոմանք հետևեցին մրան՝ տոմսակ գնելու։ Որմէ ասպարութիւն ու առողջութ

Դահլիճը հետզհետէ լցվում էր, խուզ աղմուկը աւելի ու աւելի սաստկանում էր:

Հասարակութեան մէջ երկեցաւ Ախշարումեանի մւ և գէր պարանցը: Որկրամոլը առողջացել էր: Պէտք է ասած, որ մօսիօ Վախվախեանը նրա հիւանդութեան լուրը մեծացրել էր, ինչպէս սովոր էր փքել ամեն մի չնչին լուր:

—Տասը—տասը բուբլու ամեն մի արկղից աւելի չեմ պահանջում,—դիմեց նրան իշխանը, թւեից բռնելով և քաշելով տոմսավաճառների մօտ:

—Այդ բանում հաւասարութեան օրէնքին ես խիստ հակառակ եմ,—ասաց Ախշարումեանը, —ով աւելի գեղեցիկ է, նրա համար աւելի կը գոհեմ: Բարեգործութիւնն էլ ճաշակի բան է, ես փողերս նուիրում եմ կանանց և ոչ թէ գործին:

Եւ նա իւր ճաշակի համաձայն դիմեց այն արկղին, որի մօտ կանգնած էր ամենազեղեցիկը տոմսավաճառ կանանցից:

Հասարակութիւնը Նատալիայի քէֆովը չէր: Գերազանցող տարրը դարձեալ հասարակ վաճառականների ընտանիքներն էին: Նա անհամբեր սպասում էր «արիստօկրատներին», առանձնա-

պէս կոմուհի Նավալիխինային: Նրա տրամադրութիւնը աւելի վատացաւ, տեսնելով մի քանի «սիւրտիկաւոր» երիտասարդներ, որ ինքնազլուխ, կոպիտ կերպով, քաշում էին սրան ու նրան և մօտեցնում տոմսավաճառներին:

—Ովքեր են այդ չուչելները, —հարցրեց օրիորդը իշխանից:

Նորին պայծառափայլութիւնը, հեգնաբարժպտարպի, պատասխանեց.

—Մեր ազգասէրները:

—Որ մէջտեղ չընկնեն լաւ կը լինի:

Այդ բոպէին տիկին Սօփիօն, հալաբեանի թւեից բռնած, մօտեցաւ աղջկանը: Մտնելով դահլիճ, տիկնոյ առաջին հոգսն եղաւ գտնել ամուրին, երկրորդ՝ դիմաւորել անուանի կոմսուհուն:

—Միթէ չէք պարելու, որ դուք էլ սիւրտուկով էք եկել, —հարցրեց Նատալիան դժկամակութեամբ:

—Ոչ:

—Զարմանալի է, կարծես, բոլորը երդուել են իմ բալը փչացնել այս երեկոյ:

—Ինչու, տոմսակները լաւ են վաճառվում, ես կարծում եմ, մեծ եկամուտ կունենաք:

—Ջատ հարկաւորս է եկամուտը, իմն այն է,

որ բալս ուրախ անցնի, շքեղ լինի: Այս
սիրտուկները ամեն բան տգեղացնում են: Ամուրին շտափեց իւր բարեգործական տուրքը վճարելու տոմսավաճառներին: Յետոց նա,
օգտուելով Սօփիօյի և Նատալիայի զբաղված դրութիւնից, հեռացաւ և խալուց ամբոխին: Մի քանի ժամ առաջ Թուբէնը նրա մօտն էր եղել, և նա փարափետութեամբ իմացել էր, որ Մարիամն ևս երեկոյթ է գալու, Անցնելով մի դահլիճ միւսը, ամեն տեղ աչք ածելով, նա ըստ գտաւ Մարիամին, և արդէն յուսահատվելու վրայ էր երբ մի անկիւնում տեսաւ Թուբէնին մի քանի երիտասարդների հետ:

— Քուը միայնակ էք եկել, — հարցրեց նա,
ըստ կարտանալով զապել իւր հետաքրքրութիւնը: Մինչև Թուբէնի պատասխանելը, նա տեսաւ Մարիամին: Օրիորդը իւր վարժուհու հետ կանգնած խօսում էր: Պատից քարշ արած մեծ կանթեղը առատ լոյսը սփռել էր նրա վրայ,
և այդ լուսոց ներքոյ նրա երեսի գունատութիւնը այնքան նկատելի չէր, աչքերի մէջ միայն փայտում էր մի տեսակ տենդացին յուղունք խառն մելամալդութեան հետ: Նա արագ արագ հովհարում էր իրան, անդադար նացելով աջ ու ձախ անհամբեր հայեցքով: Նա

հագած էր իւր բաց-արձիճագոյն մետաքսեայ հագուստը, պարզ, առանց աւելորդ զարդարանքի:

Բարեբաղդաբար Հալաբեանը կարուձեի վարժուհու հետ ծանօթ էր: Նա բարեւեց, կանգ առաւ և մկնեց խօսակցել: Մարիամը զգաց դարձեալ սովորական ճնշումը: Թաւում էր նրան, որ ամեն կողմից իւր վրայ են նայում, որ ամենը իսկոյն պիտի մկնեն նրա մասին խօսել, բամբասել: Հալաբեանը հանեց գրաբանից իւր վերցրած տոմսակները, որ դեռ չէր բաց արել: Նա կէսր տուեց վարժուհուն, կէսր Մարիամին և ինդրեց բաց անել: Բոլորը փուչ դուրս եկան: Այդ անաջողութիւնը գրգռեց նրա սնահաւատութիւնը, որից նա զերծ չէր: Նա հեռացաւ և խսկոյն վերադարձաւ մի բուռն տոմսակներ ձեռին: Այս անգամ Մարիամի բացածներից երկուսը նօմերով էին:

— Ձեր ձեռքը բաղդատոր է ինձ համար, — ասաց Հալաբեանը խորհրդաւոր եղանակով:

Նա այժմ ուրախ էր, պտոչտ պտույտ էր անում Մարիամի շուրջը, աշխատելով օրիորդի դէմքի վրայ շարժել մի ժպիտ: Բայց վերջինը լուռ էր և մտախոհ:

Յանկարձ Մարիամը մի ցնցումն զգայ: Մելք-Բարսեղեանը անցնում էր նրա մօտով: Տեսնելով Մարիամին, նա քաղաքավարութիւնից դրդված մօտեցաւ, արտասանելով.

— Թուք այստեղ էք:

Բժիշկը ծանօթ էր Հալաբեանի հետ:

Մարիամի սիրու ուժգին բարախում էր: Ի՞նչ էր այդ—երկիւղ, սէր, ատելութիւն, թէ հետաքրքրութիւն—ըս զիտէր: Զգում էր միացն, որ նա դարձեալ կաշկանդում է խրկամքը, խլում է հաստատակամութեան վերջին ոյժը: Այն, ինչ-որ մի բոպէ առաջ համոզմունք էր, դարձեալ փոխուեց կասկածի: Բժիշկը խօսում էր երեկոյթի ճամփին: Կրկին թող յոյսի նման մի բան զարթնեց Մարիամի սրտում: Միթէ ամեն ինչ վերջացած է, միթէ: Նրա համար ախորդելի էր յուսալ, և այդ յոյսը նա ստանում էր բժշկի մի ամենաթող ժայիտից, մի անորոշ հայեացքից: Նա զգում էր բուռնցանկութիւն բժշկի հետ առանձնանալու: Վախենում էր, որ մի գուցէ նա թողնի իրան և հեռանայ: Պէտք է նրա հետ խօսել, թող ինչ ուզում է լինի, անորոշութիւնը ծանր է, դառն է, անտանելի է:

— Թուք չէք պարելու, — հարցրեց Հալաբեանը Մելք-Բարսեղեանից:

— Ես շատ հազիւ եմ պարում:

Հալաբեանը դժգութիւնից կծեց ներքին շուրթը: Նկատելով Մարիամի դէմքի փոփոխութիւնը, նրա սիրտն արդէն մի կասկած էր ընկել: Արգեծօք մի որևէ է կապ կազ նրանց մէջ, մտածում էր ամուրին: Նա զննեց բժշկին, և մի նախանձ գարթնեց նրա սրտում: Երիտասարդութիւնը, աշխոյժ խօսակցութիւնը, «բժիշկ» կոչումը—ահա այդ նախանձի առաջին պատճառը: Նա մկնեց ատել բժշկին և մըտածում էր ինչպէս նրան հեռացնի Մարիամից:

Նրանց մօտով ծանր բացերով անցաւ տիկին Սօփիօն մի ինչ-որ վրայի իշխանի հետ: Մարիամը երեսը մի կողմ դարձեց: Տիկինը, տեսնելով նրան հալաբեանի հետ, մտքում զրդըռուեց: Նա որոնում էր ամուրիին, նրան մօտեցաւ միայն բժիշկը: Երևեցաւ և՛ իշխան Սահարունին Մարիամը, վարժուելու թեից բըռնելով, հեռացաւ, խոյս տաղով թէ իշխանից՝ և թէ Սօփիօցից:

— Երկու խօսք ունիմ քեզ ասելու, — ասաց իշխանը, առնելով հալաբեանի թեր:

— Ի՞նչ ես ուզում ինձանից, — արտասանեց Հալաբեանը մի այնպիսի եղանակով, որ արտա-

յայտեց նրա խորին դժկամակութիւնը:
— Քու անպատճառ սլիտի պարեսածարաւ
— Ե՞ս.
— Այ՞ո, դու:
— Քու խելագարվել ես, իշխան, ես տասը
տարի է չեմ պարում:

— Իմ խաթրու պիշտք է պարես, թէ չէ էլ
ինչ պոխաշչիկ-մոխաշչիկ ասես մէջ են ընկեր
ուզում են պարել: Քրոջս աղջկայ բայլ փը-
շացնում են, նա վրդովուած է: Ես արդէն մի
քանի զոյգ կազմել եմ, ուզում եմ, որ օրինա-
ւոր մարդիկ մէջտեղ մտնեն: Կոմսուհի նա-
վալիխինան այստեղ է, ամօթէ:

Հալաբեանը մեծ դժուարութեամբ կարողա-
ցաւ ապատվել իշխանի ձեռքից և գնաց Մա-
րիֆամին գտնելու:

Վիճակխաղը վերջացել էր, յատակի վրայ
սփռուած էին պատռոտված տոմսակները: Պա-
րերը արդէն սլրուել էին: Նատալիան վայս էր
պիտում մի երիտասարդ սպացի հետ, որին նա
համոզել էր պարերի կառավարիչ լինել: Դահլիճը
ծացրէիծացր լիքն էր: Հանդիսականները, ըստ
երեսյթին, գոհ էին երեկոյթից: Միայն մի
քանիսի գէմքերն էին տխուր, նրանց, որոնք
վիճակախաղի վրայ կորցրել էին իրանց վերջին

բուբլիները: Մի տիկին, դահլիճի մուտքի մօտ
նստած, հաշվում էր երեկոյթի եկամուտը: Մի
ուրիշ տիկին, հեռուից, նրան ծաղրում էր իւր
խօսակիցների հետ:

— Ես զարմանում եմ,—ասում էր ծաղրողը,
գէմքը Ցնծուերով,—այդ մարդիկ երեալացում են,
որ գործ են շինուած: Ընկեր են բազարները, ինչ
«խամ» ասես հաւաքել են, բերել մանրափա-
ճառի խանութ բաց արել... ֆի դօն, ես զրգ-
վում եմ:

— Եւ ինչ հասարակութիւն են հաւաքել, Տէր
Աստուած, ով որ ասես կայ, յարեց նրա խօսա-
կիցը:

— Զէ, չէ, գլաւորն ացն է, չեն ամաջում,
գնացել են ու կոմսուհի նավալիխինացին հրա-
վիրել, լսի լսի խիթ:

— Սուտ իշխանի աղջկանից կամ նախկին բա-
զագի կնկանից աւելի բան սպասել չէր կարելի:

Այսպէս, բամբասանքներին, արհամարհական
ակնարկներին, ժպիտներին, կծու ակնարկու-
թիւններին վերջ ըլ կար: Եւ ամենի ուշադրու-
թեան կենտրոնը տիկին Խօփիօն էր իւր աղջ-
կայ հետ:

Նատալիան ստէպ ստէպ մօտենում էր կոմ-
սուհուն և զբաղեցնում նրան: Ամեն ճիգ գործ

Էր գնում նա, որ բարձրաստիճան տիկինը դոհ լինի և դլասաւրապէս այդ բանի մէջ էր տեսնում երեկոյթի յաջուղթիւնը: Տիկին Աօփիօն այնքան չէր զբաղված կոմսուհով, որքան չալաբեանին իւր մօտ ունենալու մտքով: Իսկ չալաբեանը ըլ կար, չէր երեսում, և տիկինը կատաղութիւնից մատերն էր կրծուում, զգալով, որ նա այս երեկոյ ևս ընկած է Մարիամի ետևելց:

Դահլիճը թնդում էր երաժշտութեան փողերի ու թմբուկների հնչյուններից, պարողների ոտների տրոփիւնից: Մերթ ընդ մերթ լսվում էր պարագուխ սպայի խորխա, բարձր ձայնը, որ զեկավարում էր պարողներին:

— Երդ պայծառափայլութիւն, կարծեօք, բաւական զուարձալի է, այս, ներեցէք ասել, բանլը—գարձաւ կոմսուհուն նրա ուղեկիցներից մէկը հեգնաբար:

Կոմսուհին ժպտաց:

— Իրաւունք ունէք, Պետր Ավանասիեվիչ, արժէր տեսնել այս տարօրինակ հասարակութիւնը:

— Առանձին ուշադրութեան արժանի է այդ գեղղեց..կու..հի...նե..րի... հագուստը, մանաւանդ գրայիշան, Եֆ, Եֆ, Եֆ,—մէջ մտաւ երկ-

րորդ ուղեկիցը և սկսեց բարձրաձայն Տիծաղել: — Պարոններ, զգուց կացէք, մի մոռանաք, որ մենք այստեղ հիւր ենք, — սաստեց կոմսուհին շշնչիւնով:

— Իսկ կառավարչուհին, ֆօ, ֆօ, ֆօ,— հանալիք է:

— Իսկ մայրը:

— Ուստուկանակա:

— Խի խի խի, — Տիծաղելց կոմսուհին, իւր կարմիր երեսը մեծ հովհարով ծածկելով: Նատալիան պարում էր և, մի և նոյն ժամանակ, աչքը չէր հեռացնում կոմսուհուց: Նկատելով վերջինի գուարթ Տիծաղը, մտքում ուրախացաւ, որ բարձրաստիւ հիւրը այնքան զուարձանում է:

— Երեակայեցէք, — խօսեց գարձեալ կոմսուհու հանաքչին, — այդ ևս գէմքերի մէջ ես տեսնում եմ, վերջապէս, մի ոչ տգեղ երես:

— Ո՞ւր է, հուր է:

Հանաքչին կոմսուհու ուշադրութիւնը դարձեց Մարիամի վրայ, որ այդ վայրկեանին անցնում էր նրանց մօտով միայնակ: Նա զուտիր հաւանօրէն շարժեց: Նոյն պահին մօտեցաւ նրան Նատալիան:

— Ասացէք, խնդրեմ, ով է այդ համակելի

դէմքով օրիորդը, — հարցրեց կոմսուհին:

Անզուսպ նախանձը փայրիկնաբար պղտորեց Նատալիայի սիրաը, երբ տեսաւ, որ կոմսուհու հաւանածը Մարիամն է: Նա պատաժախանեց, թէ չէ ճանաչում «այդ աղջկան»:

Մարիամը Թուբէնին էր որոնում: Նա միայնակ անցաւ սեղանատուն, ուր արդէն առանձին առանձին սեղանների շուրջը նատաջ ընթրում էր հասարակութեան մի մասը: Թուբէնը այստեղ չէր: Մարիամը յետ դարձաւ, և մեծ դահճին ըլ հասած տեսաւ բժշկին, որ երկու երիտասարդ օրիորդների հետ տաք տաք խօսում էր: Այդ երկուսից մէկը քաղաքի մի հարուստ ընտանիքի զաւակ էր, հոչակված իւր խոշոր օժիտով:

Մարիամը ըլ կարողացաւ զսպել իրան, նրա արիւնը սատաւ երակներում, աչքերը պղտորգեցին:

«Ի՞նչ շուտ կարողացաւ ծանօթանալ դրանց հետ», ասաց նա մտքում: Բժշկի դէմքը արտայացտում էր խորին բաւականութիւն, նա շատ ուրախ էր երեսում:
Հոգով ցանկանում էր Մարիամը հեռանալ այդ չարագուշակ երեկոյթից, ուր հետզետէ աւելանում էր նրա տաջանքը: Բայց ի՞նչ անյաղթելի

ոյժ էր այն, որ դարձեալ մզում էր նրան դէպի այդ մարդը և որ տակաւին ստիպում էր նրան հետամուտ լինել մի չքացող բաղդի: Կատաղի խանդը կրծում էր նրա սիրտը: Նա չը կարողացաւ ոչ առաջ գնալ, ոչ յետ դառնալ: Նա մնաց տեղն ու տեղը, աչքերը դարձրած դէպի այն կողմ, ուսկից լսվում էր բժշկի բարձրացան ծիծաղը: Օրիորդները անցան դահճին: Բժիշկը, մէջքից թեքված, հետեւեց նրանց, զուարձախոսելով, ծիծաղելով և աջ ու ձախ արտասաննելով «վինօվատ», «պարդօն», «ներողովթիւն», ում ինչ լեզուով հարկաւոր էր: Մարիամը կանգնած էր միենոյն տեղում, մէջքը յենած սանդուխտի վանդակապատին: —Ի՞նչ է պատահել քեզ, —լսեց նա եղբօր ձայնը, —դու յոդնել ես արդէն:

— Այո, ցողնել եմ, գնանք, գնանք այստեղից: — Ոչ, շատ վաղ է գեռ: Այս ժամ է քեզ պտրում եմ, չեմ գտնում: Գնանք դահճին, ես ուզում եմ քեզ ծանօթացնել իմ ուսանողական ընկերների հետ:

— Ոչ ոքի հետ չեմ ուզում ծանօթանալ: Մի տեղ նստենք, քիչ հանգստանանք, զլուխս պտտում է:

— Աւրեմն չեմ պարելու:

— Աչ:

Թուբէնը նրան ուղեկցեց ասիական ձեռով կահաւորված դահլիճը, ուր փափուկ գահաւորակների վրայ նստած էին խումբ խումբ հանդիսականներ:

— Ախ, Մարօ, եթէ իմանալիք ինչպէս էի վիճում մի կէս ժամ առաջ իմ ընկերների հետ: Տէր Աստուած, ինչպէս մարդիկ փոխվում են և ինչպէս շուտ: Ես չեմ ճանաչում իմ նախկին ընկերներին, բոլորը փոխվել են, բոլորը մանրացել են, բոլորի խօսակցութեան նկատը այժմ կանացը են, իրանց պաշտօնները, իրանց զուարձութիւնը — ուրիշ ոչինչ: Որքան ցիմար գրութեան մէջ դրեցի ինձ, խօսելով նրանց հետ այն առարկաների մասին, որ մեզ ոգեստում էին: Թու պէտք է լսես, թէ ինչպէս նրանք միմեանց ծաղրում են, քննում, քննադատում, բամբասում: Ահա հէնց այդ բանի մասին էի ես վիճում նրանց հետ մի փոքր առաջ: Եղբայրը խօսում էր, քրոջ միտքը ուր էր: Կրկին նրա աչքովն ընկաւ բժիշկը նոյն օրի օրդների հետ:

— Գնանք տուն, Թուբէն, — ասաց նա, բընելով եղբօր բագուկը, — այստեղ սաստիկ տօթէ, ես խեղդվում եմ, գնանք:

— Բայց դու այս երեկոյ բոլորովին չը զուարճացար: Ես ուղում եմ քեզ հետ մի քիչ ապարել: Մերժինմ ես:

Թարձեալ երեաց Հալաբեանը: Ամբողջ մի ժամ մերթ իշխան Սահարունիի, մերթ տիկին Սօփիօյի և մերթ օրիորդ Նատալիայի ձեռքին տանջվելուց յետոյ, ամուրին, վերջապէս, աղասիվել էր:

— Արդեօք չէիք կամենալ ընթրել, — դիմեց նա Թուբէնին և Մարիամին:

Նա մերժումն ստացաւ, և մինչ աշխատում էր համոզել, նրա թեկից բունեց Ախշարամեանը և քաշեց մի կողմ:

— Բաւական է, թող այդ յիմարութիւններդ, — ասաց որկրամոլը, — ինչ ես ընկել այդ աղջկաց ետելից: Գնանք ընթրելու:

Հալաբեանը կատաղեց:

— Թողէք ինձ հանգիստ, ի սէր Աստուծոյ, — խեղդուկ ձայնավ արտասանեց նա, իւր թեք աղասիելով Ախշարումեանի ձեռից:

— Գնա, դու գժվել ես:

Հալաբեանը յետ վերալարձաւ: Բայց Թուբէնն և Մարիամը չը կացին իրանց առաջվայ տեղում: Նա անցաւ ասիական դահլիճին կից փոքրիկ սենեակը: Այստեղ ոչ ոք չ'երեաց, նա քայլե-

րը ուղղել էր դէպի դիմաւոր դահլիճ, երբ նրա ականջին հասաւ մի շշնչման ձայն: Նացից դէպի սենեակի կիսալուսաւոր անկիւնը և մնաց տեղն ու տեղը անշարժ: Նա չէր սխալ-վում. դա Մարիամն էր, նստած գահաւորակի վրայ: Իսկ միւսը՝ բժիշկ Մելիք-Բարսեղեանն էր: Իսկ եղբօր հետ հանդիպելով՝ բժշկին այդ սենեակում, օրիորդը խնդրեց Թուրէնին թողնել իրանց մի քանի րապէտ առանձին: Նա վճռեց անել վերջին քայլը. նա կամեցաւ բացատրութիւն պահանջել Մելիք-Բարսեղեանից: Եւ ահա նրանք նստած էին դէմ ու դէմ...»

Մի վայրկեան նրանք լուս նայեցին մի-մեանց երեսին: Մարիամի աչքերի մէջ վայում էր մի յուսահատ վճռականութիւն: Բժիշկը գուշակեց նրա միտքը: Նա զգաց, որ արդէն հասել է բարոյական ճգնաժամը, որ դէմ ու դէմ նստած է մի անողոք դատաւոր, որին պար-տաւոր է հաշիւ տալ իւր վարպետութեան մա-սին: Նա շփոթվեց, նայեց աջ ու ձախ, ոչ ոք չէր երևում, բոլոր հանդիսականները կից դահլիճներումն էին:

— Բժիշկ, — ընդհատեց Մարիամը վայրկեան-կան անախորժ լուսութիւնը մի այնպիսի ձայ-նով, որի մէջ հազիւ զգացվում էր նրա հօգե-

կան խռովութիւնը, — այսօր ես վճռեցի ձեզ հետ խօսել վերջին անգամ: Յուսով եմ, որ չէք մերժի մի քանի րոպէ ինձ նույիել, մի քանի րոպէ միայն, այնուհետև գուք ազատ էք: Կա-րող էք լսել:

— Այսուհեղ — արտասանեց բժիշկը, շրւարված աջ ու ձախ նայելով, — այս հասարակական տե-ղիւմ, Մարօ, մեր խօսակցութիւնը, եթէ գաղտ-նիք է, կարող են լսել:

— Մի վայրկեանաք, ոչ ոք չի լսիլ, Ես այսու-ղը ընտրեցի մեր բացատրութեան համար այն պատճառով, որ մենք այսուհետև ուրիշ ոչ մի տեղ չենք կարող տեսնուել... Երբէք, Միամիտ կացէք, մի կարձէք, որ ես ձեզ կ'անպատվեմ: Ոչ դիտեմ, որ դուք վայնենում էք հասարա-կութիւնից:

— Լսեցէք, ես ամեն բան զգում եմ, աւելորդ կը լինի, եթէ դուք սիսէք պարզել դէպի ինձ ձեր զգացմունքները, Դուք ինձ չէք սիրում, ես զիտեմ այդ, զիտեմ այն էլ, որ երբէք, եր-բէք չէք սիրել ինձ: Բայց... ասացէք... ի՞նչ էր նշանակում ձեր այդ դառն կատակը ինձ հետ: Պատասխանեցէք, ինչո՞ւ համար դուք այդպիս վարպեցիք, ինչո՞ւ...

Բժիշկը դարձեալ նայեց աջ ու ձախ,

Զը նայելով, որ Մարիամը խօսում էր ցածր ձայնով, զրեթէ շշնչւնով, բժիշկը այսուամենայնիւ կարծում էր, որ կարող են լսել նրա ասածը: Օրիորդի արտաքին կեղծ սառութիւնը նրան չէր խաբում: Նա զգում էր նրա ներքին բուռն հոգեկան խովութիւնը, զգում էր և փախենում մի գուցէ խօսակցութիւնը շարունակելով, առիթ տայ մի անախորժ տեսարանի:

Մարօ,—լորդորեց նա մեզմ և փաղաքական ձայնով,—թող, յետոյ կը խօսենք այդ մասին: Ես պատրաստ եմ քեզ բայցատրութիւն տալ, բայց ոչ այտեղ: Նայիր, —աւելացրեց նա, ցոյց տարով դէպի մեծ դաշլիճը, որի գուների մօտ երեսում էին մի խումբ հանդիսականներ:

Մարիամը հեղնաբար ժպտաց:

—Ինչիցն էք փախենում, —շարունակեց նա յամառութեամբ, —որ ես աղմուկ կը բարձրացնեմ այստեղ, որ ես կ'արտասութեմ, որ ես ձեր անունը խօսակցութեան և բամբասանքի առարկաց կը դարձնեմ: Զէք ճանաչում ինձ, մոռացել էք... Ոչ, պատուելի բժիշկ, ես այդ եմ անիլ, ես ինձ չեմ թոյլ տալ մի երիտասարդ ժիշկի, հա հա հա, պատիւը արատաւորել: Բայց ես պէտք է ձեզանից հաշիւ ստանամ

ձեր վարժունքի մասին, հասկանում էք, ի՞նչ դուք կարծում էիք, որ գործ էք ունեցել մի խեղճ, մի տղիրմալի, մի անկեզու աղջկաց հետ, որ կարող է երեկուաց ձեր պիրաւորանքը այսօր մուանալի Հարկացէք, ուրեմն, ձեր առաջ նոտած է մի չափահատ կին, որ ինքը կարող է իւր պատիւը պաշտպանել: Տեսնում էք, այսօր, այս հասարակական տեղում, ես ամեն ինչ արկանարհերով, պահանջում եմ ձեզանից այն, ինչոր իրաւունքը ունի մարդանչելու: Տուէք ինձ պատասխան, բասայէք, ինչ իրաւունք ունէիք կարծերու, որ ես փողով ինձահամար փեսացու առնոցներից եմ: Լուեցէք..., թոյլ տուէք իսօնքս վերջացնեմ: Խօսմ ձեր հոգին այժմ ինձ համար վարդ է, խօմ դուք մի ծախու ապրանք էք... Հըմ, գիւրչի գալիս ձեզ իմ առածը: Միթէ ճիշդ չէ, միթէ դուք ձեր անունը, ձեր երիտասարդութիւնը, ձեր կրթութիւնը, ձեր գաղափարները, ձեր պատիւն անգամ կշխուի մի թաթի վրաց չէք գրել, միւս թաթի վրաց ուկին ոսկին էք կանչում, Զէք, այսպիս չէ: Հերքեցէք, եթէ տուտ են ասում, պաշտպանվեցէք, եթէ տաճու դրաբարութիւն էք համարում, հերքեցէք, որ դուք... մի մի մի... բաղդախնդիր չէք... Քանի խօսում էք օրիորդը, հետզետէ կորց-

Նում էր սառնութիւնը և նրա սրտի դառնութիւնը աւելի ու աւելի զգացված էր աստիճանաբար յուզփող ձայնի եւնէջների մէջ։ Եւ նրա նիշարութիւնը, նրա դէմքի գունատութիւնը, նրա աչքերի հիւանդու փայլը ասրսափեցնում էին բժշկին, նա ցնցփում էր օրիորդի ամեն մի խօսքից, նա անդադար նայում էր իւր շուրջը։ Վերջին խօսքը նրան բոլորովին զինաթափ արաւ ։ Նա ցանկանում էր, որ այդ բոպէին ներս մտնի մի ծանօթ մարդ և վերջ դնի այդ տագնապայի դրութեանը։ Սակայն երաժշտութեան ձայնը դեռ լնփում էր, պարերը դեռ շարունակվում էին։ Երբեմն երբեմն միայն մի մի հանդիսական մտնում էր սենեակի մի դռներով և իսկոյն դուրս գալիս միւս դռներով, ծուլօրէն նայելով աջ ու ձախ և ուշադրութիւն անգամ չը դարձնելով նըրանց վրայ։

— Ախ, Տէր Աստուած, փոխեց յանկարծ իւր ձայնը Մարիամը, վերջապէս, չը կարողանալով շարունակել իւր կեղծ սառնասրութիւնը, — ի՞նչ եմ ասում, որքան լիմար եմ ես, Ո՞ւմ հետ եմ խօսում, ի՞նչ եմ պահանջում ես ձեզանից։ Դուք լրում էք, դուք չափից դուրս շփոթված էք, դուք ուգում էք փախչել ինձանից։ Գնա-

ցէք, — աւելացրեց նա, մի վայրկեան լռելոց յետոց, — ես չեմ կարողանում ձեզ հետ սառնասիրու խօսել, Թողէք ինձ, հեռացէք, դուք ազատ էք, այնտեղ ձեզ սպասում են..։ ուրիշները։ Նա թուլացած թիկն տուեց գահաւորակին։ Նա զգում էր, որ ինքն էլ չը գիտէ ինչ է ասում, որ առհասարակ այն չէ խօսում, ինչոր հարկաւոր էր խօսել։ Նրա դողդոջուն ձեռը ուժգնակի շարժում էր լայն հովհարը։ Նա զգաց օդի սաստիկ պակասութիւն, նրա շնչառութիւնը ծանրանում էր։

Հէք կամենում դահլիճ անցնել, — լսեց նա բժիշկի ձայնը, և այդ ձայնը հնչեց նրա ականջին իբրև մի ցաննդուգն հեգնութիւն, իբրև մի սառն արհամարհանք։

Ըստ ևս միանգամայն աւելորդ էր խօսելը։ Նա ճիշճ արաւ և անսպասելի արագութեամբ ոտքի կանգնեց։ Նա նայեց մի վայրկեան բժշկի երեսին և խեղդուած ձայնով, գրեթէ խուկ շշնչիւով արտասահնեց։

— Գնացէք ձեզ համար բաղդ որոնեցէք, իսկ ես...

Նա ծածկեց երեսը հովհարով և քայլերը ուղեց դէպի հակառակ կողմ, Երբ բժիշկը հեռացաւ, նրա առաջ դուրս եկաւ սենեակի կի-

սախաւար անկիւնից... Հալաբեանը: Ամուրին յուզված էր; Նրա աչքերի մէջ փայլում էր շաստիկ անհանգստավթիւն: Մարիամը նայեց ուրս երեսին, և փայրինաբար սթափիեց: Ամուրին ամուրին լսել է խմանածները, անցաւնրա մտքով մուտք դիմում դուռ նորը առ նա թույտուեց ամուրինալուսագնալիւր մօտիվ: Խոշամբրող մարմնով գողում էր առաջ և Խնձունստորութիւն, ինչ ստորութիւն», — կրկնեց անս մտքում, — ինչ արիսես, ինչ արի ես:

Արդարեանոր միայն նա համաշաւ, որ միանգամայն արմանի չէր իւր ինքնասիրութեանը գրեթէ ուժով բացատրութիւն սպահանջել մի մարդուց, որ այնպիս ստարդի կերպով խարել էր նրա յոյսերը: Եցմ այլ ևս նրա համար գոյցութիւն չունէր չքացած բաղդի խընդիրը: Զարթնեց նրանմէջ իւր բոլոր գօրութեամբ նսեմացածնինափրութեան խոյթող գգացմունքը:

Խնձ ստորութիւն, ինչ ստորութիւն, — կրկնում էր նա անդադար:

Նրան թւում էր, որ ոչ միայն բժշկի առաջ ինքն իրան պարացրեց, այլ ևս ամենի աչքում, որ ամբողջ հասարակութիւնը այժմ ծաղրում

է նրան, ծիծաղում է, բամբասում է: Նա ըստիտէր ինչ է կատարվում իւր շուրջը, նա չէր հասկանում իւր հետ ընթացող հալաբեանի անածը, լսում էր միայն նրա խուլ, երերվող ձայնը: Նա մտածում էր գտնել եղօրը շուտով և աննկատելի կերպով հետանալ երեկոյթից:

«Ինչ արի ես, ինչ արի, Տէր Աստուած», շշնչացին այս անգամ լսելի ձայնով նրա շըրթունքները:

— Ինչ ասացի՞ք, — հարցրեց հալաբեանը, լսելով նրա ասածը:

Մարիամը մի քիչ սթափիեց:

Խնճրեմ եղօրս գտէք և ուղարկեցէք ինձ մօտ, ես այստեղ կըսպասեմ:

Նա ուժասպառ, թուլացած նստեց ընդարձակ հիւրասենեակի մի կիսալուսաւոր անկւնում:

Հալաբեանը տեղից չը շարժուեց: Զը կարողանալով զսպել իւր բուռն հեռաքրքրութիւնը, նա թագնուել էր սենեակի մի անկիւնում և ականջ դրել Մարիամի խօսակցութեանը բժշկի հետ: Օրիորդի մի քանի, անզգոյց կերպով բարձրը արտասանված, գարձուածները այլ ևս պարզեցին նրա համար մի չարագուշակ գաղտնիք: Ուրեմն Մարիամը սիրում է այդ երիտասարդ

բժիշկին, իսկ նա... արհամարհում է: Նա պատրաստ էր նոյն րոպէին յարձակվել Մելիք-Բարսեղեանի վրայ, տալ նրան մի խայտառակ ապտակ: Նա կատաղած էր և՝ Մարիամի դէմ: Ի՞նչ, մի երիտասարդ արհամարհում է նրան, և նա դեռ հետամուտ է լինում նրան:

— Գոտէք եղօրս, խնդրում եմ ձեզ, — ասաց օրիորդը կրկին:

Հալաբեանը մեքենաբար շարժուեց տեղից և սկսեց աչք ածել իւր շուրջը: Երեկոյթը գեռ շարունակվում էր: Պարերից յոդնած զոյգերը անց ու դարձ էին անում, ուրախ ուրախ խօսակցելով: Դահճիճը կիսով չափ դատարկվել էր:

Նրան մօտեցաւ մօսի, Վախվախեանը և ասաց, թէ իշխան Սահարունին կանչում է: Նա ուշադրութիւն չդարձրեց, անցաւ:

— Վերջապէս գտայ քեզ, — լսեց նա դահճիճում իշխանի ձայնը: — Նո՞ւ, գնանք, քեզ են սպասում:

— Ինձ ոչ ոք չը պիտի սպասի, ես գործունեմ:

— Զի կարելի, դու մերոնց խօսք ես տուել միասին ընթրելու:

Նոր միացն ամուրին լիշեց, որ, արդարև, իւր գլուխը ազատելու համար, ակամայ խօսք էր տուել նիկողայոսին:

Նա ուշադրութիւն չը դարձրեց իշխանի վրայ: Նա դիմեց պռաջ: Այս անգամ նրան հանդիպեց տիկին Սօփիօն:

— Այս, պարոն հալաբեան, ես ձեզ էի պրտրում, — ասաց տիկինը ուրախ ուրախ: — Երեակայեցէք, կոմսուհի Նավալիխինան այնքան գովեց մեր բալը, այնքան գովեց, որ չը գիտեմ... Փառք Աստուծոց, փառք Աստուծոց, շատ ուրախ եմ: Դէհ, գնանք, այժմ, Նիկողայոսը սպասում է...

Երևեցան և՛ օրիորդ Նավալիան ու Ախշարումեանը, ամուրին շրջապատեցին: Այս ես դրժուար էր ազատվել նրանց ձեռքից: Սակայն նա դարձեալ ներոյութիւն խնդրեց, հեռացաւ, ասելով, որ իսկոյն կը վերադառնայ: Նա Մարիամին չը գտաւ այնտեղ, ուր թողել էր: Նա վագեց այս ու այն կողմ, անցաւ նախագաւիթ, և այստեղ տեսաւ, որ օրիորդը եղօր թևին յենած սանդխտով ցած է իշնում: Նա ինքն իրան մոռացաւ և, հրելով ճանապարհին պատահած հանդիսականներին, խելագարվածի պէս հետևեց նրանց:

— Դուք արդէն գննում էք:

Նա պատասխան չը ստացաւ: Իջնելով ցած, հանդերձարանում նա մի քիչ ուշքի եկաւ,

շփոթվեց ինքն իւր արածիյ։ Նա ձեռը մեկնեց Թուբէնին։ Երիտասարդը գունաթափակած էր, աչքերի մէջ փայլում էր իր տեսակ, նրա բարի դէմքին անհամապատասխան, կատաղութիւն։ Պարզ էր, որ Մարիամը հաղորդել էր նրան բժշկի վարմունքը։ Դողովացող ձեւներով նա պահեց քրոջ վերաբուն, հաղցրեց, առաջ նրա թւը և շուպեց դէպի դուրս։
 Հէպ ամուրին մնաց բևեռված իւր տեղում։ Ընկուած, ցուսահատված, նայեց Մարիամի ետևից։ Նա ծանր և ակամաց բայերով բարձրացաւ միեւ։ Նա դրում էր իւր շուրջը մի ամ այսուժյւն, կարծես, Մարիամի զնալով նրա համար ամեն ինչ վերջացաւ, կարծես, այս ես յաւիտեան խորտակվեցին Նրա ցոյսերը։ Սեղանատանը ըլ հասած, նա հա՛տիվեց Մելիքներութեանին, որ խօսում էր մի հարուստ և բաւական ծեր դրամատիրոց հետ։ Արքան առելի թւաց նրան բժշկի յուրջ կերպարանքը։ Նա ձգեց նրա վրաց մի սպառնողական, մի սուր հայեացք։ Բժիշկը բարեկամաբար ժպտաց, Աց նրան առ ելի կատաղեցրեց։ Նա համարում էր իրան վիրաւորուան, ցաղթուած և մինչեւ անդամ ստորացած մի նոր, մի տակաւին անցատ երիտասարդի առաջ։ Ինչպէս, նա սիրէ, նա

այնքան եռանդով հետամուտ լինէ մի օրիորդի, որից երես է դարձնում մի ինչ-որ կիսաքաղյած բժիշկ։ Այ ուր մնացին հալաբեանի անունը, գիրքը, հարստութիւնը։

«Նա ծիծաղում է ինձ վրայ, նա ծալրում է ինձ, — ասաց նա մտքում, — ես նրան ցոյց կը տամ, ցոյց կը տամ, թէ ով եմ ես...»

Երբ մտաւ սեղանատուն, ամուրին այնպէս թւաց, որ ամենը հերնաբար ժպտացին, մանաւանդ Ախշարումեանը և իշխան Սահարունին։ Նիկողայոսի խոնարհ հրաւերով նա նըստեց սեղանին մօտ, կասկածալի հայեացքներ ձկելով բոլորի վրայ։ Ամբողջ լնթիքի ժամանակ նա լրեց, անու շաղիր թողնելով Նիկողայոսի հաճուախօսութիւնները, ափկին Սօփիօցի սիրալիր ակնարկութիւնները, օրիորդ Նատախայի ցաղթական հայեացքները, իշխան Սահարունիի սրախօսութիւնները և Ախշարումեանի կատակները։ Նա վերկացաւ տեղից ամենից առաջ, բարեկեց և պատճառ բերելով իւր զըլ-խացաւը, ներողութիւն իննդրեց ու հեռացաւ։ Նրա ետևից վագեց իշխան Սահարունին։

— Սիրելիս, շշնչաց իշխանը հեղնաբար, — ես ցիմար չեմ։

— Ի՞նչ ես ուղում ասել։

— Ասում եմ, Ես լիմար, չեմ բանու ու մազական
— Ես այդ գիտեմ, լեռնց:

— Ուրեմն ի՞ւացիք, որ պվաստալիդ պատճառը
ինձ յայտնի է: Ապասիր, մի շտապիլ երկու
խօսք: Զգոյշ կաց, հասկանում ես, զգոյշ կաց:
Քեզ նման մարդիկ չեն ընկնում, բայց ընկնե-
լիս երկու ոտով են ընկնում թալակի մէջ...

Խօսակցութիւնը տեղի ունէր նախասենեակի
մի անկիւնում, մօտիկ ոչ ոք չը կար: Հալա-
բեանը ապշած նացեց իշխանի երեսին, կար-
դալով նրա աշբերի մէջ մի չարամիտ բան:

Իբրև բարեկամ, խորհուրդ եմ տալիս, զգոյշ
կաց, կրկնեց իշխանը խորհրդաւոր եղանակով:
Այս, զգոյշ կաց, ձեռք մի մեկնիլ ուրիշի պա-
տառին, հասկանում ես, կարող ես մատներդ
այբել և շատ վատ այբել:

— Իշխան, ամոթ է, լոիր:

— Ես կը լուսն, բայց դու, զգոյշ կաց. . . Իէ
գնա, ուրիշ ասելիք չունեմ:

Իշխանը անցայտացաւ, Հալաբեանը մնաց
տեղն ու տեղը անշարժ, արձանացած: Այդ ա-
նորոշ խօսքերի մէջ նա զգաց շատ որոշ, շատ
պարզ և շատ չարամիտ մի ակնարկութիւն: Նա
սարսափեց:

«Ուրիշի պատառին, — արտասանեց նա, մե-

քենաբար ձեռով շփելով ճակատը: Նա չ'իմա-
ցաւ, թէ ինչպէս ցած իջաւ, ինչպէս ծառան
հագցրեց վերարիւն, և միայն երբ դուրս եկաւ
փողոց, երբ ձմեռացին սառն օդը խփեց նրա
ճակատին, սթափեց փոքր ինչ: Այն ժամանակ
նրա կրծքից մի ծանր հառաջանք դուրս թռաւ,
և նա արտասանեց.

— Ես անբաղդ եմ:

անի՞ ամ կոյսյած խոհմք խոհմձ զազանձ
մոռում սշրջանի առաջ և այսմէն Էթ առ
այս պատճենը պատճենը քայլութիւն
այս ընթիւ զրո ուսու մաստիմն զամ զըրտ
առանած մ Ա ուն դո ուսու մաստիմն զամ զըրտ
առանած մ Ա ուն դո ուսու մաստիմն զամ զըրտ

Մարիամի կծու յանդիմանութիւնները մի
որոշ աստիճանի աղբեցութիւն գործեցին բժիշկի
Մելիք-Բարսեղեանի հոգու վրաց: Երեկոյացից
յետոյ մի քանի օր շարունակ նրա ականջին
հնչում էին օրիորդի վիրաւորական խօսքերը
իբրև մի սուր բողոք իւր անարժան վարձուն-
քի դէմ:

Սակայն անցաւ թարմ տպաւորութիւնը, և
նրա խիթճը, փոքր առ փոքր սկսեց հանդարտ-
վիլ: Այս անգամ ևս նրան օգնեց սառն, ան-
կիրք դատողութիւնը: Զի՞ որ վիրաւորողը Մա-
րիամն է եղել:

«Իսկ ես միայն լսեցի նրա կոշտ ու կոպիս
հայշոյանքները: Ասենք իմ արածո, նրա կար-
ծիքով, լաւ բան չէ, բայց նրա արածը խօս
աւելի վատ է, բայց նրա արածը խօս

Ուրեմն պատիժը կատարված է, պարտքը
վճարված է, հաշիւը վերջացած է:

Բայց արգեօք այդ երեկոյ հասարակութիւ-
նից ոչ ոք չէ լսել նրանց խօսակցութիւնը—

ահա այն միակ միտքը, որ սաստիկ անհան-
գոտացնում էր բժշկին: Եթէ նա համոզված
լինէր, որ այդ անախորժ տեսարանին ոչ ոք
վկայ չէ եղել և առհասարակ գաղտնիքը չէ
յայտնուելու ուրիշին, որքան դիւրին կը լինէր
նրա համուր մոռանալ ամենինչ և անձնատուր
լինել սովորական զբաղմունքներին: Բայց նա
կասկածում էր, և կասկածում էր ամենից ա-
ւելի՝ չալաբեանի վերաբերմամբ:

Նրա սուր աչքերը նկատել էին չալաբեանին
այն սպիհին սերբ վել ջննը դուրս եկաւ սենեակի
անվիւնից: **Մարիամի յանդիմանութիւններից**
յետոյ նրա նուրբ դիտողութիւնից փախուստ
չէր սոււել ամուրիի հետամուտ լինելը: **Մա-
րիամին:** Նա նկատել էր և չալաբեանի
սպառնալի հայեացքը ժողովարանի նախասե-
նեակում: Այնուհետեւ նա մի քանի անգամ
սպառակել էր ամուրիին փողոցում, բարեել էր
յարգանքով, և արժ անացել միայն սպառնե-
թեթև պատասխանի առաջարկ ու պատուած պատուած էր

Այս բոյորը նրա կասկածները զօրացնում էին,
և նա, մուժ կերպով, զգում էր, որ չալաբեանը
նախ անտարբեր չէ դէպի Մարիամը, երկրորդ
վրդովուած է իւր դէմ: Առաջնիր ցանկալի էր
երկրորդը ոչ Յանկալի էր՝ գտնուել մէկը, որ

հետամուտ լինի Մարիամին և գուցէ մոռացնել տայց նրան իւր անցեալը, Ցանկալի չէր, որ այդ մէկը լինի Հալաբեանի նման մարդ: Նա հարուստ է, հասարակութեան մէջ ունէ յայտնի դիրք, ունէ ծանօթների մեծ շրջան, կատակ բան է մի երիտասարդ բժշկի համար կեանքի ասպարիզում, հէնց առաջին քայլում, հանդիպել այդպիսիների ատելութեանը, երեալ նրանց աչքում իբրև մի ստոր խաբեբայ:

Պէտք է, ուրեմն, զգոյց լինել, պէտք է մօտենալ Հալաբեանին, վաղօրօք գրաւել նրա սիրտը, ըստ թու տալ նրան վատ կարծիք կազմելու բժիշկ Մելիք-Բարսեղեանի մասին:

Զը լինէր տխուր միջնադէպը Մարիամի հետ, օրիորդ աստալիացի բալը իսկապէս բժշկի համար մի բաղկա որ օր էր, Ացդ երեկոյ նա ծանօթացել էր երեք-չորս յայտնի ընտանիքների հետ, գրաւել էր մի քանի մայրերի ուշադրութիւնը: Մի հարուստ պարոն հէնց այդ երեկոյ առաջարկել էր նրան իւր տան բժիշկը լինել: Եւ նա շտապել էր հետևեալ օրն իսկ այցելութիւն անել պարոնի ընտանիքին: Մի խօսքով, այդ երեկոյթից յետոյ նրա գործերը քիչ քիչ առաջ էին, գնում, ապագան յոյսեր էր տա-

լիս նրա մասին արդէն սկսել էին խօսել հասարակութեան մէջ նրա անունը տարածվում էր, նրանով հետաքրքրութիւն:

Իբրև բարեմիտ քաղաքացի, իբրև իւր դրութիւնը հաստատել ցանկացող մի բժիշկ, նա արդէն կանոնատորել էր իւր կեանքը: Առաւոտեան զարթնում էր կանուխ, չայի ժամանակ թերթում էր տեղական լրագիրները, յետոյ կարգում էր իւր մասնագիտութեանը վերաբերեալ այս կամ այն գրքից մի քանի էջեր, այնուհետև ծանր ու հանդարտ, ծառայի օգնութեամբ, հագնվում էր, դուրս էր գալիս տնից առաւօտեան տասնումէկ ժամին: Եթէ հիւանդ ունէր, գնում էր ացցելութեան, եթէ չունէր, դարձեալ կառք էր նստում որոշեալ ժամին և մի կամ երկու անգամ անցուդարձ անում քաղաքի բազմամարդ փողոցներում:

Յետոյ նա գնում էր այն հիւանդանոցները, ուր առ ժամանակ ձրի բժշկութիւն էր անում: Այստեղ նա շփում էր զանազան ացցելուների հետ, ծանօթանում էր, և եթէ ացցելուն փոքր ի շատէ ունեոր մարդ էր, յայտնում էր նրան իւր հասցէն, չարմար դէպքում հրաւիրելով իւր մօտ:

«Տանը ես ազատ եմ, կարող եմ աւելի լաւ

քննել ձեր հիւանդութիւնը», ասում էր նաև
Եւ ամենի հետ նա վարփում էր միատեսակ
մեղմ, սիրալիք և գարմանավի ուշադրութեամբ,
Նրա համբերութիւնը սահման չունէր, երբ
քննում էր այս կամ այն շատախոս հիւանդին,
որ մանրամասն նկարագրում էր իւր հիւանդու-
թիւնը. Նա ինքն իւրաքանչիւրին շռացրում էր
շատ աւելորդ հայցեր, կատակ էր անում, սրա-
խօսում էր, գուարճացնում էր և այսպիսով
ամենի սիրաց շահում:

Այս, Անիջկա, — ասում էր հիւացած մի
տիկին իւր ընկերուհուն, — զու չես կա-
րող երեակացել ինչքան, բարեսիրա է աց
բժիշկ Մելիք-Բարսեղեանը, ինչքան ցանում է;
Հիւանդի մասին Աւրիշները մի քիչ քննում
են հիւանդին ու ցետոց ձեռքին նայում, թէ
ինչ կը տայ: Խսկ նա, սիրազ մօր պէս, ամեն բան
հարցնում է ամեն բան ուզում է խմանալ:

Պուք ճանապարհում է բժիշկ Մելիք-Բար-
սեղեանին, — հարցնում է մէկը միւսից բժանու-
ման թշու լսել եմ:
— Թշու լսել եմ:
— Թօօ, ծանօթացէք, ծանօթացէք, շատ հա-
մակրելի էր նացը ու դանաւած անդամ զայ-
— ինչպէս համակրելի:

— Ինչպէս ասեմ, պրօստօ դուշկաւ:

Հին բժիշկների դասը, որ առաջ արհամար
հանքով էր վերաբերվում, փոքր առ փոքր
սկսեց լուրջ ուշադրութիւն դարձնել նրա վրայ:
Ջատերը զգում էին, որ նրա հետ կատակ անել
չի կարելի, որ նո մի վտանգաւոր մրցակից է,
և կարող է շատերին նսեմացնել, եթէ վազո-
րօք պատճը ըլլ կապուի: Եւ հետզհետէ սկսե-
ցին նրան վրայ բամբասել: Առաջ նրան անուա-
նում էին «մանուկ», լետոյ սկսեցին «վիսկայկա»
մոկանունը գործածել: Խսկ նո, ինչպէս հիւանդ-
ների, նոյնպէս և իւր արհեստակիցների հետ
վարփում էր՝ Տերերի հետ յարկանքով և պար-
կեշտորէն, երիտասարդների հետ ընկերաբար և
համեստօրէն: Նա միւսների պէս չէր բամբասում
նրանց, չէր աշխատում վայր գցել նրանց վարկը
հասարակութեան աջքում: Իա չէր ցոյց տալիս ոչ
նախանձ, ոչ ատելութիւն, ոչ արհամարհանք:
Երբ նրա մօտ անուանարկում էին այս կամ այն
բժշկին, նա կամ աշխատում էր բամբասանքը
ընդհատել կամ ընդգիմագրում էր անուանար-
կաղին, պաշտպաններով ոչ թէ խօսակցութեան
առարկայ բժշկի անձնաւորութիւնը, այ առ-
հասարակ բժշկ մարդու արհեստը, նրա պատիւր:
Խսկ երբ գովում էին մէկին, նա լուսում էր, և

միայն այդ ժամանակ երևան էր գալիս նրա դէմքի վրայ այն խորհրդաւոր ժպիտը, որ նրան էր միայն ցատուկ և որ, կարծես, արտայատում էր հետևեալ դարձուածը.

«Ճանաչում եմ քո գոված բժշկին, չ'արժէ նայիր ինձ»....

Եւ գովողը նայում էր նրա երեսին, լոռմ էր, ամաչում էր և կամայ ակամայ մտածում.

«Ինչ խելօք դէմք ունէ այս մարդը»:

Այսպէս էր վարփում բժիշկ Մելք-Քարսեղեանը ամենի հետ, նրա հնարագէտ ուղեղը մատակարարում էր նրան միշտ նորանոր միջոցներ իւր նպատակին հասնելու համար. Մի օր այդ ուղեղը թելագրեց նրան հետևեալ սկզբունքը.

«Ընդհանուր համակրութիւն ձեռք բերելու և սմար հարկադր է ընդհանրութեան հետ շրփվող մարդկանց մօտենալ».

Եւ նա, որ անդիտակյաբար արդէն գործադրում էր այդ սկզբունքը, այժմ սկսեց զիտակցօրէն գործադրել: Նա արդէն ծանօթացել էր տեղական բոլոր խմբագիրների հետ, այցելութիւն էր արել նրանց և իւրաքանչյուրի մօտ իւրաքանչյուրի տեսակետից առանձին առանձին պաշտպաններ էին հասարակական շահեւ-

րի գաղափարը, Դրանով նա ըստ բաւականացաւ, Բայց բժշկականից, նա գրվեց մի քանի ընկերութիւնների անդամ, մօտեցաւ երիտասարդութեան հետ, ցոյց տուեց իրան հնի թշնամի, նորի եռանդուն ջատագով:

Մի ընկերութեան ընդհանուր ժողովում, իւր մի ազատամտական ճառի շնորհով, երիտասարդները ընտրեցին նրան խորհրդի անդամ, և այդ օրուանից նա անցաւ «Հասարակական գործիչների» շարքը:

Բայց հազիւ նա ստացել էր այդ անունը, հայդիւ նա ծանօթացել էր երիտասարդութեան հետ, երբ իորձով տեսաւ, որ այդ միջոցով ձեռք բերած հոչակն էլ ունէ իւր անյարմարութիւնները, Բանն այն է, որ, ինչպէս ամենուրեք, նոյնպէս և՝ բժիշկ Մելք-Քարսեղեանի արիւնակից հասարակութեան մէջ կայ մի որոշ դասակարգ, որի համար արհեստաորին ձրի հարստահարելը անբարոյականութիւն չէ համարվում: Ահա այդ դասակարգի հետ առիթ ունեցաւ մօտենալ նա, ընդունելով «Հասարակական գործիչ», անունը: Նրա մեղմ ազատամտութիւնը, նրա արտաքին բարեհամբոյց վարփորւթիւնը, նրա արտաքին բարեհամբոյց վարփորութիւնը, անխոտիր ամենի հետ և, վերջապէս, նրա ազգանուան «եան» մասնիկը—այս

բոլորը համարձակութիւն էին տալիս շատերին դատարկ ձեռքով դիմել նրա արհեստի օգնութեանը։ Եւ նա չէր կարող մերժել նա չէր կարող գանգատվել անդամ։ Գիտէր, որ հակառակ դէպում հետևանքը կարող է վատ լինել։

Պատահում էր, որ շաբաթուայ մէջ լինելու նելութեան համար երեք որոշեալ օրերից մէկը կամ միւսը անցնում էր միայն ձրիս հիւանդներ ընդունելով։

— Ի՞նչ գործի էք, — հարցնում էր նա եկող ներից։

— Ես հայոց դպրացի աղքատ վարժ ապետ եմ, — պատասխանում էր մէկը։

— Ես տիրացու եմ, պատասխանում էր միւսը։

— Ես ներսիւան դպրացի աշակերտ եմ, պատասխանում էր երրորդը։

Եւ այն և այն ճողորն էլ դպրիտ էին մի տեսակ անբռնաբարելի իրաւունքով կարծեաց նրա վարձը վճարել էին վաղուց։ Վերջապէս նա տեսաւ, որ այդպէս շարունակել անկարելի է, որ պէտք է սահմանափակել ձրիաւէրների թիւը։ Բայց ի՞նչպէս։ Սիսակն այն էր, որ նա սկզբից չէր յայտնել, թէ իրեւ մանկաբարձ բժիշկ դարձանում է միայն կանանց հիւանդութիւնները։ Ի՞նչ տեսակ հիւանդներ ասես, նա

ընդունում էր վարձով, հետեաբար չէր կարող անվարձների վերաբերմանը այլ կերպ վարվել։

Մի օր նա նստած էր իւր առանձնասենեակում։ Ընդունելութեան ժամն էր, նա բարկացած էր. մի րոպէտ առաջ նա ընդունել էր մի տէրտէրի, քննել, գեղատում գրել, և տէրտէրը, փոխանակ վարձ տալու, «ապահանիչ» էր ասել, կարծես, նրան ծաղրելու համար։ Խկ մի պացիենտ, որին բժշկել էր ծանր հիւանդութիւնից, տասն ու իննը «վիզիտի» համար ուղարկել էր ծրարով ընդամենը քսան րուբլի։

«Վիզիտին մի րուբլի, — ասում էր նա, — մարդկարող է խելագարվել, խելագարվել, թու չօրդեն չառտ կտու պատու այդպէս էլ անբարեխզութիւններ»...

Յանկարծ նա լսեց դրան զանգակի ձայնը։ Իբրև կանանց բժիշկ, նրան աշակցում էր մի մանկաբարձուհի։

— Հիւանդ՝ ասաց վերջինը, ընդունարանի դռներից ներս մտնելով։

— Տրաւիրեցէք, — պատուեց բժիշկը և մտքում աւելացրեց։ — Ճի՞ թէ վարձով։

Ներս մտաւ եւրոպական ձեռվ հագնուած, երեսը թանձր քողով ծածկած մի կին։ Երկութիւնները, ի՞նչ տեսակ հիւանդներ ասես, նա յելով աջ ու ձախ, կինը շշնչաց.

—Ես ուզում եմ ձեզ հետ առանձին խօսել: Մանկաբարձուհին դուրս եկաւ: Բժիշկը դըռները ամուր ծածկեց և հրաշերեց ամծանօթին նստել: Կինը միանգամ ևս նայեց իւր շուրջը և սաստիկ յոգնած մարդու պէս, ընկղմուեց բաղկաթուի վրայ: Նա գլուխը մօտեցրեց բժշկին և սկսեց շշնչարով խօսել: Թանձր քողի տակից նկատելի չէր նրա երեսի գոյնը, սակայն նրա ստէպ ընդհատվող շնչառութիւնից, արագ բաբախող կրծքից և գողացող ձեռներից պարզ էր, որ նա մի ինչ-որ տեսլացին յուզմունքի մէջ է: Լսելով նրա շշնչիւնը, բժշկի դէմքը յանկարծ մուայլեց: Անձանօթը իւր ասելիքը վերջացրած, պատասխանի էր սպասում:

—Զեմ կարող, —արտասանեց բժիշկը դրական եղանակով:

Կինը մի յուսահատական շարժումն արաւ:

—Ես կը սպանեմ ինձ, —լսվեց նրա աղերսալի ձայնը թանձր քօղի տակից, և սկսակութիւնը եթէ չ'ազատէք այս դրութիւնից: Իմ բոլոր յոյսերս ձեզ վրայ են, ուրիշին դիմել չեմ կարող, այստեղի բժիշկները ամենը ճանաչում են մեզ: Դուք նոր մարդ էք, դուք երիտասարդ էք, բարի էք, օգնեցէք:

Հետզետէ նրա թուլացող ձայնից երեսում

էր, որ նա արտասվում է, որ առհասարակ նրա դրութիւնը շատ յուսահատական է:

— Զեմ կարող, —կրկնեց բժիշկը միանգամ ևս, բայց ոչ առաջվաց հաստատամտութեամբ, — այդ կը լինի իմ կողմից մի յանցանք գիտութեան սուրբ աւանդութիւնների դէմ:

— Բայց միթէ յանցանք լինիլ ինձ սպանելը, —աղերսում էր անձանօթը, — միթէ դուք թոյց կը տաք, որ մի երիտասարդ կին մեռնի խայտառակութիւնով: Բժիշկ, ես պատրաստ եմ ձեզ վարձատրել, ինչքան ուզում էք, օգնեցէք:

Վերջին խօսքերը բարկացրին բժշկին, գոնէ այսպէս ձեւցրեց նա իրան:

— Տիրուհի, — ասաց նա խստօրէն, — մի մոռանաք, որ ես պատիւս փողով ծախողներից չեմ:

— Ներողութիւն, ես այդ չէի ուզում ասել: Ես գիտեմ, լսել եմ ձեր մասին, խնդրում եմ, խղճացէք ինձ:

Բժիշկը լուս էր: Նրա դէմքի սառն արտայացութիւնը տեղի տուեց մտախոհութեան: Փորձնական տապնապալի րոպէն անցաւ: Բժիշկը վերցրեց սեղանի վրայ դրած մեծադիր գլուքերից մէկը, թերթեց մի քանի վայրկեան և կրկին դրեց տեղը: Յետոյ նա ձեռով մի վճռական շարժումն արաւ, կարծես, միանգամացն

Հեռացնելով իրանից Տանր մտքերի մի շարք:
— Ձեր հասկէն, — հարցրեց նա հանդարտ:

Անձանօթ կինը հառաջեց, բռնեց նրա աջը, շնորհակալութեամբ ամուր սեղմեց և ցետոց մատիտով նշանակեց թղթի կտորի վրայ իւր տան տեղը:

— Վաղը չէ, միւս օրը, առաւօտեան տասը ժամին ես ձեզ կը սպասեմ, ասաց նա, ոտքի կանգնելով:

— Սպասեցէք, բայց միայն մի պայմանով՝ բոլոր պատախանաւութիւնը ձեզ վրայ եմ թողում:

— Ես կեանքս յանձնում եմ ձեր գիտութեանը, իսկ անունս ձեր համեստութեանը:

Ես անձանօթը գրպանից հանեց մի աղեղնագոյն թղթադրամ, սեղմեց բժշկի ձեռի ափում, աւելացնելով.

— Առայժմ:

Նա դուրս եկաւ: Բժշկի դէմքը փայլեց, Հրա աչքերի մէջ պսպլայ անյագ շահամիրութեան ոգին, նայելով ձեռի մէջ սեղմած թղթադրամին:

« Գիտութիւնն էլ նախապաշտումքներ ունէ», — ասաց նա ինքն իրան, — ինչու նրանցից մէկի դէմ չը գնալ»...

Նա ուրախ ուրախ սուլելով, գնաց միւս սենեակ, յայտնեց մանկաբարձուհուն, թէ

ընդունելութեան ժամը անցել է, ապատ է: Օրը կիրակի էր. մի օր, երբ բժշկը տվորախար ացելում էր իւր այն ծանօթներին, որոնց հետ կամենում էր բարեկամութիւն հաստատել: Այս անգամ, կէսօրուայ ուղիղ ժաներկու ժամին, նրա կառքը կանգ առաւ քաղաքի հարուստ տներից մէկի առաջ:

— Պարոն Ազամօվր տանն է, հարցրեց նա, զրան զանգին դուրս եկող իների սպասաւորից:

— Ո՞չ:

— Ո՞վ կայ:

— Աղջիկ պարոնները:

— Հարցրու, կարող է դօրսօր Մելիք-Բարսեղեանը ներկայանալ:

Մինչ ծառացի վերադառնալը բժշկը մտքում մի քանի անգամ արտասահնեց իւր աղգանունը և առաջին անգամ զգաց, որ նա բաւական կոշտ է հնչում: « Ափսոս Մելիքը, որ կազցրել են Բարսեղին», մտածեց նա, անիծելով իւր հօր հաշակը, որ չէր կարուսացել ժամանակին աւելի աղնուահնչիւն դարձնել այդ ազդանունը:

Տանտիրուհին նրան ընդունեց ուրախութեամբ և հրաւիրեց մի շրեղ զարդարած ընդարձակ հիւրասենեակ, ուր նստած էին նրա եր-

կուզոյդ հասուն աղջիկները։ Ագամօվները Թիֆիլիզում մի յայտնի ընտանիք էին, ինքը, ծերունի Ազամօվը, մի պաշտօնաթող չինօվնիկ էր, որ ժամանակին կարողացել էր իւր աղջկերանց բաղդը ապահովել առանձին առանձին օժիտով։

Տեսնելով բժշկին, չորս բոյրերը միաժամանակ ոտքի կանգնեցին հերթով սեղմեցին նրա ձեռը և կրկին նստեցին իւրաքանչիւրը իւր առաջուաց տեղը։ Սովորական նախաբանից յետոց, տանտիրուհին խօսք բաց արաւ քաղաքացին նորութիւնների մասին։ Եւ որովհետեւ նրա ուղեղը գիշեր-ցերեկ զբաղված էր իւր աղջկերանց ճակատագրով, ուստի բնական է, որ այդ նորութիւնները լինէին համապատասխան նրա մտաւոր տրամադրութեանը։

— Թուք ճանաչում էք հալաբեանին, — հարցրեց նա բժշկից, մի քանի համանման լրւրեր հաղորդելուց յետոց։

— Ճանաչում եմ։

— Երևակացեցէք, այդ մարդը քանի տարի՛ է չի պսակվել, հիմայ, ասում են, ուղում է պլասկվիլ։

— Կյո՞։

— Այո՞ւ ճանաչում կամ պահպանութեանը բանակը

— Ո՞ւմ վրայ։

Տանտիկինը շինծու արհամարհանքով ժպտաց։
— Ով գիտէ ում վրայ, այստեղ մի բազազ տիկոլց կայ, որի կնիկը իրան արիստոկրատկաէ ձևացնում, կարծեն այդ բազազի եղբօր աղջիկն է...»

Բժիշկը մի տարօրինակ շարժում գործեց, ուղղելով պենսնէն։

— Մի աղքատ աղջիկ է, ոչ հայր ունի, ոչ մայր, հօրեղբօրից զրկուած, օրուաց հացին կարօտ։ Վարինկա, — դարձաւ տիկինը իւր երկրորդ աղջկանը, որ թուխ գունով, երկարաձեւ երեսով և փոքրիկ աշքերով մի արարած էր, մի փոքր գեղեցիկ քան միւս քոյրերը, — Վարինկա, այն աղջկաց անունը ինչ է։

— Մարօ։

— Մարիա։

— Մաշա։

— Մարիամ։

Պատասխանեցին չորս քոյրերը միաժամանակ։

Բժիշկը շփոթվեց։ Առաջին անգամն էր նա լսում մի լուր, որ վաղուց արդէն պտտում էր քաղաքում։

Տիկինը շարունակեց,

— Այդ հալաբեանը մեր Թիֆլիզի ամենալաւ

փեսացուներից մէկն է, յանկարծ ուզում է պսակվել այդ աղքատ աղջկայ վրայ, Ի՞նչ կասէք, դօքտօր, լաւ բան է.

—Ես կարծում եմ, որ շատ ազնիւ բան է մի հարուստ մարդու կողմից, —պատասխանեց բժիշկը համեստութեամբ:

—Ես էլ կարծում եմ, —մէջ մտաւ տիկնոջ աւագ աղջիկը:

—Ես էլ, —կրկնեց երկրորդը —Վարինկան:

—Ես էլ, —կրկնեց երրորդը:

Չորրորդը լռեց, որովհետև հասակը չէր ներում համարձակ լինել:

—Բայց դուք տեսէք, որ, —շարունակեց տանտիկինը, այդ աղջիկը կոտրատվում է, ասում են, չի ուզում դնալ հալաբեանին: Խզուր չէ ասած՝ աղքատ ու հպարտ:

—Մամա, —խօսեց Վարինկան, —հպարտութիւնը խօմ չէ պատճառը:

—Բայց քոյլերը նայեցին միմեանց երեսին, դլուխները ցած գցեցին և աչքի տակով սկսեցին նայել բժշկի կողմ:

—Ինչո՞ւ չի գնում, —կրկնեց մայրը իւր հարցը:

—Սիրահարված է մէկ ուրիշի վրայ, —լսվեց չորս քոյլերի կողմից, բայց թէ որն ասաց՝ այդ մնաց անցատ:

Բժիշկը երկրորդ տարօրինակ շարժումն արայ, այս անդամն աւելի զօրեղ, ու նկատեց, որ ամենից աւելի յամասութեամբ նայում է իւր վրայ Վարինկան: Դա այն օրիորդն էր, որին բժիշկը հետամուտ լինելիս Մարիամը տեսել էր այն չարակուշակը երեկոյց: Տանտիկինը մկնեց տրամաբանօրէն Տաղըել և առհասարակ պախարակել սէր ասած բանը և սիրահարվողներին:

Բժիշկը յաջողութեամբ փոխեց խօսակցութեան առարկան և, մի քաւորդ ժամի չափ ևս նստելով, հրաժեշտ տուեց, գուրս եկաւ վերին աստիճանի անախորժ տպաւորութեան ներբոց — Ենախորժ, որովհետև այն, ինչից վախենում էր, արդէն կատարվում էր — նրա անունը մկնել էր բամբատանքի առարկաց դառնալ: Փողոցի մայթի վրայ նոյն վայրկեանին, երբ ձեռափայտը բարձրացրած կառք էր կանչում, նրա առաջով անցաւ: Որուբէնը: Հանդիպումը այնպէս էր, որ բժիշկը հակառակ իւր ցանկութեան, ըստ կարողացաւ խոյն տալ:

— Ան, փառք Աստուծոյ, քո երեսով էլ տեսայ, — գոյչեց նա կեղծ զգացմունքով, այնպէս որ, կարծես, ոչինչ անախորժ ութիւն տեղի չէր ունեցել նրանց մէջ:

Թուբէնը շատ սառն բարեկեց և ակամայ ընդունեց ընկերոջ ձեռը, որ ծածկուած էր փոյզ, լուն ձեռնոցով:

—Եղբայր, ինչու չես գալիս ինձ մօտ, միթէ քեզ էլ պէտք է հրատիրեմ, որ շնորհ բերեա, յանդիմանեց բժիշկը ընկերաբար, ուշադրութիւն չը դարձնելով ընկերոջ սառնութեան վրայ:

—Ես քեզ մօտ ի՞նչ գործ ունեմ, արտասանեց Թուբէնը դառն սրտմտութեամբ:

Բժիշկը իրան զարմացած ձևացրեց:

—Ի՞նչպէս, դու ինձ մոռացել ես:

Եւ, նայելով Թուբէնի երեսին, գլուխը յանդիմանութեամբ երերեց աջ ու ձախ և խորին համեստութեամբ շարունակեց.

—Հաա, ուրեմն մոռացել ես: Ջատ լաւ, մոռացիր, ինչ անեմ, երեի, արժանի եմ: Բայց ես այդպէս չեմ, ես միշտ ցիշում եմ իմ հին ընկերներիս, ես չեմ կարող նրանց հետ այդպէս շուտ կտրել բարեկամութիւնս:

Այս խօսքերի տակ թագնուած յանդգնութիւնը կատաղցրեց Թուբէնին:

—Վասիլ, —գոչեց նա դողդոջուն ձախնով, —վաղմաց ես սովորել այդ եզրի իտական լեզուով խօսելը:

Բժիշկը ժպտաց: —Են, եղբայր, ես չեմ հասկանում ինչու այդպէս բարկացած ես ինձ վրայ, ինչէ պատահել: Այս երկրորդ յանդգնութիւնը միանգամայն ապշեցրեց Թուբէնին:

—Ի՞նչ, դու դեռ համարձակվում ես արածդ մոռանալ, դու դեռ հարցնում ես:

Խօսակցութիւնը տեղի ունէր փողոցի մայթի վրայ, և այդ սաստիկ անհանգստացնում էր բժշկին: Նա անդադար նայում էր աջ ու ձախ, վախսենալով մի գուցէ Թուբէնի հետզհետէ գրգռուող ձայնը անցորդների ուշադրութիւնը դրաւի:

—Թուբէն, —ասաց նա մեղմ և համոզիչ ձայնով, մի և նոյն ժամանակ, աջ ձեռը դնելով ընկերոջ ուսի վրայ, —Ես տեսնում եմ, որ այսօր քէփդ տեղը չէ: Ահա կառք, չի՞ս բարեհաճիլ արդեօք գնալ ինձ հետ տունս, Ես մի երկու ժամ ազատ ժամանակ ունիմ, կարող եմ նուիրել քեզ:

Թուբէնը լուս էր:

Գնալ բժշկի տունը — նա երբէք չէր համաձայնուիլ, բայց խօսել նրա հետ վերջին անգամ, պահանջել նրանից վերջին բացադրութիւնը — այդ նա ցանկանում էր վաղուց: Ար-

գեն հինգ շաբաթ Եր անցել այն երեկոյթից, երբ Մարտիանի հետ խօսելուց խոյս տուեց բժիշկը և այսօր Թուրքներ առաջին անգամն Եր պատահում նրան. Նա զիտէր, որ այսուհետեւ բժիշկը աշխատելու է, հետու պահել իրան ի՞նչպէ, ո յարմար առիթը բաց թողնել, ինչպէ ո անպատճ թողնել նրան, ինչպէ ո թույլ տալ, որ նա ազգական հեշտութեամբ պատասխանառութիւնից,

Ես քո տան շէմքը ոփք դնի չեմ կարող պատասխանեց Թուրքներ, հաղին զսվերով կատարութիւնը, բաց քեզ հետ պլատը, ինուն, որովհետեւ ստիպված եմ խօսել Անցնենք միտքոք, ինաւ գնացին ծիստին համան գիրզոցի ծացըք. Թուրքներ առաջարկեց նրան մտնել յօտակաց որճարանը. Խանութիւններ համան մտնել յօտակաց բաւական ընդարձակ գահինում, առանձին սեղանների շուրջ, նստած Եին մի քանի, վայելուչ հազնուած, մարդիկ, որը ուրեմն Եր իր մում, որը գարեջուր, որը նասպի Եր խորուն Ընդհանութիւն աղմուկի միջից որոշ բախում Եր մօմիս Վախճանի վախճանի խորուս ձայնը, Բժիշկը նացեց պատերին, ինչպէ սիր մարդ, որ ուզում Եր ցոյց տալ, թէ առաջին

անգամն է ազգպիսի տեղ մտնում, այն Ել ակածաց.

— Մի վախենալ, ացստեղ չենք մնալ,—ասաց Թուրքներ և առաջնորդեց բժշկին գահին ետև կողմում գտնվող մի փոքրիկ սենեակ, ուր ոչ ոք չկար.

Բժշկը գարեջուր պահանջեց, Թուրքներ մի բաժակ սուրճ, և նրանք նստեցին սենեակի մի անկիւնում, պատուիրելով սպասաւորին գռները ծածկել.

— Մեր խօսակցութեան համար, — սկսեց Թուրքներ, — մի ազգպիսի չէզոք տեղ էր հարկաւոր, բարեկամական ասպարեզ այլ ևս չը պիտի գոյութիւն ունենայ մեզ համար, Վասիլ, դու գիտես ի՞ն յուզմունքի պատճառը. Ասա, իրաւունք ունեմ քո փարմունքը տմարդի համարել, ասա, ունեն իրաւունք:

— Մինչեւ չանդարտիւն, — պատասխանեց բժիշկը սառն և խաղաղ եղանակով, — քեզ հետ խօսել չի լինի: Խմում եմ կենացդ և ցանկանում եմ, որ իբրև տղամարդ կարողանաս զապել քեզ. Սիրելիս, — շարունակեց նա, զարեջրի բաժակը հազիւ ըրթունքին մօտեցնելուց յետոց, բերանը սրբելով, — մարդու հետ ազգին փարիզ չի կարելի, ինչպէս գու ես փարփռմ:

Այս, գիտեմ, ինչու ես գրգռուած, Բայց դիցուք
ես մի յանցաւոր եմ, դու գատաւոր, միթէ ջը
պիտի լսես ինձ և յետոց գատես:

— Սառնարիւն լինել այն ժամանակ, երբ
տեսնում եմ անիրաւութիւն. — Ես չեմ կարող:
Բայց կ'աշխատեմ զսպել ինձ, ասա, ես լսում եմ:

— Ո՞րն է իմ յանցանքը, ցոց տուր լինդրեմ,
— առաջ տարաւ իւր խօսքը բժիշկը, արմունկ-
ները դնելով սեղանի ծացրին և աչքերը ակնո-
ցի միջով ուենելով ընկերոջ երեսին: — Որ ես
այն երեկոյ բայցարութիւն չեմ տուել քրոջ:
Համաձայնիր, որ տեղը անյարմար էր, Թուբէն,
խօս չը կարմիր մի ամբողջ հասարակութեան
մէջ ընտանեկան գաղտնիքը պարզել: Մարիամը
իրաւունքունիք ինձանից հաշիւ պահանջեր:
Նա իրաւունք ունի ինձ անամօթ գաւաճան
անուանել: Նա իրաւունք ունի կարծելու, որ
ես նրան մոլորեցրել եմ և յետոց երես դարձ-
րել: Տեսնում ես, Թուբէն, ես ոչինչ չեմ թագց-
նում, բոլորը ասում եմ: Այս, պարզ ասում եմ,
որ քրոջ ես սէր եմ լսուտովանել, որ ամ-
բողջ երկու ամիս ամարանոցում հաւատացրել
եմ նրան, թէ վաղժւց շատ վարուց նրան
սիրում եմ, որ այդ երկու ամսուաց ընթացքում
բացի սիրոյ յացերից, ուրիշ բան չի հետա-

բրբրել ինձ: Խոստովանում եմ և այն, որ ես
երդուել եմ կեանքս կապել նրա կեանքի հետ
յաւիտենական կապով: Եւ ահա այսօր նա ըպ-
դում է, որ ես սառել եմ դէպի նա, որ ես
փախչում եմ նրանից: Ի հարկէ, ով լինէր նրա
տեղի, ինձ մի անամօթ, անխիղի, անպատկառ
շառլատան պիտի համարէր: Բայց, համբերիր,
այդպիս է արդեօք, ճշմ որիտ ես շառվատան եմ,
թէ արդարանալու պատճառներ ունիմ: Խօմ
չի կարելի այդպիս շտապ դատավճիռ կայաց-
նել: Թուբէն, Մարիամը կին է, դիտես, որ կի-
նը առ հասարակ շատ էլ լոռր դատել չը դի-
տի: Խակ դու, զու տղամարդ ես, զու պէտք է
խելքիդ հաւատաս, զու չը պիտի ենթարկվես
րոպէի ազդեցութեան: Ես ասեմ, զու մտածիր,
մեղաւոր եմ, թէ . . .

Եւ նա սկսեց պարզել իւր պատճառաբանու-
թիւնը: Վերցնելով աղքատութիւնը իբրև հիմք
իւր տրամաբանութեան, նա շատ լրջամիտ, շատ
խոչուն կերպով և յաջորդաբար արծարծեց այն,
ինչ-որ վաղուց պատրաստել էր ուղեղում: Նա
կարծանալի արտեստադիտութեամբ պատկերաց-
րեց չքաւոր ամուսինների գրութիւնը, նրանց
դառն կեանքը, նրանց հոգեկան աննախանձե-
լի վիճակը: Նա մէջ բերաւ և զաւակներին,

խոճալի գոյներով ներկայացրեց նրանց բաղզը:
Տեղ տեղ նա չը դուրս եկաւ իրականութեան
սահմանից, բաց և տեղ տեղ գորեւով երեւակա-
ցութեանը, թշուառութիւնը կրկնապատկեց ան-
խիղճ կերպով:

— Ահա այս ամենը աչքի առաջ ունենալով,
— շարունակեց նա, խրախուսվելով Ոուբէնի
լուութիւնից, որ համաձայնութեան տեղ էր
ընդունում, — ես չեմ փստահանում խոստումս
կատարել: Աւելի յաւ է դաւաճան երեալ Մա-
րիամի աչքում, քան նրան դժբաղբացնել: Հա-
ւատացիր, ես դարձեալ սիրում են նրան, օօօ,
սիրում եմ, և հէնց սիրելուց եմ ացգակն վար-
դում: Թող ես տանջուեմ, թող չարչարպեն, մի-
այն թէ իմ պատճառով նրա ամբողջ կեանքը
չը թունառորդի: Ես չեմ ուզում անսիրտ էզօ-
խստ լինել: Մարիամը գեղեցիկ է, երիտասարդ,
կրթուած, լուելօք, միշտ ինձանից տեղի տաս-
նապատիկ յաջող ընտրութիւն կարող է անել:
Նա սովոր է փարթամ ապրել, իսկ ես, ես ով
եմ, աղքատութեան մէջ ծնված, աղքատութեան
մէջ մէծացած մի համեստ, մի աննշան բժիշկ,
որի նմանները շատ կան Թիֆլիզում, Մարիամին
հարկաւոր է անհոգ, առատ և շքեղ ապրուստ,
իսկ ես միջոց չունեմ, ես աղքատ եմ: Մեղք

չէ, որ ես այդ քննքով արարածին ձգեմ օրուայ
հացի կարօտութեան մէջ: Նրան, Մարիամին,
օօօ, Ոուբէն, մտածիր, նա կարող է ուրիշի
հետ բալզմաւոր լինել, նրա ետևից ընկած էն
հարուստ մարդիկ: Ես աց գիտեմ. դեռ կէս
ժամ սրանից առաջ ես մի շատ պատուաւոր
ընտանիքումն էի, որտեղից դուրս գալիս դու-
պատահեցիր: Այնտեղ ինձ ասացին, որ յայտ-
նի հարուստ Հալաբեանը իբր թէ. . . ա-
յու, ինչո՞ւ թագինեմ. . . իբր թէ Մարիամին
առաջարկութիւն է արել: Այդ կատարեալ բազ-
դաւորութիւն է: Եւ դու եթէ տեսնէլիք, թէ
այն ընտանիքում ինչպէս նախանձում էին
Մարիամին, կը հաւատացիր...

Մինչև այդ վայրկեան Ոուբէնը լուռ էր:
Հսանելով իրան, նա թոյց թուեց բժշկին ասել
բոլորը, ինչո՞ր կամենում էր: Բայց վերջին
խօսքերը այ ևս սպառեցին նրա համբերու-
թեան վերջին կաթիլու: Նա գորաց ամբողջ
մարմնով, ացգչափ սառն յանդգնութիւն նա
տակաւին չէր սպասում իւր նախկին ընկերութիւն:

— Բժիշկ! — գոչեց նա խեղդուկ ձայնով! —
զու աւելի վատ ես եղել, քան թէ կարծում
էի ես: Դու ու միացն խաբել ես մի անմեղ
աղջկայ այլ և աշխատում ես քա խաբէու-

թիւնը արդարացնել բարոյական պատճառաւարանութիւնով։ Աւելի՛, դու մինչև անգամ ձրդտում ես քեզ վեհանձն ձևացնել։ Այժմ բեզ բոլորովին ճանաչեցի։ Ես չը գիտէի, որ դու ացշափ ճարպիկ ես, օ օ օ, չը գիտէի։ . . .

—Գարձեալ զոգուուեցիր, գարձեալ՝ ընդհատեց բժիշկը բարեսիրտ վարժապետի եղանակով, —նու, Թուբէն, ես քեզ բոլորը բացարեցի, այժմ դու գիտես։

Ես հանգարտ և հանգիստ դարեջրի բաժակը մօտեցրեց շրթունքին։

—Մնում է ինձ համար մի դառն վիշտ, — շարունակեց Թուբէնը, —որ քրոջն և քո մէջ սիրոյ առաջին սերմ ցանովը ես եմ եղել, ես, որ տամներկու տարի քեզանով խարված եմ եղել։ Բայց ոչ, ինչու, ես երբէք չեմ խարվել։ Զէ որ դու ինձ շարունակ ասում էիր, թէ չքաւրութիւնը մի իմաստուն դպրոց է, թէ նոս պատրաստում է իսկոք, առողջամիտ մարդիկ, Մի բան միայն թագցնում էիր, և ես այսօր եմ միայն զգում այս բանը. . . ացիմաստուն դպրոցից դուրս եկած ճարդիկ երբեմն զուրկ են լինում մարդկացին սրտից։ Օօօ, ինչպէս գիտես անամօթ վարմունքդ արդարացնել, Խոնարհվում եմ շնորհքիդ առաջ, դու

արժանի ես գովասանքի։ Վեհանձն ձեանալ այն ժամանակ, երբ մարդ ստորէ — գրահանար տաղանդ է հարկաւոր։

—Թուբէն, —ընդհատեց բժիշկը գրգռուած երիտասարդի անկապ խօսքերը, որ բղասում էին մի վիրաւորված արտից։ — Թուբէն, կամաց խօսիր, միւս սենեակում կարող են լսել ու բայց Թուբէնը, ուշադրութիւն չը դարձնելով նրա նախազգուշութեան վրայ, շարունակեց։

—Աս Մարիամ, եթէ վիտենացիր, թէ զորվան բաղդասը ես, որ զիկուել ես ազդպիսի մարդու ընկերակցութիւնից։ Բայց ինչ, դու գես քո խորին ատելութեան մէջ չես կարողանում մոռանայ քո երևակացած անցեալ երջանկութիւնը։ Դու գես արտապատ ես գիշերու ցերեկ, մինչդես պլատ, ձիճաղէիր և ուրախանացիր։ Անամօթ, — գարձաւ նա բժշկին, որ շուարված լսում էր նրա վաւանցանքը, — դու գես յանդգնում ես ծաղրել բրոջս։ Թուբէնը ես, որ նրան հետամուտ է, լինում մի չափեան. . .

— Թուբէն, գարձեալ ընդհատեց բժիշկը, այս անգամ անհամբեր և զանակուի։ — բաւական է, կարող են լսել, դու ինձ վիրաւորում ես։

— Ես քեզ վիրաւորում եմ, — կրկնեց Թուբէնը

դառն ժպտալով, — ի՞նչ միթէ դու զեւ վիրա-
ւորվելու ընդունակութիւն ունես:

— Բաւական է, Թուբէն, — արտասանեց յը-
ժիշկը, այ ևս չը կարողանալով զավել իրան և
ոտքի կանգնելով:
Նրա հետ միասին ոտքի կանգնեց և Թու-
բէնը, գունատված, դողդողալով: Եժիշկը նայեց
նրա երեսին և մի չարածիտ բան կարդաց նրա
աշքերի մէջ: Նա արտափած երեսը ցնու դար
ձրեց:

— Զգուելի, — ձախն տուեց Թուբէնը, ձեւը
ուժգին լսկելով սեղանի ծացրին:

Անսահման սառնասրութիւնը արդէն դա-
սաճանում էր բժշկին: Բայց և աշնալէս նա
քաջութիւն ունեցաւ մի վացրկեան ևս զավել
իրան և խույժ ձայնով պատասխանեց:

— Կաս քրոջդ, որ ես դարձեալ սիրուծ և՛ս
նրան և պիտի սիրեմ...

Գուցէ բժշկը անկեղծ էր ասում, դուցի, դա
նրա կողմից մի տեսակ մեղմացուցիչ դարձուած
էր, սակայն այդ դարձուածը այնքան իրբ
թւաց Թուբէնին, որ նա կացրինսաբար կորցրեց
խելքը: Նրա աշքերը արխւով լցվեցին, սենեա-
կը խաւարվեց և նա կրեթէ անզգայաբար ձե-
ռը բարձրացրեց:

— Ահա քեզ իմ քրոջ պատասխանը...

Եւ բժիշկը իւր ձախ այտի կրաց զդաց մի
սառնութիւն, որ խկզն փոխվեց այրող տա-
քութեան: Նա ոչինչ չը կարողացաւ ասել:
Կարմրած աչքերով, բօրբոքված զէմքով նայեց
իւր շուրջը:

Դոնները բացվեցին, երևեցաւ սպասաւորը,
նրա ետևից մի քանի հետաքրքիր գէմքեր,
որոնց թւում և՛ մօսիօ Վախվախսեանինը, ճը-
ժիշկը իւր ձեռին սեղմած բուբլանոցը շարտեց
սպասաւորի կողմ և շտամբեց աննկատելի կեր-
պով դուրս մկնուել:

— Խի խի խի, — ուղեկցեց նրան զոնների մօմ
հաւաքված ակս նատեսների և մօսիօ Վ. սփա-
խեանի միահամուռ ծիծալլ:

Այս ու ան սուսակու նորմա այսու ներ ու-
նեմ յարաբուզը ու ու անձ առ միմար նիւ-
զուն բառ նամառու ուշ ուր ուր մօտ զիմար
մանամարտան ուժ ուր ուր ու ուր
ուր ու ներ ու ան անքան մայուսուն ու բարս մայ
ուր ունեմ ուր ունեմ ունեմ ունեմ
մայ ու սուսակու միշ ունեմ ուր ու ուր
մայուս ուր բարսուն ուր բարս ունեմ ունեմ

գույքը արևատառության զարդ նույն բազ աշխա-
ցի պարբ առաջ մասն պահ ու պետքի առ-
առ բայս սմբատական պահ առ ի առ առ
պահ սմբատական պահ առ ի առ առ առ ի առ
XIII

—Մոռացիր, սիրելի Մարօ, մոռացիր: Ճշմա-
րիտն ասած, ես կարծում էի դու առելի
քաջասիրտ կը լինես: Միթէ չես կարող ար-
համարհել այդ մարդուն: Հաւատացիր, տասն
օր առ աջ ես ատում էի նրան, ինչպէս մի վատ
թշնամու: Խոկ այն անցքից յետոյ, արհսմար-
հում եմ: Նա քո ոտի գարշապարին անգամ
չարժէ: Դու կը թքէիր, եթէ տեսնելիր ինչպէս
նա սառնարիւն ընդունեց ինձանից այն վիրաւո-
րանքը: Օխ, զգուելի է նա, զգուելի: Գիտես,
ես այժմ մինչեւ անգամ ափսոսում եմ, որ այն-
պէս վարվեցի նրա հետ, որ չը կարողացաց ինձ
զսպել: Խոկ դու գեռ չես մոռանում այդ մար-
դուն, դու գեռ չես հանգստանում:

—Ես բոլորովին հանգիստ եմ այժմ, ես նը-
րան վաղուց եմ մոռացել: Նա ինձ համար դո-
յութիւն չունի:

—Երանի այդպէս լինէր: Բայց դու ինձ խա-
րում ես, դու ինձանից էլի թափցնում ես վիշ-
տըդ: Դեռ մէկէլ օրը երազումդ նրա մասին

էիր զառանցում, դեռ երէլի երեկութեան իմ սե-
նեակից լսում էի քո արտավելու ձայնը: Եցդ-
պէս չի կարելի շարունակել Մարօ, Դու քեզ
մաշեցիր: Մտիկ արա հայերուն, քեզ ճանաչել
չի լինում, այնքան փոխվել ես:

Եւ ամեն օր եղբայրը այսպէս յորդորում էր
քրոջը և ամեն օր քոցը հաւատացնում էր
եղբօրը: Թէ մոռացել է այն, ինչոր կոպիտ
յամառութեամբ հալածում էր նրան գիշեր ու
ցերէկ, ինչպէս մի չար ոդի:

Եցժմ նա ատում էր բժշկին, ատում էր փոր
վիրաւորված սրտի բոլոր թունալից ուժերով:
Սակայն հէնց այդ ատելութիւնն էր, որ սախ-
պում էր նրան մի կէտի վրաց մառձել, թէ
ինքն անպատճան է, արհանարհուած և հա-
սարակութեան ծաղրի նշաւակ դարձած:

Ամիս ու կէս էր անցել այն երեկոցից, և
նա դեռ իւր կրած վիրաւորանքի թարմ տապա-
ւորութեան տակ էր: Նրա ամփոփի և առողջ բը-
նաւորութիւնը, մի անգամ ենթարկվելով մի
զօրաւոր զգացման, չէր կարող այն գիւրու-
թեամբ ազատվել ազգեցութիւնից, ինչպէս
կուցէ ազատվէր մի աւելի թեթև բնաւորու-
թիւն: Սիրելով մի անգամ, նա անձնատուր
եղաւ այդ սիրոյն մոլեռանդ աբար: Հանգիստիով

իւր անհուն սիրոց փոխարէն մի տմարդի դա-
ւաճանութեան, նրա զգացուն սիրոց լողոտիեց
մինչև իւր ամենալորին ծալքերը:

Այդ գիտէր Ռուբէնը, զգում էր, որ գժուար
է միսիթարութիւն տալ քրոջ սրտին: Դա էր,
որ նրան յուսահատեցնում էր, զա էր, որ
աւելի ու աւելի գրգռում էր նրա ասելութիւնը
գէպի իւր նախկին ընկերը, թէպէտ հաւատաց-
նում էր Մարիամին, թէ արհամարհում է բը-
ժշկին:

Եւ ինչ ջանք ասես կործ չէր դնում նա իւր
քրոջ սիրոց ամոքերու համար: Առաջին պայման
նա աշխատեց, որ Մարիամը միայնակ չը մնայ:
Այս պատճառով, նա, երկար պարելուց յետոյ,
դժուար քաղաքի կենտրոնից աւելի մօտիկ մի
տան մէջ երկու սենեակ: Այստեղ հարևան-
ները այնպիսի մարդկե էին, որոնց հետ Մա-
րիամը կարող էր յարաքերութիւն ունենալ:
Այդ տանը, ի միջի այսոց, բնակվում էր և նրա
դիմեազիական ընկերուհիներից մէկը,—մի ոռու
օրիորդ, որի հետ ծանօթ էր Ռուբէնը, Առանց
բուն պատճառն ասելու, երիտասարդը յայտ-
նեց այդ օրիորդին իւր քրոջ զոգեկան զրո-
թիւնը և ինոգրեց միայնակ չը թողնել նրան
այն ժամերին, երբ ինքը տանը չէր լինում:

Իսկ պաշտօնից ազատ ժամանակ նա ինքը չէր
հեռանում Մարիամից, ամեն օր գրեթէ ուժով
տանում էր նրան զբունելու: Յաճախ նա իւր
հետ բերում էր այս ու այն ընկերոջը կամ,
ծանօթին, և նկատում էր, որ Մարիամը ամենի
հետ վարփում է շատ անտարբեր, շատ սատն և
մինչև անգամ մի տեսակ կասկածանքով:

Միւս կողմից Մարիամին աշխատում էր ծիլ-
թարել նրա կարուձել փարժուհին—Սաթինիկու:

— Գիտես սիրելիս, —ասում էր մի օր այդ
օրիորդի, Մարիամի ինքնասիրութիւնը գրաե-
լու համար,—դու բոլորովին ծոց ես, չես աշ-
խատում: Վօտ երկու ամիս է սովորցնում են,
մինչև այժմ մի օրինաւոր բան ձևել ըստիւս:
Ամօթ չէ:

— Ներիր, Սաթինիկ, ես անլինդունակ եմ:

— Ոչ, դու անլինդունակ չես, դու ծոց ես:
Ասա, լոնդրեմ, մինչև երբ պլաք և, նատես, հա-
ռաջես ու ցիմար բաների վրայ մտածես: Ամօթ
է, Մարօ, հաւատացիր, ամօթ է: Ասենք թէ
մենք կանացքս թուլասիրտ արարածներ են,
թէ և այդ սուտ է, բաց այդքան: Ոչ, ես քեզ
պէտք է անպատճառ խելքի բերեմ: Խիր ինչ
եմ ասում: Դու շաբաթական երեք անդամ զա-
լիս ես ինձ մօտ, այժմ ես վճռել եմ, որ երկու

անգամ էլ ես քեզ մօտ գամ, Ես եղբօրդ հետիսուել եմ: Նա վազը իմ երաշխաւորութիւնով քեզ համար մի կարի մեքենայ կը վերցնի ապասիկ և այսուհետեւ դու ձեր տանն էլ կար կանես: Ըստու Ծննդեան տօները կը հասնեն, ես երկու շաբաթ ազատ կը լինեմ, այն ժամանակ ամեն օր կը տեսնուինք: Մենք միասին կ'աշխատենք, կը կարդանք, կը լուսենք, կը դրունենք: Լաւ:

Միւս օրը մեքենան դնուեց և Սաթինիկը իւր լուստումը սկսեց կատարել: Եւ այսպէս, նրանք տեսնվում էին շաբաթական հինգ անգամ: Վարժուհու այս անկեզծ հոգացողութիւնը իւր ընկերու հու վերաբերմամբ հիացնում էր Թուբէնին:

— Չը գլաւեմ ինչպէս շնորհակալ լինեմ նրանից, — ասում էր երլուսանապիլ Մարիամին: — Նա մեզ շատ է պարտաւորեցնաւմ: Ես ուզում եմ նրան վարձ առաջարկել:

— Մուբովկ անգամ մի անցկացնիլ, — զիտ շացրեց Մարիամը, — թէ չէ նրան ասատիկ կը վիրաւորես: Ես մի երկու անգամ նրա հետ լուսել եմ այդ մասին, ինձ հետ կոռւել է:

Մի ուրիշ անգամ, Սաթինիկին տուն ուզեկցիւրց ցետոց, Մուբէնը վերադարձաւ աւելի ողերփած:

— Ի՞նչ հրաշալի աղջիկ է, այց Սաթինիկը, գոչեց նա անկեղծ պրով, — ի՞նչ բան լինիք, ի՞նչ առողջամտութիւն, ի՞նչ բարի սիրտ: Զափազանցութիւն չի լինիլ եթէ ասեմ, որ կեանքում առաջին անդամն եմ տեսնում մի ազգպիտի հայ օրիորդ: Աարձես, բնութիւնը լինելով նրա արտաքին գեղեցկութիւնը, սպարգեել Ենք հոգուն:

— Մենք հանում ենք, բայց կան մարդիկ, որ արհամարհանքով են նացում...

— Այց անզին մարգարտի վրայ:

— Ես երբէք չեմ մոռանալ, թէ ի՞նչ պէս մի անդամ նատալիան նրան չչուտ սատանաց: անուանեց իւր ընկերուհիների մօտ: Խեղճ օրիորդը միւս օրը լսել էր ացլ, չը զիտէր ինձ մօտ ինչպէս թագանէր իւր վիրաւորանքը:

Ձեշնտ, — կրինեց Թուբէնը, — ես այդ չեղութին չեմ փոխիլ նատալիավի պէս տասը ունեցելուհիների, հետ:

Եւ այսպէտ քոյր ու եղբայր սիրում էին այն օրիօրդին, որի պարզ սիրալիր բնաւորութիւնը և եռանդուն աշխատասիրութիւնը արդարն հագուազիւտ էին: Փոքր առ փոքր Սաթինիկը կարողացաւ ազդել Մարիամի վրաց: Միշտ անա-

չեցնելով, միշտ կազելով իւր աշակերտուհու ինքնասլութեանը, նա մասամբ հասաւ իւր նպատակին: Մարիամը պարապում էր աշխայդով և սիրով: Նա, կարծես, սկսել էր մոռանալ իւր վիշտը: Ոուբէնը ուրախանում էր, տեսնելով իւր քրոջ դէմքի վրայ երեւմն երեւմն այն գուարթ ժպիտը, որ յատուկ էր նրան և որ վերջին ժամանակ չէր արտայալտփում այդ մըսայ դէմքի վրայ:

Սակայն նա դարձեալ խաբփում էր, և չը գիտէր, թէ այդ արտաքին գուարթութիւնը որքան բռնազօսիկ է և որքան հոդեկան ճիգն էր անում Մարիամը իւր վիշտը քօղարկելու համար:

Ծննդեան տօները մօտեցան: Ոուբէնը երկու շաբաթով ազատվեց ուսումնարանսկան պարապունքից: Բայց նա ունէր երկու մասնաւոր դասեր, որ ստիպում էին նրան օրական երկու անգամ այցելել քաղաքի հեռաւոր թագերը:

Հալաբեանի քեռորդու հետ պարապելուց նա հրաժարվել էր հէնց առաջին շաբաթ: Մի քանի դասերից յետոյ նա տեսաւ, որ այդ աշակերտը իսկապէս կարօտ չէ աւելորդ դասերի: Նա հասկացաւ հալաբեանի նպատակը, վիրաւորվեց: Ամուրին շատ խնդրեց շարունակել

դասերը, բայց ի գուր:

Այնու հետեւ Ոուբէնը շատ քիչ էր պատահում հալաբեանին, այն էլ միայն փողոցում: Բարեւում էր, անցնում, որպէս զի առիթ չը տայ աւելի մօտիկ յարաբերութեան, նա կատարում էր Մարիամին տուած իւր խոստումը, չէր ուզում, որ Հալաբեանը այ ևս այցելէ իրանց: Եւ ամուրին չէր համարձակփում այցելել, որքան և այդ ցանկալի էր նրա համար:

Ոչ Ոուբէնի սառնութիւնը, ոչ իշխան Սահարունիի երկդիմի ակնարկութիւնը այն երեկոյթում – չունեցան այնքան ոյժ, որ խաղաղացնեն հալաբեանի միանգամ արդէն գրգռուած կիրքը: Նա լսել էր, որ քաղաքում լուր է տարածվել Մարիամի հետ ամուսնանալու մասին: Մօսիօ Վախիվախեանն էր հաղորդել նրան այդ լուրը: Նոյն Վախիվախեանը շտապել էր անմիջապէս պատճել նրան և հիւրանոցում Ոուբէնի ու բժիշկ Մելիք-Բարսեղեանի մէջ տեղի ունեցած անցքը:

—Դու ասում ես լսեցիր, որ Ոուբէնը բժիշկին անպատեց, – հարցրեց հալաբեանը մի քանի անդամ:

—Ոնց թէ լսեցի, աչքովս տեսայ, մէկ փախաւ, դու ես իմ պարոնս, ոնց որ փախլուկ նապաստակը:

Թուրէնի այս վարմունքը դիմք եկաւ հալարեանին, որ աչնքան վրդովաւծ էր բժիշկի դէմ: Նա զգում էր, որ բժիշկը արժանի է այդ պատժին:

Նա ինքը պատրաստ էր աւելի զօրեղ պատժել այդ մարդուն, ոչ թէ, նրա համար, որ նա դաւաճանել է Մարիամին, այլ, որ յանդկնել էր այդ օրիորդի ուրբ գրաւել:

Տօն օր էր: Կէսօրից մի քիչ առաջ Մարիամը, Թուրէնը և Սաթինիկը զբունում էին Գօրգինսկից արօսափեկտի վրայ: Զը նացեալ, որ ձմեռուան կէսն էր, եղանակը տաք էր, երկինքը պարզ, ոչի մաքուր և պայծառ: Զբունողների խիտ բագմութեան մէջ նրանց առաջը գուրս եկաւ հալաբեանը, որին ուղեկցում էր անխուսափելի մօսիօ Վախովախեանը: Տեսնելով Մարիամին, ամուրին թողեց իւր ուղեկցին, ծօտեցաւ, բարեւեց և սկսեց զբունել նրա հետ: Վերջին օրերը էէկ ամուրին նկատելի կերպով նիհարել էր, աչքերը խորն էին ընկել և երեսի կաշուի ծալքերը աւելի խոշորացել էին:

Թուրէնը դիտմամբ մի քանի քայլ յետ մնաց, որ Հալաբեանի հետ ման գայ, իսկ Մարիամը Սաթինիկի հետ թև թևի տուած առաջ անցաւ: Հալաբեանը խօսեց Նիկողայոս Սադափեանի

մասին, ասաց, թէ վերջինի գործերը այժմ շատ յաջող են գնում, թէ նա վերցրել է մի կապալ, որից մեծ գումար պիտի աշխատի: Այդ մի նուրբ ախարկութիւն էր, որով ամուրին Թուրէնին յիշել էր տալիս Սադափեանին արած իւր լաւութիւնը:

— Ուրեմն նա շուտով ձեր պարտքը կը տանց, — հարցրեց Թուրէնը, գուշակելով նրա միտքը:

— Մի մասը արգէն տուել է: Բայց ես այդ մասին չեմ մտածում, — կը տայ չի տալ մի և նոյնն է: Ես աւելի ուրախ կը լինէի, որ նա ձեր հայրական ժառանգութիւնը վերադարձնէր ձեզ:

Թուրէնը ոչինչ չ'ասաց: Նրանք հասան փողոցի ծացրը: Յետ գտննալիս Հալաբեանը կրկին մօտեցաւ Մարիամին: Այս անգամ օրիորդը մի կողմանակի հայեացք ձգեց նրա վրայ: Հալաբեանի նիհարութիւնը, բաւական ընկճռեած ձայնը, նրա ամբողջ կերպարանքի խոճալի արտացայտութիւնը բոպէաբար շարժեց Մարիամի գութը: Ըսածին անգամ նա խղճաց ամուրիին, առաջին անգամ նրա նրբացած սկրար զգաց այդ գժբաղդութիւնը:

«Միթէ ես եմ պատճառը», ասաց նա մրտաքում, տեսնելով թէ ինչպէս Հալաբեանը եր-

կիւղած դէմքով է նայում իւր վրաց և ինչ
անվստահ եղանակով է խօսում:

Նա ևս լսել էր իւր ու հալաբեանի մասին
տարածված լուրը: Նա նկատում էր, որ զբու-
նող ամբոխի մէջ շատերը նայում են և քըչ-
փիջում: Նա իւր ծանօթների դէմքերի վրայ
տեսնում էր մի իմաստալի ժպիտ, կարծես,
նրան շնորհաւորում էին: Նա շտապեց հեռա-
նալ հալաբեանից և, վերցնելով Սաթինիկի թեր,
քայլերը ուղղեց դէպի տան կողմ:

— Թուք մի դնաք, ես մի շատ հարկաւոր
բանի մասին պիտի խօսեմ ձեզ հետ,— գարձաւ
Հալաբեանը Թուքէնին, բռնելով նրա թելից:

Մարիամը զնաց Սաթինիկի հետ: Թուքէնը
Հալաբեանի հետ վերադարձաւ:

— Մտնենք մի րոպէ ինձ մօտ,— առաջարկեց
վերջինը:

Թուքէնը ակամայ հետաքրքրվեց ամուրիի ա-
սածով և ակամայ հետեւց նրան: Մի թեթև յա-
ռաջաբանից յետոյ ամուրին խօսք բաց արաւ
վերջին դէպիքի մասին, գովեց Թուքէնի վար-
մունքը, անուանեց նրան ազնիւ:

— Գիտէք, բանը ինձ յայտնի է, ես լսել եմ
բոլորը: Խնդրեմ ըստ նեղանաք, որ ձեզ հետ
պարզ եմ խօսում, մենք բարեկամներ ենք:

Եցդ անպիտանի հետ ուրիշ կերպ վարվել չէր
կարելի, մանաւանդ ձեզ նման ազնիւ ու տա-
քարին երիտասարդը: Աւելի վատ պէտք է
պատժէիք: Տեսել էր նրան այդ օրից յետոց:

— Ոչ:

— Ի՞նչ երեսով պիտի երեայ ձեզ այսուհետեւ,
այս անամօթ, անամօթ,—կրկնեց Հալաբեանը
մի քանի անգամ:

Թուքէնը լուս էր: Նա մասամբ գուշակում
էր, թէ Հալաբեանը ինչ նպատակով է այդ
դէպիք մասին խօսում: Վերջապէս, ամուրին
պարզեց իւր սիրուր, վերջապէս, նա առաջար-
կութիւն արաւ Մարիամի մասին: Նա վազուց
է սիրում Թուքէնի քրոջը, վազուց էր մտադիր
ասել, բայց չէր համարձակվում: Կարծում էր
որ նա սիրում է բժշկին, որ նրան է խօսք
տուել: Այժմ գիտէ, որ Մարիամի սիրուր աղատ է,
և համարձակվում է խօսք բանալ այդ մասին:

— Թուք, ի հարկէ, ըստ պիտի զարմանաք, որ
ես ձեզ հետ աշապէս պարզ եմ խօսում: Ես
հասարակ մարդ եմ, ես սիրում եմ անկեղծ խօ-
սել: Ջատ կարելի է, մի ուրիշի հետ ուրիշ
կերպ խօսէի: Բայց ձեզ ճանաչում եմ, պարոն
Թուքէն, դիտեմ, որ չէք նեղանալ ինձանից:
Ձեր քոյլը ծնողներ չունի, որ ես նրանց հետ

Դոսեմ: Դուք էք նրա մեծը, իրաւունքը ձեր
ձեռքին է:

—Իմ ձեռքին ոչինչ իրաւունք չը կայ,—
ընդմիջեց Թուբէնը, —Մարիամն ինքն իրան է
միայն հապատակվում, ուրիշ ոչ ոքի:

—Գիտեմ, գիտեմ, սիրելիս: Նա լսելու է,
նա կրթված է, բաց շատ երիտասարդ է, կան
բաներ, որ նա չի կարող հասկանալ: Դուք
պէտք է հասկացնէք նրան: Ես ոչինչ չեմ
թագումում իմ կեանքից: Նսեմ, ես այնքան էլ
ծեր չեմ—քառասուն ու երեք տարիս: Նոր լրա-
ցաւ: Ես այնքան էլ տգէտ չեմ,—հասարակու-
թեան մեջ պատիւս պահել կարող եմ: Հաւա-
տացէք, ես ձեր բրոջը կը պաշտեմ: Բաց ի՞նչ
եմ ասում, միթէ դուք ըստ գիտէք, որ ես հա-
մարեա . . . Ինչու էք շփոթվում, ես ան-
կեղծ եմ ասում: Դուք այդ կարող էք
յացտնել Մարիամին, այս, յայտնեցէք: Ա-
սայիշէք, յոյս ունենամ, որ կ'արժանանամ այդ
բաղդին: Ես ամեն բան կը զոհեմ, ես հա-
րստութիւնս կը դնեմ նրա ոտքի տակ, ինչ
ուզում է, թող անի, ինչպէս ուզում է, թող
ապրի: Թող նա իմ տէրը լինի, ես նրա ծա-
ռան, ստրուկը: Ես ձեզ էլ կը հապատակվեմ: Ես
ձեզ ամեն միջոց կը տամ, ձեր ուզածը անելու:

Դուք ուզում էիք արտասահման՝ դնալ, դնա-
ցէք, փողի սրակառութիւն չէք ունենայ...

Դժուար էր կանկածել ասուրիի անկեղծու-
թեան մասին, զգալի էր, որ նա սրտից է խօսում:
Եւ այդ ապացուցանում էին նրա զգացված
ձայնը, աչքերի փայլը, դողդոջուն շրթունքները
Աւրեմն այդ էր ձեր ասելիքը, —հարցրեց
Թուբէնը, երբ, վերջապէս, ոգևորված ամուրին
մի փայլեան լուց:

— Օգնեցիք, պարոն Թուբէն, մի մերժէք,
հապատացէք, իմ բաղդը ձեզ էլ կը բաղդառ
րեցնի:

Թուբէնը ոտքի կանկենեց: Հալաբեանը յուսա-
հատկած նայեց նրա երեսին: Եւ այդ հայեցրը
այնքան խոճապի էր, որ Թուբէնը մի փայլեան
հողով ցաւեց ամուրիի մասին:

— Ես ձեզ կը խնդրէի ինձ հետ ճաշել, եթէ...

— Ճնորհակալ եմ, — շտապեց ընդհատել Թու-
բէնը և, ձեռը մեկնելով նրան աւելացրեց: —
մնայշէք բարով:

Եսաց և անմիջապէս դուրս դնաց, թողնելով
մենակեաց ամուրիին տխուը ու յուզված:

«Նա ոչինչ չասաց, նա համաձայն չէ», գոշեց
Հալաբեանը, յուսահատված ընկնելով բագիա
թոռի վրայ:

Այդ օրից յետով նա սաստիկ լարված դրութեան մէջ էր: Նա անհամբեր սպասում էր սպասախանի Թուբէնի կողմից: Նա շուտ շուտ դուրս էր գալիս փողոց, պտտում էր այս կողմ ացն կողմ, յուսալով հանդիպել նրան մի աեր Բայց փոխանակ Թուբէնի նա, հակառակ խրցանկութեան, գրեթէ ամեն անդամ տեսնում էր բժիշկ Սելիք-Բարսեղեանին, որ կառքով դէռ ու դէն էր անցնում:

Մի օր բժիշկը կառքը պահել տուեց, ցած իջաւ և, խոնարհ բարեկով, մօտեցաւ հալարեանին:

—Ես ձեզանից մի բան եմ ուզում խնդրել, սասաց նա, քաղցր ժպտայով,

—Եսացէք,—արտասանեց հալարեանը կտրուկ:

—Ես. . . . ական ընկերութեան խորհրդի անդամ եմ: Այս տարի նոր ընտրութիւններ պիտի լինին: Մեր նախագահը հրաժարվում է, թույ տուէք, որ ձեր անունը անդամների ցուցակի մէջ մտցնեմ: Մեր ընկերութիւննը ձեզ նման մի անձի կարօտութիւն ունի, համաձայնեցէք մեր նախագահը լինել:

Մի գարգիւան հալարեանի փառասիրութեան դդացմունքը շարժվեց: Բայց նա չը մոռացաւ իւր ատելութիւնը:

—Ես նախագահ լինելու արժանաւորութիւն չունեմ, գտէք մի ուրիշին, պատասխանեց նա հակիրճ և երեսը շուռ տուեց, որ հեռանայ: Բժիշկը չը յուսահատվեց:

—Մեզ միայն ձեր անունն է հարկաւոր: Ձեզ Թուբէնը բոլորը ճանաչում են ու յարկում, ձեր անունը մեծ օգուտ կարող է տալ մեր ընկերութեանը:

—Ինձ նման շատերը կան, առաջարկեցէք աւելի արժանաւորին: Մնաք բարեւ:

Նա խստութեամբ երեսը կրկին ցետ գարձրեց և գնաց: Բժիշկը մի վայրկեան մնաց տեղն ու տեղը անշարժ: Յետոյ ձեռով մի շարժումն արաւ, նստեց կառք և հեռացաւ:

Միւս օրը նա եկաւ հալարեանի տունը, կրկին նոյն առաջարկութիւնն արաւ: Բայց վերջինի կողմից շատ սառն ընդունվելով, դուրս եկաւ քինդթը քարշ: Նա տեսաւ, որ չէ յաջող վում այդ մարդու հետ բարեկամանալ:

Օր օրի վրայ էր անցնում, և հալարեանը չէր սրատահում Թուբէնին: Մի առաջաւ եկաւ նրա մօտ իշխան Սահարունին և ասաց, թէ տիկին Խօփիտն նրան հրաւիրում է ճաշի: Վերջին ամիս հալարեանը Սագափեանների տանը չէր եղել: Տիկինը բոլորովին յուսահատված էր, մա-

Նաւանդիտելով այն լուրջը որ պատռմէ, թքաղաքում։ Նա փորձեց հրաժարվել տիկնոց ճաշից, բայց իշխանը այնքան խսդրեց թափանձեց, որ, վերջապէս, համաձայնեց գնալ։

Օրիորդ նատալիան զարդած նա միշտ զուգված էր լինում) նստած էր հիւրասենեակում։ Խօփիօն և նիկոզացուը Հարաբեանին ցանդիմանեցին բարեկամաբար։ Օրիորդ նատալիան սառն ընդունեց նրա բարեր և ցոյց տուեց, որ վիրաւորված է։ Մարիամի մասին տարածված լուրջ նրա վրաց լսորին տապառութիւն էր արեւ, Երբէ, ք նա այնքան կառազած չէր Մարիամի գլուխ, երբէ, ք նա այնքան չէր ատեր իւր կարծեցեալ թշնամուհուն։ Ինչպէս նա կարսպացաւ գրաւել այդ Հարուսա ամուրքի սիրաբ։ Նու, որ նատարիայի աշբուհ ողջնու ու ողջնու արժանաւութիւն չունէր։

Նատեցին ճաշելու Սօփիոն դարձեալ ասուրիին տեղաւորեց նատալիայի մօս և պատեց իւր բաղաքականութիւնը բանեցնել։

— Հա, պարտն Հալարեան, ասաց նա երկրորդ կերակրի ժամանակ, իբրև թէ, ցանեարծ մտաբերելով, — ացի ինչ լուրեր են տարածել ձեր մասին։ Ասում են, հրմ, ինչ են ասում, Սրափիոն, — Ժպտալով դարձաւ նա իւր եղորդ իշխան Սահարունին։

— Ասում են, որ Միշան պամկում է Պաշալի հետ, — իսկոցն պատասխանեց իշխանը և բարձրաձայն ծիծաղեց։ — Ճշմարիտ է, — դարձաւ նա Հալարեանին։

Ամուրին վիրաւորվեց։

— Ուրիշ բան չունես խօսելու, — նկատեց նա խխոտ ցանդիմանական եղանակով։ Այս կոշտ նկատողութիւնը, հարկաւ, վերաբերում էր և՛ տիկին Սօփիոյին։ Սակայն տիկինը չը վիրաւորվեց։

— Տեսար, որ սուտ է, — դարձաւ նա եղորդը, — Տէր Աստուած, անդործ մարդիկ ինչ ասես ցնարում են անմեղ մարդկանց վրաց։ Ախար ես էլ ասում եմ, եթէ Հալարեանը միտք ունի նշանմելու, լսօմ աշխարհս տակն ու վրաց չի եղել, որ դնայ ու այն...»

Այստեղ տիկինը ցանկարծ կանդ առաւ, միաժամանակ հանդիպելով Հալարեանի ղեմքի դժողոհ արտայացութեանը և նիկորացուի նշաններին, որ պահանջում էին նրանից լոռութիւն։

Այս միջնագէպի պատճառով ճաշը, հարկաւ, շատ սառն անցաւ։ Հալարեանը երկար ըը մնաց, ճաշից յետոց մի կէս ժամ անցած, նա հրաժեշտ տղւեց, իւր հետ տանելով տիկին Սօփիօյի վերջին յոյզը...»

ա՞ն Ա ու օփքու մասին զու մա է ունի
և պիտի յ ըմբռանուր մշալով ։ անձ զու
ունիր ։ Յ ուղան ։ **XIV** բառեց մշանպիզուց

**Ոռոբէնից ստացած վիրաւորանքը՝ Մելիք-
Բարսեղեանին ստիպեց վիրակել իւր քաղաքա-
կանութիւնը։ Մինչւ աց ժամանակ նա աշ-
խատում էր գործը մեղմօրէն և, որքան հնա-
րաւոր է, բարեկամաբար, առանց աղմուկի
վերջացնել ։ Այժմ, երբ նա արդէն վիրաւորված
և պատժուած էր, երբ նրա անունը հասարա-
կական գատաստանին էր ենթարկված, այլ եւս
չէր կարող գաղտնիք պահել, պէտք է բացար-
ձակ պաշտպանէր իրան։ Բաց ում դէմ։ Ոռո-
բէնը քրէժխնդիր էր եղել իւր քրոջ համար,
իսկ Մարիխամը կին էր, Բժիշկը գիտէր, որ
այսպէս թէ այնպէս ընդհանուրի համակրանքը
օրինդի կողմն է թէքվելու, եթէ ուրիշ բան
էլ չը լինէր, գէթ այն հասարակ պատճառով,
որ նա մի թոյ արարած է։**

— Քիսաւորն այն է, — յանդիմանում էր մի
օր նրան վաղեմի ընկերներից մէկը, — որ, ինչ-
պէս ասում են, դու այս օրիսրդին թողել ես
աղքատութեան պատճառով։

— Աչ, ոչ ու ոչ, — պատասխանեց բժիշկը, չը
կարտպանալով, վերջապէս, պահել իւր սառնա-
սրտութիւնը, — սիսպիում են ասողները, ևս
նրան թողել եմ բոլորովին մի ուրիշ պատճ-
ռով։

— Այն է։

— Պարոններ, բաւական է, վերջապէս, ինզ-
րում եմ, մի ստիպէք ինձ շատ էլ պարզաբնու
իներ։

— Դու պարտաւոր ես պարզ լիունել, զու-
պէտք է քեզ արդարացնես, գիտես, որ ամեն-
քը քեզ են մեղադրում։

Բժշկի համբերութիւնը միանդամայն սպառ-
վեց և նա, մի քանի վացրիեան խորհելով, ար-
տասանեց հետեւեալը։

— Ես ինձ արդարացնեմ, այսո, կարող եմ ե-
շատ հեշտութեամբ։ Բայց, պարոններ, մի սո-
ուանաք, որ իմ հակառակորդը օրինրդ է, ես
չեմ կարող ամեն բան ասել, չեմ կարող իմ
սառչելու գլխաւոր պատճառը յայտնել, հաս
կանում էք։

Վերջին գարձուածը բժիշկը մի այնպիսի
խորհրդաւոր եղանակով արտասանեց, որ խօ-
սակցի սրտի մէջ մի օրոց կասկած ձգեց։ Խօ-
սակցը դարձուածը կրկնեց մի երկրորդին, եր-

րորդի մօտ, և նա, բերանից բերան անցնելով, տարսնձեց հասարակութեան մէջ։ Բամբասասէրները սկսեցին զանազան ենթագրութիւններ անել, ենթագրութիւններ, որ երեմն, համեստութեան սահմանից դուրս գալով, պատորում էին մարդկացին առաքինական զգացմունքը։

Ինքնապաշտպանութեան այս պարզ միջոցը ունեցաւ իւր հետեանքը։ Շուտով բժիշկը դրաւեց մի շարք կողմնակից պաշտպաններ մասամբ այն հնամաշ օրիորդներից, որոնց վրայ նա երբեմն երբեմն ուշադրութիւն էր գարձնում, և մասամբ այն մայերից, որոնք աչք ունեին նրա վրայ։

—Ոնց չէ, —ասում էր, ի միջի այսոց, չորս աղջիկ ունեցող տիկինն Ազամօվան, — ես դիմ գիտեմ, այն աներես աղջիկը ինքն է ուժով կպել։ Բժիշկը լսում դիմ չէր, որ գնար ու այն քաղցածին ուղէր։ Ընանիա ջան, միտք լի, որ երբ լսեցի, ասացի մի բան կայ։ Տեսաբ։

Եւ այդ «բանը» բացատրվում էր այնքան կերպ, որքան տարբեր զրուխներ կացին։

Սակայն ժամանակը հետգէետէ խաղաղեցրեց թեր և դէմ խօսող լեզուներին։ Բամբասանքի նիւթը սկսեց հնանալ, տեղի տալով նորանոր

նիւթերի։ Բժիշկ Մելիք-հարսեղեանի անունը փոքր առ փոքր սկսեց ազատիկ սանձարձակ բերաններից։

Մնում էր միայն բժշկի սրտում բարոյական սուր վիրաւորանքը խորին հետքը։ Նա մոռացաւ բոլորը, բաց չը մոռացաւ հիւրանոցի գլավքը։ Մի գլավք, որ այնքան ցաւալի էր նրա համար, որքան նա հաշակված էր քաղաքում։ Նա նկատում էր, որ այդ օրից ցետոյ ոմանք, մանաւանդ երիասասարդներից, ծուռ աշբով են նացում իւր վրայ և ոմանք, կարծես, մինչեւ անգամ խոցս են տալիս նրանից։ Այդ էր, որ նրան անչափ անհանգստացնում էր և ստիպում աւելի մտածել այն միջոցների մասին, որոնցով կարելի էր վերականգնել իւր պատիւը և արժանանալ ընդհանուրի համակրութեանը։ Եւ այս նպատակով նա սկսեց իրան ձեւացնել մելամաղձոտ, մտավբաղ, մանաւանդ կանանց շրրջանում։

—Կարծես, վիշտը տանջում է նրան, —ասում էր մի տիկին։

—Ետո, —համաձայնում էր մի ուրիշը, — շտափուր դէմք ունէ։

—Տիրութիւնը խփու սագ է զալիս նրան։

—Հետաքրքրելի է զարձնում։

—Ես սիրում եմ հոգեկան վիշտ ունեցող
տղամարդկանց:

—Ես էլ:

Եթի պատահաբար բժշկի մօտ խօսում էին
սիրոց մտախն, նա չէր մասնակցում խօսակցու-
թեանը, լուռ ու տիսուր հաւաջում էր և աշ-
քերը խոնարհեցնում:

Եյս ինքնահնար միջոցը որոշ ներգործութիւն
ունեցաւ և հետևանքն այն եղաւ, որ բժիշկը
դարձաւ զգայուն կանանց ցաւակցութեան ա-
ռարկայ:

Գալով <պրակտիկացին>, անախորժ անցքը
վատ ներգործութիւն չունեցաւ: Ընդհակառա-
կը, նրա անունը աւելի տարածվեց, հետաքր-
րիր կանացք ցանկացան նրա երեսը տեսնել:
Զատերը, հիւանդ ձեւանալով, զալիս էին նրա
մօտ, մի փոքր խօսում և, ացցավճարը տալով,
հեռանում:

Մի օր նա, հիւանդների ընդունելութիւնը
վերջացրած, հանգստանում էր ննջարանում,
երբ ծառան ներս մտաւ և տուեց մի նամակ:
Դա մի երեկոյթի սիրավիր հրաւէր էր Ագա-
մօվսերի կողմից: Եցդ օրը տիկին և պարսն
Նդամօվների ամուսնութեան երեսնամեալը
լրանում էր: Թե՛ս առաօտեան բժիշկը չնոր-

հաւաքել էր նրանց: Տիկինը կարծելով, որ բե-
րանացի հրաւէրը մոռացած կը լինի, սախովց
ամուսնուն և ամակ ուղարկել:

—Ըստ, որ կը գամ, —պատուիրեց բժիշկը ծա-
ռացին:

Վերջին ժամանակ նա ացդ ընտանիքում բն-
դումիւմ էր գրկաբաց, նրան ցոց էին տալիս
անսովոր յարգանք և բարեկամութիւն: Տիկին
հզանալիան արդէն նրան հանարում էր իւր
երկրորդ գատեր գիւտացան:

Եցմ մաքով նա արգէն մի թեթև լուր տա-
րածել էր իւրացինների ցըանում գործին շինք
տալու համար: Բժիշկը գիտեր որ այսպի-
սի լուր կաց մինչև անգամ արշեստ մկանի-
րից մէկը չնորհաւորել էր նրան: Սակայն նա
տակաւին զգոց էր: Եսացին փորձից խրատ-
ված, նախ քան մի որոշ քայ անելը, նա կա-
մենում էր ճիշդ ուսումնակիրել հանդամանք-
ութիւր ունի արգեօք օրիտով Ագամօվսն այն-
քան, որ բան տառմ են:

Արտեալ ժամանակից մի ժամ անցած, զալով
երեխոյթ, նա Նդամօվների տանը տեսա հրա-
ւիրաժների մի բաւական մեծ բարութիւն:
Դրան զինապետիցն ուրախութեամբ, կարծու,
ամենը նրան էին սպառում: Եզրեզ նա ծա-

նօթացաւ մի քանի ընտանիքների հետ։ Հասարակութիւնը բաղկացած էր տարբեր տարրերից։ Կային և՝ վաճառականներ, և՝ ծառայողներ, մէկ խնդիներ, երկու կապալառու, երեք գրագիր, մի պաշտօնաթող գեներալ, մի կոմիտացի, մի վաշտօնաթող գեներալ, մի կոմիտացի, մի վաշտօնաթող, երկու սուս և այլն։

Երեկոցթը սկսվեց մի թեթև կօնցերատվ։ Գրադիրներից մէկը ջութակի լարերը անխնայ խարթոցում էր։ Մի ինչոր տիկին եռամսդող ջարդում էր գաշնամուրի կլաւշները։ Արտսեր օրիսրդ։ Ազամօվան իւր կատուի ձայնն էր բարձրացրել։

Վաճառականներ, վաշտօնաթուն և կօծիտիօններ, մի անկիւն քաշված, լսուում էին իրանց գործերի մասին։ Պաշտօնաթող գեներալի մէջքին մի բարձ գրեցին, և նա խսկոյն նիրհեց Պարոն Ազամօվի խնդեների և ուրիշ երիտ հիւրերի հետ նստեց թուղթ խաղարու։

Երիտասարդ գրցիւրը սկսեցին պարել։ Բժիշկներմու տանտիրուհու աղջկերանց հետ մի մի անդամ պարելուց ցետոց շինովի մելամաղձութիւնը երեսին բաշլեց մի կողմ։ Տիկին Ազամօվան աշքից բաց չէր թողնում նրան։

Պարոն բժիշկ—մօտեցաւ նա իւր թանգիին հիւրին, —մեր տունը ախրող հիւրեր չէ սիրում։

— Ես տվուր չեմ։ Լաւ, լաւ, ինչու էք խաբում, խօմեն՝ ամեն բան գիտեմ, Թուք և մենք մեզաւոր չենք, որ աշխարհում անամօթ մարդիկ կան։ Բժիշկը հասկացաւ, թէ տիկինը ինչ բան և ում է ակնարկում։

— Թէհ, թողիչք ձեր գատարի հոգսերը, զուարձացէք, — հրաւիրեց տիկինը և, թեփ բոնելով, մօտեցրեց կանանց, որոնց համար այդ պահին գուարձախօսում էր սուս երիտասարդներից մէկը։

Մի քանի րոպէ չ'անցած տիկինը նկատեց, որ բժիշկը սենեկակի մի անկիւնում առանձնացած ուրախ ուրախ լսուում է հիւրերից մէկի հետ։ Դա վաճառական հիւրի միակ աղջկին էր, մի դեղնագէմ օրիսրդ, քսան տարեկան հասկից ոչ աւելի, որ գիտէր գաշնամուր ածել, լաւ պարել, ուռսերէն մաքուր խօսել։

Բժիշկը վազուց լսել էր նրա մասին, իմացել էր, որ հարսնացուների մէջ ամենախւզափի պատասներից մէկն է։

Տանտիկինը վախեցաւ այդ վուանգաւոր հարևանութիւնից, մէջ մտաւ և յաջողեց բժշկին բաժանել օրիսրդից։

Սկսեցին ընթիւլ։ Տանտիկինը բժշկին նրա տեցրեց իւր երկրորդ աղջկայ—Պարինկա ա-

նուանվածի—մօս և աչքը տնկեց նրա վրայ։ Եւ ոչ միայն նա, այլ, նկատում էր բժիշկը, առ մենքը նրանց էին նայում։ Ոմանք միմեանց բոթում էին, քչփչում և ժպտում։ Այս բոլորը կատարելավէն համոզեց բժշկին, որ ինքն արդին Վարինկայի փեսացուն է, համարվում։ Աւելի համոզվեց, երբ սեղանի կառավարիցը նրա կենացը առաջարկեց օրիորդի կենացի հետ միասին, խորհրդաւոր եղանակով արտասանելով։
—Թող ձեր հարեւանութիւնը բարեկամութեան սկիզբ լինի...»

Սակայն բժշկի միտքը աւելի վաճառականի աղջկանով էր զբաղված։ Նա գաղտնի ուշադրութեամբ գիտում էր օրիորդի կերպարանքը, Մի թեթև համեմատութիւն անելով իւր մըտքում, նա վերջինին գերադասեց իւր հարեւանից, եթէ ոչ դիրքով և դէմքով, դէթ օժիտով։

Երեկոյթը վերջացաւ։ Բժիշկը տուն վերադարձաւ բաւական զուարժ տրամադրութեամբ։ Երկար ժամանակ այս դիշեր նա մտածում էր իւր մասին։ Համդամանքները միանդամացն նրան ուրախեցնում էին։ Նա տեսնում էր, թէ հասարակութիւն ասած բանը այնքան էլ սարսափելի դատաւոր չէ, որքան կարծում էր, թէ

շատ շատերը, որ կարծում էր իսպան կը տան, գեռ ձգտում էն դէպի նա, նա վճռեց, թէ յմարութիւն է պատուի խնդրի վերաբերմամբ շատ էլ մանրակրկիտ և զգացուն լինելը, թէ առ հասարակ նուրբ պատուամիրութիւնը մի տեսակ տկարամատութիւն է։ Արժէ մտածել անցած բաների մասին, արժէ վշտանալ մի երխասարդի տուած թեթև վիրաւորանքից, երբ հասարակութիւնը այդ վիրաւորանքը անպատճապեր չէ համարում..»

Հետեւալ օրից նա արդէն նախկին Մելիք-Բարսեղեանն էր։ Չբացան մօտիկ անցեալի տխուր մտածումները։ Վերաբարձաւ կրկնակի ուժով նրա եւանդը։ Թեթև յուզմունքը տեղի տուեց բնական անցորդող սառնասրտութեանը, Եւ նրա կեանքը սկսեց ընթանալ սովորական շատրվութ։

Մնում էր իբրև միակ հոգս Հայրեանի թշնամութիւնը։ Բայց հէկ ամուրին այն դրութեան մէջ էր, որ բժշկին անզամ մուացել էր։

Դարձեալ Հայրեանի միտքը զբաղված էր Մարիստով, գարձեալ գիշեր ու ցերէկ նրա մասին էր մտածում և օրից օր աւելի ու աւելի կապում իւր ցնորքի հետ։

Այժմ նա անձանաշելի էր դարձել: Զը կար
աց ևս նրա ինքնավտահ քայուածքը չը
կար այն խրօխսու ինքնագոհ հացեացքը, որ աջ
ու ձախ ձգում էր մարդկանց վրայ: Նա ա-
ւելի էր նիհարել, աւելի գունատիւն, նրա բանձր
ուսեւը ցած էին թեքվել, նրա կուրքքը ներս
էր ընկել, կարծես, մի ամսուաց մէջ նա ապել
էր տասր տարի:

Եւ գեռ սպասում էր նա, զեռ ցոյս ունէր,
որ արժանանալու է երազած երջանկութեանը:
Բացց օրերն անցնում էին և ոչ մի գէպք, ոչ
մի թող երևոյթ չէր ցոյց տալիս, թէ նա կը
հասնի իւր նպատակին: Վերջին ժամանակ նա
փողոցում երբեմն պատահում էր Ուուլէնին, և
հանդիպում էր նոյն սառնութեանը, նոյն ա-
նուշագրութեանը: Բացց նա դարձեալ չէր ցո-
սահատվում: Նա պատահեց մի քանի անգամ
նոյնակէս և՝ Մարիամին, և ամեն անգամ Մամի-
նիկի հետ: Մի օր օրիսորդ վերջինի հետ ձիա-
րարշով անցնում էր: Ամուրին, ընացելով ա-
նանցնելի ցելսին և իւր պատկառելի տարի-
քին, վագեց, որ ձիաքարը նատի, չը հասաւ,
զրկվեց օրիորդին բարեկու հաճութից և միայն
աչքերով ուղեկցեց նրան:

Նրա ականջին ևս հասել էին Մելքնար-

նեղեանի խորհրդաւոր դարձուածի պէս պէս
մեկնութիւնները: Բացց ոչ մի չար ենթադրու-
թիւն, ոչ մի վիրաւորական բամբասանք: Մա-
րիամի անարատութեան մասին հաւատապի չէր
թւուն նրան, որ պալեցնէր նրա սիրար, որ
սակաբէր նրան սթափիւն իւր դասն ցնորդից:
Նա համոզված էր, որ այդ բոլոր լուրերը չար
մտքով են տալիածիած: Նա կարծում էր, թէ
դա իշխան Սահարունիի գործն է, նա է հնա-
րում այդ լուրերը: Եւ Հալաբեանը վրդուած
էր իշխանի գէմ: Նրան տեսնելիս կամ երեսը
ցետ էր դարձնում կամ փոխում էր ճանապար-
հը, որ ըլ բարեկի: Նա գաղարել էր և՛ Սաղա-
փեաններին ացելելուց, չէր էլ մտածում Նիկո-
ղայոսից ստանալիքի մասին: Նա մոռացել էր և
իւր միւս գործերը: Նրան տիրել էր մի տեսակ՝
թմրութիւն: Ոչ մի բան նրան չէր հետաքրքրում,
ոչ մի տիտուր կամ ուրախալի երեսյթ չէր
շարժում նրա սիրար: Պատահում էր, ևսիո
Վախովակւեանը մտնում էր նրա մօտ ցուղված,
ացացված և պատմում էր սրտաշարժ: Նորու-
թիւններ քաղաքացին կեանքից: Նու, որ
առաջ սիրով և հետաքրքրութեամբ էր
լուսն այդ նորութիւնները, ուրախանում էր —
երբ հարկաւոր էր, տիսրում երբ հարկաւոր էր,

այժմ մնում էր անսարքեր, լուս, նրա գլուխի
մկանունը անդամ չէին շարժվում:

Եւ Վայսվալինեանը ըստ գիտէր վշտանար, թէ,
զարմանար իւր տեսածի գրաց, Ամեն օր նա վա-
ղում էր Ավաշարումեանի մօտ և պատմում Հա-
յաբեանի հոգեկան գրութեան մասին, աւելաց-
նելով, որ օրից որ աւելի վատանում է, նա: Ոի
քանի անգամ Ավաշարումեանը ինքն ացցելոց
անուրին և տեսաւ, որ, արդարե, ցաւալի է,
նրա գրութիւնը:

Դնանք արտասահման, — առաջարկեց, նա
մի անգամ Հալաբեանին, — և ինչ:

— Ինչո՞ւ:

— Մի քիչ ման կը դանք, ժամանակ կ'անց-
կացնենք. Մի քաղաքում երկար ապրելը մար-
դուս բժացնում է:

Հալաբեանը գլուխը բացասաբար շարժեց, Հաշ-
ուացելով և տիտուր ժամանով: Եւ այդ հասաւ
շանքն ու ժամանութիւնը այնքան սրուշաբժ էին, որ
Եշուարումեանը, այն մարդը, որ միշտ ծայրա-
բար էր վերաբերում դէպի խոր լնկելոց պատ-
ճանը ըստ սկսեց անկեղծ ցաւակցել նրան: Այդ
օրը նա վճակը ովնել Հալաբեանին՝ աղասել
նրան խոր ծանիր վշտից:

— Եշլանի, — դարձաւ, նա մի օր Ասհարունի-

ին, — մեր Աթեփակի գրութիւնը շատ ցաւալի է, օրից օր նա նիհարում է, ինկընանում ու պա-
ռառում:

— Լավ, ե՞ս ինչ անեմ:

— Դու ե՛ ես նրա բարեկամներն ենք. պիտք
է խելք խելքի տանք և նրա միաբը մի ուրիշ
բանով գրադեցնենք: Ես համոզված եմ, եթէ,
նա ազգական ապահոված է, որ կը խելազարդի:
Եփոսում եմ, որ մինչեւ հիմայ ես ծայրաբար
եմ վերաբերիլ, մարդը, ոչ դէս ոչ դէն, սի-
րահարված է, և շատ վատ է սիրահարված:

— Սիրահարվել, խելազարվել, — կրկնեց իշ-
խանը, բարձրածայն Տիհաղելով, — ու, բարե-
կամ, ինչպիս տեսնում եմ, դու նրանից պակաս
խելօքը չեմ: Դու էլ մէր ես անուանում այդ:

— Բան:

— Ոչ, սիրելիս, այդ կիրք է, հասկանում ես,
բառասուն ու երեք տարեկան կիսամսշ մար-
դուս կիրք վերասորված ինքնասիրութեան հետ
խառն, կէէ, երեւակացիք գործ և զբագմունք
չունեցող մի հարժւատ ամուրի, որ մի անգամ
վճռել է, ձեռք բերել մի սիրուն ալջկայ, չէ
կարողանում նպաստակին հասնել և տանջփռն
է, պիծակ գնաց: Եթէ ինձ ես հարցնում, թող
տանջփռի, նա խղճալու մարդ չի, ևս վիժար է,

ուզ մարդ, ցիմար, ընկել է մի աղջկաց ետևից
սրի երեսի պատկառանքք... նու... մի ուրիշն
է լիվել:

— Եշխան, — արտասանեց Ալշարովնեանը գար-
այած, — ինչ ես գուրս տալիս. չէ՞ որ այդ աղ-
ջկը ազգականը է:

— Ազգական, շատ հարկաւորս են ացնվիսի
ազգականները, որ ութ տարի բրոջու հաշուսկ
ասրւերց ցետոց, հիմաց քաղաքում լուր են
տարուծել, թէ փետաս նրանց գրիել է իրանց
հօր ժառանգութիւնից:

— Միթէ այդ հցմարիտ չէ:

— Եցնքան Նշ Հշմարիտ, որքան ացն ասր
նրանց հայրը ժառանգութիւն է թողեր. Զան-
տաժ է, բարեկամու անխիզ շանտաժ, որի
համար հիմաց Աստուած պատժում է նրանց —
քոյր և եղբայր քաղցած զրկում են; Լսիր,
Եթէ ընկեր ես, Եթէ ուզում ես Հայաբեանին
ողինած ինել, համոզիր նրան, որ ձեւք վերց-
նի այդ աղջկանից, թէ չէ կը փոշնանի, շատ կը
փոշմանի: Ասա այն վիմարին՝ խելքի գայ և
հառկանաչ, որ Եթէ մի անզամ վճռել է ալմա-
րանալ, այսինքն ամօւնանալ, թող իմ առա-
ջարկած աղջկան ձեռքից բաց չը թողնի:

— Չը լինի քրոջը աղջկաց մասին է իսուրգ,

— Կու, չէ՞նց զիցուք նրա մասին է, չարժէ
տարի Մարիամի: Եզդ վիմարը առաջ նրա ետևից
Եր թնկած, չեմ իմանում, ինչ պատահեց, թողեց
յանելարձ ու կալու մէկին, որին մարդիկ Ել մո-
ռացել են, Աստուած Էլ: Տօ, մէկ հարցրու նրա-
նից, եթի, այդ աղջկը լաւ պառւի Եր, ին-
չու բժիշկ Մելլիք-Բարսեղեանը թողեց նրան:
Ինչ երեւելի մարդ է, այդ բժիշկը, հա հա հա:

— Այսուհեամ շատ ուշ է փոխել Հայաբեանի
մկանը: Երկուսից մէկը — կամ պէտք է մի կերպ
անել, որ նա իւր նպատակին հանդի կամ պէտք
է, այս քաղաքից հեռացնել նրան:

— Եթէ դու կ'օգնես կամ կը ցանկանաս, որ
առաջնի լինի — ոչ իմ բարեկամս ես, ոչ Հայա-
բեանինը, լաւ իմացիր, — ասաց իշխանի և հե-
ռացաւ:

Իշխանի այս ծայրացեղ զրկուման պատճառն
ացն Եր, որ Հայաբեանի վարմունքը դէմ Եր նրա
շահերին: Տիկին Սօփիօն բաշարձակ խոտանցել
Եր նրան՝ Նատալիակի բանկ յաջողեցնելուց հատոց
իւր ամուսնուն համոզել, որ սա երաշխաւոր լի-
նի իշխանի համար մուրհակով բանկից մի քա-
նի հազար լինցնելու, Եցն ինչ իշխանը, նացելով
Հայաբեանի գլուխթեանը, աեսնում Եր, որ Հազիւ-
երը է լուսեցնելու ունենաց իւր շահաւելու

ձեռնարկութիւնը: Եցս էք պատճառը, որ նա վրդովուած էք և՝ Մարիամի դէմ, որ, հարկաւ, զիսաւոր խոչնդուն էք:

Մի անգամ իշխանը այս լուզված դրութեամբ պատահեց Թուբէնին: Նորին պաշտառափայտթիւնը հարկաւոր համարեց նախ նրա հետ խօսել իբրև ազգական, ապա ոկտեց ցանդիմանել նրան, անուանելով երախտամուս իւր հօրեղբար ընտանիքի վերաբերմամբ:

—Գուր ինձ խրատում էք, —հարցրեց Թուբէնը հեղնաբար:

—Ես ցիշեցնում եմ ձեզ ձեզ բարոյական պարտքը: —զուեց իշխանը, աւելի զրպուելով, —որ դուք ացնալիս մոռացաք:

—Քատ պատասխանատու դեր էք կատապաւի, ձերդ պաշտառափայրութիւն, արտասանեց Թուբէնը վիրաւորված:

—Ի՞նչ ցը լինի թէ, դուք ինձ անդիպուակ էք համարում խրատել մի թեթեամիտ պատանու և մի անփորձ աղջկայ:

—Թէ պատանին և թէ աղջկով կարօս չեն ոչ ձեր և ոչ ուրիշների խրատներին:

Իշխանը կատաղեց, նայեց խորին արհամար հանքով երփառարգին ոտից մինչեւ զրուի և արտասանեց:

—Սիրելիս, շատ ես քինթիդ մեր ցցում, վաղուց է, որ այդքան մեծացել ես:

—Իշխան, —պատավխանեց Թուբէնը, մի կերպ դսպելով իրան, —ձիշդը չը զիտեմ ինչ, բայց համովված եմ, որ ազգական զգացմունքը չը ձեզ իմ և քրոջն դէմ գրկուողը... Անշուշտ մի ուրիշ պատճառ ունէք: Ես ձեր մասին մի բան էլ լսել եմ, բայց չեմ ուզում հաւատալ, այդ արդէն չափազանցութիւն կը լինէր...

Մի քանի վայրկեան իշխանը աչքերը լայն բաց արած նացում էք Թուբէնի երեսին:

—Ի՞նչ էք լսել հարցրեց նա, վերջապես Թուբէնը լուս էք իշխանը կրկնեց, երեկնեց իւր հարցը:

Այն ժամանակ Թուբէնը ցուզված և վշտացած յախտնեց այն բանը, որին ինքնը էլ արդարե չըր հաւատում, որքան և՛ վատ կարծէր ունել իշխանի մասին: Յախտնեց, թէ լսել է, որ իշխանը կողմնակի կերպով ոմանց մօտ անուանարկել է Մարիամին:

—Կրկնում եմ, ես չեմ հաւատում լամաճին, չեմ հաւատում, որ դուք այդքան վատ էք:

Իշխանը փռքը ինչ շփոթվեց, ամաչեց, զգայով, որ իրաւ իւր լեզուին շատ է աղատու: թիւն տուել: Նա յանձն չառաւ, նա յետ կանդ-

նեց իւր ասածից, Եւ որպէս զի աւելի համովի Թուբէնին, որ ինքը արդար է, ցոյց տուեց անարդար մարդու կեղծ՝ արդարացի կատաղութիւն:

— Կասկածել մի վայրկնան, որ ես, իշխան Սահարունիս, գոչեց նա, աչքերը պապղացնելով, — որ ես, իշխան Սահարունիս, ընդունակ եմ բամբասելու մի օրիորդի, լինի նա ազգականո, թէ բոլորովին օտար, կրկնում եմ կասկածել մի վայրկեան անգամ այդ մասին + կը նշանակե ինձ անպատւել: Ամօթէ ձեզ համար, Թուբէն, ամօթէ է, որ այդպէս անպատւում էք ինձ:

Եւ իւր կեղծիքը թագնելու համար շտագեց հեռանալ:

Սակայն Թուբէնը զգաց, որ իշխանը այդ բանում չատ էլ արդարացի չէ, որ անկասկած նա մասն ունի Մամիամի մասին ստարածիած տամարդի լուրերում: Լուրեր, որ որքան և մուլթ և մեղմացրած կերպով էին հասնում սիրող եղբօր ականջին, բաց և աշնպէս պատճառում էին նրան մի ծանր վիշտ և ստիպում աւելի կատաղել այդ բոլորի սկզբնավատճառ—բժշկի դէմ: Հարկաւ, նա իւր լսածը չէր հաղորդում Մարիամին, Բաց նրա դէմքից, նրա խօսակցութեան ձևից, քոյրը կանացի բնագրմամբ:

մասամբ գուշակում էր նրա սրտի ձնշող գաղտնիքը: Եւ նա իւր ցաւի վրաց աւելացնում էր իւր եղբօրը ցաւը: Խոդի խացթոցի պէս մի բան, թէ ինչու իւր պատճառով պէտք է բարուցապէս տանցիլ և եղբայրը: Թրդված դէպի Թուբէնը տաճած փոխադարձ սիրուց, նա վերջին ժամանակ ամեն ջաներ զործ էր զնում իւր վիշտը մոռանալ, կամ գոնէ ուրախ լինել այն պահին, երբ Թուբէնը իւր մօտն էր: Այս պատճառով նա խարում էր եղբօրը: Նա, որ անտարբեր էր հոգով և սրտով դէպի բոլորը, մերթ զովում էր Թուբէնի մի ընկերոջը մերթ միւսին, ցոյց տալու համար, թէ զես կալոր է, սիրել մի ուրիշն: Ազնիւ խաբէութեան միջոցը ճիշդ էր ընտրուած, և Թուբէնը ուրախանում էր, որ Մարիամը դեռ զիտէ հետաքրքրվել ուրիշ երիտասարդներով:

Մի օր, իրինադէմին, մասնաւոր գասից տուն վերագաւնալով, պատշգամբի վրաց Թուբէնի ականջին իւր սենեակից հասաւ մի ձայն, որ, կարծես, վաղուց, շատ վաղուց, նա լսել էր:

«ա շտապեց ներս:

Մարիամի և Մաթինիկի հետ, նրա սեղանի մօտ, նստած էր մի անձանօթ մարդ, հասարակ ու հագուստով: Դա բաւական լայն թիկունքով,

զէմքի խոշոր գծագրութեամբ, թուխ աչքունքով և խփառակ մի երկասապարտ էր, որի երեսի կաշին կառած էր բաց օդին արևին, բամահետքը:

Տեսնելով Թուբէնին, անձանօթը ժպանակի, Տանրաբար ոտքի կանգնեց, երեան հաներով իւր բարձր հասակը և ամուր կազմուածքը: Մի քանի վայրկեան Թուբէնը զարմացած նացում էր նրա երեսին: Յանկարծ նրա զարմանքը փոխվեց երկիւղի, և ակամայ մի քաղ չետ դնելով, բացականչեց:

— Բայրատէան...

— Աս ինքն է,— զոչեց անձանօթը և, իւր լայն թեկրը բանակի, զրկեց Թուբէնին:

Եթէ կույր ունի զանազան պատճեամբ, ու կույր պատճեամբ կառավարութիւն է ունի պատճեամբ: Եթէ կույր պատճեամբ առաջ գալու գործը պատճեամբ ունի պատճեամբ: Եթէ կույր պատճեամբ առաջ գալու գործը պատճեամբ ունի պատճեամբ: Եթէ կույր պատճեամբ առաջ գալու գործը պատճեամբ:

ամսաթ գոյացաց կու զլ Հայուշքու պրեյն և ուրանակ ամ Յանի բիշտուու մութմասու առու ու զիստեմնեամքի իւր: ԽՎիդգիր գոյաց կու զլ ամս ամս կանուու մութմասու մութեամբ քառ շինա ուր բազով մութեամբ ուր: Եթէ ամսաթ գոյացաց կու զլ Հայուշքու պրեյն և ուրանակ ամ Յանի բիշտուու մութմասու առու ու զիստեմնեամքի իւր: ԽՎիդգիր գոյաց կու զլ ամս ամս կանուու մութմասու մութեամբ քառ շինա ուր բազով մութեամբ ուր:

Բայրատէանի երեալը Թուբէնին մի ամն պիսի ցնցումն պատանաւեց, որ երկար ժամանակ այցալված նայում էր նորեկին ոտից մինչեւ զլութիւ:

Երա ս.ս.աջ կանգնած էր իւր պատանեկամկան ընկերներից մէկը, որին մօտ ութ տարի չլր տեսել և որին երեք տարի մեռած, անհետացած էր համարուծ:

Եթէ Թուբէնը գիմնազիատ էր, Բայրատէանը ուսանում էր ուշական վայրոցում: Մի օր նրանք Տանօթացան, և անհիշապէս երկուսի մէջ զլացաւ փոխադարձ համակրութիւն:

Բայրատէանը զիզական հաստրակ ընտանիքի զաւակ էր, կրթութիւն էր ստանում մի բարեգործ ազգականի օժանդակութեամբ: Հասակով իւր զասակեցներից մէծ, ուսման մէջ շատերից լետ մնացած, այդ պատանին ուներ յառկութիւններ, որ ստանձին դիբք էրն տալիս նրան ընկերական շրջանում: Մինչ դառն կիցները զբաղված էին իրանց ուտանով, նրա

ուղեղը ողեղարփած էր այ բաներով։ Տասնուշիր տարեկան հասակից մկան նա պարապում էր մի շարր գրքերի թնթերցանութեամբ, որ ոչինչ կապ չունէին դպրոցական ուսման հետ։ Եւ այդ գրքերի ազդեցութեան ներքոյ նրա միջ պատրաստված էին այն ձգտումները, որ ապագայում նրա բնաւորոց յատկանիշներն էին կազմում։ Կատելի էր, թնութիւնից առանց այն էլ սակաւախոս պատանին օրից օր աելի րոկի է գառնում, աւելի մտագբաղ և հետզետէ նրա պայծառ ճակատը սրովում է, մի մասաց ստուէրով։ Մի անգամ աշակերտներից մի քանիսը նրան տեսան ուսաւմնաբանի ետեսում մի պատի տակ նատած արտասկերպ Աչ ոք չէր կարծում, թէ նա այնքան ժամկասիրտ է։ Հարցրին պատճառը։ Նա յրագիր, ուր նկարագրփած էր Տաճկական—Հայաստանում եղած հարստահարութեան մի գէպը։

Դեռ հինգերորդ դասաստան աշակերտ էր, էրբ մի օր նա հրաւիրեց իւր աղքատիկ մեակը ամենամօտիկ թնկերներին։ Այստեղ նա հաղորդեց նրանց այն, որ վաղուց նրա մտախութեան նիւթն էր կազմում։ Յայտնուեց որ մասամբ անընդունակ մասսմբ ծոց համար-

փած աշակերտի պատանեկական ուղեղը իւրաց րել է և սիրութ չերմ կերպով ընդունել մի ծանր զաղափար, որով պէտք է նոր նոր ոտղովից ժամանակից թարմ սերունդը։ Նրա միտքը համարացան միայն հինգ-վեց հոգի, որոնց թւում և՛ Թուքէնը։ Բնականաբար կազմուեց հոմամիտ և համագալափար թնկերների մի սուզ շրջան։

Բագրատեանն էր այդ շրջանին ուղղութիւն ուղղը, ովի ներշնչողը, պարագրուիր։

Կպագացում Թուքէնը յաճախ վիշտում էր այն բարձրահասակ, կայտառ, սևաթոյր աշքերով զիւղացի պատանուն, որ իւր զօրեղ կամքով, կորովի բնաւորութեամբ բոլոր թնկերակիցներին յարդանք էր ներշնչում։ Ֆիշում էր, այդ պատօնին ունի, իւր մէջ ինչոր մի դիւթ ական ոյժ, որ կամաց ականաց բոլորին հպատակեցնում էր։

Աչ ոք յունի, շրջանի մէջ այնքան կշնու, որքան նա, ոք ոքի կարծիքը այնքան հեղինակութիւն, որքան նրանի։

Եւ ինքը բաղրաստեանը զգում էր այդ Գնուց հենց գա էր պատճառը, որ օրից օր նրա միջ զարդանում էր, մի տեսակ բոնակարտան ձգտումն Զգտումն, որ յարգանքի հետ

թողերին ներշնչում էր և՝ ատելութիւն, և՝ նախանձ, որոնք սակայն բնաւ բացարձակ կերպով չէին արտապատճեմ:

Աւարտելով միջնակարգը, Բագրատեանը դիմեց բարձրագույն կրթութեան Թուբէնից երկու տարի առաջ,

Այնուհետեւ նրանք այլ ևս չը տեսան միմեանց, Թէ ինչ պատահեց Բագրատեանին ցետոց—ճիշտ ըստ գիտէր Թուբէնը, նոյնպէս և ոչ ոք: Յայտնի էր միայն, որ նա ատրի ու կը Պետքը ատեսնոլօփակական ձեմարանում ուսում առաւ, ցետոց արտաքսվեց: Այնուհետեւ նրա մասին եղած տեղեկութիւնները հակառած էին միմեանց.

Մի օր յանկարծ լուր տարածվեց, թէ նա մեռել է օտար երկրի մի ցեղընկած, աւանում և թշաղիլ օտար բահանացի ձեռքով: Տոյպը հաւատացին աց լիին: Բագրատեանը մոռացվեց: Ու ոք չէր լիշում նրա անունը և եթէ, լիշում էր շատ թոց, սասնարիւն կերպով: Եթե վաղուց չբացած մի բան:

Եւ յանկարծ մեռածը երեան է գալիս, անձամբ ներկայանում է իւր ընկերներից մէկին:

Դէպրը անսպասելի էր, ազդեցութիւնը ուժգին:

—Պատմիր, որտեղ էիր,—գոյեց Թուբէնը շնչասպառ հետաքրքրութեամբ, երբ փոքր ինչ սմբակից ապշութիւնից:

Նորեկի վարկենաբար պարզված դէմքը իսկովն բօղարկվեց այն մթին ստուբով, որ, բայ երկուցին, մշտական էր:

Մարիամը և Սաթինիկը տակաւին չը կիալին Թուբէնի յանկարծակի և երկարատե այլապման պատճառը: Զարմացած մտիկ էին անում մերթ մէկի մերթ միւսի երեսին:

—Մեռած էր և կենացնացմր: Եթէ անհաւատաց լինէի, երկիւզից տէտք է խելագարվի, կարծելով, որ իմ ասած կանգնած է ու բուականդ:

Նորեկը նստեց, հրաւիրելով Թուբէնին և նստել: Նա ատակաւին լուս էր:

—Աւթ տարի բարեկամներից և ընկերներից անյատ ապրել մեր զարում, թոյց այլ, որ չար լեզուները չար լուրերից ամենասարսափելին, չ'ուրախացնել ընկերներիդ—ասա, ինչ է նշանակում այդ զաղոնիքը:

—Նշանակում է, —խօսեց, վերջապէս, Բագրատեանը, հասացելով՝ որ աց բոլոր լուրերը պնդիմն չէին, ես չէի կարող երբեկ:

— Ե՞նչ, միթէ դու ի՞նձ պէտք է հաւատաց-
նես, թէ երեք տարի մեռած էիր:

— Այս, մեռած էի, թէ և շնչում էլ...

Թուբէնը կարծեց, թէ նա կը շարունակի, :
Բայց ոչ, նա կանգ աւաւ, նայեց Մարիամին
և Սաթինիկին: Պարզ էր, նա չէր կամենում
օրիորդների ներկայութեամբ խօսել:

Այն ինչ Մարիամի և Սաթինիկի զարմանը՝
փոխեց բուռն հետաքրիրութեան: Նրանք
անթարթ աչքերով նայում էին նորեկի լերանին:

Առանձին անշամբերով վեճ էր արտայաց-
տում Մարիամի դէմքը: Եւ երբէք վերջին ժա-
մանակ ոչ ոք չէր զրաւել նրա ուշադրութիւ-
նը այնպէս, որպէս այդ խորհրդաւոր հիւրը:

Թուբէնը զսպեց իւր հետաքրիրութիւնը,
թողեց իւր հարց ու փորձը, տեսնելով, որ
հաղբատնանը ակամաց է, խօսում: Եցն ժամա-
նակ նորեկի ինքը հետաքրիրութիւնը Թուբէնի
ներկայ կայութեամբ, և բաւականաց վեր-
ջինի համառօտ պատաժաններով:

— Եզտա՛ ժամանակ ունեն, — հարցրեց նա
հանդարաս:

— Ունեմ:

— Քեանք մի քիչ պառնելու:

— Այս ցրտագն եւ վամբով:

— Փոյթ չէ:

Թուբէնը գուրս եկաւ նրա հետո: Մարիամը
և Սաթինիկը մնացին առանձին: Քանի մի
վարկեան նրանք լուր նայում էին նախ՝ պա-
տուհանի միջով հագրատեանի ետևից, մինչ
աներեւով այցաւ վերջինի լացն թիկունքը երեկ-
ուային կիսամթնում, ապա՝ միմեանց երեսին:

— Ի՞նչ տարօրինակ մարդ էր, — արտասանեց,
վերցապէս, Սաթինիկը:

— Այս, տարօրինակ և երկիւզալի:

— Ես կարծում եմ, այդ մարդը մի հասարակ
մարդ չէ, — սկսեց, ենթադրութիւններ անել
Սաթինիկը: — Դու նկատեցիր, նա ինչպէս աշ-
կամայ էր պատաշխանում եղբօրդ հարցերի և
կաց տեսնես, այդ մարդու անցեալում մի բան
կաց, նա այժմ էլ մի շատ ծանր հոգս պէտք է
ունենաց: Ո՞վ պէտք է լինի:

Մարիամը լուր էր: Անպասելի հիւրը երկուսի
վրայ ևս խորին տպաւորութիւնն էր գործել:
Մէկը իւր տպաւորութիւնը հազորդում էր լը-
սելի ծացնով, մէւսը լուր խորհում էր մտքում:
Հարկաւ, ոչ մէկը չը կարողացաւ գաղտնեքը
հստակաց:

Երդէն ուշ երեկոյ էր, երբ Թուբէնը տպն
վերադարձաւ Երբէք նա այդպէս ուշացած

չը զբում, այն օրից, երբ քրոջ Հետ առանձին
Եր ասպիւմ:

Մարիամը միայնակ ապասում էր նրան ան-
համբեր և երկխղավ. Նա և երս մտաւ միան-
գամայն այսափոխված. Նրա միապոյն այտերի
վրաց երեսում էր մի անսովոր կարմաթիւն,
նրա աչքերի մեջ փացում էր մի տեսակ կին-
գամեցրցից հոր. Նա նեարդաշին քայլապահ
դրութեան մէջ էր. Նա զինարդը մի կողմ դր-
սպանեց և նստեց սեղանի մօտ:

— Ո՞րտեղ էր,— հարցրեց Մարիամը.

— Տեսար, տեսար այն մարդուն, — զիշեց Անո-
բէնը, — Տէր Աստուած, ինձ ոյժ, ինչ կրակ,
այդքան նեղութիւններ քաշել և այցչափ կին-
գանի հոգի ունենալ... . Ինչ եմ ես և ինձ
նմանները այդ մարդու մօտ:

Նրասանելով այս խօսքերը աւելի ինքն իւր
քան Մարիամի համար, նա ոտքի կանգնեց և
սկսեց շտապ շտապ ո՞նց ու դարձ անել.

— Դու չես կարող երեակացել, շարունակեց
նա, դառնալով քրօջը, — այդ մարդը ինչքան և
տանջվել իւր կեանքում, Մագերս իշաքաղվում
էին, երբ լսում էի նրա չոր ու ցամաք պատ-
մութիւնը:

Վայրիւան առ վայրիւան Մարիամի հետա-

քրքրաւթիւնը բորբոքվում էր. Կա ձգտում էր
իմանալ Բագրատեանի կեանքի պատմութիւնը,
ևս փափառում էր լսել այն բոլոր նեղութիւն-
ները, որոնց մասին այնպիս, ո ցուզված խօսում
էր Առարևնը, Սակացն հասնիսոր, գարձուած-
ներավ Թուբեէնը աւելի իւր, ոգն որութիւնն էր
արտաշայտում, բան մի կանոնաւոր բան պատ-
մում:

Եց քանի պարզից, նրա բարբառաձներից—
Տեխնօօգիական ճեմարանից արտաքսվելուց ցից
առ Բագրատեանը զրկվում է, իւր բարեգարձի
օժանդակութիւնից, նա բնկնուն է, ցեսին ազ-
գատութեան մէջ:

Ճապահատված նա շտապ չափաւոր, ոռձիկով
մանում է մի կալուածատիրոջ մօտ կատալարչի
պաշտօնով, Բայց այսակ ևս հանդամառները
զաւանանում են նրան. Կալուածատէրը կատ-
կածում է, նրա անցեալի մասին և բարբառ-
վարի կերպով հրաժարեցնում պաշտօնից; Առ
գաղթում է ուրիշ բաղար:

— Եմեն աեզ կրել և քայլածութիւն, ցորս,
մերկութիւն, Կմեն աեզ մարդկանց անսարքե-
րաւթիւնը եղել և նրա բնկերի:

— Կման, ինչ պատճառով:

Պտրէնը տվառւի վայաց:

— Եղուր, Պարօ, իգուր, — արտասանեց նա,
հառաջելով և՝ — առանց որ և է յանցանքի:

Աւելի նա ոչինչ չասաց այդ երեկոց և՝ ոչ
հետեւեալ և երրորդ օրերը:

Խորհրդաւոր հերը աշնքան վրաւել էր Պա-
րիամի մլուքը, որ նոյն զիշեր օրիսրդը երկար
ժամանակ նրա թողած տպաւորութեան տակ
էր: Նրա աչքի առաջից չը հեռանում մի տե-
սակ կիսաաւաստպելական ծշուշով փարապուրիան
երիտասարդի կերպարանքը: Ո՞վէ նա խսկացիս:
ինչո՞ւ է եկել, ուր պիտի զնաց — տակաւին չը
պարզված այս հարցերը ակամաց հետաքրքրուն
էին նրան: Ուուբէնի ասածից խմացաւ նա, ի
միշի այսոց, որ այդ երիտասարդը նրա պատա-
նեկական ընկերներից մէկն է եղել: Բաց որ-
քան աշխատեց, չը կարողացաւ մտաբերել՝ տե-
սելո՞ւ, արդեօք մի տեղ նրան, չը լիշեց անդան
նրա ազգանունը:

Անցաւ երկու օր, Բաղրատեանը կրկին երե-
ւացաւ: Այս անգամ նրա դինքը աշնքան մասց
և խոշորած չը թւայ Պարիամին, որքան առա-
ցին օրը, երբ անձանօժիլ ներս մտաւ, հարցրեց
Ուուբէնի տեղը և նստեց նրա վերադարձին
տպասելու:

— Յաջորից, — հարցրեց Ուուբէնը խորհրդա-

որ եղանակով, հէնց որ ներա մտաւ Բաղրա-
տեանը:

— Յօյս կայ: — պատասխանեց նա:

Նրանք լուցին, Ուուբէնի անհամբեր հարցը,
Բաղրատեանը կարուկ պատասխանը աւելի գըր-
ուեցին Պարիամի հետաքրքրութիւնը: Նա են-
թագրեց, որ նրանց խօսքը անշուշտ մի շատ
նշանաւոր գործի մասին է:

Բաղրատեանը հրաւերված էր ճաշի: Ներկայ
էր և՝ Պաթինիկը, որ գիտմամբ եկել էր իւր
հետաքրքրութեանը քիչ թէ շատ գոհացումն
տպու: Պակացն այս անդամ ևս օրիսրդները
շմացան աւելի, քան Ուուբէնի պատմածը
Պարիամին: Ճաշի ժամանակ խօսակցութիւնը
պտտում էր երկու երիտասարդների նախկին
ընկերների մասին: Բաղրատեանը հետաքրքրութ-
էր, Ուուբէնը իւրաքանչիւրի մասին տեղեկու-
թիւն էր տալիս:

— Խակ հրտեղ է Պելիք-Բարսեղեանը, — հարց-
րել յանկաց նորեկը, — միշում ես, ուր նրան միշտ
պաշտպանում էիր ինձ մօտ:

Բարեբաղդաբար այդ պահին Պարիամը, ան-
ցել էր խոհանոց, ուր նա գրագիւած էր
համեստ սեղանի երկորդ և վերջին համեստ
կերակրի պատրաստութեամբ:

Նա այժմ բժիշկ է, սպասավոնեց Ուռ-
րւնք:

—Թիվլիդն է, սպասավոնեց Ուռ-

—Եց: Սպասավոնեց Ուռը սպասավոնեց Ուռը

—Փոխվել է, թիւնոցն ետածողն է մասյի, ինչոր էր զիմնազիւում:

—Գուշ ինքդ կը տեսնես և կիմանաս:

Ներս մտաւ Մարիամը կերակրի ամանը ձեւին: Մաժինիկը վացրիեան առաջ կարողացաւ մի միջանկեալ խօսքով բժշկի անունը գուրս հա-
նել խօսակցութիւնից:

—Գուշը երկար կը մնաք Թիվլիդում, Հար-
ցրեց նա:

—Յայտնի չէ, սպասավոնեց Հիւրը:

Նա լրեց: Խաթինիկը փորձեց մի որ և է խօսակցութեամբ զբաղեցնել նրան, աշխատելով, վերջապէս, որ նա փոքր ինչ ազատութիւն տայ իւր ժատ լեզուին: Խական Բաղրատեանը տեելի ինքն էր Հարցնում, քան իրան առա-
ջարկված հարցերին պատասխանում և առ Հա-
սարակ աւելի լուռմ էր, քան խօսում:

Առջից յետոց, մի կետ ժամ անցած, նա շտա-
պեց հրաժեշտ տալ, դարձեալ Ուռընին իւր
հետ տանելով:

Եց անդամ Ուռընը տուն վերադարձա-

աւելի ուշ: Հետեւեալ օրը նա գարթնեց շատ
վաղ, տնից գուրս վնաց սպասավոնից մի
ժամ առաջ, առուն եկած սպասավոնից մի ժամ
ուշ: Նկատելի էր, որ նա մի բանով պբաղված

է, մի բանով, որ չէր կամենում ոչ ոքի հա-

պորդել: Պարիսի հետաքրքրութիւնը փոխ-

վեց երկիւղի: Նա վախենում էր Ուռը,

նի մասին, նա զգում էր, որ եղբօր տարօ-

րինակ տրանտրութեան պատճառը Բաղրա-

տեանն է: Նա փորձեց խօսել Ուռընի հետ
այդ մասին, մի որոշ հետեւանքի չը հասնա:

Մի և նոյն ժամանակ, նա ցանկանում էր

դարձեալ տեսնել Բաղրատեանին, այն ինչ՝

վերջինը հինգ օր էր չէր երևում:

—Ինչո՞ւ նա դադարեց քեզ մօտ գտնուց, -

Հարցրեց մի օր նա, Ուռընից:

—Այսօր կը գայ բազումայք թագավորութեան մասին:

Պարիսի թեթե երկիւղի հետ զգաց և ովով

անորոշ ուրախութիւն:

—Ուռըն, ինչո՞ւ ինձանից թափյնուռ էս, թէ ինչ գործով է զբաղված այդ Բաղրատեանը:

—Սիրելիս, պատասխանեց Եղացը, փոքր

ինչ ձանձրացած քրոջ անջափ հետաքրքրու-

թեամբ, —առ այժմ չեմ կարող ասել: Բաց

կիմանաս, շուտով կիմանաս... ոչի զանդ

— Խոստովանում եմ, նրա լուութիւնը, նրա կերպարանքը ինձ վրայ մի տեսակ երկեղ է ազդում: Եթէ չը լինէր նրա աշքերի խորբում մի բարի և առնիւր փայլ ես պէտք է հասկածէի նրա մասին:

— Բարի և ազնիւր—կրկնեց Թուբէնը զգացված, — ոչ ոք մեր ընկերներից բարբատեանի չափ չի եղել և ացմ էլ չէ բարի և ազնիւր բայց նա ունի մի ուրիշ ցատկութիւն, որ շատ և շատ բարձր է այդ առօրեաց առաքինութիւններից: Մարօն նա հագուածիւտ մարդ է:

Ճաշից ցետոց եկաւ բարբատեանը: Այս անգամ նա Թուբէնի հետ ստանձնացաւ վերջինի սենեակում և այնտեղ խորհրդակցում էին:

Հիւանդոտ հետաքրքրութիւնը հանգիստ չէր թողնում Մարիամին: Նա չէր զգում, որ հետզհետէ անգիտակցաբար մոռանում է իւր հոգմերը, իւր մտածութիւնները, և աւելի ու աւելի զբաղվում այդ երիտասարդով: Նա չէր զգում, որ անսպասելի հիւրի զարթեցրած հետաքրքրութեան զգացումը այնքան զօրեղ էր, որ նսեմացնում էր մի ուրիշ զօրեղ զգացում — նրա սրտի անենախորին վիշտը:

Թուբէնի սենեակի դուները բացվեցին, Մարիամը ներս հրաւիրվեց: Բարբատեանը նատաճ

էր անշուր և փոքրիկ թախոտի վրայ: ոտք ոտի վրայ ձգած, կոները կրծքին ծալած: Ամբողջ նրա կերպարանները այդ փացիկեանին արտացայտում էր մի անթափանցելի սառնութիւն Մարիամը զգաց մի ճնշումն, մի ծանր բան իւր սրտում: Այդ մարդու ներկայացւթիւնը մի անհասկանալի ուժով իւրում էր նրա համարձակութիւնը և չէր թույլ տալիս նրան մինչև անզան ազատ շրջել, ազատ խօսել նոյն խոկ իւր եղբօր չետ: Նա, կարծեն, վախոնում էր ուղիղ նայել հիւրի երեսին, բայց բոլոր ուշիք ու միտքը կենարունայութ էր նրա վրայ:

Տանտիրոջ պատանի ծառան, որ օդ նու և իր Մարիամին խոհանոցի զգրծերում, ներս բերեց սամօվարը: Մարիամը թէց պատաստեց և առաջարիեց, բարբատեանը իւր կոշտացած ձեռքով վերցրեց մատուցաբանի վրայից մի բաժակ, զրեց իւր մօտ: Հոգով փափագում էր Մարիամը խօսել նրա հետ, բայց լեզուն չէր զօրուն: Նա չը զիստէր ինչի մասին խօսել և ինչպէս սկսել թռում էր նրան, որ այդ մարդուն զբաղեցնելի դժուար է, որ նա հասարակ խօսակցութիւնից կարող է ձանձրանար: Նրա առաջ նատաճ էին երկու կատարեալ հակատիպեր, մէկը — Թուբէնը դարձեալ չուպիած, վառված ինչոր մտքերով,

պատրաստ ամեն վայրի եան խօսելու, միւսոր—
Բազրատեանը տառն, հանդարու, առկացն ազգ
տառ է ուժեան, և հանդարութեան մէջ աւելի
ազգու, անզան երկիւզալի:

— Արքան ցիշում եմ, օրիորդ, ես ձեզ առաջ
Եւ աւել եմ, զբաժաւ Բազրատեանը Մարիա-
մին, առաջին անգամ:

— Ք'նձ, — կրկնեց Մարիամը, շփոթելիսավ, —
Երբ, ժրտելու:

Պատ տարը տարի առաջ, Թուբէնի հետ,
Ճեր ազգականներից մէկի տանիք:

Մարիամը մտքում ցանդիմանեց իրան, պր
չեր ցիշում Բազրատեանին, Կարծես, այս մի
աններելի թւուրնթիւն Եր նրա կողմից, կար-
ծես, նա մի անդամ տեսնելով ազգ կերպարան-
քը, չը սիսի մոռանար տականեն:

— Ես Ել կարծում եմ, . . . առասանեց նա
հայ կամենաւ մ Եր ուրիշի իւր միապր Բաց
կունք առաւ, զբարսվ որ անկլսամյաբար զրե-
թի, սուտ տասց:

Մէջ մտաւ Թուբէնը և աշխատեց միրարինք
նեցնել Մարիամի, ցիշուրնթեան մէջ Բազրա-
տեանին, թէ և իւրին Ել համոզված չեր, թէ, երբ
ի Ե, նրանը հանդիպած լինին:

— Դուք առարտեցիք, բայց իսնավիական տառ-
մը, — հարցրեց Բազրատեանը:

— Եցու մժամանուրած առ անզուր իւր
— Արեմն դուք ունէք շատ ընկերուհիներ
կրթված օրիորդների մէջ:

— Թէ և շատ չէ, բայց ունեմ: առ առ զի՞ւն առ
Բազրատեանը մի քանի վայրի ան լուց:
Ազա մի քիչ թէց խսեց և շարունակեց.

— Են ժամանակ, երբ ես գեռ գիմնավիստ
Եի, հայ օրիորդը չունէր մի որոշ իդէալ, նա
բարձր չէր առօրեաց չնչին հոգսերից, Զան-
կալի է խանալ, նա նոյնն է և՝ այժմ, թէ
ժամանակի հոսանքը կարտղացել է նրա վրայ
և ապրել:

Եց խօսքերը Մարիամին նեղ գրութեան
մէջ ձգեցին: Ենչ պատասխանէր:

— Եւա մի շատ հետաքրքրելի խնդիր, —
միջամտեց Թուբէնը, — որ, հշմարիստ, արծէ յուրօ
նտածութեան: Խնձ թւում է, — շարունակեց
նա, մի քանի վարչիկան կանգ առնելուց ցե-
տոց: — Հայ կինը առանց իդէալի չէ, միայն
պէտք է ուսումնասիրել նրան: Խոստովանում
եմ, ես ազգ մասին դեռ առիթ չեմ ունեցել
խորհելու:

— Իմ կարծի լով, — վատահացաւ, վերջապէս,
խօսել Մարիամը, — առաջ պէտք է խմանալ
հայ երիտարարդի լիդէալը կնոջ մասին: Օրի-

նակ, — դարձաւ նա Բազրատեանին այս անգամ
բաւական համարձակ, — ես կը կամենացի իմա-
նալ, թէ դուք ինչ էք պահանջում կնոջից.
Նա ինչ ձգտումներ պէտք է ունենայ:

Մի րավէ տիրեց լռութիւն։ Մարիամը ան-
համբեր սպասում էր Բազրատեանի պատաս-
խանին։

— Օրիսրդ, — ասաց վերջինը դրական եղա-
նակով և հաստատ ձայնով, որի մէջ զգացվում
էր նրա համոզունքի ամրութիւնը, — այժմեան
հայ կնոջ մէջ ես միայն մի բան կը ցանկացի
տեսնել: Կը ցանկացի տեսնել նրա մէջ մի ոյժ,
որով կարողանար տղամարդից անկախ կրել
այն բոլոր նեղութիւնները, զիմանայ մեր կեան-
քի այն բոլոր փոթորիկներին, որոնց դէմ այժմ
սկսել է կուտել հայ երիտասարդութիւնը։

— Դուք ուրեմն կնոջից պահանջում էք աղա-
մարդին հաւասար ոյժ։

— Այս, և ոչ միայն բարոյական ոյժ, այ և
իլիդրական տոկունութիւն, այնչափ, որչափ
բնութեան սահմանած օրէնքները թոյ են
տալիս։ Յուսով եմ, իմ միտքս կարօտ չէ ման-
րամասն բացատրութեան։

— Միայն եթէ բարեհամէք բացատրել, թէ
որոնք են այն նեղութիւնները, կեանքի այն

փոթորիկները, որոնց դէմ, ինչպէս դուք ա-
սում էք, ոկտել է կուտել ժամանակակից երի-
տասարդութիւնը։

— Որո՞նք են, — կրկնեց Բազրատեանը ներո-
ղամտաբար ժպտալով, — ես կարծում եմ, որի-
որդ, այս պարզ է հետաքրքրվողի համար։

— Պարզ է, — արտասանեց Մարիամը գառն
հեղնութեամբ, այս, շատ պարզ է, այնքան,
որքան բացատրում է տղամարդը, որքան նա
ինքն օրինակ է դառնում օրիորդին...

Այդ խօսքերի մէջ զգացվող հեղնութեան
միաբլ անհամկանալի էր Բազրատեանին։ Նա
կէս զարմացած նայեց օրիորդին։ Ոութէնը
միայն հասկացաւ քրոջ ակնարկութիւնը, ուս-
տի սրտմտութեամբ առաջ տարաւ նրա խօսքը.

— Չի կարելի պահանջել հայ օրիորդից մի
բարձր իդէա, քանի որ մեր երիտասարդու-
թիւնը, որից առելի է պահանջելի, նեխսած է
անբարոյականութեան ցեխի մէջ։ Օօօ, Բազ-
րատեան, դու դարձեալ նոյն իդէալիստն ես,
ինչոր էիր առաջ։ Դու գուցէ զարմանաս, որ
ես այսպէս խիստ եմ խօսում, բաց եթէ այդ-
քան տարի հեռացած չը լինէիր մնպանից, շուտ
պէտք է հասթափիլիր։ Մեր երիտասարդու-
թիւնը — ես խօսում եմ կրթված երիտասար-

դութեան մասին—այժմ այնպիսի օրինակներ է տալիս, որ բարոյական ապականութեան կասարելատիվեր են...

Մարիամը շնորհակալութեամբ լի մի մելամաղձիկ հայեացք ձգեց Ռուբէնի երևսին. Եղբօր խօսքերը բղխում էին քրոջ սրտիս, որ այդ փարիեանին դարձեալ լցվել էր դաւնութեամբ դէսի նոս, որ Ռուբէնի ակնարկած կատարելատիպն էր...

—Յաւալի է, եթէ այդպէս է,—ասաց Բագրատեանը, տակաւին չի զգալով Ռուբէնի սրտմտութեան բուն շարժառիթը, —բայց այդ չը պէտք է երբէք յուսահատեցնի մեզ: Տեսնել շատ քիչ, պահանջել և սպասել շատ աւելի — իմ կարծիքով, այս պէտք է լինի նոյն իսկ քեզ պէս հիասթափած մարդու ցանկութիւնը. Եթէ երիտասարդութիւնը ապականված է, թող հայ կինը օրինակ լինի նրան: Ներեցէք, օրիորդ, ես դարձեալ դաւնում եմ մեր խօսակցութեան բնաբանին—հայ ինոչը: Ո՞ւր պատգամախօսները ուզում են, որ կինը լինի միայն լաւ տնտեսուհի և առաքինի մայր: Ոչ, այդ չէ իմ ցանկացածը: Ես աչքի առաջ ունեմ ուրիշ բան: Զգեցէք ձեր հայեացքը աւելի հեռու ձեր ա-

րինակից ժողովրդի այժմեան վիճակի վրայ, մտածեցէք և կը տեսնէք, որ կնոջ գերը ըլլիտի սահմանափակի միայն հասարակ տնտեսուհու և քնքուց մօր պաշտօնով: Ինչպէս մեր երիտասարդութեան նոյնպէս և օրիորդների բոլոր ոյշերը ներկայ ժամանակ պէտք է ուղղուած լինին դէսի մի կէտ... պէտք է ծառայեն ժողովրդի հասարակական վիճակի վերակենդանութեան դործին: Ահա այս գերը կատարովից պահանջում է անսահման սէր գէսի իւր հայրենիքը և այդ սիրոյ անունով անձնագոհ լինելու պատրաստականութիւնն: Ունէ՞ արդեօք հայ օրիորդը այդ սէրը: Ունէ՞ արդեօք նա իւր սրտում անձնագոհութեան կաչածական ինչ եմ ուզում իմանալ:

Նա կանդ առաւ և թուլս յոնքերի տակ տեղաւորփած կրակու աչքերը մեւեւց Մարիամի երեսին: Դա մի այնպիսի թափանցող հայեցք էր, որին չը կարողացաւ դիմանալ օրիորդը: Նրան թւում էր, որ Բագրատեանը ձրդտում էր կարդալ իւր սրտի ամենանուիրական գաղտնիքը: Նա հասկացաւ նրա խօսքերի միտքը, հասկացաւ, թէ աչք երիտասարդը լինչ է պահանջում հայ օրիորդից: Կարդող է արդեօք գէթ փոքր մասամբ համապատասխանել նրա

կամեցածին։ Մտածել է արդեօք երբ և ի այս
ռւղղութեամբ։

Եւ զգում էր Մարիամը այդ մարդու առաջ
յի անյաղթելի տկարութիւն, վայրինաբար մի
թառւցիկ հայեացք ձերով դէպի իւր անցեալ։
Ենտեղ նա տեսնում էր մի ամայութիւն։
Ի՞նչ է մտածել նա մինչև այսօր, կեանքի որ
հոգսերն են եղել նրա ջերմ մտատանջութեան
նլւթը։ — Աչ մէկը, որ հետու լինէր նրա անձ-
նականութիւնից, ոչ մէկը, որ անջատված
լինէր նրա անհատական երջանկութիւնից։

— Զը զիտեմ, կայ արդեօք ձեր ասածի նման
մի օրիորդ, ըստ զիտեմ։

Այս եղաւ նրա պատասխանը — ուրիշ ոչինչ։
Եւ սրանով վերջացաւ խօսակցութիւնը։ Բաղ-
րատեանը զգաց Մարիամի հոգեկան խուզու-
թիւնը իւր խօսքերի ազդեցութիւնից։ Նա
փոխեց խօսակցութեան նիւթը։

Այդ օրից Մարիամի միտքը աւելի էր զրադ-
գուծ նորեկի անձնաւրութեամբ։

Տիկին Աօփիօփ ցոյսերը խարթեցին։ Նա կա-
տազած էր ոչ միայն Մարիամի, այ և Հալա-
բեանի գլուխ, Այժմ նա պատարակում էր ամու-
րիին, աշխատում էր փրել նրա աօնն մի
թերաւ թիւնը, մոռանալ բոլոր լաւ ցատկութիւն-
ները։ Հալաբեանը ծեր է, տպել է, տպել է,
արմէ նատալիացի մի մատին անզամ։ Երբեմն
իւր սրտի թոյնը տիկինը թափում էր իշխան
Սահարունիի զլիօխն։

— Մեզաւորը զու ես, եթէ, մէջ տեղ չընկ-
նելիր, ես նրա անոննն էլ չէլ տապ։ Նա ով է,
ում որդին է, ինչ մարդ է, որ..

Ֆակ իշխանը։ Համկանում էր քրոջ հոգին,
զիտէր, նրա կատարութիւնը ուրիշ ոչինչ
է, եթէ, ոչ անաջողութեան արդասիր։ Նա
ինըն էլ յաւսահատված էր։ Այն օրից, երբ
տեսաւ, որ Հալաբեանին դժուար է փոխել որ
անկարելի է նատալիացին նրա զգին կապել, չը
խճանում ինչպէս համովիր, քրոջը, պաղէս զի
ոս իւր ամուսուց մի բան պոկիչ

Եց էր եթէ, իշխանի անցեալ կեանքի փորձերից լսատված ըլ ինչին թէ տիկին Սօփիօն և թէ Նիկողացոսը: Բացց օրինակները պարզ էին, և Նիկողացոսը շատ լաւ էր ճանաչում նրան: Գիտէր, որ երաշխաւոր լինել իշխան Սահարունի համար կը նշանակէ՝ նրա պարտը ը անպաշման իւր վրայ վերցնել, զուտ փող տալ նրան՝ կը նշանակէ տուածից յաւխտեան ձեռք վերցնել:

— Թրատիր բանս, եթէ այս եղունդիս չափ սիրուժ ես ինձ, — անդագար յորդորում էր իշխանը իւր քրոջը:

— Զիմ կարող չեմ կարող չեմ կարող: Ավելոն քեզ չի հաւատում, ասում է, այնքանն է, չերիք է, ինչքան տուել եմ, սասացածը չետ տու՞ի է, որ նոր պարտք է ուղարւ:

— Ասա նրան, որ ինձ որ ինձ տուել է, տուկոսի յետ կըսանայ ժամանակին: Եշխան Սահարունին քարվանսարի բագալ չի, որ ուստի կոսր ընկնի, ուրիշի փողերը կուլ տայ: Իմ անունս ու պատիւս միլիօններով չեմ ծախսի... Հասկացրու նրան, լսում ես:

— Եթէ կարող ես, ինը համացրու, ևս այսուհետեւ ձեր մէջ դորձ չունեմ, դրամի, ո հրաժարվեց Սօփիօն:

Մի օր իշխանը փողի սաստիկ կարօտութիւն ունէր: Կա թշվախաղում տանուլ էր տուել մի բաւական զգալի գումար: Ինչ ինչ, այս տեսակ պարտքերը նա ճշգութեամբ վճարում էր: Փորձեց սրանից-նրանից խնդրել, ամենքը մերժեցին, ոչ ոք չէր հաւատում նրա պարկին: Մի տուաւու նա դարձեալ փաղեց Սօփիօնի մօտ: Նիկողացոսը տանը չէր: Կա հրաւիրեց քրոջը մի առանձին սենեակ և, զրավանից մի մարհակ հաներով, գրեց նրա առաջ:

— Առանց այս և այլի, այս վեքսիլի տակ մարդուկ ստորագրել կը տաս, — գոչեց նա հրամացողական ձայնով:

Սօփիօն վալսեցաւ նրա յուսահատութեամբ ի կատաղի աչքերից:

— Որ չուզենայ ստորագրել, ինչ անեմ:

— Հրամացում եմ քեզ, որ ստիպես: Այդ քո դորձն է:

Տիկինը աւելի գարմացաւ:

— Սրափիօն, ինչ ես խօսում, հրամացելս որն է:

— Կարճ ասա, չես ուզում կատարել...

Սօփիօն, մի քայլ յետ գրեց և լուս նացեց եղբօրը ոտից մինչև գլուխ:

— Ձես ուզում, — կրկնեց իշխանը:

— ՁԵ;
— ԼԱՌ, առաջ իշխանը և շինծու հանդար-
տութեամբ, մուրհակը վերցնելով, զրեց զրաբ-
նը, —ուրիշն թող մարդդ պատրաստվի բերդը
դնալու...»

Սօփիօն գունաժամփեց:

— ԲԵՐԴՐՈ... արտասանեց նա, զողդողալով:
— Ե՞ս, բերդը: Հերիք է, ինչքան ես նրան
խնացեցի քո խամբռու, հերիք է ինչքան թաղ-
ցրի նրա կեզտու բաները, Այժմ ինձ համար
դիմ մէկ է. Եթէ այս վերսելով փող չստանամ,
այ, սրանով կեանթիս վերջ կը տամ, —շարու-
նակեց նա, սիւրտուկի ծոցի զրաբնը բանալով
և ցոց տալով ատրճանակի կոթք: — Ես կորչ-
յու եմ, թող Նիկողայոսն էլ կորչի: Այս բովէիս
կը գնամ պօլիցիս և ինչ-որ մարդուվ հետ
միասին արել ենք, բոլորը կը պատմեմ, ցետոց
դու տես, թէ ինչ կը լինի:

Այս սպառնալիքը միանդամայն սարսափեց-
րեց Սօփիօնին, որ ապուշ գարձած լուսմ էր:

Ի՞նչ ես խօսում, ինչ է, ք արել միասին, —
զոցից նա, շունչը կորիված և ուժասպան նրա-
տելով աթոռի վրաց:

— Ինչ ենք արել... Գողութիւն, աւագակու-
թիւն, մարդասպանութիւն, կերել ենք, կոփել

ենք, կողոպտել ենք խեղճերին, անոէրներին:
Հերիք է, որ հարիւրից մէկը, միացն մէկը բա-
ցուի, ես ու մարդդ Սիբիրում կը լինենք...

Եց ևս Սօփիօն ըր կարողացաւ որից բան
հարցնել: Եզրօր խօսքերը ազգեցին նրա վրաց
անհաշիւ, անսպացման: Նա հաւատաց լիսվին,
թէ, կայ մի երկիւզալի զաղանելու:

— Տուր ինձ, տուր ինձ, զու զժվել ես,—
զոցից նա, ձեռը եղբօրը մեկնելով:

Իվաննը մուրհակը տուեց:

— Երեք օր ժամանակ եմ տախիս, աւելի չեմ
կարող: — Խստութեամբ որոշեց նա: — Կայ, վեք-
ուկը ստորագրել կը տաս, բայց ինչ-որ ասացի
մէր արածների մասին, չես պատճիլ մարդուդ:
Հասկանում ես, մի խօսք էլ չես ասիլ, թէ չէ՝
վաս կը լինի ամենիդ համար:

Եւ երեք օր շարունակ տիկին Սօփիօն, բոլոր
միւս հոգուերը մի կողմ թողած, մուրհակը ձե-
սին չը հեռանում ամուսնուց: Ժամանակ-ան-
ժամանակ, առաւօտ: Երեկոց, միշտ, երբ տանն
էր Նիկողայոսը, նա մի և նոյնն էր կրկնում.

Կամ ինձ սպանիր կամ այս վերսելի տակ
ձեռ քաշիր:

Անտանելի էր Նիկողայոսի զրութիւնը: Ըն-
տանեկան կեանքը նրա համար կատարեալ զը-

ժոխսք դարձաւ: Նա յուզվում էր, բարկանում
էր, գոռում էր, հրում էր ձեռքով կնոջ կլրծ-
քին, բայց իզուր: Խնչվէս մի անվուսափելի
չարիք, մի բնական պատիժ, Սօփիօն անզութ
կերպով հայածում էր իւր ամուսնուն, ստուէրի
պէս հետևելով նրան ամեն բռպէ, ամեն փայ-
կեան: Մերթ նա գոռում էր, մերթ աղերառու
և մերթ արտասլում, աշխատելով թունաորել
մարդու հանգստութիւնը:

Ուրիշ ելք չը կար: Վերջապէս, Նիկողայոսը
համաձայնեց, միանգամայն յաղթված յամառ
կնոջ անբրնդ հատ հայածանքից:

— Բայց ասա եղբօրդ, — պատուիրեց նա,
մորհակը ստորալրելիս, — այս վերջին անգամն
է լինելու::

Խշանը փողը ստայաւ բանկից, և այնուհե-
տեւ մուացաւ (գուցէ առ ժամանակ) Նիկողա-
յոսին էլ, Սօփիօյին էլ, բոլոր Սադափեաննե-
րին էլ:

Զմեռուաչ ընթացքում Նիկողայոսի դորձերը
այնքան յաջող գնացին, որ կարողացաւ իւր
պարտքերից մի քանիսը վճարել: Մնում էին
մի քանի խոշոր պարտքեր, ի միջի այլոց, և
Հայաբեանից վերցրածի մի մասը: Մի օր նա
հանդիսեց ամուրիին և լոնդը մի քանի ա-

միս ևս համբերել: Հալաբեանը անտարբեր կեր-
պով զլուսը շարժեց, կարծես, մի և նոյնն էր՝
կը ստանար իւր փողերը. թէ ոչ:

— Ես մինչև մահ չեմ մոռանալ, որ ձեղանով
ոտքի կանգնեցի, — ասաց Նիկողայոսը երախ-
տագիտաբար:

— Ոչինչ չեմ արել ձեզ համար, որ ինձ չը մոռա-
նաք, — արտասանեց Հալաբեանը վհատված ձայ-
նով:

— Փահ, բաս ովկ է արել...

— Ճնորհակալ եղէք ձեր եղբօր որդուց:

— Ի կողայոսը զարմացաւ: Առաջին անգամն էր
նա այդ լսում: Աչն ժամանակ Հալաբեանը
բանի էութիւնը, յայտնեց, թէ լոկ
Ռուբէնի լոնդը բռվին է նրան օգնել:

— Ռուբէնը, Ռուբէնն է ինձ համար ձեզ
լինգրել՝ գոչեց Նիկողայոսը, չը հաւատալով
իւր լսելիքին:

— Այս, Ռուբէնը... բայց... արտասանեց Հա-
լաբեանը և, զլուսը երերելով, հեռացաւ:

Անհասկանալի, նոյն իսկ անբնական էր լը-
ռում Նիկողայոսին վեհանձնութեան մի այդ-
պիսի օրինակ: Խնչվէս, նա, որին զրկել է, ո-
րին իւր տնից համարեա թէ արտաքսել է,
յանիստք: մոռանում է ամեն ինչ և կողմանակի

օգնմամ է իւր զրկողին, այն էլ գաղտնի կերպով: Աչ այդ անկարելի է, մէջտեղ մի բան կաց: Մարդ ասկած արարածը երբէք չի կարող այլչափ վեհանձն լինել:

Նա սպառմեց չալաբեանից լսածը իւր ամուսնուն: Տիկին Սօփիօն, լսելով Թուբէնի անունը, կատաղեց, փրփրեց:

— Այդ էր պակաս, համ ուժ տարի մեր հացով ապրի, համ մեզ խաչտառակ անի բարաքում, համ էլ մեր բարերարը լինի: Զէ, Նիկօ, մի հաւատավ, սուտ է, Թուբէնը այն պառազը չէ: . . .

Երբ նոյն բանը լսեց իւր մօրից նատալիան, քահ քահ ծիծաղելով, ասաց.

— Եթէ ուրիշին օգնել կարողանում է, ինձն շվեյքա քրոջը չի օգնում:

Օրիորդ Նատալիան այժմ Մարիամի անունն անդամ լսել չէր ուզում, ուր մնաց նրա եղբօր բարերարութիւնը ընդունել: Այն երազը, որ նա յոյս ունէր կատարիված տեսնել, այն հոյս և փարթամ կեանքը, որ պէտք է զարմացնէր ամբողջ քաղաքին, մնաց երազ: Նա թէւ ձաց նակցում էր մօրը, երբ վերջինը անխնայ պարսաւում էր Հալաբեանին, բաց կորստոր զդարի իւր և շատ զբաղի: Տարի ու կէսից անելի

էր նա վճռել էր իւր կեանըը կանկել Հարութեանի կեանըը հետ, թէե միւս կոմիջ նա պարում էր աւելի արժ անաւորին: Սակայն բոլոր իւր շրջապատղների մէջ չը կար աւելի լաւը և յոյս էլ չունէր երբ և է գտնել մի ազդավառուն, ուստի չալաբեանն էր մնում միւայն: Այժմ զուրս է դալիս մի տակելի աղջիկ և վերջնայիշ խորտակում է նրա յոյսերը:

Ահա ինչու նա այնքան կատաղն էր, նրա խելքը կրքից այնքան խաւարվել էր, որ ոչ մի միջոց չէր խնացում Մարիամի պատիւը արատաւորելու համար: Ոչ ոք այնպէս չերմ չէր պաշտպանում բժիշկ Մելիք-Բարսեղեանին, որպէս նա, ոչ ոք Մարիամի բարոյականութիւնը այնքան չէր զրպարտում, որքան այդ նախանձու աղջիկը:

Մի անգամ նա ոտով զբօսնում էր Գօլօվինսկից պրօսպեկտի վրայ, մի քանի կավալերներով շրջապատված: Պատահաբար հանդիսեց Մարիամին, որ Սաթինիկի հետ դալիս էր զէմ ու զէմ, Մի քանի քայլ մնացած նա ինչոր տասաց իւր ուղեկիցներին, բոլոր ուշագրութիւն գարձրին Մարիամի վրայ, իսկ ինքը բարձրածայն ծիծաղեց, համեստութեան սահմանից զուրս դարով, Մօտովը անցնելիս նա մի այն-

պիտի կատաղի հայեացք ձգեց Մարիամի վրաց,
սր, կարծես, պատրաստ էր յարձակվել և տեղն
ու, տեղը խեղդել նրան:

— Փո՞ք, կատարե ոլ Վուրփիա է դառել այդ
աղջիկը,— շշնչաց Սաթինիկը Մարիամի ական-
ջին:

Մարիամը անուշադիր թողեց Նատալյաի
Տիժաղը և կուռակոչ նայուածքը, անցաւ: Նա
վերջին ժամանակ մոռացել էր իւր ականաչ ո-
խը Նատալյաի և տիկին Սօփիօցի գէմ: Եւ
առ հասարակ հետզհետէ նրա սրտում մեղմա-
նում էր ատելութեան զգացմունքը ոչ միայն
դէպի իւր հեռաւոր հակառակորդները, այ ան-
դամ դէպի նա, որ աւելի, քան ով և է, վաճ-
լում էր նրա կծու ատելութիւնը: Թէ ինչպէս
պատահեց այդ— նա ըը գիտէր և չէր գրում:
Չէր զգում, որ Բագրատեանի գաղտնախոր-
հուրդ անձնաւորութիւնը, մի անհասկանապի
դիւթական զօրութեամբ, յաղթում և նսեմաց-
նում է ամեն բան նրա աչքում: Տակաւին
այդ մարդը նրա համար մի տեսակ առեղջուած
էր, տակաւին չէր հասկանում, թէ ինչ է կա-
տարվում իւր շուրջը, ինչ մի գաղտնի գործ է
այն, որ այդքան զբաղեցնում է թէ Բագրա-
տեանին և թէ Ռուբէնին:

Ամեն օր երկու երիտասարդները տեսալցում
էին վերջինի սենեակում, իւսում էին, վիճում
և շատարգ միասին գուրք գալիս: Ո՞ւր էին
վնում, ինչու— յայտնի չէր: Սովորաբար պար-
պախոս Ռուբէնը այժմ գառել էր գաղտնա-
պահ, անհանգիստ, նեարդացին: Մերթ Մա-
րիամը նրան տեսնում էր սեղանի մօտ նստած,
ինչոր մի քարտէզ առաջը գրած, խորասուզ-
գած մտքով նայելիս, մերթ թղթի վրաց ինչ-
որ հաշիւներ անելիս: Նա նկատում էր, որ
եղբարը այ ևս չէ պարապիւմ իւր սովորա-
կան գործերով— չէ կարդում, չէ գրում:

Եցա բոլորը աւելի ու աւելի սաստկացնում
էր Մարիամի հիւանդու հնտաքրքրութիւնը և
զրգում նրան զանազան ենթադրութիւններ
անել:

— Սաթինիկ, ինչ մարդ է այդ Բագրատեա-
նը,— գառնում էր նա երբեմն իւր ընկերու-
հուն:

Սակայն Սաթինիկը նոյնքան էր ճանաչել
այդ մարդուն, որքան Մարիամը: Մի անգամ
վարժուհին ասաց, թէ մի բան է լսել Բագրա-
տեանի մասին, ըը գիտէ որքան ճիշդ է:

— Ի՞նչ,— հարցրեց Մարիամը:

— Ասում են, նա եկել է այստեղ մի շատ

կարեսը զործով և շուտով պլառ է, դնաց,
— Ի՞նչ զործ է,

— Չը դիտեմ: Ինձ ասաց իմ ծանօթ ներից
մէկը, Բաղրատեանի ուստանողական ընկերն է հզեր: Եղբացը էլ այդ զործով է,
զբաղված...

Աւելի ոչինչ չը գիտեր Ասթինիկը:

Մարիամի հետարրրութիւնը փոխվեց անհամբերութեան: Թուրինը նրան ոչինչ չէր ասում և եթէ մի բան հարցնում էր Մարիամը, նա բարիանում էր: Երբեմն Մարիամը փարձում էր Բաղրատեանին խօսեցնել: Բաց իցուք: Եցերիտասարդը ամեն բանի մասին խօսում էր նրա հետ հաճութեամբ, բաց երբ հարց էր լինում իւր մասին, նա կամ խոց էր տալիս պատասխանից կամ բաւականանում էր անորոշ խօսքերով: Այն ինչ՝ Մարիամի համար իւրաքանչյւեր անգամ նրա բնաւորութեան և մըտքերի մէջ բացվում էր մի նոր խորութիւն: Մերթ Բաղրատեանը դանդաղախօս էր, մերթ պերճախօս, բաց և միշտ հաւատ ներշնչող ոգելից, ազգու, մանաւանիդ այն ժամանակ, երբ խօսում էր կենց հասարակական դերի մասին:

Յաճախ, երբ Մարիամը առանձնանում էր

իւր սենեակում, նրա մտախոհութեան առարկան այդ երիտասարդն էր: Եւ որքան մտածում էր, այնքան անթափանցելի էր գալոնում այդ մարդը նրա համար:

Պատոսհում էր, որ նրա մէջ զանազան կասկածներ էին ծաղում Բաղրատեանի վերաբերմամբ, Թւում էր նրան, թէ գա բագրախնդիր մէկն է, որ ով գիտէ ինչինչ ներքին ձգտումները քօղարկում է արտաքին խորհրդակորութեամբ, օրիգինալութեամբ: Այդ անցեալի գառըն փորձից առաջացած մի զգացմունք էր: Ահա ինչու երբ Թուբէնը սկզբում մի քանի անգամ զգացյած զովեց Բաղրատեանին, առանց սակացն, յացտնելու նրա նպատակը, Մարիամի դէմքի վրաց սահում էր մի կասկածելի ճպիտ:—Ճպիտ, որ, կարծես, արտացայտում էր:

— Ձես սիսարիում արդեօք: Գու այն միւսին էլ կոփում էիր...

Բաց ամեն անգամ, երբ օրիորդը երես առ երես հանդիպում էր Բաղրատեանին, երբ լսում էր նրա առ նական ազգու ձայնը, երբ նայում էր նրա աչքերի խորութեան մէջ թաղնուած վշախան բարկութեանը, երբ նրա ոնդուած շրթունքների վրաց աեսնում էր այն

մշտական տիսուր ժպիտը,—փարատվում էին
նրա կասկածները, և նա դարձեալ ենթարկվում
էր նրա ազգեցութեանը: Ո՞չ, այդ ազգեցութիւնը
նման չէ այն մարդու ազգեցութեանը, որ այն-
պէս մոլորեցրեց Մարիամին: Ո՞չ, այսուել կայ
մի բնական զօրութիւն: Դա ոչ խելքի, ոչ
պերճախօսութեան, ոչ զիտութեան ոյժն է,
դա մի ուրիշ, բոլորովին ուրիշ բան է:

«Ի՞նչ է, Տէր Աստուած, ինչ է», հարց-
նում էր Մարիամը անդադար և ոչ մի տեղից
պատասխան չէր ստանում:

Երդէն ձմեռը մօտենում էր իւր վերջին, ե-
ղանակը սկսել էր մեղմանալ: Մարիամը զգում
էր, որ փոքր առ փոքր վերադառնում են իւր
ոյժերը և նա հետզհետէ կազզուրփում է մարմ-
նապէս: Մի և նոյն ժամանակ, նա հոգեպէս
ևս փոխփում էր: Այ ևս նա չէր նստում ա-
ռաջուայ պէս ամբողջ ժամեր և ծանր վշտից
ձնշուած մնում մի տեսակ թմրած դրութեան
մէջ: Այ ևս դէպի շրջապատող կեանքը չէր
զգում խորին անտարբերութիւն, ինչպէս առաջ:
Ամբողջ օրը նա աշխատում էր մի անսովոր
եռանդով, խօսում ու վճճում էր Սաթինիկի
հետ և ապաս ժամերը ինքը խնդրում Թուբէ-
նին գնալ միասին զբունելու:

Այս բոլորը ուրախացնում էր Թուբէնին և
հիացնում Սաթինիկին:

— Սիրելիս,—ասաց մի օր վերջինը,—դու
այժմ կատարեալ վարպետուհի ես դառել, ա-
ռանց իմ օգնութեան կարող ես ինքնազլուխ
աշտատել:

— Այս, կարող եմ և ուզում եմ աշխատել,—
պատասխանեց Մարիամը՝ եռանդագին:—Բայց,
դիտես ինչ, կար ու ձեի գործը ինձ չէ բաւա-
կանացնում: Ես ուզում եմ մի ուրիշ աշխա-
տանք, մի աւելի ծանր, դժուար գործ...

— Օրինակ ինչ գործ, —հարցրեց Սաթինիկիը,
զարմանալով:

— Ես ինքս էլ չեմ խանում, բայց ինձ թր-
ւում է, որ կար ու ձեւ դատարկ բան է, շատ
դատարկ բան:

Սաթինիկը վիրաւորվեց: Մարիամը արհամար-
հում էր այն զործը, որին նա հոգով ու սրաով
անձնատուր էր եղել, և որի մէջ զտնում էր
մի տեսակ երջանկութիւն: Խւր ընկերուհու
սրտին ըլ կպէելու համար, նա բարւոք համա-
րեց լոել, որիս զի չարտայացտի իւր վիրա-
ւորաները: Սակայն Մարիամը զգաց իւր սիսալը
և շտապեց տապաւորութիւնն մեղմացնել:

— Ես չեմ արհամարհում քո պարապմունքը,—

ասաց նա, ընկերաբար ժպտալով,—բայց կարծում եմ, դու և ես ընդունակ ենք. ուրիշ աւելի բարդ, զործ կատարելու:

Գիտես ինչ, Մարօ,—արտասանեց Սաթինիկը հայրաբարտ եղանակով,—ես տեսնում եմ, որ վերջին ժամանակ դու փոխվել ես: Ասաինձ ընկերաբար, արգեօք քեզ վրաց մի նոր մարդ ազգեցութիւն չի՝ արել:

Եցս անորոշ ակնարկութիւնը գիւր չեկառ Մարիամին: Նա յանդիմանաբար նացեց ընկերուհու երեսին:

—Ի՞ւծ վրաց... ոչ ոք և ոչինչ չի ազգել: Ես առաջ էլ այսպէս էի, միայն ամառում էի քեզ ասել, կարծում էի դու կը վիրաւորվես: Ելու, Սաթինիկը գոնչ դու ինձ լաւ ճանաչէիր. Հաւատացիր, ես միշտ գժողոհ եմ եղել ինքս ինձանից, միշտ կարծել եմ ինձ մի բան պակասում է: Բայց երբէք այդ գժողոհութիւնը այնպէս սաստիկ չի եղել իմ մէջ, ինչպէս այժմ: Եթէ դու այդ ես փոփոխութիւն համարում, իրաւունք ունես:

Եցս խօսակցութիւնից անցել էր մի ամիս: Ապրիլի առաջին օրերն էին: Օդի մէջ արդէն տիրում էր գարնանային բուրժունքը: Հարաւային չինչ երկնքի կաստութիւնը, արևի տաք

ճառապայմի ներբք ճառաբողբոջ տերիների, ծիծունակների ուրախ ծրվոյր մի ախործելի ազգեցութիւն էին գործում մարդու հոգու վրաց սիրող լեցնում էին դիւրեկան զգացմուն բով: Մարդ զգում էր ապրելու և անհուն, անսահման երջանկութիւն վայելելու մի անչաղթելի ցանկութիւն:

Մի սիրուն օր էր: Ոռոքէնք առաւծուեան առաջարկեց Մարիամին մինչև քաղաքից դուրս ոտով գրունելու: Մարիամը խկոյն համաձայնեց: Սաթինիկին ևս խնդրեցին, ընկերացաւ նրանց: Ոռոքէնք առաջնորդեց նրանց նախ մի նեղ և ցեալնկած փողոց, որ ճանապարհի վրաց էր: Մի երկարկանի տան առջև նա խնդրեց օրիորդներին սպասել, ինքը մտաւ ներս: Փոքր անցած նա գուրս եկաւ, Բաղրատեանի թելից բռնած: Մարիամը ակամաց մի ուրախութիւն զգաց:

Նրանք ծանր քայլերով անցան մի քանի փողոց և հանան քաղաքի ծայրը: Ոչ մէկը չէր զգում ճանապարհի երկարութիւնը, այնքան զբաղված էին խօսակցութեամբ: Առանձին տրամադրութեան տակ էր երկում այդ օրը Բաղրատեանը: Մերթ նա պատմում էր, մերթ զուարձախօսում և մերթ մինչև անդամ կա-

տակներ էր անում Թուբէնի հետ: Եւ Մարիամը, որ ասվոր էր նրան մռաց տեսնել նոցն իսկ գուարձախօսելիս, զարժացած նայում էր նրա պաշճառ կերպարանքին: Նա չէր զգում այլ ևս մնշումն, նա վստահ և համարձակ էր այդ մարդու մօտ:

Նրանք արդէն քաղաքից գուրս էին եկիր: Բարձրանում էին ասպաւաժուտ գառիվայրով և եթ լսայիմի լերան լանջքքը: Աւզին նեղ էր, աջ ու ձախ զարդարված նոր կանանցող թփերով: Թուբէնը գնում էր Սաթինիկի հետ առաջից, Բագրատեանը և Մարիամը նրանց ետևից բարձրանում էին զանգալ քայլերով, մերթ ընդ մերթ կանգ առնելով և մտիկ անելով գէպի յետ: Ստորեւ բացվել էր մի սիրուն տեսարան — ընդարձակ քաղաքքը իւր խիստ ծառաստաններով, խայտապղէտ կտուրներով, իւր ուղղագիծ և ծուռ ու մուռ փողոցներով, ցիսուն վաթուն եկեղեցիների արձաթագոյն գմբէթներով, շրջակաց գաշտերով ու լեռներով:

Մարիամը դիտում էր այդ տեսարանը հիացած: Վաղուցուաց ծանօթ պատկերը այսօր մի առանձին գեղեցկութիւն էր ստացել նրա աշքում: Եւ զգում էր նա այդ տեսարանի աղղեցութեան ներքոյ մի տեսակ անդորր զուարձու-

թիւն, խառն անորոշ մելամաղձութեան հետ: Նրեգակի ախորժելի տաքութիւնը, բարեխառն օդի թեթև հոսանքը պարզեում էին նրա յոդնած ջղերին հանգստութիւն, կարծես, ներշնչելով մի նոր ոյժ, նոր կենդանութիւն: Նրա գունատ այտերի վրաց երեան էր եկել մի նորի կարծրութիւն: Նրա թախծալի աչքերը ժամում էին, արտացայտելով հոգեկան մեղմ և անուշ տրամադրութիւն:

Յանկարծ մի տիտուր ստուէր վարապորեց նրա դէմքը: Յօնքերը սեղմուեցին, աչքերի կոսկերը լոռնաբէնկեցին: Պարզ էր, նրա մէջ զարթնեց մի ծանր ցիշատակ, նրա սիրած համակեց մի անախորժ գացցումն: Նա երեար ցետ դարձրեց, հառաչց և ճիգն արաւ վանել անցեալի, տիտուր անցեալի ցիշողութիւնները:

Բագրատեանը կանգնած էր թփերի մօտ և լուս նայում էր դէպի ցած, իւր հաստ ձեռնափայտը կանոտակին դրած:

— Հաւաննում էր այդ տեսարանի, հարյուր Մարիամը, մի բան ասած լինելու համար, որ պիս զի ընդհատի անցարմար լուսթիւնը:

— Գեղեցիկ է, — արտասանեց Բագրատեանը տառն, հանդարտ և անտարբեր, հայեայը ըլ հետացնելով քաղաքից:

Նրանք դարձեալ լրեցին: Մարիամը դադտուկ նայում էր իւր ուղեկցի առնական կիսագլմբին:

— Երկու շաբաթից յետոց, — շաբունակեց նա, — տեսարանը աւելի կը գեղեցկանավ, երբ բոլոր ծառերը ծաղկած կը լինին:

— Երկու շաբաթից յետոց, — կրինեց անդխառնից արքար Բագրատեանը և շաբունակեց բնիթանալ նրա հետ:

— Դուք, իհարկի, Թիվլիպում կը լինեք:
+ Աչ:

— Արեմն շտառի կնալու է, բ:
— Տամն օրից յետոց:

— Պատեզ:

— Օ, նրանք ինչքան հեռացել են մեզոնից, շտառի կնանել, — ասաց Բագրատեանը, ցաց աշտառի գլւափ առաջ, ուր հետու թփերի ետեից երեւում էին Սաթինիկի և Ուուբէնի դրույները:

Մարիամին վլրաւորական չը թւաց այդ տարօրինակ վարմունքը. Սակայն նա ամաչեց և կարմրեց, զգալով, որ շափազանց է իւր հետաքրքրութիւնը, որ վայել չէ մանրամասն հարցերով հետամուռ լրնել մի մարդու, որ չէ առում իւր մասին խօսել:

Երբ նրանք հասան, Սաթինիկը և Ուուբէնի լրու նստած էին ճանապարհի եզրին: Նկատելի էր, որ վաշրկեան առաջ ընդհատվել է նրանց մէջ մի ջերմ խօսակցութիւն: Երկուսն էլ յուղված էին: Ուուբէնը ջղացին աշխոյժով կտրում էր կանանչ թփի փոքրիկ ճիւղերը, մանրացնում և սփռում իւր առաջ: Սաթինիկի շըրթունքների վրաց երեւում էր մի անհանդիստ ժպիտ: Նրա աչքերի անսովոր վիայը արտայացնում էր հոգեկան խոռովութիւն:

— Մենք ճանձրացանք ձեզ սպասելուց, — ասաց նա, սպիտակ ճակատից հեռացնելով գանգուռ և գեղեցիկ մաղերը, որ դուրս էին սփովել մեխակաղողյն զլիարկի տակից:

— Խսկ մենք շտառում էինք ձեզ համելու, — ասաց Մարիամը:

Երկու, ըստ երեւոյթին, աննշան գարծուածներ, որ, սակայն, փոխադարձ պատասխան էին այն բնական կասկածին, որ միաժամանակ ծաղեց երկու ընկերուհիների սրտերում...

Քառորդ ժամ հանգստանալուց յետոց խումբը շարունակեց իւր ճանապարհը: Հասնելով սարի գաղաթը, որի միւս կողմում, խոր ձորի մէջ, տարածված է բուսաբանական այգին, նըրանք դարձեալ կանգ առին: Սաթինիկը առաջարկեց յետ դառնալ:

— Յոդնեցի՞ր, — Հարցրեց Մարիամը:
 — Ոչ, ես մի վոքր տկար եմ:
 — Եսկ գու չես յոդնել, — Հարցրեց Առուբէնք
 քրտջից:
 — Ծաղրում ես ինձ, — արտասանեց Մարիա-
 մը, — ոչ, ես կարող եմ երեք այսքան էլ բարձ-
 րանալ:

Արդարեւ, նա իւր մէջ զգում էր մի անսասելի
 ոյժ. թեթև զրօսանքը նրան մանկական խաղ
 էր թւում:

Զիջանելով Սաթինիկի խնդրին, խումբը յետ
 գարձաւ նոյն զառիվայրով: Այս անզամ Բագ-
 րատեանը և Մարիամն էին առաջ գնում: Նը-
 րանք լուս էին: Երբեմն զառիվայրի գժուար
 տեղերում Բագրատեանը կամ առաջարկում էր
 Մարիամին իւր թեղ կամ խնդրում էր զգոյշ
 յած իջնել: Օրիորդը ուշագրութիւն չէր գարձ-
 նում, անվախ գնում էր առաջ, մերթ ուղիով,
 մերթ շեղինով մի կողմ ձանապարհը կարճելու
 համար: Մի տեղ նա քիչ էր մնում ընկնի,
 բայց կարողացաւ կանգ առնել: Միայն մի ան-
 գամ ժայռի բնական սանդիմով իջնելիս, նա
 թոյն տուեց Բագրատեանին բոնել իւր ձեռը:

— Ճնորհակալ եմ, — ասաց նա, ժպտալով:
 Նրանք կանգ առան, սպասեցին ընկերներին:

— Ի՞նչ է պատահել քեզ, որ այդքան եռանոյ
 ես ասացի, — ասաց Առուբէնը, մօտենալով:
 և երբէք քեզ այլպէս չեմ տեսել:

Մարիամը, կարծես, շփոթվեց: Նա դարձեալ
 առաջ ընկաւ:

— Ես չէի կարծում, որ օրիորդը այդքան աշ-
 խոյժով է, — դարձաւ Բագրատեանը Առուբէնի:

— Մանաւանդ, որ վերջին ժամանակ նա հի-
 ւանդ է եղել:

Խորմբը հասաւ քաղաք, մտաւ նեղ փուլց-
 ները: Արդէն կէսօր էր: Մարիամը մտաբերեց,
 թէ պէտք է ճաշ պատրաստի: Նա շտափեց
 տուն: Բագրատեանը և Սաթինիկը հրաժեշտ
 տուեցին:

Խոս ջին անգամ այդ օրը Մարիամը զգաց
 մի տեսակ ատելութիւն դէպի տնային տնտե-
 սութիւնը, Մտնել խոհանոց, զբաղվել մանր-
 մունք խոհարարական գործերով — նրան վիրաւո-
 րական թւաց: Նա ամբողջ օրը աշխատում էր
 ակամայ, մերթ ընդ մերթ ինքն իրան տրաբն-
 ջալով:

Իրինադէմին նա աւելի հանգիստ էր: Ստէպ
 ստէպ մօտենում էր և նատում եղբօր մօտ:
 Նկատելի էր, որ նա կամենում էր մի բանի
 մասին խօսել և... չէր վստահանում:

Հետեւեալ օրը նա դնաց Սաթինիկի մօտ:
Այսուեղ միճակփոծ էր նրան մի ուրիշ,
ոչ պակաս կարևոր, նորութիւն ևս իմանալ:
Վարժուհին միայնակ նստած էր իւր սենեա-
կում անզործ: Տեսնելով բնկերուհուն, նա ա-
րագութեամբ ոտքի կանգնեց և, առաջ վազե-
լով, մի անսովոր աշխացով զրկեց նրան: Նա
յուզված էր: Աչքերը ժպտում էին ուրախ ու-
րախ, կուրծքքը բարախում էր: Պարզ էր, որ մի
արտաքոյ կարդի բան էր պատահել նրան
—Գիտես, —գոյնց նա, ազատելով ընկերու-
հուն իւր զրկեց, —ես այսօր տրամադրված չեմ
դորձելու: Կատիր, նստիր, շատ ուրախ եմ, որ
եկար:

Մարիամը զարմացած նայում էր իւր այս-
փոխված ընկերուհու վրայ, չը կարողանալով
տակաւին հասկանալ նրա յուզման պատճառը:
—Դու հանդիպեցիր Թուքէնին, —հարցրեց
Սաթինիկը, ուժով նստեցնելով Մարիամին իւր
քով:

—Ոչ:

—Հէնց նոր դուրս եկաւ այսուեղից: Դու
զարմանմաւ ես, որ նա ինձ մօտ էր... իրա-
ւունք ունես... Մարիամ, հսկիս, ես քեզանից
ոչինչ, ոչինչ չեմ ուզում թագցնել այսուհետեւ:

Ասա, չես բարկանալ, չես ծաղրիլ, եթէ քեզ
պատմեմ ամեն ինչ...

Եւ նա յափշտակված փաթաթվեց իւր ընկե:
րուհու պարանոցին, գլուխը դրեց նրա ուսի
փայտ: Մարիամը զգում էր նրա կրծքի ուժ զին
բարխումը: Նա ապշած էր, նա դեռ ոչինչ
չը կետեր: Գուշակում էր միայն, թէ գէպքը, ան-
շուշտ, շատ նշանառ որ է, որ ացնքան այս
փոխել է այդ մշտական հանգիստ, մշտական
անփողով աղջկան:

Ընցաւ քառորդ ժամի չափ, մինչև Սաթի-
նիկը փոքր ինչ հանգարտվեց: Այն ժամանակ
պարփեց բանի էսթի նոր: Պարզվեց այն, ինչ
որ վերջին ժամանակ մասամբ դդում էր Մարիա-
մը և ինչոր նոյն բովին նա միանդամացն
մոտացել էր: Երգէն նա նկատել էր, որ Թու-
քէնի և Սաթինիկի յարաքերութիւնները այ
կերպարանք են տանում, որ քանի զնում,
ացնքան նրանց մէջ զարդանում է, փոխազարձ
համակրութիւնը:

Եւ ամեն ինչ պատմեց Սաթինիկը, ըստոր
մաներամասները, առանց մի կլու անդամ թալ-
ցնելու:

Ես նրան սիրեցի հէնց այն օրից, երբ դու ինձ
ծանօթացրիր նրա հետ, Բայց ես ինձ զազում

էի, և ինչ իրաւունք ունէի նրա մասին մտածել անգամ, եես.... Այս, դու ծաղրում ես ինձ, Մարօ, այնպէս չէ, դու մտքումդ անփծում ես ինձ, դու պախարակում ես եղբօրդ ճաշակը...
— Ես այդ գուշակում էի...

— Ի՞նչ, իմ և Թուբէնի մասին, միթէ կարծում էիր, որ իրաւունք ունեմ, ես, ես տպել, այլանդակված արարած:

— Լոիր,—ընդհատեց Մարիամը սաստողաբար, — լսիր, եթէ չես ուզում ինձ վիրաւորիր՝ Նախ և առաջ քո հոգոյ գեղեցկութիւնը բաւական էր, որ արժանանացիր Թուբէնի սիրոցն: Երկրորդ, ինչու դու քեզ վրայ ացդպիսի վաս կարծիք ունես: Միթէ կարծում ես, ծաղկի մի քանի աննշան հետքերը վշացրել են քո գեղեցիկ դէմքը: Ոչ, դու այնքան համակրելի ես արտաքուստ, որքան և հոգով ու սրտով... Թուբէնը պէտք է քեզանով պարծենաց...

Անկերգ սրտից բղխած այդ խօսքերը կրկին ողերուցին Սաթինիկին, և կրկին նա փաթաթվեց իւր ընկերուհու պարանոցին:

— Յիշում ես առաջվայ Սաթինիկին, յիշում ես, ինչպէս էի ծաղրում սէր առած բանիր ես չը դիմէի, որ նա այդպիսի բան է, Ահ, ինչպէս փոխվել եմ ես, կարծես, խելքս թռել

Ե պինդյան մասաւում, չի հաւատում, որ մի օր պէտք է այս դրութեան հասնեմ...

Պերջապէս, անցան ցուզման րոպէները, և Սաթինիկը շարունակեց աւելի հանդիսատիստ խօսկիցի Մարիամի հետ: Սակայն ամբողջ երիտ ժամ նրա խօսակցութեան առարկան միմիայն Թուբէնն էր:

— Այս, մոռացաց ասելու, — գոչեց նա, երբ Մարիամը վերջապէս խօսք բաց արաւ Բագրատեանի մասին, — նա առաջիկաց շաբաթ գնում է, Թուբէնը շատ տիտուր է նրա պատճառով:

— Ինչու:

— Ի՞նչ, միթէ չես լսել, Թուբէնը չէ պատմել քեզ:

— Թուբէնը Բագրատեանի մասին չի խօսում ինձ հետ:

— Աւելին կարող ես ինձ նախանձել: Բաց, դիմես, մինչև հիմայ ինձանից էլ թաղցնում էր գաղտնիքը, այսօր միայն յացնեց:

Մի քանի խօսք ևս Սաթինիկի կողմից, և... փարագոյքը ընկաւ Մարիամի աչքերից, այ ևս անձն ինչ սրազից նրա համար: Բագրատեանը սրատկերացաւ նրա առաջ խսկական դիրքով սակայն աւելի զօրաւոր, աւելի ազգու:

քավարի և դրական եպանակով առաջարկեց
Նրան մի բառ անդամ չ'արտասանել աց մասին:

Են ժամանակ Ալիշարումեանը բոլորովին հա-
մոզվեց, որ իրաւ անիրափորձելի են Հալաբեանի
յոշերը: Բայց նա երգուել էր վերջ տալ իւր
ընկերոջ յուսահատ կամ, ինչպէս ինքն էր ա-
սում, «յիմար» դրութեանը: Վաղուց Հալաբեա-
նը դանակատփում էր, թէ տկար է, ոսկորները,
կարծես, ջարդված են: Ալիշարումեանը յորդո-
րում էր գլխել բժշկին, նա չէր համաձայնում:
—Ինչ կը լինի, կը լինի,—ասում էր վր-
հատված ձայնով:

Մի օր Ալիշարումեանը եկաւ նրա մօտ քա-
վարի յայտնի բժիշկներից մէկի հետ, որին
վաղուց ծանօթ էր Հալաբեանը: Ճանապարհին
որիքամոլը սովորցրել էր բժշկին, որ նա, որքան
կարելի է, վախեցնի ամուռելին, նկարագրելով նրա
հիւանդութիւնը ամենալիխտ գոյներով: Մի և
նոյն ժամանակ, խնդրել էր, որ խորհուրդ տայց
նրան՝ անսպատճառ ուղեղրիկ արտասահման և
այնտեղ բժշկվել:

—Եսատեղից հեռանալը շատ անհրաժեշտ է
նրա համար, վիտք, շնառ, — կրկնում էր Ալի-
շարումեանը բժշկին:

Որքան ևս ձանձրացած լինել կեանքից, չա-

լարեանի վրայ ազգեց բժշկի դիտնական բա-
ցագրութիւնը, որից նա ոչինչ չի հասկացաւ,
բացի մէկ բանից, թէ իւր հիւանդութիւնը
վտանգաւոր է, Տաղտկալի կեանքը դարձեալ
աւելի քաղցր թւաց, քան մահը:

Ամուրին վախեցաւ:

Եցի օրուանից Ալիշարումեանը հանդիսաւ չէր
թողնում նրան և միշտ կրկնում էր արտասահ-
ման գնալու անհրաժեշտութիւնը: Վերջապէս,
նրա յորդորը ազգեց: Մի առաւօտ ամուրին ին-
քը խօսք բաց արաւ արտասահմանի վերաբեր
ամամբ: Յոյն պահին եկաւ և՛ մօսիօ Վախովա-
կանը: Սկսեցին խորհրդակցել՝ ուր գնալ:

Մօսիօն, կիմայական և բժշկական հանգա-
մանքները արհամարհելով, մի բերան պաշտպա-
նում էր Փարիզ գնալու միտքը:

— Աշխարհիս դրախտն է, այնտեղի Պեր-Լա-
շչզում թաղվելը ուրիշ քաղաքներում ապրե-
րելուց լաւ է, — գոփում էր նա համաշխահացա-
ցին մայրաքաղաքը, որի բուլվարներում չորս
տարի շարունակ թափառել էր:

Հալաբեանը հակումն ըլնէր գէպի մեծ
կենտրոնները: Նա եղել էր Փարիզում, այժմ
տհաճութեամբ էր լիշում նրա աղմկալից կեան-
քը, նրա քաղմամարդ փողոցները:

— Վիսբադէն կտու Կարլսբադ, — անգում էր Ավշարումեանը:

— Եղեւ եմ բարեկամս, այն տեղերումն էլ եղել եմ, — դարձեալ մէջ մտաւ մօսիօ Վախիսիսեանը, որ, ացսպէս թէ այնպէս, յոյս ունէր ուղեկցել ամուրիին, հարկաւ, նրա ծախքով:

Հալաբեանը ընդունեց Ավշարումեանի խորհուրդը: Այդ օրուանից իսկ նա սկսեց ճանապարհի պատրաստութիւններ տեսնել: Այն զործերը, որ կարելի էր շուտով վերջացնել, ինքը վերջացրեց, իսկ միւսները յանձնեց Ավշարումեանին, որ ամառը Թիֆլիզումն էր մնալու:

— Ձեզ էլ լսնդրում եմ, — դարձաւ նա մօսիօ Վախիսիսեանին մի օր, — վերահասու լինել տանս: Ծառաներին ես կ'արձակեմ: Եթէ ուղղող լինի այս կահկարասիքը, բոլորը կը ծալմէք, փողը կը տաք Ավշարումեանին:

— Ո՞նց, ուրեմն էլ չետ չէք դալու, — դոչեց մօսիօն զարմայած:

— Ե՛ն, չեմ իմանում...

Մօսիօ Վախիսիսեանը բոլորովին հիասթափվեց: Բաւական չէր, որ չալաբեանը չէր ուզում նրան արտասահման տանել, իւր վերադառնայն էլ դեռ անցայտ էր թողնում:

— Եւթիս վրայ, — յանձն առաւ նա ամուրիի

պատուէրը, զրուխը խեղձաբար թեքելով ուսին:

Պակաս քան տասն օրուայ ընթացքում Հալաբեանը, Ավշարումեանի օկնութեամբ, վերջացրեց իւր զործերը և պատրաստվեց ճանապարհի համար: Այժմ նա անհամբեր սպասում էր Թիֆլիզից հեռանալու րոպէին: Նրա վշտացած սիրտը ձգտում էր ժամ առաջ ազատվել իւր մշտական շրջանից, թողնել հեռանալ այն բոլոր տեղերից, որ յիշեցնում էին նրա դառն ցնորդը: Մի առաւոտ Ավշարումեանը ասաց նրան, որ Մարիամին նախընթաց օրը հանդիպել է փողոցում ինչ-որ մի նոր երիտասարդի հետ զբոնելիս: Դիտմամբ յայտնուած այդ լուրը ունեցաւ ցանկալի ազգեցութիւն Հալաբեանի վրայ: Նա խորհանալի զէմքով նայեց ընկերոջ երիսխն և ընկճուած եղանակով արտասանեց:

— Ի՞նչ անեմ...

Երդին ամեն ինչ նա վերջացած էր համարում, ամեն յոյս խորտակված:

Հասաւ այն երեկոն, որի հետեւեալ աւաւոտք Հալաբեանը պէտք է ուղերորդի: Նա նստած էր Աշխարումեանի հետ հիւրասենեակում, և խօսակցում էին առաջիկայ ճանապարհորդութեան մասին: Կանիթեղի պայծառ լոյսը լուսաւորում էր նրա ոսկորոտ դէմքը, խորշորացած

աչքերը: Մի վայրկեան Ախշարումեանը սոսկաց, ուշադիր դիտելով նրա կերպարանքը, այնքան փոխվել էր ամուրին նոյն իսկ այն մարդու աչքում, որ այնպէս յաճախ տեսնուած էր նրան:

— Եցդաշխ, ուրեմն, գու բոլորովին միայնակ ես գնում, — ասում էր Ախշարումեանը:

— Միայնակ:

— Վաս չէր լինի, եթէ հետդ ընկեր լինի, ժամանակդ ուրախ կ'անցնէր:

— Ոչ ոքի երեսը չեմ ուզում տեսնել, ոչ որի, — ասաց հալաբեանը վճռապէս:

— Են, դու դիտես, — շարունակեց Ախշարումեանը, — բաց լսիր ինչ եմ ասում: Ամառը անց կը կացնես որտեղ որ ուզում ես, Կարլսբադ թէ Վլաբագին, միենոյնն է: Բաց աշնանը դու իմն ես: Սեպտեմբերին գործերս վերջացրած ես կը գնամ Վիեննա, գու էլ կը գաս այնտեղ, լսում ես: Կը գաս այնտեղ, մի երկու ամիս միասին քէֆ կը քաշենք... քէֆ եմ ասում, հասկանում ես... վրավի, Մահամմէդի հիւրիների շրջանում: Նու, լաւ, մի բարկանալ, կատակ եմ անում: Յետոյ, Վիեննացից ուղիղ կը ճանապարհենք: Փարիզ: Եցդակդ ամբողջ ձմեռը մարդարարի կ'ապրենք... կսում ես, հրաշալի սրուէկտ է, չէ...

Ներս մտաւ մօսիօ Վախվախիւնենք և յախնեց, թէ խիրցն փաղցում հանդիպել է Ասհարունին:

— Նորին Պաշճառափացութիւնը խիստ գարցուց հէնց որ ասացի, թէ զնում էր: Օռտով ինքն էլ ացտեղ կը լինի:

Արդարեւ, կէս ժամ չ'անցած, ներս մտաւ իշխանը:

— Ներել չեմ կարող, — զոչեց նա խորին յանդիմանութեածք, — մեզանից հետանում ես ու ինձ ոչինչ չես ասում:

Մուրհակը՝ վկողացոսին ստորագրել տալուց յետոյ իշխանը դարձեալ բարեկամացել էր հալաբեանի հետ: Նա նպատակ ունէր այժմ հարստահարել ամուրիին, ահա ինչու նա դժգոհ էր, որ վերջինը հեռանում էր Թիվլիցից:

Եցդ երեկոյ վերջին անգամ չորս ամուրիները ընթրեցին միասին: Ամենից տխուրն էր մօսիօ Վախվախիւնը, ամենից ուրախը Ախշարումեանը: Ընթրիքի միջոցին և յետոյ երկար ժամանակ նրանց խօսակցութեան զվարար նիւթն էր, հարկաւ, հալաբեանի ճանապարհորդութիւնը: Մօսիօ Վախվախիւնի սիրտն էր յնդում, լսելով այն մեծամեծ քաղաքների, այն հրապուրիչ տեղերի անունները, որ թւում էր Ախշա-

րումեանը, յարդորելով Հալաբեանվին առցելել մի առ մի.

Նրգին ուշ զիշել էր, երբ ամուրիները բաժանվեցին: Եշխան Սահարունին համբուրփեց Հալաբեանի հետ, ներողութիւն խնդրելով, որ չէ կարող առաւօտեան ճանապարհ գցելու վալ: — Տես, — ասաց նա Ելսարումեանին փողոցում, — աշխատիր, որ այդ մունդուեկը շուտ վերադառնայ, նա մեզ հարկաւոր մարդ է:

Մօսիօ Վահվախւեանը չը կամեցաւ բաժանվել Հալաբեանից, զիշերեց նրա մօտ:

Օրը լուսացաւ: Հալաբեանը, վաղ վարդինելով, սկսեց արագ արագ շորերը հագնել:

Մօսիօ Վահվախւեանը, արտասահման չը դնալու հոգսից, ամբողջ զիշեր անքուն երանցկացրել:

Ներս մտաւ Թաթոսը տիսուր ու տրտում: Տասնուշինք տարի շարունակ ծառացելով, նա այնքան ընտելացել էր իւր տիրոջը, որ նրանից բաժանվելը կատարեալ գժբաղդութիւն էր համարում:

Անչափ էր նրա վիշտը այն օրը, երբ Հալաբեանը յայտնեց իւր դնալու լուրը և պատուիրեց նրան ուրիշ պաշտօն գտնել: Նա չը կամեցաւ մի այլ մարդու ծառացել: Հալաբեանը

զգացվեց, տուեց նրան մի թեթև ապահովութիւն: Թաթոսը վճռեց հեռանալ իւր հայրենի զիւղաբաղաքը:

— Գնա, երկու կառք կանչիր, — պատուիրեց Հալաբեանը:

Ծառան, հ սուաչելով, դուրս եկաւ:

Գարնանացին մի հրաշալի առաւօտ էր: Հալաբեանի կառքը անցնում էր Գօլօվինսկից պրօսպեկտով: Դիմելով դէպի երկաթուղու կայսրանը, նա լուս լուս էր իւր հետ նստած Ելսարումեանի, այդ փորձառու ճանապարհորդի, վերջին խորհրդները և իւր առաջ նստած մօսիօ Վահվախւեանի տիսուր հառաջանքները: Հետզհետև; նրա աչքից հեռանում էին այն ծանօթ փորցները և աները, որ այնքան ձանձրացրել էին նրան և որոնցից բաժանվելը այժմ մի տեսակ թափիծ էր պատճառում նրան:

Յանկարծ նրա դէմքը ժպտաց: Նա հրամայեց կառապանին կառքը պահել, ցած իջաւ: Փողոցի մայթով դէմ ու դէմ վալիս էր Ռուբէնք: Հալաբեանը մօտեցաւ նրան: Ռուբէնը զարմացած կանգ առաւ:

— Մնացիք բարեւ, ես դնում եմ, — ասաց Հալաբեանը, գդակը վերցնելով և ձեռք մեկնելով: — Ուր:

— Երտասահման:

— Բարի ճանապարհ, — մաղթեց Թուբէնը քա-
ղաքավարի, սառն և անտարբեր:

Նա չը հարցրեց, թէ արդեօք ինչու և,
զնում, չը հարցրեց անդամ, թէ երբ կը վերա-
դաւնայ, Այսինչն Հալաբեանը սպասում էր...
աւելի ջերմ վերաբերութեան. Դա եղաւ վերջին
հարուածը ամուրի համար... Նա շուտով կառք
նատեց. Հրամանեց կառապանին շտապել: Փո-
ղոփարանի ամարացին շինութեան մօտով անց-
նելիս նա երեսը մի կողմը դարձրեց ատելու-
թեամբ... Այսոեղ էր առաջին անդամ զցացել
նրա մէջ այն զգացմունքը, որ այսօր այնպէս
դժբարբացրել էր նրան:

Նա հասաւ կացարան: Մօսիօ Վախվախսեանի,
նրա պատուէրտվ վարձեց առաջին կարդի կու-
պէներից մէկը:

Ռմուրին ճանապարհին ևս ուզում էր միայ-
նակ լինել:

Հասաւ բաժանման բոպէն: Ելուշարումեանը
համբուրփեց: Մօսիօ Վախվախսեանիը վարահացաւ
նոյնն անել, աւելի ամուր հափով իւր ցրթուն-
քը Հալաբեանի բերանին:

Արդէն երկրորդ զանդակը առւել էին: Աւ-
զեսը, կուպէի փոքրիկ պատուհանի վրաց ար-

մունկները չենած, խօսում էր իւր վաղեմի ըն-
կերալիցների հետ, որ կանգնած էին պլատ-
ֆորմի վրաց: Զանդակը երրորդ անգամ հնչեց,
լուսեց շողեշուիի սուր ձայնը, գնացքը շարժ-
վեց: Նոյն վայրկեանին, երբ Ալուշարումեանը և
մօսիօ Վախվախսեանը գդակները բարձրացրին
իրանց վերջին բարեները տալու, նոյն վայր-
կեանին նրանք Հալաբեանի աչքերի մէջ նը-
կատեցին արտասուքի նշովներ: Այս, թշուառ
ամուրին լայիս էր, ինչպէս մի թուզ արարած:

Ալուշարումեանը և մօսիօ Վախվախսեանը չետ
գարձին իրանց երեսները և տեսան՝ կայարա-
նի պատի տակ կանգնած, երեխայի պէս, հե-
կեկում էր հաւատարիմ Թաթոսը: Գուցէ: Պա
միակ մարդն էր ամբողջ աշխարհի երեսին, որ
անկեղծ ցաւում էր Հալաբեանի համար:

— Իսկ ես յոյս ունէի, — դարձաւ մօսիօ
Վախվախսեանը Ալուշարումեանին, կրծքի խոր-
քից մի ծանր հոգոց արձակելով: — որ Հալա-
բեանը ինձ վերջը մի մարդ կը շինի... մնացի
էլի առաջուաց քաղցած, անփող անտուն ու
անտէր Վախվախսեանը:

— Այսօր եկ ինձ մօտ ճաշելու:
Մօսիօ Վախվախսեանը պլուսը թափօրին
շարժեց, Ալուշարումեանի հրաւէրը ընդունեց...

Թուբէնը նոյն պահին գնում էր ուսումնարան, երբ Հալաբեանին հանդիպեց: Տուն վերադառնալով, նա յայտնեց Մարիամին ամուրիի գնալը: Խնչէս Հալաբեանի առաջարկութեան լուրն էր Թուբէնից ընդունել սառն և անտարբեր, նոյնպէս և աւելի անխռով ընդունեց նրա ուղևորութեան լուրը: Միայն նա նկատեց.

— Ասում են, վերջին ժամանակ նա սաստիկ հիւանդ է եղել, երեք, գնում է բժշկվելու:

— Հիւանդ լինելը չեմ իմանում, բայց այսօր աչքիս մեռելի էր նմանվում... Գիտես, Մարօ, ես այժմ հոգով խղճում եմ նրան, ճշմարիտ, վատ մարդ չէր...

Մարիամը ոչինչ չասաց, և ասելու ոչինչ էլ չունէր, նա արտակարգ խռովութեան մէջ էր մի այնպիսի պատճառով, որից գործ նոյն րոպէն ոչ մի բան չէր հետաքրքրում նրան: Դա Բագրատեանի ուղևորութիւնն էր, նրա խորհրդաւոր՝ Նպատակը, Խնչինչ պատճառներով այդ ուղևորութիւնը յետաձգվել էր մի քանի օրովք: Եւ այդ մի քանի օրուայ ընթացքում Մարիամը նկատում էր Բագրատեանի մէջ մի տեսակ փոփոխութիւն: Նա այժմ տիսուր և մտախոհ էր աւելի, քան երբ և է տեսել էր նրան օրիորդը, Պրական մի

երկու անողամ նա գալիս էր Թուբէնի մատ: Գալիս էին երբեմն և՛ մի քանի անձանօթ երխուսարդներ: Ուանց բարբառից երևում էր, որ սուսահազեր չեն: Ամենի հետ Բագրատեանը խօսում էր մի տեսակ համացողական եղանակով: Թուում էր, որ բոլորը հպատակվում են նրա, իբրև մի տեսակ զինաւորի, խօսքին: Եւ որքան համապատասխանում էր նրա լուծ կերպարանքին պարագլիմի դերը:

Պատահում էր, որ Մարիամը ներկայ էր լինում նրանց պայմանաւոր խօսակցութեանը իւր ընկերների հետ: Ջատ բան այդ խօսակցութիւնից նա չէր հասկանում և չէր էլ ուզում հասկանալ: Բաւական էր այնքանն էլ, որ այդ բոլոր խօսակցութիւնների նպատակը գիտէր: Եցդ էր զինաւոր և հետաքրքրական կէտը, մանրամասները երկորդական նշանակութիւն ունէին նրա աչքում:

Բագրատեանը զիտէր, որ այժմ գործի էութիւնը յայտնի է Մարիամին, ուստի այլ ևս առաջուայ պէս զաղանապահ չէր և միշտ Թուբէնի հետ խօսում էր նրա ներկայութեանմբ: Բայց միւս կողմից Մարիամը նկատում էր, որ Բագրատեանը անձնապէս խուսափում է նրա հետ առանձին մնալուց և գալիս է միայն այն

ժամանակ, երբ Ոութէնը տանն է լինում: Կանացի բնապրամքը նաև դրում էր, մի և նոյն ժամանակի, որ նրա խոյս տալը արհամարհանքի արգասիք չէ, այց ընդհակառակը...

Ոութէնը ասել էր նրան, որ արդէն Բագրատեանին յացտնի է բժիշկ Մելիք-Բարսեղեանի վարձունքը: Ինքը Ոութէնն էր պատմել նրան տիսուր եղելութիւնը: Եւ Բագրատեանի վրայ խորին տպաւորութիւն էր դրուծել այն մարդու տմարդի արարքը, որի մասին նա երբէք լւակարծիք չէր ունեցել: Նա զրգուած էր բժշկի դէմ և յաճախ Ոութէնին ասում էր, թէ, պատահած ժամանակ պատրաստ է թթել ուզգակի նրա երեսին:

—Եցղայիսիներին երբէք չը պիտի լինայել, պէտք է պատմել ամեն քայլում. . . Ում մէջ մեռած չէ ազնւութեան զգացմունքը, նա պէտք է Կայենի կնիքը դրոշմի այդ մարդկանց անամօթ ճակատին:

Եւ ացդ ասում էր նա, ատամները կատաղաբար կրծտելով և բառունցը ամուր սեղմելով: Զգում էր Ոութէնը, որ, արդարեւ, եթէ պատահէ բժիշկ Մելիք-Բարսեղեանին, առանց երկար մտածելու, իւր սպառնալիքը կը դրուծադրէ:

Մի անդամ Բագրատեանը եկաւ սովորականից

վար Ոութէնը դեռ վերադարձել ուսումնարանից: Մարիամը միայնակ վրադփած էր խոհանոցում: Նա անմիջապէս լուացվեց, շատափեց իւր սենեակը, վոխեց վերնազգեստը և դուրս եկաւ նրան գիմաւորելու:

—Ներեցիք, ես կարծում էի Ոութէնը տանն է, — ասաց Բագրատեանը, վլուխ տարով:

—Այս ժամից յետոց կը վերադառնայ: Նրանք նստեցին՝ Բագրատեանը Ոութէնի սեղանի մօտ, Մարիամը փոքրիկ խախտի վրայ: Բաւական ժամանակ նրանք լուս էին: Մարիամը չէր վստահանում առաջինը ընդհատել լուսութիւնը, կաշկանդված մի ինչ-որ անյաղթելի զօրութիւնից: Նա չէր համարձակվում անդամ նայել նրա կողմ:

Դա երրորդ անգամն էր, որ նրանք դէմ առ դէմ գտնվում էին ականձին:

Բագրատեանը մատիտը վերցրեց և սկսեց լսավագել սեղանի վրայ դրած մի կտոր թուղթ: Նրա ճենները նշանակի վրայ դրած մի կտոր թուղթ: Նրա յուզգած էր երեսում, Պերծապէս, նա նայեց Մարիամի կողմ, Մարիամն էլ վլուխը բարձրացրեց, և նրանց աչքերը հանդիպեցին մինեանց: Ինչ-որ մի տարօրինակ երկիւղի զգացում զարթնեց օրիորդի սրտում, մի զգացում, որի նմանը

Նա երբէք չէր կրել: Թուում էր նրան, որ այնտեղ,
մի բանի բաց հեռու, բազմած է մի դերբնա-
կան գորութիւն, որի դէմ պէտք է նա մաքա-
ռէր, բաց տկար և անզօր էր զգում իրան:

—Ահ, ի՞նչ ուշանում է, - արտասանեց Բագ-
րատեանը, շտապով նայելով ժամացոցին:

—Եսկոյն կը գայ:

Դարձեալ լուեցին, գարձեալ չէին նայում մի-
մեանց վրաց: Ազդ բոպէին Բագրատեանի ճա-
կատը, յօնքերի մէջ տեղում, մերթ սեղմկում էր,
մերթ բացվում: Երբեմն նա, կարծես, ցնցվում
էր, գլուխը բարձրացնում և պատուհանի մի-
ջով նայում դէպի դուրս: Ոչ, այլ հասարակ
սպասող մարդու նայուածք չէր...

Եւ ի՞նչպէս դունատ էր ժուում նրա դէմքը
Մարիամին պատուհանից ներս տարածվող
պացնառ լուսոց ներքոյ:

— Ոչ, ես չեմ կարող համբերել...

Այս դարձուածը դուրս թռաւ յանկարծ
նրա բերանից, կարծես, ինքն ըստ ինքեան:
Նա ոտքի կանգնեց:

— Ես յետոց կը գամ, — ասաց նա, դուխս տուեց
Մարիամին և շտապով դուրս եկաւ:

Մարիամը մնաց ապշած, նրա ետեւից նայելով:
Մի և նոյն ժամանակ, ի՞նչ-որ մի հեռաւոր,

մութ, անորոշ միտք ծագեց նրա զիխում, ցի-
շելով այն տարօրինակ հայեացքը, որ ձգեց
նրա վրաց Բագրատեանը: Աչմ և միայն այժմ
այդ հայեացքի մէջ պատկերացաւ նրան մի խո-
րին հոգեկան պատերազմ: Ճիշդ է, որ այդ
երիտասարդին տանջում էր մի նոր միտք:
Ի՞նչ է արդեօք այդ: Ինչու նա ըստ մնաց, ի՞ն-
չու այնպէս շտապեց հեռանալ, ի՞նչու ըստ կա-
րողացաւ «Համբերել»...

Քառորդ ժամ չանցած նա կրկին երևեցաւ
Ոուբէնի հետ: Նրանք փակիեցին վերջինի
սենեակում և մի ամբողջ ժամ այնտեղ էին:
Երբ դոները բացվեցին, Բագրատեանը իւր լայ-
նեղը գլխարկը մի ձեռին բռնած, միւս ձեռը
յենած սեղանի ծացրին, նայում էր մուաց հա-
յեացքով դէպի դուրս... Հեռու ու հեռու: Ոու-
բէնը մտիկ էր անում նրա երեսին, նոյնչափ
զարմացած, որչափ և Մարիամը:

Յանկարծ Բագրատեանը ձեռով ի՞նչ-որ վրձ-
ուական շարժումն կործեց, սեղմեց Ոուբէնի
ձեռը, խոնարհ գլուխ տուեց Մարիամին, ա-
ռանց նրա երեսին նայելու, և արագ բացերով
դուրս գնաց:

— Ի՞նչու ըստ հրաւիրեցիր ճաշի, — հարցրեց Մա-
րիամը եղբօրից:

— Ձը նկատեցիր միթէ, — պատասխանեց Առուբէնք, սթափվելով, — այն գրութեան մէջ էր, որ ծոռացաց էլ հրաւիրելու: Ես երբէք նրան ացդպէս չեմ տեսել... Քեզ արդէն յաստնի է, թէ, նա որտեղ է գնում: Մինչև այսօր նրա ամեն մի քայլը վճռական էր, իսկ այժմ, երբ պէտք է ուղերդի, սկսել է տատանվել: Մահուան մասն խօսում էր սառն, անվրդով, այժմ, կարծես, վախւենում է մահից... և ի՞նչ Տարայնեղ մատաժանջութեան մէջ է: Ի՞նչ է պատահել այդ մարդուն, Տէր Աստուած, — աւելացրեց նա իւրաքի և սկսեց անցուգարձ անել սենեակում:

— Ե՞րբ է գնում, — հարցրեց Մարիամը:

— Բոլոր ընկերները վճռել են վաղը ուղերդիլ, նրան են սպասում, իսկ նա...

— Վաղը, — ընկհատեց Մարիամը, հազիւ կարտանալով իւր շփոթութիւնը քօղարկել:

Նոյն օրը երեկոյեան Ռուբէնք դնաց Բագրատեանի մօտ և տուն եկաւ բաւական ուշ: Մարիամը անհամբեր սպասում էր նրա վերադարձին:

— Եցք դարձեալ փոխիւլ է, վաղը անսպասառ գնում է, — պատասխանեց Ռուբէնք նրա շտապ հարցին:

— Անսպատճառ:

— Անսպատճառ:

Մարիամը գունաթափվեց:

— Մարօ, ինչ սպատահեց, ինչու այլպէս փոխվեցիր:

— Վաղը նա կը գայ աշտեղ, — հարցրեց Մարիամը գողգոծուն ձայնով:

— Ոչ:

Մարիամը թռւացած նատեց աթուի վրայ և ձեռները ամուռ սեղմեց ճակատին:

— Ճասկացայ, — ասաց Ռուբէնք, գու նրան խղճում ես, այս, նա կը գոհուի իւր յանդուզն ձեռնարկութեանը:

Եցպէս հասկացաւ եղբայրը քրոջ այսպիսան պատճառը, և քայրը ըստ ցրեց նրա մոլորութիւնի:

Հետեւեալ առաւօտ Մարիամը թափանձեց Ռուբէնին, որ իրան տանի Քաղրատեանի մօտ երեկոյեան, երբ պէտք է վերջինը ուղերդիլ:

— Ի՞նչ գործ ունես նրա մօտ, հարցրեց Ռուբէնը զարմացած:

— Աւգում եմ նրան բարի ձանապարհ մաղթել:

— Ոչ, չեմ կարող քեզ տանել: Նա կը բարկանաց ինձ վրայ: Երէկ նա ակնարկեց, թէ չէ ուղում կանանց երես տեսնել: Ինչու — չեմ իմանում... նա կանանց մէջ ուրիշ Տանօթներ էլ չունի, բացի բեղանից...

Բայց Մարիամը շարունակեց իւր թալսան-ձանքը ամբողջ օրը: Բարկացաւ, յանդիմանեց Ռուբէնը, բայց վերջապէս համաձայնեց:

Բագրատեանը բնակվում էր մի պառաւ կնո-ջից վարձած մի ոչ այնքան ընդարձակ անշուր սենեակում: Երեկոյեան ինն ժամն էր, երբ Մարիամը Ռուբէնի հետ եկաւ նրա մօտ: Առաջ ներս մտաւ Ռուբէնը, նրա ետևից Մարիամը: Կանթեղի ազոտ լուսարութիւնը մի քանի վայրկեան չը թոյլ տուեց տեսնել, թէ ինչ է կատարփում սենեակում: Ապա նրանց աչքերը ընտելացան կիսախաւար սթնողորտին, և պարզ-վեց հետեւեալը: — Սենեակում հաւաքիած էին այն անձանօթ երիտասարդները, որ վերջին օրերը երբեմն երեւում էին և՛ Ռուբէնի մօտ: Ամենը հազած էին ճանապարհացին հաղուստ — երկար կօշիկներ, կարճ պաճկոններ: Ամենի աչ-քերը կրակու էին, դէմքերը փառփած, եռան-դոս: Յատակի վրայ սփոռւած էին զանազան փոքրիկ կասոցներ, սեղանի վրայ դրած էին մի ատրճանակ և մի կարճ սուր: Երիտա-սարդները, չը նացելով իրանց յուղփած գրու-թեանը, խօսում էին առանց աղմուկի, գրեթէ շշնջւնով: Բագրատեանը իւր շորերն էր կապ-կապում: Նրան օգնում էին երկու երիտասարդներ:

Նա այնքան զբաղված էր գործով, որ մի քանի վայրկեան չը նկատեց Մարիամին, որ մի ան-կլւնում կանոնած լուռ և հոդեգմացված գի-առում էր: Երիտասարդներին: Յանկարծ նա նկատեց օրիորդին, և նոյն վայրկեանին նրա ձեւները թուլացան: Բայց թողնելով ճանապար-հացին վայրէնից թոքերը, նա յանդիմանա-րար նացեց Ռուբէնի երեսին:

— Հաւատացիր, որ ես շատ ընդդիմացայ, բայց ի՞չ անեմ, յամառեց, — ասաց Ռուբէնը:

Մարիամը շփոթված և լուռ կանդնած էր: Նա ժպտաց, առաջ դիմեց և, ձեռը մեկնելով Բագր-րատեանին, արտասանեց:

— Կամեցայ վերջին անգամ սեղմել այն ձեռ-քը, որ պէտք է գործէ....

Նա չ'աւարտեց իւր ասելիքը: Նա անչափ զգացված էր, ձայնը դաւաճանեց նրան: Նա նայեց ուղիղ թագրատեանի աչքերին: Բոպէա-բար յաղթվելով այդ քնքով, սիրալիր և զգաց-մունքով լի հայեացքից, երիտասարդը կրկին ճիգն արաւ իրան զսպելու և, արտասանելով «շնորհակալ եմ», վճռական շարժուածքով շա-րունակեց իւր գործը: Նա սեղանի վրայ գրած սուրը տուեց ընկերներից մէկին, ատրճանակը դրեց իւր գրանիր: Միւս երիտասարդները զար-

մայսած նացում էին Մարիամին: Բարեկապօ, զեղեցկապէմ, դռնասո, խոշոր և խելացի աչքերով օրիորդի երեղովմը աց ուշ երեկոյն, այս կիսախաւար անշուռ պատերի մլջ, կարծես, նրանց թւուժ և որ մի երկնացին խրախուսանքր... նրանց գլհճքերը ժպտացին, նրանց աչքերի մլջ փացեց, մոաց ուրախութեան նշոցը:

— Պարոններ, — դարձաւ Մարիամը նրանց, — թոց տուշք ձեր գաղափարը պաշտով մի հայ օրիորդի սեղմել ձեր ազնիւ ձեռքը... Ես ինձ բազգաւոր եմ համարում, որ դոնէ մի քանի րոպէ ձեր ըրջանումն եմ...

— Ծնորհակալ ենք, շնորհակալ ենք, — արտասանեցին զրեթէ բողոքը մրաբերան:

Եւ Մարիամը սեղմեց եօթ երիտասարդական առողջ և կոշտ ձեռներ:

— Ես պատրաստ եմ արդէն, — լսեց Բաղրատեանը անցողովդ ձայնը:

Եօթ երիտասարդները միաժամանակ շատացին վերցնել նրա իրերը, միմեանց հրելով և միմեանց ձեռքից լոլելով:

— Սպասեցէք, — ողջեց Բաղրատեանը, — համբուրփենք մեր ընկերական ուլսուր վառ պահելու համար...

Տեսարանը սրտաշարժ էր: Անկեղծ սրտով, մա-

քուր զլացմունքներով, եօթ երիտասարդները հերթով համբուրփում էին իրանց Բաղրատեանի հետ: Եւ այդ անկեղծ ընկերական համբուրների մէջ զգացգում էին նրանց սրտի փափկութիւնը, զաղափարի վսեմութիւնը և հոգոց անվեհերութիւնը: Զգացգած Մարիամը ջանք էր անում զսպելու իւր կանացի տկարութիւնը: Սակայն իսուր: Երցունքը, սրտի ամենախորին թելերի շարժումից առաջացած մաքուր արցունքը գուրա ձգտեցին: Նա թաշկինակը սեղմեց աչքերին: Այդ այն վարկեանն էր, երբ Բաղրատեանը համբուրփում էր նրա եղբօր հետ...

— Մնացէք բարեւ, — հնչեց նրա ականջին այն ձայնը, որ հէնց առաջին օրից այնպէս ազդել էր նրա վրաց:

Նա թաշկինակը հետացրեց աչքերից: Ինչպէս ովեսորիչ հրեշտակ, նա այժմ կանգնած էր սենեակի մէջտեղում կարմրած և վասփուռն աչքերով, ովեսորփած դէմքով: Նրա շուրջը կանգնած էին եօթ երիտասարդները: և հիացմունքով նայում էին: Նրա աջ կողմում կանգնած էր Ռուբէնը, սղմուած, փոքրացած, կարծես, իւր ոչնչութիւնը զգալով միւսների մօտ: Իսկ դէմ ու դէմ կանգնած էր Բաղրատեանը, զօրաւոր և յաղթական պարագլուխը, իւր հսկայական ու-

ԺԵՂ ՃԵԱՐ ԱՌԱՋ ԹԱՐԱԾԱԾ: Մարիամը իւր
աջը գրեց նրա ափի մէջ և զգաց մի անսաելի
ցնցումն ամբողջ մարմնի մէջ:

— Լաւ պաշտպանիր քրոջդ, նա հազուագիւտ
սիրտ ունէ, — լսեց Թուրելնը:

— Աիշդ է արդեօք, իրաւ Բաղրատեանն էր
այդ խօսքերի արտասանողը, թէ Մարիամին
այդպիս թւաց: Նրա գլուխը պտտեց, աչքերը
մժնեցին: Երազի նման նրա առաջից հերթով
անցնում էին ուղեսոր երիտասարդները: Վերջի-
նը Բաղրատեանն էր:

— Եթէ վերակառնամ, կը տեսնուենք, — այս
խօսքերը լսեց Մարիամը:

— Նա փոքրի ինչ սթափվեց, նայեց իւր շուր-
ջը: Ոչ ոք չէր մնացել սենեակում, բայց Ռու-
բէնից: Առ ևս արտավում էր...

— Առ ու համար անուան պահպան զիսակա-
ման մասնաւու անուան ուսումնական անուան
համար պահպան առ պահպան համար միւ պահ-
պահուական: Առ ու համար պահպան առ պահ-
պահուական: Առ ու համար պահպան առ պահ-
պահուական: Առ ու համար պահպան առ պահ-

XVIII

(Որից օր բժիշկ Մելիք-Քարսեղեանի աս-
պարէզը ընդարձակվում էր: Զմեռուաց ընթաց-
քում ձեռք բերած ծանօթները, ուժեղներին և
իրաւատէրերին զիւր գալու ձիրքը, վերին աս-
տիճանի փափուկ և սիրալիք, վարվողութիւննը,
այս բոլորը և ուրիշ շատ առաւելութիւններ
նպաստում էին նրան:

Այ ևս նա կարիք ըունէր Գօրօվինսկից Պրու-
սեկոսվ օրական մի քանի անգամ կառ.քով
անցնելու արտաքին ցոցցի համար: Կարիք
չունէր նոյնպէս հիւանդանոցներում ձրի հի-
ւանդներ ընդունելու, Այժմ նրա իւրաքանչիւր
ժամը փող էր: Ամբողջ օրը կառքը նրան
պտտեցնում էր քաղաքի մի ծայրից միւսը, մէկ
հիւանդից միւսի մօտ, և ամեն օր նրա ընդու-
նարանը լիքն էր հիւանդներով:

Արհեստակիցները նախանձում էին նրան,
հասարակութիւնը զարմացած էր նրա արագ
յառաջադիմութեանը: Ուանք նրա յաջողու-
թիւնը վերագրում էին մի քանի անցուսալի

հիւանդների առողջացնելուն և միշտմ էին այս կամ այն մարդուն, որին նա «ազատել էր մահից»։ Խոկ թէ քանիփուն էր «կեանքից ազատել», այս մասին մարդկանց ցիշոլովթիւնը թույլ էր, քանի որ հասարակութեան մէջ արդէն կապօւել էր այն կարծիքը, թէ Մելիք-Բարսեղեանը լաւ բժիշկ է։ Միջին և ատորին դասակարգերը նրա մասին ասում էին՝ «Ճեռքը թեթե է», բարձր գասակարգը՝ լեչիտ սոմութիւն։ Այն, այժմ ամենքը նրան չսխճառիչնից» երիտասարդ էին համարում, որովհետեւ ամենքի սիրաը այս կամ այն կերպ կարողացել էր հրապուրել։

Կայցին միայն մի քանի տաք գլուխների որ չէին ենթարկվում ընդհանուրի կարծիքին և յամառ կերպով պնդում էին, թէ Մելիք-Բարսեղեանը «ճարպիկ շառլատան է», ուրիշ ոչինչ։ Եցդափիններն էին նրա նախկինն ընկերներից ոմանք, որոնք մի առանձին դիրք և ձայն չունէին հասարակութեան խաւերում, ուստի և նրանց խօսքը ազդեցութիւն չէր անում լողների վրաց։ Ինքը Մելիք-Բարսեղեանն էլ մի առանձին ուշադրութիւն չէր գարձնում այդպիսինների կարծիքին։ Սակայն յարմար դէպքում չէր մոռանում նրանց սիրտն ևս շա-

էլ, դպալով, որ, Էհ, ինչ և է, գտրձենալ աւելի յաւ է նրանց ևս բարեկան ունենալ, քան չարական։

Եւ քանի՛ քանիսն էին պարձենում նրա ծանօթութեամբ, քանի՛ քանիսն էին պատիւ համարում նրա հետ բարեկամանալ։

— Այս, ներին, հոգեակս, երէկ չը կարողացաց քեկ մօտ գալ, գօքտօր Մելիք-Բարսեղեանը մեր տանը հիւր էր։

— Ես պարել չեմ սիրում, բայց անցեալ օրը Մայկօցի երեկոյթում գօքտօր Մելիք-Բարսեղեանը այնքան զօրեց, որ չը կարողանաց ձեռքից ազատիւլ։

— Եցաօր գօքտօր Մելիք-Բարսեղեանը մեր տանն էր։

Պարձութեամբ արտասանված այս դարձուածներն էին պատում տիկինների և օրիորդների մէջ։ Խնճոցք, մեծարանք, երեկոյթ, ամեն տեղ և ամեն կողմից նա հրաւիրվում էր և հապիւ ժամանակ էր գտնում հնգից մէկի տունը գնալու։ Խոկ երք գնում էր, ստէպ ստէպ նայում էր ժամանցին և յանկարծ վեր թուզում տեղից, սովորաբար ուղիելով տան տիրուհուն մի և նոյն փքուն դարձուածը։

— Արհեստիա ծանիր պարտականութիւնը ստի-

պում է ինձ զրկվել ձեր հերասիրութիւնը
վայելելու քաղցր գուարճութիւնից:

Մինչդեռ բժշկի ործերը այսպէս յաջող
էին ընթանում, նրա վրայ աչք ունեցող մայ-
րերի և հարսնացուների թիւն էլ օրից օր ա-
ւելանում էր: Բայց նա տակաւին հետամուռ էր
երկուսին՝ օրիորդ Վարինկա Ագամօվալին և
այն վաճառականի աղջկանը, որի հետ ծանօ-
թացել էր Ագամօվների տանը:

Առաջինը նշանաւոր աղյականների, երկրոր-
դը օժիտի քանակութեամբ գերազանցում էին
բոլոր ծիւսներից: Եւ բժշկի տատանվում էր,
ըստ էր որին ընտրել և որից հրաժարվել:
Սակայն, երբ ձեռք բերեց ծանօթների մեջ
շրջան, հետզհետէ սկսեց թեքվել վաճառա-
կանի աղջկայ կողմը: Նա վճռեց, վերջապէս,
լուրջ կերպով հետամուռ լինել վերջինին: Փոքր
առ փոքր դրաւեց նրա ծնողների միրտը, բա-
րեկամացաւ, և ստէպ ստէպ այցելում էր նը-
րանց: Ակզբում նա օրիորդի կողմից հանդիպեց
սառնութեան, ապա նկատեց, որ այդ սառ-
նութիւնը արուեստական է և օրիորդը սրտում
իսկապէս համակրում է:

Աւելի ինչ էր մնում անելու, եթէ ոչ ուղ-
ղակի առաջարկութիւն: Բայց տակաւին նա

զգոյշ էր վարվում, չէր շտապում: Նա տեղե-
կացել էր, որ օրիորդի հայրը ահազին կարո-
ղութիւն ունէ և աղջկայ համար նշանակած
օժիտը այդ կարողութեան համեմատ շատ
չնչին է:

Քաղաքում սկսեց հոչակիվել այժմ, որ գօր-
տօր Մելիք-Բարսեղեանը ամուսնանում է, վա-
ճառական Մէհրաբօվի աղջկայ հետ: Հուրը հա-
սում և՛ Ագամօվներին: Տիկին Ագամօվան գաց-
րացաւ, օրիորդ Վարինկան վիրաւորվեց, տիրեց:

Դարձեալ Մելիք-Բարսեղեանի անունը ընկաւ
հասարակութեան բերանը, դարձեալ սկսեցին
թեր և դէմ լասակցութիւնները: Ամանք պրն-
գում էին, թէ հարցը դեռ վճուռած չէ, բժիշ-
կը դեռ չէ կապել իւր պայմանադրութիւնը
օրիորդի ծնողների հետ: Ասում էին, թէ նա
Մէհրաբօվից պահանջում է, որ տասնուհինզ
հաղար րուբիլ էլ աւելացնի իւր աղջկայ օժիտի
վրայ և բայց դրանից պարտաւորվի մի քանի
հաղար էլ տալ պահկելուց յետոյ արտասահ-
մանում ճանապարհորդելու:

Եցի լուրերը հարկաւ, զբաղեցնում էին և
տիկին ու օրիորդ Սադափեաններին: Վերջին
ժամանակ, երբ տիկին Սօփիօվ յոյսերը Հալա-
բեանի վերաբերմամբ խորտակվեցին, նա սկսել

Եր ուշագրութիւն դարձնել բժիշկ Մելիք-Բարսեղեանի վրաց, որ երբեմն ացելում էր նրանց: Միզբում երիտասարդ բժիշկը բոլորին մի արժանաւոր գիտացու չէր թւում նրան, ոչ դիրքունէր, ոչ փող, ոչ անուն: Բաց երբ հասարակութեան մէջ նա յարգանք ձեռք բերեց, երբ մայրերը ընկան նրա ետևից, փոխվեց հետզետէ արկնոց կարծիքը: Նա տեսաւ, որ շատ էլ չէ կարելի արհամարհել ացլպիսի մէկին, թէ կու դ Հայաբեանից յետոյ:

Նոյն կարծիքի լ, ի և օրիորդ նատալիան, որի աշխարհահայեցողութիւնը դրեթէ ոքինով չէր տարբերվում մօր աշխարհահայեցողութիւնից: Մացը և աղջիկ աւելի սիրալիք յարաբերութիւն սկսեցին բժշկի հետ: Սակայն երբ լուցին, որ նա արգելն ընտրութիւն արել է, օրիորդը դադարեց անունը ցիշելուց, մայրը՝ անդրւոս տիկին Սօփիօն շտապեց կաղմել բժշկի թերութիւնների ցանկը և տարածել իւր Տանօթների շրջանում:

Մի օր բժշկը եկաւ ացերութեան, օրիորդ նատալիան չը գուրս եկաւ իւր սենեակից նրան հանդիպելու: Տիկին Սօփիօն սասն ընդունեց և ուղարկի շնորհառորեց:

Բժշկը շփոթվեց:

— Թիվիլիզի հասարակութիւնը զարմանալի է, ասաց նա վիրաւորված մարդու եղանակով, բաւական է, որ մէկի տունը մի քանի անգամ գնում ես, իսկոցն սկսում են բամբասել:

— Բաց այդ բամբասանք չէ, ասում են, նըշանվել էլ էք, ինչու էք թաքցնում, — գրգռեց յամառ տիկինը:

Բժշկը, շրթունքը կծելով, լոեց: Ճշմարիտն այն էր, որ օրիորդ Մեհրաբօվացի Ծնողները ընդունել էին նրա պայմանները: Բաց նա դարձեալ տատանվում էր: Այժմ նա ափսոսում էր, որ աւելի մեծ պայմաններ չառաջարկեց, քանի որ առեւտուրը այնպէս յաջողվում էր:

Բաց կար մի հանգամանք, որի վրաց սկըզբում նա ուշագրութիւն չէր դարձել և որ յետոյ զրեց նրան նեղ դրութեան մէջ և ստիպեց վճռական քայլ անել: Բանն այն է, նա նկատում էր, որ, լուրը տարածվելուց յետոյ, շատ ընտանիքներում սառն են ընդունում իրան: Սադափեանների և Ագամօվների տանը այդ սառնութիւնը արտացայտվում էր իսկստ կերպով, Միւս ընտանիքներում ևս չէր վայելում առաջփայլ յարգանքն և հիւրասիրութիւնը: Երկդիմի դրութիւնը նրան վտանգաւոր թւաց

ոչ միայն բարոյական, այլ և նիւթական տեսակէտից: Եցսպէս թէ, այնպէս, «արկածախինդիր» մարդու հոչակ վայելելու միտքը սարսափեցրեց նրան: Նա վճռեց, վերջապէս՝ պսակվել... օրիորդ ՄԻՀ հրաՅօվայի հետ:

Նշանադրութիւնը կատարվեց Զատկի երկրորդ օրը: Պսակը տեղի ունեցաւ եօթ շաբաթ անցած: Օրիորդի Ծնողները մի շուայ հարսանիք տուեցին իրանց միակ դստեր համար, նրանք հրաւիրել էին քաղաքի ամեն՝ դասակարգի մարդիկ—վաճառականներ, շինովնիկներ, բանկիրներ, կապալառուներ, օ'իլցերներ, իրաւաբաններ, մի քանի վրացի իշխաններ և այլն: Բժիշկը իւր կողմից հրաւիրել էր իւր արհեստակիններից ումանց, մի քանի հասարակական գործիչներ, երկու հեղինակ, երկու հայուսմբագիր, մի ռուս խմբագիր, չորս ուսանող, մի քանի ուսուցիչներ...:

Հանդէսը բազմամարդ էր, ճոխ և շուաց: Զարսանիքը կատարվում էր աղջկաց Ծնողների տանը; որ գտնվում էր քաղաքի կենտրոնում: Ամբողջ փողոցի բնակիչները իրարանցման մէջ էին: Պատուհանները և պատշգամբները լիքն էին հետաքրքիր: Հանդիսաստերներով, Եկեղեցու բակում խոնվել էր ահագին բազմութիւն: Եկե

ղեցու մէջ ասեղ գցելու տեղ չը կար: Տիրում էր մի անսակելի աղուուկ: «Դէղիները» և պառաւած ու պառաւող օրիորդները, միմեանց հրելով, առաջ էին ձգտում, որ տեսնեն նորահարսը ի՞նչպէս է զուգվել, նորափեսան ի՞նչ կերպարանք ունէ, խաչեղբացը նվ է և այն և այլն: Պսակ կատարող քահանան, մի քանի անգամ ընդհատելով պսակի խորհուրդը, ամբոխին հրաւիրեց խաղաղ կենալ: Բայց նրան լըսող չը կար:

Փառայեղ պսակագրութիւնը վերջացաւ, նորապակները շքեղ կառքով վերադարձան տուն: Ուղիղ մի ժամ ու կէս նրանք կանգնած շնորհաւորութիւններ էին ընդունում, այնքան մեծ էր հանդիսականների բազմութիւնը: Միմեանց ետեւից, թնդալով, բացվում էին շամապահացի շիշերը, Երաժշտութիւնը դղողեցնում էր վաճառականի փարթամ դահլիճները: Նորապակները զգացված էին: Բազմաթիւ ճրագները լուսաւորում էին նրանց ուրախ գէմքերը: Բժիշկը մի քիչ գունատված էր, նորահարսի դէմքը փարդի պէս կարմրած:

Ընթրիքը սկսվեց գիշերվաց երկու ժամին, վերջացաւ լուսաբացին:

Առյն օրը երեկոյեան նորապակները ուղեւորվեցին արտասահման:

Այս ևս չքացան հետամուտ եղող մայրերի
յրցերը բժիշկ Մելիք-Բարսեղեանի վերաբեր-
մամբ...

Ամառն էր: Քաղաքի բնակիչները ցրվում
էին ամարանցոները: Հետզհետէ դատարկվում
էր Սօլոմակը, ուր այնպէս տարածվել էր բժիշկ
Մելիք-Բարսեղեանի անունը, ուր ամեն ընտա-
նիք լսում էր նրա մասին:

Տիկին Սօփիօն, ախուր սրտով, իգուր անցած
յոյսերով, իւր կիսաթառամ աղջկայ հետ, ուղե-
ւորվեց հօրժօմ, և այնտեղ շարունակում էր
պարսաւել բոլոր փեսացոներին. . .

Արտասահման ուղևորվելոց մի ամիս ան-
ցած Եխշարումեանը հալաբեանից ստացաւ մի
նամակ: Ամուրին իւր մասին մի քանի համա-
ռուս տեղեկութիւններ տալուց յետոյ խնդրում
էր ընկերոջը՝ հաղորդել իրան յանձնուած գոր-
ծերի դրութիւնը:

Ախշարումեանն արդէն կատարել էր նրա
պատուէրները, բացի մի քանիսից: Նա դիմել
էր և՛ նիկողայոս Սաղափեանին, առաջարկելով
վճարել իւր պարտքը հալաբեանին: Բայց Նի-
կողայոսը խնդրում էր զարձեալ յետաձգել:

Գործերս յաջող են, բայց փողի պակասու-
թիւն ունեմ, ասում էր նա:
Ախշարումեանը հաղորդեց հալաբեանին, ի
միջի այլոց, և՛ այդ բանը: Ամուրին իսկոյն
պատասխանեց, թէ Սաղափեանի պարտքը յե-
տաձգել չէ կարող և խնդրում էր Ախշարու-
մեանին իւր պարտապանի հետ վարվել ամե-
նայն լսութեամբ: Եռ հասարակ նրա նա-
մակը տոգորված էր դէպի Սաղափեանները
ատելութեամբ և ամեն տեղ վրդովմունքով էր
յիշվում այդ ազգանունը: Ախշարումեանը ստիպ-
ված եղաւ կրկին և կրկին անգամ դիմել Նի-
կողայոսին և վերջը մի օր սպաւնաց դատաս-
տանի անունով: Մէջտեղ ընկաւ իշխան Սա-
հարունին, հեռագրով լսնդրեց հալաբեանին
համբերել: Պատասխանն եղաւ «չեմ կարող», և
մի շաբաթ անցած իշխանը ստացաւ մի կոշտ
նամակ, ուր հալաբեանը արտացատում էր մի
տեսակ արհամարհանք. Նորին պայծառափայլու-
թեանը:

Վերջապէս, Նիկողայոսը ստիպվեց հալաբեա-
նին տալիքը վճարել Ախշարումեանին: Իսկ
իշխան Սահարունին իւր կողմից մի գուոզ և
վիրաւորական նամակ ուղարկեց Կարլսբադ ա-
մուրիին: Եւ այսպէս ընդհատվեց նրանց բա-
րեկամութիւնը յաւիտեան...

Եշնան սկզբին Ալսարումեանը, վերջացնելով
իւր և Հալաբեանի գործերը, ինչպէս խոստա-
ցել էր, ուղեորդեց Վիեննա. Այնուհետև Հալա-
բեանի մասին Թիֆլիսում այլ ևս ոչ ոք տե-
ղեկութիւն չէր ստանում և ոչ ոք էլ չէր մը-
տածում նրա վրայ: Միայն նրա քրոջ որդինե-
րը, որոնց հետ նա ոչինչ յարաբերութիւն
չունէր, երբեմն ցիշում էին, որ արտասահմա-
նում մի հարուստ քեռի ունեն. Եւ ցիշում էին
այն մտքով. որ գուցէ մի օր կարողանան տի-
րանալ նրա ժառանգութեանը: Սակայն նրանց
յոցսերն էլ խաբվեցին: Քաղաքում մի օր լուր
տարածվեց, թէ, Ալսարումեանը այլ ևս մտա-
դիր չէ իւր հայրենիքը վերադառնալու. Նա
վճռել է մնալ արտասահմանում և, մտադիր է
իւր բոյոր կարողութիւնը կտակել ազգին,
Լուրը քաղված էր Ալսարումեանի մի նա-
մակից, և սիալ չէր. . .

Մարիսմը նստած էր դէպի փողոց նայող սե-
նեակի պատուհանի մօտ և նայում էր դուրս:
Հոկտեմբերի խոնաւ և ցուրտ օրերից մէին էր,
երկինքը հետզհետէ մթնում էր միմեանց վրայ
կոտակվող խիտ-խիտ ամպերից: Երբեմն նա

վեր էր կենում տեղից, քայլում էր սենեակում
և կրկին նստում, կրկին հայեացքը ուղղում
դէպի փողոց:

Անձրեւ սկսեց թեթև շաղել, կառքերը անց-
նում էին բաց ծածկոցներով, մարդիկ նոյնպէս:
Մարիսմը թույլ մոլոր քայլերով շարունակում
էր անցուգարձ անել, ձեռները կրծքին ծա-
լած: Երբեմն նա ցնցվում էր, կանգ էր առնում,
նայում իւր շուրջը: Կարծես, աչքերով որո-
նում էր մի բան, որով կարողանար թեթևաց-
նել իւր սրտի ճնշող ծանրութիւնը:

Վեց ամիս էր անցել Բագրատեանի գնալուց,
և նրա մասին ոչ մի տեղեկութիւն չը կար:
Միայն առաջին ամիս Ուուբէնը ստացաւ նրա-
նից մի նամակ, որով յատնում էր, թէ իւր
ընկերների հետ հասել է ճանապարհորդու-
թեան կէտին... Ուրիշ ոչինչ:

Արդեօք ինչ պատահեց նրան, արդեօք կեն-
դանի՞ է, թէ արդէն զոհ է դարձել իւր վտան-
գաւոր ձեռնարկութեանը: Այս էր մտածում
Մարիսմը, և եղանակի վատութիւնն աւելի
ծանրացնում էր նրա սրտի վիշտը:

Նախընթաց օրը նա թախանձել էր Ուուբէ-
նին ցացտնել ճիշդը՝ որտեղ է, գտնվում Բագրա-
տեանը: Բաց Ուուբէնը ինքն էլ չը գիտէր նրա

տեղը, և աշխատում էր մի կերպ իմանալ. Այսօր մէկը խոստացել էր ճիշդ տեղեկութիւն տալ նրան, նա գնացել էր, և այժմ Մարիամը նրան էր սպասում անհամբեր.

Այս ևս Մարիամը չէր թագնում ոչ Թուբէնից ոչ Սաթինիկից իւր զգացունքը, Յայտնի էր Բագրատեանի նրա սրտում զարթեցրած խորին, անցաղթելի զգացմունքը, որին ոչ նրա բացակայութիւնը և ոչ ժամանակի ընթացքը չէին մեղմացնում, այլ ընդհակառակը...

Այն օրից, երբ Բագրատեանը հեռացել էր, այն օրից Մարիամի դէմքի վրայ մի ժափտ չէր երևում, այն օրից չունէր մի րոպէ հանգստութիւն։ Փամերով նստում էր նա անգործ, լուռ, մտազեղ, ոչ մի բան նրան չէր զբաղեցնում, ոչ մի բան չէր շարժում նրա հետաքրքրութիւնը նրան տիրել էր մի տեսակ ծովութիւն։ Կարուձեով նա համարեա այլ ևս չէր պարապում, և եթէ երբեմն իւր ձեռքն էր առնում կարի մեքենան, լոկ Սաթինիկի թափանձանքից ստիպված և Թուբէնից ամաչելով, Խոկ տնացին գործերը կատարում էր ռուս աղասինը, որին երկու ամիս էր արդէն վարձել էին.

Այժմ Թուբէնի նիւթական դրութիւնը համեմատաբար ապահով էր, Սեպտեմբերի մէկից

նրան տուել էին նոյն ուսումնարանում ուսուցչի լի պաշտօն։ Նա ստանում էր այնքան վարձ, որ կարող էր միջակ ապրուստ վարել, Բագրատեանի գնալուց յետոյ նա դարձեալ փոխվել էր, պարապվում էր իւր սովորական խաղաղ գործերով, Նա զբաղված էր այն դիտնական գրաւոր աշխատութեամբ, որ սկսել էր մի տարի առաջ,

Նա արդէն վճռել էր ձմեռը ամուսնանալ Սաթինիկի հետ։ Սկզբում երկուսն էլ մտադիր էին յետաձգել մի տարով, Բայց Մարիամի յամառ թափանձանքը փութացրել էր վճրութ Նա ցանկանում էր օր առաջ տեսնել իւր սիրելի եղբօր և ընկերուհու բաղդը ընտանեկան խաղաղ կեանքուն։ Նրա խորոված հոգին աև փոթորկալից սիրտը ձգտում էին մտերիմների փոխադարձ երշանկութեան մէջ գտնել մեղմ միսիթարութիւն։

Արդէն սկզբնական պատրաստութիւնները տեսնուել էին. Թուբէնի այժմեան բնակարանը նոր էր վարձված, Այն սենեակը, որ այնպէս անհանգիստ անց ու դարձ էր անում Մարիամը, բաւական ընդարձակ էր, Կահ-կարասին նոր էր. իւր առաջին ամսուաց առճիկը Թուբէնը այդ բանին էր յատկացրել. Պատի

տակ լրած էր ծաղկանկար բարձերով և մուշ
թաքաներով զարդարված թախտը: Մի ան-
կիւնում երեսում էր մի սևագոյն փոքրիկ պա-
հարան, որի ցարկերի վրայ կանոնաւոր գար-
սուած էին երկու տասնեակ կազմած գրքեր:
Միւս անկիւնում դրուած էր մի գահաւորակ էրեք թեր-բազկաթոռներ, որոնց մուգ-մոխրա-
գոյն ասուեայ ծածկոցը համագոյն էր պատերի
պաստառին:

Այս բոլորը դասաւորված էին մեծ խնամ բավ:
Մարիամի ճաշակն էր երեսում ամեն տեղ, նա
էր զեկավարել աղախնի գործը, Մաքրութիւնը
օրինակելի էր, ոչ մի տեղ, ոչ մի անկիւնում
չէր երեսում աւելորդ կամ անկանոն ձգված
բան: Սեղանները՝ իրանց վրայ գրած պարա-
գաներով, աթոռները, ցատակը, նոյն խսկ գըռը՝
ները փայտում էին խտակութիւնից: Պատու-
հանների ապակիների վրայ չէր երեսում մի
փոքրիկ արատ, և ցերեկուաց լոյզը ներս էր
տարածվում անխափան:

Ամեն ինչ այստեղ տրամադրում էր լնտանե-
կան խաղաղ կեանքի, Միայն Մարիամի հոգու-
խովութիւնը այդ բոլորի հակապատկերն էր
արտացատում նրա դէմքի վրայ: «Ճթէ վերադառնամ, կը տեսնուենք», կրկ-

նում էր նա մտքում Բագրատեանի վերջին
խօսքը: Եւ նա յուսով էր, որ կը վերադառնայ,
ապրում էր ու շնչում այդ յուսով: Անշուշտ
կը վերադառնայ և անշուշտ կը կամենայ տես-
նել Մարիամին: Նա զգում էր Բագրատեանի
այս խօսքի բուն միտքը, և ճիշդ էր զգում...:

Դռները բացվեցին, նա ցնցվելով յետ նայեց:
Ռուբէնն էր ներս մտնողը: Հայութիւնը ան-
կատար էր այս կամաց առաջնային առաջնային
հարցը:

Կայ, — պատասխանեց Ռուբէնը և գրպանից
մի կեղտուոված ու ուշացած նամակ հանելով,
տուեց գրոջը:

Մարիամը շտապով բաց արաւ նամակը նրա
ձեռները դողում էին անհամբերութիւնից:
Հասցէն Ռուբէնի անունով էր գրված: Կարդա-
լով երեք էջերից բաղկացած նամակը, Մարիա-
մի դէմքը մերթ մոայցում էր աւելի մերթ
պայցառանում և փայում ներքին գոհունա-
կութիւնից:

Բագրատեանը տեղեկութիւն էր տախս իւր
մասին, նկարագրում էր իւր ձեռնարկութեան
գուարութիւնը:

«Ճեռուից աւելի դիւրին էր թւում ինձ,
բայց այն չէ, ինչ որ կարծում էի, — գրում էր

նա։ Առ այժմ ես բաւականանում եմ խօսքով մինչև որ գործը հիմք ստանայ։ Չատհաւանական է, որ յանկարծ վրայ հասնի վճարկան քայլ անելու ժամը, որովհետեւ մեր կամքը մեզանից չէ կախված, այլ... Հակառակ կողմը կարող է ինքը առիթ՝ տալ խօսքից գործին դիմելու... Այն ժամանակ... մնացէք բարե... իմ վերադարձը ցնորդ է... Այս աղման մեջ մասնակ կանգ առաւ, նացեց Մարիամը գունաթափինց, կանգ առաւ, նացեց Ուուբէնի երեսին։

Այնուհետեւ Բագրատեանը գրում էր մասնաւոր բաների մասին։

Մարիամը որոնում էր իւր անունը, և գտաւ նամակի վերջում, ստորագրութիւնից յետոց, երկու տողի մէջ։
«Քարեւիր օրիորդ Մարիամին և այս, որ աղօթէ, մեր գործի յաջողութեան համար։» Այս Մարիամը թուլացած նատեց թալιտի վրայ, նամակը ձեռում անուր սեզմած, կարծես, վախիենալով, մի գուցէ լսեն նրանից։

Դժուար, շատ դժուար դեր է յանձն առել, ասաց Ուուբէնը։

— Նա կը կատարէ, նա կարող է կատարել — գոչեց Մարիամը վրդովուելով իւր եղօր յուսահատութեան դէմ։

— Կը կատարէ, բայց իւր կեանքի դնով... Մարիամը մի ծանր հայեացք ձգեց եղօր վրայ, մի հայեացք, որ արտայացում էր և կծու յանդիմանութիւն, և՝ վիշտ, և՝ յուսալու, անսպազման յուսալու բռւռն կարօտ։ Ուուբէնը զգաց այդ, նա շտապեց ուղել իւր սիսալը, Մարիամը լուռ լսում էր նրա յուսադրական խօսքերը, աշխատելով հաւատալ և հաւատալ՝ իւր ալեկոնդիոն սրտին սակաւ ինչ խաղաղութիւն տալու համար։

Օր օրի վրայ անցնում էր, Մարիամը աւելի ու աւելի անհանգիստ և նեարդացին էր դառնում։ Ամեն օր նա զնում էր Սաթինիկի մօտ իւր տիսրութիւնը փարատելու համար։ Ամբողջ ժամերով նստում էր ընկերուհու մօտ, և նրա խօսակցութեան միակ նիւթն էր Բագրատեանը, նրա ասածները, նրա բնաւորութիւնը և այն գաղափարները, որոնց անձնատուր էր եղել այդ մարդը... Ութինիկը երբեմն լսում էր սիրով, երբեմն ձանձրանում էր մտքում, բայց և երբէք չէր արտայացուում իւր գժկամակութիւնը։ Նրա անգորր բնաւորութեանը և խաղաղ ձգտումներին չէր համապատասխանում Մարիամի հոգեկան տրամադրութիւնը։ Երկու ընկերուհիների հայ-

եացքների տարբերութիւնը քանի գնում այն-
քան աւելի խստանում էր: Սակայն երկուսն էլ
յարգում էին իրարու գաղափարները: Յաճախ
Սաթինիկը խօսք էր բաց անում Ռուբէնի սա-
սին, և միշտ նրա ասածների մէջ զգացվում էր
նրա սրտի բուռն ձգտումը՝ օր առաջ արժա-
նանալ ամուսնական կեանքի երջանկութեանը:

Տեսներով այդ, Մարիամը մտքում վճռեց առ-
ժամանակ մի կերպ զսպել իւր մտատանջութիւ-
նը և զբաղվել այդ խնդրով: Այս պատճառով
նա աշխատում էր Ռուբէնի և Սաթինիկի ա-
ռաջ ուրախ ձեանալ: Նրա թախանձանքով,
վերջապէս, վճռուեց ամուսնութեան օրը:
Երկար յետաձգելու կարիք չը կար: Մի ձեռք
պսակադրութեան, հարուստ Սաթինիկի համար
և մի ձեռք Ռուբէնի համար – ահա ինչ էր
մուտք անելու:

Սաթինիկը ինքը ձեւեց ու կարեց իւր հա-
գուստը Մարիամի օգնութեամբ:

Հասաւ որոշված օրը:

Ռուբէնը իւր կողմից հրաւիրեց նախկին ու
նոր ընկերներից ոմանց և պաշտօնակիցներից
մի քանիսին:

Սաթինիկը հրաւիրեց իւր ընկերուհիներին և
մի քանի ազգականներ:

Երիտասարդ հանդիսականների ընկերական
անկեղծութեան շնորհով, համեստ հարսանիքը
անցաւ ուրախ: Ուրախ և զուարթ էր այդ ե-
րեկոյ և՝ Մարիամը...:

Դեկտեմբերի վերջն էր: Մի սառն և քամի
օր: Հարսանիքից անցել էր ամիս ու կէս: Այն
սենեակում, որ երկու ամիս առաջ Մարիամը
կարդաց Բագրատեանի մուայ նամակը, նստած
էր Սաթինիկը, և անհամբեր նացում էր դէպի
դուրս: Կէսօրից յետոց էր, արդէն երկու ժամ
էր, որ նա սպասում էր Ռուբէնին, և վերջինը
չէր երեւում:

Ներս մտաւ տասը տարեկան մի գեղեցկադէմ
աղջիկ, սև սև աշբերով:

— Ի՞նչ ես ուզում, Անահիտ, — դարձաւ նրան
Սաթինիկը բարկացոտ ձայնով:

— Գրքերս բերեմ:

— Ոչ, այսօր չեմ կարող բեզ հետ պարապվել:

Աղջիկը ուրախացաւ:

— Մարիամն էլ Վարդուհիի հետ չի ուզում
պարապվել, այսօր մեզ համար տօն է, ոգուց

փոքրիկը և թուչուելով դուրս վագեց:

Անահիտը և Վարդուհին Սաթինիկի փոքրիկ

քոյրերն են, որ այժմ տեղափոխվելով ապրում են իրանց հետ, և նրա հոգանաւորութեան տակ:

Սաթինիկը դարձեալ մնաց միայնակ և դարձեալ անհամբեր նայում էր պատուհանից դէպի փողոց:

«Աւշացաւ, երկի ճիշդ տեղեկութիւն չի կարողանում գտնել», ասում էր նա մտքում անդադար:

Երդէն օրը մթնում էր, երբ Թուբէնը վերադարձաւ, բայց ինչ դրութեամբ; Նա ոտից մինչև գլուխ թրջված էր ձիւնախառն անձրևի տակ, նրա երեսին գոյն չը կար, նրա աշքերի մէջ երևում էր արտասուբթի թարմ հետքը, Մի դարն և խորին վիշտ դրոշմուած էր նրա դէմքի վրայ:

—Վերջապէս, —գոյնեց Սաթինիկը, առաջ վագելով:

Մի քանի քայլ մնացած նա կանգ առաւ և սարսափած նայեց ամուսնու կերպարանքին:

—Ուրեմն ճիշդ է:

—Ճիշդ է, —պատասխանեց Թուբէնը և յոդնած, շունը կտրված նստեց թախտի վրայ:

—Դժբաղդ Բագրատեան, արտասանեց Սաթինիկը խորին դառնութեամբ:

—Դժբաղդ, բայց նախանձելի մահ...

—Բայց ինչպէս է պատահել պատմիր:

—Սպանութիւնը պատահել է մի լեռնային կիրճում: Նա անցնելիս է եղել իւր եօթ ընկերներից չորսի հետ: Յանկարծ առաջ է դուրս եկել մի մեծ խումբ: Ոյժերը անհաւասար են եղել, բայց ստիպված է եղել կռուել: Նա սպանել է երկուսին, ինքն էլ գոհվել իւր ընկերներից երկուսի հետ:

—Ո՞վ ասաց քեզ, ումից ստուգեցիր լուրը, կարելի է տուտ է...

—Դժբաղդաբար ճիշդ է. նրա դիմուկը իւր աչքով տեսնողներից մէկը պատմեց:

—Խեղճ Մարիամ, —ասաց Սաթինիկը, արտասփելով, —ինչպէս պէտք է յացնենք նրան: Նա իւր սենեակումն է, ճաշից յետոյ մինչև այժմ չէ դուրս եկել այնտեղից: Երբէք ես նրան այսօրուայ պէս չեմ տեսել: Կարծես, խեղճ աղջկը գուշակում էր մի բան: Թուբէն, դըժուար է այդ լուրը նրան հաղորդելը: Դու չը գիտես, ինչպէս էր սիրում նրան, ինչպէս էր յիշում նրա անունը ամեն անգամ. . . Նա քեզանից թագնում էր, բայց ինձ մօտ սիրտը միշտ բաց էր...

—Սուսս, կարծես, նա է գալիս:

Դուների ետևից լսվում էր հետպհետէ մօտեցող քայլերի ձայն: Ոուբէնը և Սաթինիկը ուղիեցին իրանց, աշխատելով՝ թագցնելու վըշտալի իրողութիւնը: Ներս մտաւ Մարիամը յուշիկ քայլերով և նայեց իւր շուրջը:

—Ո՞րտեղ էիր,—դիմեց նա եղբօրը, —այդ վատ եղանակին դրսում մնալո... չի կարելի...»

Նրա ձայնի, նրա վերջին բառերի արտասահնութեան մէջ զգալի էր նրա հոգու խորին վիշտը: Վացրկենաբար քրոջ և եղբօր հայեացքները հանդիպեցին միմեանց: Կարծես, մի անխանալի զօրութիւն հազորդեց Մարիամին զուժաբեր լուրջը: Նա ցնցվեց, կանգնեց եղբօր առաջ, և ուղիղ նայելով նրա երեսին, տարօրինակ ձայնով հարցրեց:

—Դու ինչու տիսուր ես...»

Ոուբէնը չը կարողացաւ զսպել իրան:

Եւ արդէն ուշ էր. Սաթինիկը արտափում էր:

—Անխիզներ, ինչ է պատահել, որ ինձանից թագցնում էք... գոյնեց Մարիամը:

Սաթինիկը փաթաթվեց նրա պարանոցին, և հեկեկում էր:

Մարիամի գէմքը թղթի գոյն էր ստացել, միայն նրա աշքերի մէջ վասպում էր ներքին

Հուրը: Մի բառ, միայն մի բառ բաւական էր, նա հասկացաւ ամեն ինչ: Եւ այդ բառը արտասանեց Ոուբէնը... Սաթինիկը հեռու կանգնեց: Մարիամը արձանացած էր մի և նոյն տեղում: Նրա գէմքի մկանունքները, կարծես, քարացել էին, նրա նիշար շրթունքները սառել կպել էին ատամներին:

Յանկարծ այդ անշարժ գէմքը փայլեց, կարծես, ներքին հոգեկան պացճառ լոյսից, աչքերը կրկին վառվեցին...»

—Ցոյց տուէք ինձ միջոց, ես պէտք է գոհվիմ նրա գաղափարներին...»

Հսաց նա, և կանացի ոյժերը սպառվեցին: Նրա գլուխը թուլացաւ, թեքեց կրծքին, նա ուշաթափեց և ընկաւ իւր եղբօր ու Սաթինիկի գերկը...»



11 Անցուդարձողներին անցուդարձ անողնորին
 30 11 ձգին ձգեցին Յարմիան
 " 24 Կորիք Կորիք մեջ ու անցուդարձ անողնորին
 41 15 անընդուկան անընդունակ
 43 11 անցուդարձել անց ու գարձ անել
 54 22 անցուդարձող անց ու գարձ անող
 58 2 Լիզալի Լիզալին
 65 20 կերպով կերպով կերպով
 96 4 աբրիկանտ աբրիկօտին
 176 14 հանե հանել
 199 25 չորս անգամ երեք անգամ



ՀՀ Ազգային գրադարան



NL0793895

